



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Утроба  
24 v

12  
65



2 0.00

---

ՍԵՆՏԵՆՏԻ

ՍՐՏԻ ԵՒ ՀՈԳԻՈՅ

սերէֆ

24

ՍՆՈՒՆԴԻՔ


ՍՐՏԻ ԵՒ ՀՈԳԻՈՅ

ԵԱՅՐԱՆԱԴՔ

Ի ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԵՒ Ի ՀԱՐՑ

ԵՒ Ի ՀՈԳԵԿՐԱՑ

592



ՎԵՆԵՏԻԿ. - Ա. ՂԱԶԱՐ

1888

ԳՐԺՈՒՄ

ՍՐՏԻ ԵՒ ՀՈԳԻՈՅ

23000

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՍՏՆՔԻ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼԱ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՍՏՆՔԻ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼԱ



(3945  
41)

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

h. 24

24-2001



ՄԻԻԹԱՐԵԱՆ ԱԲԵՂՈՅԻ

ԳՐԱՆ ԵՒ ԳՐԱՌԱՍՄԵՆԻ ՎԱԽՉԱՆԵԼՈՅ

Յ՝ ԱԶՈՒՈՅ

Ի 29 ԱԵՊՏ. 1886





Միանձն և քահանայ. և դեռ  
այն ինչ տպաւորեալ կրկին կնքօքն,  
մեռելատիպ և անմահունակ կե-  
նաց. - միովն՝ ստուերատեսակ սքե-  
ման՝ սքօղեալ զհրապոյրս աշխար-  
հի, միւսովն՝ նուիրագործ պատ-  
մուճանաւն՝ միտալ ի սրահակս  
աստուածապարփակ խորանին, - և  
վախճանեալ քսան եւ չորեքամեայ.  
յերկիւղած իմն տալու թիւն հար-  
կանէ զմիտս, թող թէ զսիրտ կե-  
նակցելոցն ընդ նմին և ընդեւացելոց  
ի բարսն համբոյրս և մշտամանուկ  
զուարթունս. ոչ նուազ սրատուռչ

նա՝ քան զծաղկապսակ նորամուտն  
 յառաքատս, ուստի՝ անինայ օր-  
 հասիւ՝ բարձցի անարժամ. նա և  
 առաւել նրբագոյն զգալի, որքան  
 զի քան զաշխարհայինն՝ առաւել  
 է նուիրականն սէր հրաւիրելոց ի  
 խրախճան Քրիստոսի. որոյ և կընդ-  
 րուկ հրաժարական՝ գերերկրեայ  
 իմն բուրեալ սարրանայ յոգևոջ ծա-  
 նօթիցն՝ հոս, սրութեամբ՝ խաղա-  
 ղիչ և սրբութեամբ՝ խռովիչ. յոր  
 ոչ անհաղորդ մնալ համարիմ և զան-  
 ծանօթան տեղեալ և ժամանակաւ,  
 զբարեմոյնս և հոգեխաղորովս. զի ոչ  
 կարէ կալ անբարբառ՝ սգարկեշտ  
 դամբան վաղամեռիկ աբեղայի, մե-  
 նացելոյ յընտաստն երամէն, և  
 ամփոփելոյ ի համաշխարհական գե-  
 րեզմանս բացակայ ուրեմն գաւա-  
 ուի, (գեղեցկանսի՛հ քաղաքաւանին

Ազտւոյ), յորոյ յառողջագուն հովս  
 յուղարկեալ՝ ի կաղզուրումն ծան-  
 րակիր ախտին, և անդ ի դէպ իմն  
 կուսական կարգին՝ վիճակէր նմա  
 և կուսական գերեզման. քանզի և  
 նոր իսկ էր յարգարեալ հանգստա-  
 րանն այն. և նա կալաւ զառաջին  
 թուանիչ գիրս. նմա եղաւ առաջին  
 պսակ թագաւորութեան մահու՝  
 յայնմ մարզի. զնա նախ ողջունեաց  
 և ընդգրկեաց անդ խաչն Յիսուսի:  
 Այլ ինձ ոչ աղեկէկ կամ ընտանե-  
 կան գութ է թելադիր բանիս, այլ  
 գողջիր պարտք իմն պատկառելի՝ ի  
 մնարս մահու մոհճին սասնճեալ.  
 քանզի եօթնեկաւ աւուրբք յա-  
 ռաջ քան զվախճանն՝ կոչեցեալ առ-  
 նա, առաջին բան զայս ասաց, կա-  
 րօտել հոգևոր մխիթարութեան.  
 Եւ իբրև ընթերցայ նմա տունս ինչ

բանից որ ի Գրքոյն (քաղեալս և նշանակեալս ըստ հանդիսման ընթերցուածոցս, յընթացս քառասուն և աւելի ամաց), մեծապէս հաճեցաւ և սիրեաց. յայնժամ անկաւ և ի սիրտ իմ նուիրել զսոյն ի յիշատակ նմին, որոյ վախճան կէնաց մօտալուռ երեւէր այնուհետեւ:

Ահաւազիկ քաղուածքդ, ըստ մասին, ջոկեալք և դասաւորեալք ըստ նիւթոց ի գլուխս ինչ, այլ ոչ կաշեալ փոյթ զիմաստ առ իմաստ պատշաճագոյն յեռուլ, բայց դուն ուրեք, որպէս ի յետին գլուխն (Աստուածածին): Յայտ է թէ լաւագոյն ևս քաղուածք գտանին առ լաւագոյնս, ըստ իւրաքանչիւր ախորժակաց. այլ հաւատամ եթէ և այս խոն բաժակ հանեալ յանգրնդական ծովէ աստուածեղէն

ուսուից և հոգեկիր արանց, հաճոյ և շահաւէտ ընծայեացի հոգեսիրաց, և զովարար՝ ոմանց սրտից տոչորելոց, որոց են ժամք և ժամանակք ցաւոց, լքմանց և ամայութեանց, և անընդունելութիւն մխիթարութեան, բայց միայն որ յաստուածաշունչ և ի հոգեխօս պատգամաց. վասն որոյ և Սնունդդ Սրտի եւ Հոգւոյ անուանեցաւ սփերիկս:

Որ միակ բամ հանդիսեալ սմին եւ քաղցրացի, ոչ զլսացի կարծեմ յիշել և զպատճառող արտադրութեանս այսորիկ, զերիտասարդիկն այն հոգի, որ յետ սակաւ աւուրց յեշեցեալս դիսման, ելիք զհողեղէն պատեանն, կոչկոծեալ ութամետայ հիւանդութեամբ. մինչև ցբուն պահելով զքնաւոր զիւր զուարթութիւն, հանդերձ զգաստութեամբ,

և պայծառ իմն ուղղատեսու թեամբ,  
 ըստ մերձենալ պահուն՝ յորում  
 մտանելոց էր յիսկական հայանս  
 ճշմարտութան: Եւ ի վերջնումն  
 յայնմ աւուր յերկրի, յորում՝ միտք  
 թուէին ընդ սա եւ ընդ երկին բա-  
 ժանիլ, ի թմբական դաւանցանսն,  
 մերձ ընդ մերձ արթնացեալ՝ խօսէր  
 արդարադատ լրջութեամբ: Տե-  
 սեալ զսմն նստեալ թաղծագին առ  
 մահձին, Աչ է պարտ, սաէ, կալ  
 առ հիւանդի՝ ատրադին դիմօք: Իբ-  
 րեւ մատղցաւ նմա յետին բաժակ  
 դեղոյն, կիտումս արարեալ՝ հար-  
 ցանէր, թէ իցէին զօգուտ քամել բո-  
 վանդակ. ոչ կարելով մեր հաստա-  
 տել, այլ լաւ համարել զհլուու-  
 թիւն, էարբ իսկոյն. եւ յստեղս՝  
 եթէ եւ ընդ այնր բաժակի առցէ  
 զվարձա իւր ի Տեսունէ, սասց ի

գրոց բարբառ. Իյեմ՝ արժանի. ի-  
 ցեմ ի շնորհս. և ի յուսագրել մե-  
 րում, կարդաց մեծածայն, Հաւա-  
 տամ: Հգորագոյն ևս, այլ և ալուա-  
 բար իմն յայտնեաց զհաւատան՝ յիս-  
 պառ տկարանալ մարմնոյն և յընդ-  
 հատել բարբառոյն. երբեմն ակեալ  
 կիսակտուր յօգլուք ասել զյիսնե-  
 րորդ սաղմոսն, զոր իբրև փոխ՝ ա-  
 ուեալ մեր՝ աւարտեցաք. յայլում  
 նուագի լուծեալ յանկարծ զլե-  
 զուակապ լուսութիւնն՝ յեղ յեղեաց  
 երագապէս, « Յիսուս, Մարիամ,  
 Ս. Յովսէփ: » Իսկ իբրև բնաւ կար-  
 կեցան կապք շրթանցն, յայտնեաց  
 զի միտքն դեռ խօսուն էին ընդ Սս-  
 աուածոյ. ամփոփեալ զծայրս հընդե-  
 ցուն մատանց աղոյն և ամբարձեալ՝  
 համբուրեաց երկիցս, միանդամ և  
 զձախուն. և էր այն յառաջագոյն

հաստատեալ նշանակ դաւանութեանց, յարմարելով ըստ իւրաքանչիւր ձեւոյ մատանցն. (ստուարութեան բութին՝ զՀաւատս, ցուցամախն՝ զՅոյս, երկարութեան միջամտին՝ զՍէր, մատանեմատին՝ զԻշատակ Նրախտեացն Ստուծոյ, և ճիւղութին՝ զնուաստութիւն անձին և զմեղս.) իբր համառօտ ասել, Հաւատամ, Յուսամ, Սիրեմ, Գոհանամ, Զղջամ. և համառօտագոյն եւս, միով համբուրիւ բովանդակել զԱմէնն :

Նթէ ոչ անդրագոյն եւս տեսութիւն էր հոգւոյն, այլ և ոչ աննշան հանդիսութիւնս. զի մինչ կարէր դեռ խօսել զառանցելով, ասաց և զայս. Ո՞չ շաբաթ է օրս, և առ իմէ՞ այսքան բազմութիւն գեղջկաց խառն գիմէ յեկեղեցի, առաւել քան եթէ

յաւուր կիւրակէի : Սոն՝ յորում զայս ասէր, չորեքշաբաթի էր, և ի մտաս գիշերոյն՝ ի պահու օժմանն իւղով սրբով՝ անանդեաց զոգին. իսկ յորժամ յետ երկուց աւուրց, որ է օր շաբաթո՞ւն, բարձեալ դադարօք տարաւ ի մայր եկեղեցին, ի կատարումն սրաշաման հանդիստեան, — քանզի սովորութիւն է քաղաքականին յայնմ աւուր եօթնեկի առնել վաճառածողով ի մեծի հրապարակի՝ որ շուրջ պատէ զեկեղեցեան, — կուտեալ էր անդ բազմութիւն ժողովրդեան, յայլեւայլ գեօղից և աւանաց, ազգի ազգի վաճառուք. որոց տեսանելով այն օր նորաձև իմն հանգէս յուղարկութեան, մանաւանդ եւ յուղարկաւորս օտարս, — զարհի ոմն եպիսկոպոս՝ զԱբբայ ուխտին Մխիթա.

րայ, և զոմանս ի միաբանիցն, կէսք  
 գաստիարակք և կէնք սննդակից ըն-  
 կերք հանդուցելոյն, և դաս դաս ա-  
 շակերտաց Մուրատեան - Ռափա-  
 յէլեան վարժարանաց, յորս և իւր  
 իսկ աշակերտք, - թողեալ բազմաց  
 զտուր և առ, և բարձեալ սարկօք և  
 զամբիւղօք զվաճառան, բուսեղինօք  
 և հաւեղինօք, իսառն ի խուռն մտա-  
 նէին յեկեղեցին, մինչ մօտ ի սե-  
 զանն սուրբ, յորում մատչէր քա-  
 ւութեանն սլատարագ. մինչև սպա-  
 սաւորաց եկեղեցւոյն սախալէ զնո-  
 սա ելանել արտաքս: Էր ինչ յայն-  
 ժամ մարթ Էյիշել զտեսողականն  
 այն բան օրհասականին, և ոչ մորմն  
 քել. մանաւանդ ի տես և լուր սլա-  
 սլաջելոյ գորովեալ գառանցն քե-  
 ցելոց ի մաքեաց, զորս գնողք զու-  
 լամբեալ սլարանօք՝ ընդ մէջ հրա-

սլարակին ընդ քարչ ճգէին յօտար  
 գոմս, մինչ նոքա դեռ յետօ ընդ-  
 դէմ աքստուելով և ուղորմելի ձայնս  
 ածելով, ճգնէին առ կաթնաբոյր  
 մարան մերձեհալ: . . . Մի լուսիցե  
 զայս այրիացեալ մայր վաղամեռիկ  
 արեղային, որ ակն ունէր ցանկալի  
 տեսչեան օրդեկին՝ յերկուտասան ա-  
 մաց հեռէ անջատելոյ ի գրկացն. յո-  
 ըոց արդ, և ի փոխանակէ նոցին ի  
 փալտիսէ հոգևոր հարցև եղբարց  
 շպէտ անշուք անյարկ ագարակին՝  
 արկեալ զմահու հանգոյցն, ձեպե-  
 ցոյց և զսա, գառնօրէն՝ այլ անմը-  
 ուռնչ, հաւասարել զգալար ծնօ-  
 տիցն՝ ի գալարիս հողավայրին: . . .  
 Այլ, օ՛ն անդր, Հովին քաջ, որ  
 նոյն ինքն և Գառն ի Սիովն, կօ-  
 չեաց զոչխար իւր: Աւանիկ նա նո-  
 ռազդեցիկ նափորտապատ սլատմու-

ճանաչն, զոր լուսաց է ցաւն անձին  
 իւրոյ, և ի խորհրդական աւազան  
 ապաշխարութեան, (յոր երկիցս  
 է շաբաթու՝ օրէնս անձին եդեալ  
 էր՝ մաքրել, ցորչափ մերձ գտա-  
 նէր զհայր խոստովանութեանն) :  
 աւասիկ նա խառնեալ է դասս Երե-  
 ցանցն՝ որ շուրջ կան զսեղանով Գա-  
 ուինն Աստուծոյ, և երգեն երգս  
 յարագուարձս օրոց յիշատակ լոկ  
 առ մեզ՝ Ժմիտս անմահութեան  
 ընդէլուղանէ ի սպասս և ի յիշա-  
 տակս մահու :

Հ. Ղ. Մ. Ա.



# ՄՆՈՒՆԴԻՔ

## ՍՐՏԻ ԵՒ ՀՈԳԻՈՅ



### ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ

- \* Ձինչ է վախճան մեր, բայց հասանել յԱրքայութիւնն անվախճանն : - Ս. Օգոստին :
- \* Ձինչ հողոյ արժանաւոր . զինչ գուշակէիւ Արքայութեան երկնից : Ս. Բարսեղ :
- \* Նորոյ երկնից և նորոյ երկրի՝ ըստ ակեակացն հայեցեալ՝ սղասեմք, յորս արդարութիւնն բնակէ : - Բ. Պետր. Գ. 15 :
- \* Կատարեալ է ժամանակ, և հասեալ է Արքայութիւնն Աստուծոյ : - Մարկ. Ա. 16 :
- \* Ձայս դիտասցէք, զի մերձեալ է Արքայութիւնն Աստուծոյ : - Ղուկաս. Ժ. 9 :

\* Շրջեր Յիսուս ընդ ամենայն կողմն . .  
 և քարոզէր զաւետարանն Արքայու-  
 թեան , ( ասելով ) . Խնդրեցէք նախ  
 զԱրքայութիւն Աստուծոյ , և զարդա-  
 բուծիւն նորա . և այն ամենայն յաւել-  
 ցի ձեզ : — Մարթ . Դ . 25 Զ . 55 .

\* Աւերայութիւն երկնից քանաքարի և  
 բուռնք յափշտակեն զնա : — Ն . ԺԱ . 12 .

\* Չայն արարչին Աստուծոյ գոչէ ասե-  
 լով . Եկացք օրհնեալք Հօր իմոյ , ժառան-  
 դեցէք զպատրաստեալ ձեզ զԱւերայու-  
 թիւնն ի սկզբանէ աշխարհի : — Շարտիսն :

\* Փողն երկնաւորին Աստուծոյ ահա  
 դին ձայնիւ գոչէ , ասելով . Ահա փեսայ  
 դոսց , արիք ընդ առաջ նորա : — Ն :

\* Ամենայն ինչ պատրաստ է . եկացք  
 ի հարսանիսս : — Երթոցք յանցս ճանա-  
 պարհաց և զորս միանգամ գտանիցէք  
 կոչեցէք ի հարսանիսս : — Մարթ . ԻԲ . 4 :

\* Ո՛վ բարի հրաւիրողին քաղցրոսնայ-  
 նութեան բարբառն : — Ո՛վ հայրապատ-  
 բաստ ընթրեացն լիութիւնք : Ո՛վ փեսա-  
 յին անմահ ճոխութիւն : Ո՛վ առադաս-

տիցն այնոյիկ սրահք և սենեակք պալ-  
 պաջուն և լուսերփնից : . . Ո՛վ անքակ սե-  
 րոյն միաւորութեանն : Ո՛վ անկարական  
 ուրախութեանցն հանդէսք : Սրդ երանի  
 և երանելի է՝ որ այնմ հարսնարանի մը-  
 տից արժանաւոր լինիցի : — Արեւորտի :

\* Երանելիք են ամենեքեան՝ որ կոչե-  
 ցեալ են յընթրիս հարսանեաց Գառիւնն :  
 — Յարտ . ԺԹ . 9 :

\* Որպէս ջուր ցուրտ անձին ծարաւոյ  
 ախորժելի է , նոյնպէս աւետիք բարեաց  
 յերկրէ հեռաստանէ : — Արտի . ԻԵ . 25 :

\* Ուրախ եղէ ես ընդ այնոսիկ՝ ոյք  
 ասէին ցիս . Ի տուն Տեառն երթիցուք  
 մեք : — Հասեալ կային ոտք մեր առ դուռ-  
 նըս քո , Երուսաղէմ : Անդ ելին ազգք՝  
 ազգ Տեառն : — Սողոմ . ձԻԱ . 4 :

Անդ պատրաստեաց Տէր զօրհնութիւն  
 և զլիւանան յաւիտեանից : — Ն . ձԼԲ . 4 :

Տեսցես դու զաւրուծիւն յԵրուսա-  
 ղէմ , զամենայն աւուրս կենաց քոց : —  
 Ն . ձԻԵ . 5 :

Անդ ուրախ եղիցուք մեք ի նա՝ որ

տիրէն զօրութեամբ իւրով յաւիտեանից:—  
Ն. 45. 7:

\* Ո՛րպէս սիրելի են յարկք քո, Տէր  
զօրութեանց, ցանկայ և փափաղէ անձն  
իմ ի դաւիթս քո: — Սիրտ իմ և մարմին  
իմ ցնծասցէ առ Աստուած կենդանի: —  
Քանզի ճնճողուկ եղիտ իւր տուն, տա-  
տրակ՝ զբոյն, ուր դիցէ զձագս իւր: — Սե-  
ղան քո, Տէր զօրութեանց, թագաւոր իմ  
և Աստուած իմ: — Երանի ամենեցուն որ  
բնակեալ են ի տան Տեառն. յաւիտեա-  
նըս յաւիտեանից օրհնեսցնն զքեզ: —  
Ն. 29:

\* Չայն ցնծութեան փրկութեան ի  
յարկս արդարոց: — Ն. ձԺԿ. 14:

\* Բացէք ինձ զլրունս արդարութեան,  
զի մտից ընդ այն, և խոստովան եղէ՞  
Տեառն: — Այս զուռն Տեառն է, և ար-  
դարք մտանեն ընդ սա: — Ն. 17. 8:

\* Լուայ զձայն մեծ՝ որ ասէր, Վերա-  
ցիք, ելէք աստ: — Յայրն. ԺԱ. 12:

\* Եւ տեսի երկին նոր և երկիր նոր.  
քանզի առաջինն երկինք և երկիր էանց

... և զքաղաքն սուրբ զնոր Երուսաղէմ  
տեսի, զի իջանէր յԱստուծոյ և յերկնից,  
զարդարեալ և պատրաստեալ որպէս  
հարսն առն իւրոյ: Եւ լուայ ձայն յերկնից,  
որ ասէր. Ահա ասիկ խորանն Աստուծոյ  
իմէջ մարդկան, և բնակեսցէ ընդ նոսա. և  
նոքա ժողովուրդ նմա, և սա Աստուած  
նոցա. և ջնջեսցէ զամենայն արտօսը յա-  
չաց նոցա. և մահ ոչ ևս գոյ. ոչ սուգ և ոչ  
աղաղակ, ոչ ցարք և ոչ աշխատանք՝ ոչ ևս  
գոյ. զի առաջինն էանց ... Որ յաղթէ՝  
ժառանգեսցէ զայս ամենայն. և ես եղէց  
նոցա Աստուած, և նոքա եղիցին ինձ որ-  
դէք: ... Քաղաք մեծ և սուրբ Երուսաղէմ,  
զի իջեալ էր յերկնից առ ի յԱստուծոյ,  
և ունէր զփառս Աստուծոյ. և էր ի նմա  
լուսաւորութիւն նմանեալ ականց պա-  
տուականաց. . . և քաղաքն էր ոսկի մա-  
քուր, նման սուրբ և սղիտակ սալակոյ. և  
հիմունք քաղաքին յամենայն ականց պա-  
տուականաց. . . և ընդարձակութիւն քա-  
ղաքին ոսկի մաքուր՝ որպէս զալակի պայ-  
ծաւ: Եւ տաճար ոչ տեսի ի նմա. քանզի

Տէր Աստուած ամենակալ տաճար էր ի նմա, և Գառնն. և քաղաքին չէին պէտք արեգական և լուսնի՝ զի լուսաւորեացին զնա. քանզի փառքն Աստուծոյ լուսաւորէին զնա յամենայն ժամ. և ճրագ ի նմա Գառնն... և զրունք նորա ոչ փառէին ի տուէ և ի գիշերի, այլ բաց կային հանապազորոք. և գիշեր ոչ ևս լինէր ի նմա: ... Եւ ոչ մտցէ անդ ամենայն շարակամ և պիղծ և ստուծիւն, բայց միայն որ գրեալ են ի դպրութիւն կենաց Գառնին: ... Եւ թագաւորեացին յաւիտեանս յաւիտենից: — Ն. ԻԱ:

\* Արբեացին նոքա ի պարարտութեան տանքո, և զուղիս փափկութեանքո տացես ըմպել նոցա: — Ի. քէն է, Տէր, աղբիւր կենաց. և լուսով երեսաց քոց տեսանեմք զդոց: — Սաղմ. 1. 10:

\* Ի տան Հօր իմոյ օթեղանք բազում են... երթամ և պատրաստեմ ձեզ տէր. դարձեալ դամ և առնում զձեզ առ իս. զի ուր եսն եմ և դուք անդ իցէք: — Յովհ. ԺԳ. 5:

\* Ի պատրաստեալ քո օթեղանս Արբոց քոց՝ ընկալ և զմեզ, Փրկիչ, յորդեգրութիւն, ի դպրութեան կենաց: — Դոր:

\* Եթէ որ ոչ ծնցի վերստին (չնորճօք), ոչ կարէ տեսանել զԱրքայութիւն Աստուծոյ: — Եթէ որ ոչ ծնցի ի ջրոյ և ի Հոգւոյ՝ ոչ կարէ մտանել յԱրքայութիւնն Աստուծոյ. զի ծնեալն ի մարմնոյ մարմին է, և ծնեալն ի Հոգւոյ՝ հոգի է: — Յովհ. Գ. 3:

\* Ոչ ամենայն որ ասէ յիս՝ Տէր, Տէր, մտցէ յԱրքայութիւն երկնից, այլ որ ասն է զկամս Հօր իմոյ: — Մատթեոս. 13. 21:

\* Արքայութիւն երկնից բռնադատի, և բուռնք յախշտակեն զնա: — Ն. ԺԱ. 12:

\* Ձեզ սուեալ է գիտել զխորհուրդս Արքայութեան երկնից, և նոցա (ամենեցուն) չէ տուեալ: — Ն. ԺԳ. 41:

\* Նման է Արքայութիւն երկնից հատոյ մանանխոյ, որ փոքր է քան զամենայն սերմանիս, և յորժամ աճիցէ՝ մեծ է քան զամենայն բանջարս, և լինի ծառ, մինչև զալ թուչնոց երկնից և հանգչել յոսոս նորա: — Ն. 51:

\* Նման է Արքայութիւն երկնից՝ խըմօրոյ, զոր առեալ կնոջ՝ թաքոյց ի գըրիւս երիս ալեր, մինչեւ ամենայն խմօրեցաւ : — Ն . 55 . (կին՝ խմա ինձ զեկեղեցի՝ մայր հաւատացեղոց, զորս խմօրէ երիւք գրուօք Հաւատոյ, Յուսոյ և Սիրոյ, ի մի զանգուած քրիստոնէութեան) :

\* Նման է Արքայութիւն երկնից՝ դանձի ծածկելոյ յադարակի, զոր դտեալ մարդոյ՝ թագոյց . և ի խնդութեանէ անտի երթայ վաճառէ զամենայն զոր ինչ ունի, և զնէ զադարակն զայն : — Ն . 44 :

\* Նման է Արքայութիւն երկնից աուն վաճառականի, որ խնդրիցէ մարդարիտս գեղեցիկս . և գտեալ մի պատուական մարդարիտ, երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր, և զնեաց զայն մարդարիտ : — Ն . 45 :

\* Դարձեալ նման է Արքայութիւն երկնից ուռվանի՝ արկելոյ ի ծով, և յամենայն աղբաց ժողովելոյ . զոր՝ իբրև լըցաւ, հանեալ ի ջրամաք, և նստեալ՝ ժողովելին զբարի բարին յամանս, և զխտտանն ի բաց ընկեցին : — Ն . 47 :

\* Նմանեացի Արքայութիւն երկնից տանն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փեսային և հարսին : Հինգն ի նոցանէ յիմարք էին, և ձէթ ընդ իւրեանս սչ բարձին . և հինգն իմաստունք, առին ձէթ ամանօք ընդ լապտերս իւրեանց : Եւ ի յամեւ փեսային՝ նիրհեցին ամենեքեան և ի բուն մտին : Եւ ի մէջ գիշերի եղև բարբառ . Ահա փեսայ զայ, արիք ընդ առաջ նորս : Յայնժամ յարեան ամենայն կուսանքն . և կազմեցին զլապտերս իւրեանց : — Ն . 11 :

\* Իմաստուն կուսանքն տատրաստեալ իւղ լապտերաց՝ ելին ընդ առաջ երկնաւոր փեսային՝ վառեալ լապտերօք իսկ յիմարաց կուսիցն ունայնացեալք ի յիւղոյն, անտատրաստ գտան զալստեան փեսային շիջեալ լապտերօք : — Շարձան :

\* Եկն փեսայն, և տատրաստքն մտին ընդ նմա ի հարսանխոն, եւ փակեցաւ դուռնն : — Մարի . 11 . 10 :

\* Վասն որոյ և մէք տատրաստեացուք իւղ հոգևոր, զի մտցուք ի յառաքանս

անմահ փեային վառեալ լապտերօք : —  
 Յորժամ եկեղեցի հարսնացեալ միանայ  
 ընդ Փեայիդ, ընդ իմաստունսսուրբ կու-  
 սանայն արժանացո՞ առաքաստին զմեզ,  
 ընդ նոսին երգեւ զիառս ի բարձունս : —  
 Ծարսխան .

\* Զմի խնդրեցի ի Տեառնէ ; և զսոյն  
 աղաչեմ, բնակիւ ինձ ի տան Տեառն  
 զամենայն անուրս կենաց իմօց : Տեառ-  
 նեւ ինձ զվայելչութիւն Տեառն, և հրա-  
 ման տալ ի տաճարի նորա : Սաղմ. ԻԶ. 5. 6.

\* Ընկալեալ զնոսա ( զժողովուրդն՝  
 Տերն մեր ), խօսէր ընդ նոսա վասն Ար-  
 քայութեանն Աստուծոյ : — Գլ. Կ. Թ. 11.

Իբրև լուաւ զայս ոմն 'ի բազմակա-  
 նացն՝ ասէ ցնա . Երանի՛ որ կերիցէ ճաշ  
 յԱրքայութեան Աստուծոյ : — Ն. ԺԳ. 15.

\* Ոչ գայ Արքայութիւնն Աստուծոյ  
 խտրանօք . և չտիցեն , թէ ահաւասիկ  
 աստէ կամ անդ . զի ահա Արքայութիւնն  
 Աստուծոյ ի ներքս ի ձեզ է : — Ն. ԺԷ. 24 :

\* Թոյլ տուք մանկուոյդ դաւաւ իս ,  
 զի այդպիսեացդ է Արքայութիւն Աս-

տուծոյ : Ամէն ասեմ ձեզ , որ ոչ ընդու-  
 նիցի զԱրքայութիւնն Աստուծոյ իբրև  
 զմանուկ՝ ոչ մտցէ 'ի նա : — Ն. ԺԷ. 16 :

\* Որ արժանի լինիցին այնմ աշխար-  
 հի հասանել և յարութեանն որ ի մե-  
 ուելոց , հաւասար հրեշտակաց են , և որ-  
 դէք Աստուծոյ , քանզի յարութեան որ-  
 դէք են : — Ն. Ի. 54 :

\* Ուխտեմ ձեզ , որպէս և Հայր իմ  
 ուխտեաց ինձ , զԱրքայութիւն . զի ու-  
 տիցէք և ըմպիցէք ի սեղան իմ յԱրքա-  
 յութեանն իմում : — Ն. ԻԲ. 29 :

\* Յիշեա զիս , Տեր , յորժամ գայ-  
 ցես արքայութեամբ քով : — Այսօր ընդ  
 իս իցես ի դրախտին : — Ն. ԻԳ. 45 .

\* Խաւարն անցանէ , և լոյսն ճշմա-  
 րիտ արդէն իսկ երևի : — Ա. Յ. Կ. Բ. 8 .

\* Այժմ որդէք Աստուծոյ եմք . և . . .  
 յորժամ նա յայտնեսցի՛ նման նմա լի-  
 նելոց եմք . զի տեսանելոց եմք զնա որ-  
 պէս և էն : — Ն. Գ. 2 :

\* Արքայութիւնն Աստուծոյ ( ի վե-  
 րայ երկրի է ) արդարութիւն և խաղա-

դուժիւն և խնդութիւն 'ի Հոգի Սուրբ: —  
Հուս. ԺԳ. 16:

\* Չոր ակն ոչ կտես և ունկն ոչ  
լուաւ, և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զայն  
պատրաստեաց Աստուած սիրելեաց իւ-  
րոց: — Ա. Կ. Բ. Բ. Բ. 7:

\* Մեր առաքելութիւն յերկինս է,  
ուստի և Փրկչին ակն ունիմք, որ նորո-  
գեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ,  
ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւ-  
րոց: — Փիլիպ. Գ. 20:

\* Եթէ յարերուք ընդ Քրիստոսի՝ ա-  
պա զվերինն խնդրեցէք. զվերինն խոր-  
հեցարուք. մի զայս որ յերկրի աստ է.  
քանզի մեռարուք, և կեանքն ձեր ծած-  
կեալ են ընդ Քրիստոսի. իսկ յորժամ  
Քրիստոս յայտնեսցի կեանքն ձեր, յայն-  
ժամ և դուք ընդ նմա յայտնեսչիք փա-  
ռօք: — Կողա. Գ. 1:

\* Արժանի լինել ձեզ Առքայութեանն  
Աստուծոյ, վասն որոյ և զճնութիւնդ  
կրէք... Եւ ձեզ նեղելոցդ՝ հանգիստ  
ընդ մեզ 'ի յայտնութեանն Տեառն մեզ

րոյ Յիսուսի Քրիստոսի: — Բ Թե. Ա. 5:

\* Եղիցի (ինձ, Տէր) նշոյլ առաւօ-  
տու հողոյ գարնայնոյ, ընդ ակնկալու-  
թեան սպասողացն քումդ երևման: —  
Ընկղմեալ, զմայլեալ և ի սալաւ ծած-  
կեալ ի յանճառութենէ առաւելու-  
թեան մեծիդ երախտեաց, որ ամենա-  
ւատ լրմամբ... համբարեալ կան բա-  
րութիւնք: — Նաբի. Լի. 26:

\* Հանդերձեսցուք պաշար օթեվանայ  
մերոց, նեղ և նուրբ ճանապարհին: —  
Չգծ:

\* Կենդանեաց աշխարհն, ուր ոչ լի  
համբաւ մահու: — Գր. Լ. 1:

\* Չինչ ինչ այնպիսի աւետեաց լիցի  
դուզական, զի Աստուած յերկրի և  
մարդիկ յերկինս: — Ո. Բ. Մ. Բ. Ա:

\* Մեր եթէ որչափ ինչ հետի իցեմք  
յերկնից քաղաքէն՝ շղիտեմք. եթէ ջա-  
նայաք հատանել անցանել զերկայնու-  
թիւնն՝ և զբացարձակութիւնն զիտէսք:  
Թէ փութայցեմք՝ և ի միում իսկ վայրկե-  
սի երթեալ ի դրունս հասանիցեմք: — Ն:



և ճանապարհ երկնից մտից : — Լուսն .  
Սուրճ . ԽԱ :

\* Հար զմեզ ( ո՛վ Տէր ), ի հնձանդ  
երկնային , և զմայլեցո վերնուլի , և ամ-  
բարեա ի շտեմարանս քո , և զուարճա-  
կից արա . զի կերիցուք և արբոցուք յար-  
քայութեան քո , ըստ անուուտ խոստման  
Միածնի քո , զխորհուրդս՝ որոց այժմ  
քաղցեալք՝ մնամք անձաշակ , և փափա-  
գեալք՝ մնամք ծարաւի : Ո՛վ մարդասէր ,  
արա զմեզ փշրանաց վերին սեղանոցդ  
արժանի , որպէս ստորին սեղանոյն փըշ-  
րանաց՝ զկիրնն քանանացի : — Ն . Պարգ :

\* Հանդո զաշխատանս մեր՝ ի քոյ օ-  
թեվանաւ , ուր դու գնացեր , ո՛վ Տէր ,  
և խոստացար : — Ն :


\* Ի նաւահանգիստ շորհին գիտու-  
թեան և սիրոյն՝ հասեալ հոգին , զալէ-  
կոծութիւն անցից իւրոց պատմէ , զոր  
յառաջադոյն կրեաց : — Ն . Սուրճ . ձժի :

\* Զոր ինչ բարի զմտաւ ածես և  
ցանկաս նմին , անդանօր աններհակ է  
պատրաստեալ : — Ն . ձժի :

\* Յորժամ բողբոսպատուք այխարհի  
բովանդակեացին , առանց մեր կոչիլոյ՝  
ինքն Տէրն արարածոցս յերկնից յերկեր  
կիեալ . . . վերինք և ներքինք միարա-  
նին . . . ի վերայ անուշահոտ օւռոցն ան-  
մասից՝ կակուղ և վափուկ գարշապա-  
րօք՝ մարդիկ յանհատական սարս հրեշ-  
տակաց միարանին : — Երկն . Ըրդ Մուրբ :

\* Ահա ժողովուրդ բազում՝ որոց ոչ  
Էլլը թիւ , յամենայն ազգաց և յամե-  
նայն լեզուաց և յամենայն ժողովրդոց ,  
որք կային առաջի Աթոռոյն և առաջի  
Գաւիւնն , արկեալ զխրեամբք հան-  
գերձս սոլխակս , և արմաւենիտ ի  
ձեռս իւրեանց , աղաղակելն ի ձայն  
մեծ , և ստելին . Փրկութիւն Աստու-  
ծոյ մերոյ . . . ամէն , օրհնութիւն և ի-  
մաստութիւնն և դոհութիւն և սլախու  
և զօրութիւն և շնորք Տեառն Աստու-  
ծոյ մերոյ , յաւիտեանս յաւիտենից ,  
ամէն . . . : Սոքա են որ դան ի վշտաց  
մեծաց . և լուսոյին զարկանելիս իւ-  
րեանց , և սպիտակացոյցին արեամբ

24-2007



Գառինն . վասն այնորիկ են առաջի աթոռոյն Աստուծոյ , և սաշտեն զնա ըզտիւ և զգլխէր ի տաճարի նորա . և որ նստի ի վերայ աթոռոյն՝ քնակեալ է ՚ի նոսա : Ոչ քաղցիցեն և ոչ ծարաւիցեն , և ոչ ոք մեղիցէ նոցա , ոչ արեղակն և ոչ տօթ . և Գառնն ՚ի միջոյ աթոռոյն իւրոյ հովուեսցէ զնոսա , և առաջնորդեսցէ նոցա ի կենաց աղբիւր ջրոյ կենդանոյ . քանզի եհատ Աստուած զամենայն արտօսր յերեսաց նոցա — Յայր . է :

\* Արդարեւ երանի՛ է նոցա՝ որք յաստուածային յայն ի լեառն գեղասպարեն զօրհնութիւն երգոց , որպէս ընթերցարք . առ որս մեռաւ մահու յաղթութիւնն . որք տեսանեն զիսառս չքնաղս յուսոյն իւրեանց Քրիստոսի , որում անձկացան . յորոց ձեռն մաղթեսցոյրք , ասելով . Չարթո՛ զզօրութիւնս և եկ ի կեցուցանել զմեզ . և , Դարձս՝ զաչս ծառայից քոց , զի մի տեսցեն զնանրութիւն սնտաի կենցաղոյս : — Լուի . Մեկն . Յայրն :

\* Քրիստոս՝ յոյս արարածոց փայլէ :

և յախշտակին արդարքն յամպս լուսաւորս՝ ի հանդիպումն նորա . թռչին արդարք արժանաւորք նորա՝ ՚ի բարձունս օդոց . անկարծելի վառօք տեսանեն զերկնաւոր փեսայն , զանմա : Տէրն . . : Երանութիւն են և խնդութիւնք արժանաւորայն Քրիստոսի : Երանի՛ այնմ որ փութացաւ արժանաւորել աւուրն այնմ միկ . և թշուառական է այն՝ որ անարժան զինքն առնէ ժամուռն այնմիկ . . . Ո՞տացէ զլիտոյ խմոյ ջուր անբաւ , և աչաց խմոց աղբիւրս բղխելոյ , միշտ արտասուելով աննուազ՝ մինչև ժամանակ լինել արտասուաց , և լայի զիս ի տուէ և ի գլխէրի , աղաչել զԱստուած՝ զի մի անարժան գտայց ի ժամուռ նորա զալլատեսան , և մի լուայց զահաւոր ձայնն՝ որ ասէ , Ե՛րթ յինէն , մշակիզ անխրաւութեան : — Մաշտոց :

\* Տաղտուկ է կեալ յերկրի , մինչ այնքան գեղեցիկ են երկինք : — Այլ :

\* Չկայ ինձ խնդիր և ցանկութիւն որոց , ոչ յերկինս և ոչ յերկրի . բայց

առ քեզ (Տէր) ցանկութիւնս իմ նուազ  
դէ զիմ սիրտս . և դու ես իմ սրտիս  
բաղձանս : — Խոր . Ժ . Գր :

\* Առաջնոյ անմահութեանն ( որ առ  
Ադամ ) տուեալ էր կարողութիւն չմե-  
ռանելոյ , երկրորդէ անմահութեանս (որ  
Քրիստոսիւ՝) տուեալ է չկարել մեռա-  
նել : — Պատիւ :

\* Յանկութիւն վերին ճանապարհին՝  
և յահագինս համարձակեցոյց (դՅդիւս) : —  
Բարսէլ :

\* Քեզ սլատրաստեաց Վարքայութիւն՝  
Դուրութիւնն : — Ն :

\* Որոյ թագաւորութեանն ոչ գոյ  
վախճան : — (Քանիցս և լսէր զայս բան  
հաւատոց , ոչ կարէր ժոյժ ունել հրճուա-  
նացն՝ Ս . կոյսն թերեւէ ) :

\* Քանի անարդ և խոտան երևի ինձ  
երկիրս , յորժամ զերկինս նկայտեմ : Ար-  
քայութիւն , արքայութիւն , դու եղիցիս  
իմ բնակութիւն յաւիտենական : — Այլ :

\* Ո՛վ Արքայութիւն , արքայութիւն ,  
երբ տեսից զքեզ : — Փելեո . Ների :

\* Ոչ է ժամանակս՝ քնոյ , այլ դուն  
բորժեւոյ յառաջելի յաւիտենականու-  
թիւն անդր : — Այլ :

\* Լայր սուրբ կոյսն Վարդուհի Լիմայ ,  
յորհասին դահու , և հարցեալ՝ ասէր . Ոչ  
ընդ ցաւս և ոչ ընդ մահ իմ լամ , այլ  
զի ոչ շատ ինչ կրեցի առ ի ժառանգել  
Վարքայութիւն երկնից : Եւ ընդ ասելն՝  
և արիւն ընդ բերանն . իբրև խաղաղե-  
ցաւ , ասէր . Ընկալ , Յիսուս , զարիւնս  
դայս՝ փոխանակ արեանն՝ զոր փախա-  
զէի հեղուլ ի փառս քո :

\* Յորսայս դնէր Սուրբն Մարտինոս՝  
յաւուր մահուանն . և յասել աշակեր-  
տին զի ընկողմանեսցի , ետ սլատասխա-  
նի . Թոյլ տուր ինձ հայել ընդ երկինս ,  
և մի խափաներ զիս ի հայեւոյ ընդ ճա-  
նապարհ՝ ընդ որ գնալոց է հոգիս իմ  
առ Աստուած :

\* Որ յաւիտենականութեան ցանկայ՝  
ոչ փախազէ երկարութեան աւուրց : —  
Ֆր . Սուէլ :

\* Տէր , մերձեցո զիս առ քեզ . թէսլետ

և ստեղծեր զիս վասն քո, այլ ցորչափ  
յերկրի գեգերիմ՝ ոչ եմ լիովին առ քեզ:  
Տէր, ձգեա զիս առ քեզ: — Ասլ:

\* Երգէին երգս նորս, ըստ Տեսա-  
նողին, Սուրբքն յԱրքայութեան. որ է  
նշանակ անձանձիր և հանապաղ նորա-  
ճաշակ վայելից փափկութեան: — Ս. Լիֆ:

\* Ո՛վ յաւիտենականութիւն, որ զմը-  
տաւ ածէ զքեզ՝ և ոչ ապաշաւէ, կամ  
հաւատս ոչ ունի, կամ թէ ունիցի՝ այլ  
սիրոս ոչ ունի: — Օգոստ:

\* Երանեալն՝ երանեալ է ոչ այնքան  
վասն խնդութեան զոր յինքեան զգայ,  
որքան վասն խնդութեան վայելիւց յԱս-  
տուած: — Լիֆոստի:

\* Աստուած իմ, երբ իցէ զի կղիցիս  
ինձ ամենայն յամենայնի. երբ իցէ զի  
ասացից, թէ Ոչ ևս կարեմ կորուսանեւ  
զքեզ: — Ն:

\* Ո՛հ, երբ իցէ ինձ, ո՛վ Տէր, երբ  
Զմայլել ի սեռ քոյին աներբ:  
Երբ ըստացայ ըզքեզ համբուն,  
Արքայութիւն, Արքայութիւն: — Ն:

ՍՐԲՈՒԹԻԻՆ

Ո Ղ Զ Ա Խ Ո Ն Ո Ի Թ Ի Ի Ն



Երանի այնոցիկ որ սուրբ են սըր-  
տիւք, զի նոքա զԱստուած տեսցեն: —  
Մարթ. Ե. 8:

\* Ահա Գառն կայր ի վերայ լերին  
Սեոնի. և երգէին զերգս նորս առաջի  
աթոռոյն. և ոչ ոք կարէ գիտել զերգս  
նոցա: . . Սոքա են որ ընդ կանայս ոչ  
խառնակեցան, և են կուսանք: Սոքա  
զկնի երթան Գառինն՝ ուր և երթիցէ:  
Սոքա ընտրեցան ի մարդկանէ առաջի  
Աստուծոյ և Գառինն: — Յայր. Ժ. Գ. 2:

Տուաւ նոցա արկանելիս սպիտակս,  
և ասացաւ նոցա՝ զի հանդիցեն փոքր մի  
ժամանակ: — Ն. 2. 9:

\* Ո՛վ է սա որ երեւեալս է իբրև դա-  
ռաւօտ . դեղեցիկ իբրև զլուսին , ընտիր  
իբրև դարեգակն , զարմանալի յօրի-  
նեալ : — Եր 4 . 9 . 1 :

\* Էջ ի սարաեղ իւր ( Տէր ) , հալուել  
ի բուրաստանս , և ժողովել շուշանս  
( սուրբ սրտից ) : Ն . 9 :

Ես ծաղիկ դաշտաց , շուշան հով-  
տաց : իբրև շուշան 'ի մէջ փշոց ( փոր-  
ձութեանց ) : — Ն . 6 . 1 :

\* Ես ( անբձութիւն ' թեպէտև ) նըն-  
ջեմ , սիրտ իմ արթուն կայ : — Ն . 5 . 1 .

\* Աչք նորա ( ամբիժք ) իբրև զաղաւ-  
նիս ի վերայ լիութեան ջրոց : — Ն . 12 .

Քանի գեղեցկացար , և քանի փափ-  
կացար ( ո՛վ անբձութիւն ) . Սէր ի փափ-  
կութեան քում : — Ն . 5 . 6 :

\* Գլխի զիս ( զողջատհոսութիւն ) իբրև  
զկնիք ի վերայ սրտի քում , և իբրև ըզ-  
մատանի՛ յաջոյ ձեռին քո : — Ն . 6 :

\* Գիտացի զի մարմին զբօսացուցանէ  
զմանկութիւն : — Ն . 6 . 1 :

\* Յորքան ժամանակս անմեղք իցին՝

զհետ արդարութեան մի՛ ամաչեսցեն : —  
Ա . 22 :

\* Ամենայն սրտայնութեամբ սրտայն  
զպրտ քո , զի ի սոցանէ են եւք կինաց :

Աչք քո ուղիղ հայեսցին , և ար-  
տեւանունք քո արդար ակնարկեսցեն : —  
Ն . 7 . 25 . 25 :

\* Եթէ ակն քո աջ գայթակղեցուցաւ  
նէ գրեղ՝ իլեւս զնա և ընկեա ի քէն .  
զի լաւ է քեզ՝ եթէ մի յանդամոց քոց  
կորիցէ , և մի ամենայն մարմինդ քո ան-  
կանխի ի գեհնն : Եւ եթէ աջ ձեռն քո  
գայթակղեցուցանէ գրեղ , հա՛ն զնա և  
ընկեա ի քէն . զի լաւ է քեզ , և այլն : —  
Մ . 7 . 6 . 29 :

\* Մի փարիւր ի՛ գերեզ՝ որ ոչ քո ի-  
ցեն : — Առաի . 5 . 20 :

\* Ո՞չ զիտե՛ թէ երկրածինք առ նմա  
կուրնչին , և ի թախս դժոխոց հասանեն :  
Այլ դու . . մի հաստատեր զակն քո ի  
նա : — Ն . 6 . 18 :

\* Լուարուք զի ասացաւ , Մի շնար .  
բոյց ես անիմ ձեզ , թէ ամենայն որ

հայի է կին մարդ՝ առ 'ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա 'ի սրտի իւրում: — Մտթ. Ե. 27:

\* Իմացարուք, անմհղք, զխորագիւտութիւն (զգուշութեան): — Առախ. Ը. 5.

\* Ո՞վ պարծեսցի սիրտ սուրբ ունեւ. կամ ո՞վ համարձակեսցի՝ եթէ ազատ էցէ ի մեղաց: — Ն. Ի. 9:

\* Երեւամասրդ որ 'ի սրբութեան է՝ ուզիդ են ճանապարհք նորա: — Ն. 11:

\* Կներ մեղք, որդեակ, զի բարի է (անմեղութիւն), և խորիխի՝ զի քաղցրասցի կոկորդ քո: — Ն. ԻԳ. 15:

\* Դարմանեա զւաշտս (մաքուր սըրտի), զի եղիցին քեզ գառինք (հրճուանք անխիղճք): — Ն. ԻԿ. 26:

\* Կթեա կաթն և եղիցի իւր, ապա թէ կարի ճմլեսցես զպոկուսն՝ ելանէ արին: — Ն. Լ. 55:

\* Տէր, ո՞վ կացցէ ի խորանի քում, կամ ո՞վ բնակեսցէ ի լեանս սուրբ քո: — Որ զնայ ամբիծ, գործէ զարդարութիւն, իօսի զճմարտութիւն ի սրտի իւրում: — Սաղմ. ԺԳ. 1:

Ո՞վ ելցէ ի լեանս Տեան, կամ ո՞վ կացցէ ի տեղոջ սրբութեան նորա: — Որ սուրբ է ձեռք, և ամբիծ սրտի...: Սա առցէ զօգնութիւն ի Տեանէ, զուղարմութիւն յԱստուծոյ փրկէ իւրմէ: — Ն. ԻԳ. 4:

\* Ի մտի եղի՝ թէ սակայն և այս ջան է առաջի իմ, մինչև մտից ի սրբութիւն Աստուծոյ: — Ն. ԼԲ. 15:

\* Արածէր զնոսա իմաստութեամբ սրտի իւրոյ, յանմեղութիւն ձեռաց իւրոց առաջնորդէր նոցա: — Ն. 2Կ. 75:

\* Դարձո զաչս իմ, զի մի տեսից ըւնանրութիւն. ի ճանապարհս քո կեցո՞ղիս: — Ն. ՃԺԸ. 57:

Եղիցի սիրտ իմ ամբիծ յարդարութեան քում, զի մի ամաչեցից: — Ն. 80.

\* Գնայի ես յամբժութեան սրտի իմոյ՝ ի մէջ տան իմոյ: — Ն. Ճ. 2:

\* Սուրբ եմ ես, և զուք սուրբ եղիւրուք, ասէ Տէր:

\* Ո՞վ իցէ սուրբ յազտոյ. այլ և ոչ ոք. թէսէտև միոյ առուր իցին կեանք

նորա ՚ի վերայ երկրի: — ՅԷ. ԺԳ. 4:  
— Եթէ սրբոց ոչ հաւատաց, և երկինք  
ոչ են անաբառ առաջի նորա, թող թէ  
այր դարչ և անսուրբ: — Ն. ԺԵ 15:

\* Իսկ ո՞վ կարացցէ անրել: — ՅԷ  
սուս ասէ. Առ ի մարդկանէ այդ ան-  
հրնարին է, այլ ոչ առ ի յԱստուծոյ: —  
Մարտ. Ժ. 26.

\* Տէր, եթէ կամիս՝ կարող ես զիս  
սրբել: — Կամիմ, սրբեաց: — Մարտ. Բ. 2:

\* Օրէնքն հոգևոր են, այլ ես մար-  
մնաւոր եմ, ընդ մեղօք վաճառեալ. զի  
զսր դործեմն՝ ոչ զիտեմ. ոչ եթէ զոր  
կամիմ՝ զայն առնեմ, այլ զոր ատեմն՝  
զայն դործեմ: . . Հոճեալ եմ ընդ օ-  
րէնսն Աստուծոյ՝ ըստ ներքին մարդոյն.  
Ըայց ատեմնեմ այլ օրէնս յանգամս  
իմ, զինեալ հակառակ օրինաց մտաց ի-  
մոց: . . Այր մի տառապեալ եմ ես, ո՞վ  
ստղեցուցցէ զիս ի մարմնոյ աստի մա-  
հու: — Հրոմ. Ե. 14.

Խորհուրդ մարմնոյ՝ մահ է. և խոր-  
հուրդ՝ հոգւոյն՝ կեանք և խաղաղութիւն:

— Ար մարմնով են՝ Աստուծոյ հաճոյ լի-  
նել ոչ կարեն: — Եթէ Գրիստոս ի ձեզ  
է՝ ապա մարմին մեռեալ է: — Ն. Բ. 6-10:

\* Աղաչեմ զձեզ, պատրաստել զան-  
ձինս ձեր պատարագ կենդանի, սուրբ,  
հաճոյ Աստուծոյ: — Ն. ԺԲ. 4:

\* Մարմինք ձեր տաճար են Հոգւոյն  
Սրբոյ՝ որ է ի ձեզ, զոր ունիքն յԱս-  
տուծոյ. և չէք անձանց ակր. զնոց զնե-  
ցայք. փառաւոր արարէք զԱստուած ի  
մարմինս ձեր և յողիս ձեր: — Ա. ԿԳԲ. 2:

\* Ոչինչ է ի ծածուկ՝ որ ոչ յայտ-  
նեսցի, և դաղանի՝ որ ոչ ծանկիցի: —  
Մարտ. Ժ. 26:

\* Պարծանք մեր այս են վկայութիւն  
մտաց մերոց: Բ. ԿԳԲ. Ա. 12. (Եթէ  
ոչ ստղտանիցէ զմեզ):

Հոտ անոյշ եմք Գրիստոսի առ Աս-  
տուած (սրբութեամբ սրաի): — Ն. Բ. 45:

\* Ունիմք զգանձս զայս (մարմու-  
թեան) յամանս խեցեղէնս (զխրա-  
բեկս և զխրեղծանկիս): — Ն. Գ. 7:

(Վասն որոյ) ճնշեմ զմարմինս իմ և  
հնազանդեցուցանեմ ( մտացս խղճի ) : —  
Ա. ԿԻ՛րն . Թ . 27 :

\* Որ մահուամբ մարմնոյ քո՝ մեռու-  
ցեր զմեզս , ( Տէր Յիսուս ) , և յարու-  
թեամբ քո յարուցեր ի մեզ զարդա-  
րութիւն , տո՛ւր զօրութիւն հոգւոյս կա-  
մաց՝ հնազանդեւ զկամս մարմնոյս : —  
Շարձ :

\* Յամենայն ժամ զմահն Յիսուսի  
յանձինս մեր կրեսցուք , զի և կեանքն  
Յիսուսի ի մարմինս մեր յայտնեացին :  
Քանզի միշտ մեք որ կենդանիքս եմք՝ ի  
մահ մատնիմք վասն Յիսուսի . զի և  
կեանքն մեր յայտնի լինիցին ի մահկա-  
նացու մարմինս մեր : — Բ ԿԻ՛րն . Գ . 15 :

\* Թէպէտև մարմնով դնամք , այլ ոչ  
եթէ ըստմարմնոյ զհնուորիմք : — Ն . Ժ . 5 :

( Մի՛ լիցի , թէ ) Սկսեալ հոգւով՝ և  
արդ մարմնով վախճանիք : Այլ Հո-  
գւով դնացէք , և զցանկութիւն մար-  
մնոյ մի կատարէք . զի մարմին ցանկայ  
հակառակ հոգւոյ , և հոգի հակառակ  
մարմնոյ : — Գաղթ . Գ . 5 . Ե . 16 ,

\* Որ քրիստոսեանքն են՝ զմարմինս  
Երեանց ի խաչ հանին , կարեօքն և  
ցանկութեամբ հանդերձ : — Ն . 24 .

\* Զոր ինչ սերմանէ մարդ՝ զնոյն և  
հնձեսցէ : Որ սերմանէ ի մարմին իւր՝  
ի մարմնոյ անտի հնձեսցէ զապականու-  
թիւն . և որ սերմանէ ի հոգին՝ ի հո-  
գւոյ անտի հնձեսցէ զկեանս յաւիտե-  
նից : — Ն . 2 . 6 .

\* Ես զչարչարանս Քրիստոսի ի մար-  
մնի իմում կրեմ : — Ն . 17 .

\* Մերկացարուք զհին մարդն՝ գոր-  
ծովքն իւրովք , և զգեցարուք զնորն՝  
նորոգեալ ՚ի գիտութիւն , ըստ պատ-  
կերի արարչին իւրոյ . — Ա թԻ՛ . Գ . 5 .

\* Այս են կամք Աստուծոյ , Սրբու-  
թիւն ձեր : — Ն . Գ . 5 .

\* Ամենքին դուք որդիք լուսոյ էք և  
որդիք տուրնջեան . չեմք գիշերոյ , չեմք  
կաւարի : — Ն . Ե . 5 .

\* Զխաղաղութեան զհետ երթայք ընդ  
միմեանս , և զՍրբութեան . առանց ու-  
րոյ՝ ոչ դք տեսանիցէ զՏէր : — ԵՔԻ . ԺԲ .

\* Ամենայն ինչ սուրբ է սրբոց, այլ պղծոցն և անհաւատից՝ ոչ ինչ է սուրբ: այլ պղծեալ են միտք և խորհուրդք նոցա: — Տէր. Ա. 16:

\* Ճգնեցիր այնքան՝ որքան շիջուցան նեւ զմարմնոյդ շարժմունս կարճացես: — Ուրեմբար: 1:

\* (Այն այնոցիկ որք զձեւ և զվիճակ ունեւոյ մաքրազանից) Գտանիցին 'ի սրբութեան՝ անսուրբ, 'ի կուսութեան՝ անմաքուր: — Ո՞րքան սխալիմ անմաքուրութեանս եղիցի՝ զԱստուած զգեցողիս ներքոյ և արտաքոյ. — Նորեկ, Եւ. 1.9:

\* Բարձ (յինէն՝ Տէր), զստուռն սիրոյն, և զհային շերտութիւնն աղուական ակտիւն: — Ն. 1.15:

\* Սրբութիւն սրտի՝ է աղօթք առաւել քան զամենայն աղօթս: — Չ. 2.1:

\* Ի սրտեքազմի՝ սրտով խոյլ մարդ, ի խաղաղութեան՝ ցանկութեամբ: — Ա. 1.1:

\* Եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի: Մեք իսկ եմք երկինք և երկիր. զի զհոգի՝ յերկնից ունիմք, և լուսմարմին՝ յերկրէ ստացաք: — Կէր: 1:

\* Մի դուռն է տան քո, որ նա ինքն է տաճար Աստուծոյ. չէ քեզ պարտ և պատշաճ, ո՞վ մարդ, եթէ ընդ դուռն՝ ընդ որ թագաւոր մտանէ՝ հանցես ընդ նա աղբ կամ աղտեղութիւն ինչ: — Չ. 2.1:

\* Աստուհեաւ սիրեա դու զԿուսութիւն՝ զմասն երկնաւոր, զխառնումն զուարթնոց. չիք ինչ որ համեմատի նրամա: Որք այսպէսիք են՝ ի նոսա բնակէ Բրիտանոս: — Ն. 1:

Յայսմ մասին (ողջախոհութեան) զայ մեծ հասուցումն. վասն զի աղտուրութեամբ մերով կատարեմք զնա, և ոչ 'ի հնազանդութեանէ և ի հարկէ սրտուրանին. և չեմք մեք արգելեալ ընդ օրինոք նախա: . . Նմանութիւն է զուարթնոց երկնից. և յերկրի աստ սլարգեօք եղև ստացեալ ստացուածս այս: Մինչ կորն չի՝ այլ ոչ գտանի, և զնովք ոչ կարէ ստանալ զնա մարդ. ոչ որոյ են և կորուսանէ զնա, և ոչ որոյ չէ գտեալ և ընթանայ՝ կարէ հասանել նմա: — Ն. 1:

\* Արտաքինքն ասեն. թանձր որոս

վայն՝ միտս անօսրունս ոչ ծնանի : —  
Ո՛ւկէքէր :

\* Փափկու թիւնն զլիրկու թիւնն մատ-  
նէ : — Բարեւ :

\* Սանձեա զակն քո , զի սրալէս ոչ  
զիտես՝ յածի : — Ո՛ւկէք :

Ուխտ եղի աչաց իմոց , և ոչ հայեցաւ  
ի կոյս : — Յ՜ճ . ԼԱ . 1 :

\* Յանմեղու թիւնն ահա տակեցիս սրբ-  
տիւ , և 'ի սրբու թիւնն՝ մարմնով : քանզի  
սյտոբիկ երկոքեան՝ զքեզ տաճար Աս-  
տուծոյ գործեն . այնպէս քո տաճարն պա-  
հեսցի՝ որպէս ստացողին նորա և դատել  
հանդերձեւոյն , և որ զկերպարանն իւր  
քեզ մաքուր հնարեցաւ տալ : — Ո՛ւկ :

\* Նախ քան 'ի մարդկանէ՝ տատկա-  
կառեա 'ի հրեշտակաց , վասն զի յուրով  
առ մեզ մերձ կան : — Նիշո՛ :

\* ( Ոչ գեղեցկու թիւնն և ոչ տեսա-  
նեւն են մեղացն պատճառք ) , այլ չարա-  
չար տեսանեւն . . . յաղաղս սյտոբիկ և  
ոմն իմաստունս պատուիրէ ասելով . Մի  
ուսանիր զայլոց գեղեցկու թիւն . ոչ ա-

սաց . մի տեսաներ , զի պատահէ և ի  
զիպուածոյ իմն այս լինել . այլ մի ուսա-  
նիր ասէ , որ խնամաւ հայեւն է և զննող  
տեսու թիւնն , որ հանդերձեալ զեզեր-  
մամբ պշնոււն . . . յայնմանէ սիրելու  
թիւն իբրև զհօւր բորբաքեալ : — Ո՛ւկ :

\* Հայր Սուրբ , սրբեա զմիտս իմ . Որ-  
դի Սուրբ , սրբեա զմարմին իմ . Հո-  
դի Սուրբ , սրբեա զհօգի իմ : Հայր  
Սուրբ , ուստ մեզ զբան քո . Որդի Սուրբ ,  
ցոյց մեզ զերեսս քո . Հօգի Սուրբ , սրբ-  
եա զմեզ սրբութեամբ քո : — Էբ ընդ :

\* Ետես զգազան զայբացեալ՝ և ոչ  
զանգիտեաց . հանդիպեցաւ սրաթա-  
փեալ թշնամուց , և ոչ պարտեցաւ . մին-  
չև զիպեցաւ կնոջ լեզուանուց և անըզ-  
գամի , և յաղթեցաւ ի նմանէ : — Այլ :

\* Ազաբէն ի սրաէն աւանու զհանգա-  
մանս գործոց՝ մարմինն : — Գր . Լ՛՛ :

\* Զյիշատակ սրբութեան սիրոյն ( աբ-  
ժան է ) որպէս խորխի մեղու ունել ի  
Քիմն բերանոյ իւրոյ . զի նա է որ քաղ-  
ցրացուցանէ զբաւնու թիւն չարին : — Ն :

\* Նա միայն գիտէ ( զնորհս զայս չու գւոյն' ) որում աղբին : — Ն :

\* Որ ունի յաջմէ զնիւ խաղաղու թեան, և յաչեկէ իւրմէ զհաստատու թիւն որդեգրութեան, և 'ի դլուխն իւր ունի զտակն սարծանաց, և ընդ մէջ ածեալ զկամարն սրբութեան, և ճմարիտ զգաստութեամբ պատեալ զկողս ի զօրութեան նորա : — Ն :

\* Ակն ոչ ետես և ունին ոչ լուսու՝ զոր պատրաստեաց Աստուած սրբոց կուսանաց և ճմարտասէր կրօնաւորաց : — Ն :

\* Տեսի ես արս իբրև զձաղս սնդկոց բարձրացեալ 'ի թռիչս իւրեանց, և 'ի հոտոց զխականց միւսանդամ 'ի յերկիր ելեալ : — Եւրբ :

\* Զվերահայեցողութիւն ամենամաքուն աչաց՝ յիւրն սիրեկէ լոյս հպեցուցեալ (Յովէ. Աւետ.), և զլոյս ընդ լոյսն խաւնեալ՝ յաղթահարի 'ի վեհագունին անհատութենէ : — Լուբ. Էր Էր :

\* Պարտ էր մեղ. . . զմեր սիրտս՝ Սուրբ Հոգւովն դրեւ : — Ու. Մ. Ս. :

\* Մի ինչ է սկտոյ. Բարբ սրբասէրբ, և ոգիք անմեղք : — Ն. Գ. :

\* Եթէ կամիցիւք և եթ' հնար է և նըմա ( ցանկութեանն ) մեռանել և անաղբական լինել : — Ն. Ժ. Զ. :

\* Մեծ պատերազմ է յետ հայելոյն և չլայե լեւոյ 'ի սէր սիրելոյն : — Ն. Ժ. Է. :

\* Բազումք սրբ ցանկութեանցն յաղթեցին 'ի դթոյն սարսեցան : — Ն. Լ. Գ. :

\* Երկրբումքք վերանայ թեօք մարդ՝ յերկրաւորացս. միամտութեամբ և մաքրութեամբ : — Ն. Բ. Գ. :

\* Ոչ ամենայն բարձր՝ սուրբ է, և ոչ ամենայն ցանկութիւն՝ մաքուր. և ոչ անայն ներեկի՝ աստուածաճանոյ : — Ն. Ժ. :

\* Կարի նրբին է խտիր շարժմանց բնութեան և շնորհաց, զոր հաղիւ կարէ ընտրել այր հոգեկիր և լուսամիտ : — Ն. Գ. Ժ. Գ. :

\* Չէ բնակաւոր ցանկութիւնն. և յայտ 'ի դերձելոյն 'ի նմանէ է. զի բընութիւնն ամենեցուն հասարակաց է. և սա 'ի ծուլութենէ միայն լինի : — Ու. Մ. Զ. :

\* Չինչ օգուտ իցէ եթէ որ 'ի վերստ  
յանխնայ սայցէ դանձն , և վարս անա-  
բատ չունիցի : — Ու . Մէն . Եփե :

\* Սպան դմարմինդ , 'ի խաչ հան , և  
առնուցուս և դու զմարտիրոսութեան  
պնակն . զի զոր ինչ անդ սուրն զործի-  
ցէ՝ աստ կամացն յօժարութիւն գործի-  
ցէ : . Սյնպիսի պատարագ է հաճոյ՝ որ  
չէ կարօտ քահանայի , այլ նովաւ՝ որ  
մատուցանիցէն : — Ն . Մէն . Եփե :

\* Որ ինչ ոչ սրբէ զմարդ՝ չառնէ զնա  
երջանիկ : — Մ . Եփե :

\* Պարտ է մարմնոյ ունեւ զինկբ ընդ-  
հանուր մահու : — Ն :

\* Անմեղութիւն միայն է աղբիւր ան-  
զորբութեան : — Ն :

\* Ընկալայ զարքայութիւն երկնից՝  
իբր զմանուկ . և անմեղութեամբ՝ զիս  
ինքն 'ի մանկանց խոնարհութիւն իջու-  
ցի : — Բարեղ :

\* Միտք որ յախան լինի՝ յԱստուծոյ  
միաւորութենէն 'ի բաց բաժանի : — Գր .  
Մարտ :

\* Քանի կորուսեր բարեշնորհութիւնս  
և տուրս աստուածայինս՝ ընդ դոյզն և  
կորստական հեշտութեանց : . Եանց ման-  
կութիւն և առաջին հասակ , այլ ոչ  
և անմտութիւն . անմեղութիւնն միայն  
հեռացաւ , իսկ յանդգնութիւնն յան-  
պատեհադոյնսն՝ զօրացեալ աճեաց : — Ն :

\* Հեշտախոտութիւնն զառաջնորդա-  
կան միտան կորացուցեալ՝ հետի գտանի  
յԱստուծոյ , որ 'ի սիրտս բնակէ : —  
Լարբ :

\* Ամենայն սպիտակ փայլուն հողիբ՝  
ի զարդ թագի քում ( Գրիստոսի ) միա-  
ւորին , ի փառան քում արքայութեանդ :  
— Կերտն , Ալեք :

\* Անհար է մարմնազգեստի՝ սրբու-  
թիւն ստանալ , առանց մեծի ժուժկալու-  
թեան և չարչարանաց : — Սարգ . Մն . Վնդ :

\* Ոչ զգիտեին ինչ յաղագս Սասու-  
ծոյ՝ երանէ Տէրն , այլ որ յինքեանս  
ընդունին զԱստուած՝ երանելիք մա-  
քուրք սրաիւք՝ ասէ : — Շարհ . Մէն . Մարտ :

\* Որ յամենայն ախտից զսիրան մա-

քրիցէ՛ յիւրոյ հոգւոյն գեղեցիլութիւն տեսանէ զաստուածային կերպարանն . զօր օրինակի , որք մարքուր հայելեալ տեսանեն զարեգակն : — Ն :

\* Որք Քրիստոսի զինուորին՝ խրեանց մարմնոյ ոչ են տեսարք : — Ոսկեբեր :

\* Եթէ ոգին թմբրեսցի՛ և մարմինն ի տիղթ թաւալի : — Ն :

\* ԶԳնոջն բան լուաւ (Եղիա) , և քառասուն ատուր ճանապարհ գնալով փախսեալ : — Ն :

\* Չէ արժան ժամովճառ լինել առ ի քակել զչամբուշ բարեկամութիւնս , այլ քակտել իսկոյն . ոչ առ փոքր փոքր լուծանել , այլ միջակտուր առնել : — Յր . Սալէս :

\* Ի վերայ մանկան խոստովանողի արձակեցին երբեմն բռնաւորք՝ զառիժ մատակ . և նորա՝ « Տեսեալ զգազանն՝ ժողտեցաւ , և ասէ . Ամէն յերկինս . ամէն Հօր , ամէն Որդւոյ , ամէն Հոգւոյն Սրբոյ . ամէն ակէլուիա : ( Եւ կտտարեցաւ կրկին նահատակութեամբ , անմեղութեանն և մարտիրոսութեան ) : — Վկայաբան :

\* Սրբութիւն և սէր՝ զսիրելի աշակերտն աստուածաբան առնէ : — ՅԳ . Կլեմ :

\* Ի մարբեալ սիրտն՝ ի բովս նեղութեանցն՝ սկսանի Աստուած զսիրոյ իւրոյ զճառագայթս ծագել : . . . Ի սրբեալ հոգին՝ յորում բնակէ Աստուած՝ անճառ կաղաղութիւն տարածի , և ոչ իւր յերկրաւոր խորհրոց սասանի , այլ միշտ աներևոյթ յուսովն ցնծայ : — Լաթբր . Սալէ :

\* Չիք հանգոյն քաղցրութեան սիրոյն Աստուծոյ՝ որ բնակէ ի սիրտս օրբեալս : Սորա քաղցրութիւնն ետ՝ զսուր արհամարհել , զհուր կոխել , զգազանս յաղթահարել : — Ն :

\* Դպտ արա , ո՛վ մարդ , և խափանեա զմարմնոյդ հեշտութիւն՝ որ զդասնիրաւէ . տուր նմա զիւր փեսային ըզսէրն , զՔրիստոսին : — Ն :

\* Խախանեա , մարմին , զօրէնս քո , և մի իւրք յայս ժամանակս ընդ իս սրատերազմեսցիս : — Ն :

\* Յնժալ ի Տէր՝ անկար է առանց մա .

քուր սիրտ ստանալոյ, և զհոգին ի նոյն  
 հանգուցանելոյ : . . Յորժամ Աստուած  
 արտին ցնծութիւն լինի, մարմնականացս  
 այլ ընդէր առնէ փոյթ նիւթոց ուրա-  
 խութեան, որոց կատարումն է տրտմու-  
 թիւնն : — Ն :

\* Պարտ է մարմնոյն ի շունչն փոխել,  
 և անտի՛ հոգեւոր լինել փախագել. այս-  
 ինքն, ի մարմնով մեղանչելոյն՝ ի խոր-  
 հրդուք մեղանչէն, և ի նոցին զգուշու-  
 թիւնն : — Ն :

\* Յորժամ սիրեմ հոգեւոր՝ ծնանի և  
 մարմնական սէրն, և սև պոնէ զսպի-  
 տակն : — Ն :

\* Ոչ ( լիցի ) սակաւ հեշտութեամբն՝ ի  
 կուփանս խղճմտութեանն մատնել : — Ն .

\* Մի՛ հեշտանար ի սուղ ժամուս, զի  
 մի տաղնապկեսցիս ի գէհէնին՝ ի յաւի-  
 տենական ժամուն : — Խրաբր :

\* Երջանկութիւն անվիրտ մահու՛ ար-  
 ժէ զվիրտս անհեշտ կենաց : — Սալ :

\* Կուսանքն ողջխոնք՝ աներկիւզք ի  
 տանջանաց, սրտականոտք ի զննող անչաց :  
 — Ա՛բբ :

\* Ոչ՛ միով ակամբ յերկինս և միով  
 յերկիր հայել ումեք հնարաւոր է, և ոչ  
 երկնաւոր և երկրաւոր սիրով հանոյա-  
 նալ Աստուծոյ : — Խոսք . Ժա՛մբ :

\* Սուրբն Ֆրանկ . Սասիզացի՛ սե-  
 սեալ տատրակս կալեալս, ասէր . Գուրիկք  
 իմ տատրակիկք, միամխաք, անմեղուկք  
 և ողջխոնք, ընդէր թոյլ ետուք ըմբու-  
 նել զձեզ :

\* Ամենանուշակն ողջխոնութիւն  
 ինքնին ունի յինքեան կատարելութիւն  
 ինչ . այլ չիք առաքինութիւն՝ որ կարիցէ  
 կատարեալ լինել սուանց ողջխոնու-  
 թեան : — Ե՛բբ :

\* Որպէս զբռն ինչ կամ զվէմ ծանր՝  
 սոսաւել հնարագիտութեամբ քան զօ-  
 րութեամբ օւժոյ մարթ է շարժել, այս-  
 պէս և զմարմին՝ յաւէտ խոնարհու-  
 թեամբ և խոհական կարգաւորութեամբ  
 հոգւոյ՝ քան խոտակրօնութեամբ նուա-  
 ճել : — Ն :

\* Ո՛վ զարշիլի և անկատար անպա-  
 րասլութիւնն . մինչև ցի՛րբ հեշտութիւնք .

մինչև ցերբ ակտորժելի կիրք : Բազում  
կեցաք ժամանակ՝ աշխարհի , կեցցուք  
այսուհետև և մեզ : — Բարեւո՛ւ Միւր :

\* Իբրև ի կշիռս կացեալ՝ իմա՛ զքո  
զանձնդ . աստի ի հրեշտակաց և սնտի  
ի զիւաց ձգեալ . զյո՛ր արդեօք տայցես  
զմիտումն սրաիդ . ո՞ առ քեզ յաղթես  
ցէ . — Հեշտութիւն մարմնայ , եթէ սըր-  
բութիւն անձին . . . : Հեշտութիւն կարթ  
է սատանայի՛ ի կորուստն ձգել : Հեշ-  
տութիւն՝ մայր մեղաց , և մեղք՝ խայթոց  
մահու . հեշտութիւն դայեակ յախտե-  
նական որդանն , որ աս ժամանակ ինչ  
սղորկէ զվայելուն , բայց յետոյ դառնա-  
լոյն քան զլեզի առնէ զգոլորչիսն : — Ն :

\* Ի ծերութեան՝ սրարկեշտութիւն՝  
ոչ է սրարկեշտութիւն , այլ սրակշտու-  
թեան անկարութիւն : Մեռեալ՝ ոչ սրա-  
կի : — Ն :

\* Յանկութիւնն անցանէ , և որդին  
ոչ մեռանի : — Մարտոյ :

### ԱՇԽԱՐՀ

### ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ ԿԵՆՅԱՂՈՅՍ .

\* Որում՝ Աստուած է ամենայն ինչ ,  
նմա ոչինչ է աշխարհս : — Ֆր . Մաւել :

\* Ամենայն որ ինչ յաշխարհի է՝ ցան-  
կութիւն է մարմնայ , և ցանկութիւն ա-  
շաց , և ամբարտաւանութիւն աստի կե-  
նացս : — Աշխարհս անցանէ , և ցանկու-  
թիւնն . իսկ որ առնէ զկամս Աստուծոյ՝  
մնայ յաւիտեան : — Մի սիրէք զաշխարհ  
և որ ինչ յաշխարհի է : — Եթէ ոք սիրէ  
զաշխարհ՝ ոչ է ի նմա սէր Հօր : — Ա .  
Յովհ . Բ . 15-17 :

\* Ժամանակս կարճեալ է այսուհե-  
տև : . . Որ վարենն զաշխարհ՝ որպէս թէ  
շլայելիցեն . զի անցեալ է վայելու-

Թիւն աշխարհիս այսորիկ: — Ա. Կ. ր. Ե. Է:

\* Ամենայն զբոսանօք իւրովք՝ աշխարհ՝ յորմէ հետէ աշխարհէ, դճանձբութիւն խոստովանի: — Մ. Գ. Ե. Է. Է:

\* Զինչ առնես դու յաշխարհի՛ որ մեծի ես քան զաշխարհ: — Հեբ. Գ. Է. Է:

\* Ունայնութիւն ունայնութեանց, ապաց յողովոյն, ամենայն ինչ ունայնութիւն է: — Ժ. Գ. Ա. Է. Է:

\* Աղբ երթայ և ազդ գոյ, և երկիրս յաւիտեան մնայ: — Ն. Գ. Է. Է:

Տեսի ես զամենայն արարեալս որ արարեալ են ի ներքոյ արեգակնի, և ահա ամենայն ինչ ընդունայնութիւն է և յօժարութիւն ուղոյ: — Ն. Գ. Է. Է.

\* Մարդ, Որպէս եւ յորովայնէ մօր իւրոյ մերկ, զառնայ երթալ որպէս և եկեալն էր. և ոչինչ առցէ ի վաստակոյ իւրմէ՝ եթէ երթիցէ ի ձեռին իւրում: — Ն. Ե. Է:

\* Մի պարծիր առ վաղիւն, զի ոչ գիտես զինչ ծնանիցի քեզ վաղիւն: — Ա. Գ. Է. Է. Է:

\* Ապաքէն որպէս ի պատկերի շրջեմարդ, սակայն զուր խոտիլ. դանձէ, և ոչ գիտէ ում ժողովէ: — Ս. Գ. Է. Է. Է. Է:

\* Պանդուխտ եմ ես առաջի քո, նծդեհ և անցաւոր, որպէս ամենայն հարք իմ: — Ն. Ե. Է. Է. Է. Է:

\* Տեսցես թէ իմաստունք մեռանին, ՚ի միտսին անզգամք և անմիտք կորիւցեն, և թողցեն օտարաց զմեծութիւն իւրեանց: — Ն. Ե. Է. Է. Է. Է:

Մի երկնչիւր յորժամ մեծանայ մարդ, և յորժամ բազում լինին փառք տան նորա. զի ոչ եթէ ՚ի մեռանել իւրում առցէ ընդ իւր զամենայն, և ոչ թէ իջցեն փառք տան նորա ընդ նմա: — Ն. Ե. Է. Է. Է. Է:

\* Քանի ինչ են աւուրք ծառայի քո: — Ն. Ե. Է. Է. Է. Է:

\* Ժամանակ ամաց մերոյ անդադար որպէս սարգի. և թիւ ամաց մերոց ի նմա՝ եօթանասուն ամ. ապա թէ առաւել ևս՝ ութսուն ամ: որ ինչ աւելի քան զայն՝ ցաւք և հեծութեամբ: — Ն. Ե. Է. Է. Է. Է:

\* Մարդոյ՝ որպէս խոտոյ կն աւուրք

էւր . որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծնող-  
կի . շնչէ ի նմա հողմն , և ոչ է . և ոչ  
ևս երևի տեղի նորա : — Ն . ճԳ . 15 :

Ընդ առաւօտս որպէս դաւարի բուս-  
ցին , զուարճասցին և ծաղկեցցին . ընդ  
երեկոյս թարշամեցցին , չորասցին և  
անկցցին : — Ն . 28 . 4 :

\* Գտանին ծառք հինաւուրցք՝ երկա-  
րատեք քան զսկառութիւնս արգասց  
մարդկան : — Ո՞՞ :

\* Պակասեցան յունայնութեան ա-  
ւուրք նոցա . և ամբ նոցա փութապէս  
անցին : — Սող՝ ՀԵ . 55 :

Չի ոչ բերաք ինչ յաշխարհ , և ոչ  
տանել ինչ կարասցուք : — Ա . ՏԻ՛ . 2 . 1 .

\* Դարձուցանես (Տէր) դերեսս քս ի  
նոցանէ , և խոսիին . հանես զողի ի նս-  
ցանէն , սրկասին և ի հող վառնան : —  
Սող՝ ճԳ . 29 :

Եղիցին նորա սրպէս խոտ տանեաց ,  
որ մինչև ի բուռն եկեալ էր՝ և չորա-  
ցաւ . ուստի ոչ ելից զբուռն իւր հնձողն ,  
և ոչ զգէրկս էւր՝ որ զորացն ժողովէր : —  
Ն . ճԻԸ . 6 :

\* Տէր , ո՞վ է մարդ՝ զի յայտնեցար  
նմա , կամ որդի մարդոյ՝ թէ համարիս  
ինչ զնա : Մարդ՝ նանրութեան նմա-  
նեաց , և աւուրք նորա որպէս հովանի  
անցին : — Ն . ճԽԳ . 5 :

\* Բնակեալք ՚ի տունս կաւեղէնս ,  
յորոց և ինքեանք ի նմին կաւոյ եմք :  
Եհար զնոսա՝ ըստ օրինակի ցեցոյ . և յա-  
ռաւօտէ մինչև յերեկոյ՝ ոչ ևս իցեն : . .  
Փչեաց ի նոսա , և ցամաքեցան : — Յ՝ՎԷ :

\* Հեղեղագնաց կենցաղ : — Յ՝ՎԷ . Ի՛ :

\* Յուցանէ նմա ( սատանայ ) զամե-  
նայն թագաւորութիւնս աշխարհի և ըզ-  
փառս նոցա . և սսէ ցնա . Չայս ամե-  
նայն՝ քեզ տայ , եթէ անկեալ երկիր  
վազանիցես ինձ : — Ասէ ցնա Յիսուս .  
Ե՛րթ յետս իմ սատանայ : — Մար՛ . Գ . 8 :

\* Մի գանձէք ձեզ գանձս յերկրի ,  
ուր ցեց և ուաիճ սպականեն , և զողք  
սկան հատանեն և գողանան . այլ գան-  
ձեցէք ձեզ գանձս յերկինս . . . զի ուր  
գանձք ձեր են՝ անդ և սիրտք ձեր եղի-  
ցին : — Ն . 9 . 19 :

\* Հոգք աշխարհին և պատրանք մեծութեան՝ հեղձուցանեն զբանն (կենաց), և լինի անպտուղ: — Ն. ԺԳ.:

\* Զինչ օգտիցի մարդ՝ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցի. կամ զինչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրում: — Ն. ԺԵ. 23:

\* Վայ աշխարհի դայթակղութեանց. հարկ է զալ դայթակղութեանց. բայց վայ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն գայցէ դայթակղութիւն: — Ն. ԺԶ. 7:

\* Աստ՝ սակաւ ինչ սկիտոյ է. Մարիամ մասն բարի ընտրեաց, որ ոչ բարձցի ի նմանէ: — Ղ. 1. ԺԱ. 44.

\* Ասէ (աշխարհասէրն), գիտեմ զինչ արարից. քակեցից զչոռմարմնս իմ, և ևս մեծամեծս շինեցից, և անդր ժողովեցից զցորեան և զամենայն բարութիւնս իմ. և առացից ցանձն իմ. Անձըն, ունիս բազում բարութիւնս համբարեալ ամաց բազմաց. հանգիր, կեր, արբ, և ուրախ լեր: Ասէցնա Աստուած. Անմիտ, յայսմ գելչերի զոգիկ ի քէն ի

բաց սլահանջիցեն. իսկ զոր պատրաստեցերն՝ ում լինիցի: — Ն. ԺԲ. 17-20:

\* Այր ո՞նի (Տէրն մեր) գործեաց ընթրիս (կենդանաբարօ), և հրաւիրեաց զբազումս... թէ, Ելայք, զի ահաւս ողկ պատրաստ է ամենայն ինչ: Եւ սկըսան մի ըստ միովէ ամենեքեան հրածարել. առաջինն ասէ. Ագարակ գնեցի, և հարկ է ելանել տեսանել զնա. աղաչեմ զքեզ՝ կալ զիս հրածարեալ: Միւսն ասէ. Լուծս հինգ եղանց գնեցի (գրասանս հնգից զգայարանաց), և երթամ փորձել զնոսս. աղաչեմ զքեզ, կալ զիս հրածարեալ: Եւ միւսն ասէ. Կին ածի, և վասն այնորիկ ոչ կարեմ գալ: . . Յայնժամ բարկացեալ ասնուտէրն ասէ . . . Ասեմ ձեզ, զի ոչ ոք յայնց կոչեցելոց՝ ճաշակեսցէ յընթրեաց իմոց. (այլ աղքատք, խեղք և կաղք և կոյրք, որք ի հրապարակաց, ՚ի փողոցաց և ի ցանկից՝ մուծան ի ներքս): — Ն. ԺԳ. 17-24:

\* Ոչ կարեք Աստուծոյ ծառայել և մամանայի: — Ն. ԺԶ. 15.

Ո՛րպէս դժուարաւ՝ որ ինչս ունիցին՝ մտանիցին յարքայութիւն Աստուծոյ : — Դիւրագոյն իցէ մալիոյ ընդ ծակ սողան անցանէլ՝ քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանէլ : — Ասէ Պետրոս . Ահաւասիկ մէք թողաք զամենայն ինչ բզմեր , և եկաք զկնի քո՛ : Եւ նա ( Յիսուս ) ասէ ցնոսա . Ամէն ասեմ ձեզ . ոչ ոք է որ եթող զտունս կամ զձնոցս կամ զեղբարս , կամ զկին կամ զորդիս , վասն արքայութեան Աստուծոյ , եթէ ոչ ասնուցու բազմապատիկ ի ժամանակի աստ յայտիկ . և յաշխարհին որ դաւընց է՝ զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ : — Ն . ԺԸ . 24-30 :

\* Երթանք դործեցէք , մի՛ զկորստահան կերակուրն , այլ զկերակուրն՝ որ մնայ ի կեանսն յաւիտենականս : — Յովհ . 2 . 27 :

\* Ոչ կարէ աշխարհս ատել զձեզ . բայց զիս ատեայ . զի ես ( Յիսուս ) զկասեմ վասն նորա , եթէ գործքն իւր չարութեանն : — Ն . Է . 7 . — Եւ եթէ աշ-

խարհ զձեզ ատեայ , դիտասցիք՝ զի նախ զիս ատեաց : Եթէ յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ զիւրն սիրէր արդեօք . այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ , վասն այնորիկ ատեայ զձեզ աշխարհ : — Ն . ԺԵ . 18 :

Արդ ես վասն նոցա աղաչեմ ( զքեզ , Հայր ) , և ոչ վասն աշխարհի աղաչեմ . այլ վասն նոցա՝ զորս ետուրն ինձ , զի քս են . . . Եւ ես ոչ ևս եմ յաշխարհի , և նոքա յաշխարհի են , և ես առ քեզ դամ : . . . Եւ զայս խօսեցայ յաշխարհի՝ զի ունիցին զուրախութիւնն իմ լիով յանձինս իւրեանց : Ես ետու նոցա զբանքս , և աշխարհս ատեաց զնոսա . զի չեն յաշխարհէ , որպէս և ես չեմ յաշխարհէ : Ոչ զայս աղաչեմ՝ զի բարձցես զնոսա յաշխարհէ , այլ զի պահեսցես զնոսա ի չարէ : — Ն . ԺԵ . 9-16 : — Իմ թագաւորութիւն չէ յայտմ աշխարհէ : — Ն . ԺԸ . 56 :

\* Սէր աշխարհիս յայտրիկ՝ թնայառութիւն է առ Աստուած : — Յով . Գ . 4 :

\* Յաւուրս յիտինս եկեացին արհաւ-

մարհոգք, և ասիցեն . Ո՛րք են աւետիք  
 դալստեան նորա ( Տեառն ) . զի յորմէ  
 հեռէ հարքն ննչեցին՝ ամենայն ինչ նոյն  
 պէս կայ մնայ ի սկզբանէ արարածոց :  
 Եւ զայն մոռացեալ իցէ նոցա՝ որք  
 զայսն կամին . . . զի մի օր Տեառն իբրև  
 զհազար ամ է, և հազար ամ իբրև զմի  
 օր : Ոչ յամեցուցէ Տէր զաւետիան, որ  
 պէս ոմանք յամբ համարին . սլլ երկայն  
 նամիտ լինի առ ձեռ : . Այլ եկեսցէ օր  
 Տեառն՝ իբրև զգող . յորում՝ երկինք  
 առգնատաւ անցցեն, և բնութիւնք հրով  
 կիղեալ լուծցին, և երկիր, և որ միան  
 դամ ի նմա, գործք գտանիցին : Եւ ի  
 լուծանեալ այսպէս այսր ամենայնի, որպի  
 սի ինչ պարտ իցէ ձեզ գտանել . — այլ  
 սուրբս, և աստուածաբալատ կարգաւ  
 ակն ունել, փութալ հասանել զալլա  
 տեան աւուրն Տեառն : . Նորոյ երկինց  
 և նորոյ երկրի, ըստ աւետեացն, հայե  
 ցեալ սպասեմք, յորս արդարութիւնն  
 բնակէ : Վասն որոյ, սիրելիք, այսոցիկ  
 սպասեալ՝ փոյթ յանձին ունիչիք, ան

բիծք և անարատք գտանել նմա ի խա  
 ղազութիւն . և զՏեառն երկայնմտու  
 թիւն՝ փրկութիւն համարեսչիք : — Բ  
 Պէր . Գ . 5-15 :

\* Որպիսի՞ ինչ են կեանք ձեր . զի է  
 բրև զմբրիկ էք, որ առ սակաւ մի երևեալ  
 և ապա ազականեալ : — Յակ . Գ . 15 :

\* Եթէ այսու կենօք միայն յուսացեալ  
 իցեմք ի Քրիստոս, ողորմելի եմք քան  
 զամենայն մարդիկ : — Ա . կր . ԺԵ . 19 :

\* Եթէ մեռարուք ընդ Քրիստոսի՝ ի  
 ստերբց աշխարհիս, զի՞ ևս իբրև ըզ  
 կենդանիս աստէն յաշխարհիս կրօնա  
 ւորիք : — կր . Բ . 20 :

\* Ի հեռուստ տեսին (արդարք զա  
 ւետիան) և ցնծացան . և խոստովանե  
 շին՝ եթէ օտարք և պանդուխտք են յեր  
 կրի . զի ոքք զայնպիսիոն խօսին՝ յայտ  
 առնեն եթէ գաւառ իմ խնդրեն : — Եբր .  
 ԺԱ . 14 :

Զի ոչ եթէ ունիմք քաղաք որ աստէն  
 մալոց է, այլ զհանդէր ձեալուն խըն  
 զրեմք : — Ն . ԺԳ . 15 :

\* Դեմաս եթող զիս (զհետևոց Յիսուսի), և սիրեաց զաշխարհ: — Բ Տէ՛Մ. Դ. 9:

Այլ մեք, ոչ եթէ զհոգի աշխարհիս այսորիկ առաք, այլ զհոգին որ յԱստուծոյ. զի ծանխցուք զայն՝ որ յԱստուծոյն շնորհեցաւ մեզ: — Զի իմաստութիւն աշխարհիս այսորիկ՝ յիմարութիւն է առաջի Աստուծոյ: — Ա կ-ր՝Ի. Բ. 12. 18:

\* Եղբարք, աշխարհս չէ ինչ զսակաս թերացեալ յիմեքէ, և լի է ամենազեղ գունաւոր պէսպէս աղբօք, չարեօք, քաղցրիք և դառնիւք... և իրք ամենայն ընդդէմ միմեանց առ իրեարս հաստատեալ կան. և չիք յաշխարհի աստ յայտ միկ ըովանդակութիւն կատարելութեան. մինչև զայ որովչին անջրպետիչ, սրբէ զյարգն ի ցորենոյ անտի, և իսկ զբոմն արմատաքի առ հասարակ: — Զ՛ժ:

Թողցուք զաշխարհս, զի չէ իսկ մեր, զի հասանխցեմք ի դաւառն մեր՝ յոր հրաւիրեցաք: — Ն:

\* Փոփոխմունս է տեսանել և ի մեր

անձինս. և յամենայն՝ ցանկ մահս մեր նկարի. և թէ չէք ինչ որ կալոց իցէ՝ ամենայն ուրեք արդեամբք իսկ դբոյ՛ի: Ամենայն ինչ ընթացեալ սրանսց, և իբրև զչոր սահեալ անցանէ:.. Հովանի իմն են կեանք աշխարհիս և երազ: Զոր օրինակ տաղաւար ինչ ի միջոյ բառնայցե. մտեալ ճառագայթից արևգականն՝ զամենայն հայթհայթանս ի բաց մեր՝ փիցէ. նոյնպէս և յորժամ վախճան հասարակաց հասանիցէ, կամ իւրաքանչիւր, ամենայն ինչ լուծանի և ապականի... Եթէ շինուած շինեաց՝ աստէն թողու. և ճարտարապետն և գործաւորն երթան և աղականին:.. Ո՛չ բազում անգամ մեղէն իսկ բամբասեմք, թէ ինչ կեանք աշխարհիս: Իսկ ընդէր ճեպիս վասն ոչընչիդ. ընդէր այնչափ աշխատիցիս յաղագս չնչընչիդ:.. Իմաստուն մտօք հսցեալիք. առ նա իսկ ելանիջիլ՝ որ յերկինս բնակեալ է, և անտի հսցեսլիք ի գեղեցիկ շինուածոդ. և ապա տեսանիցես՝ թէ ոչինչ են, այլ մանր

մանկաոյ խաղ: Տես, զիսրդ անօր է.  
 թեթե պարզ և յստակ կենօք՝ ևս քան  
 զևս վերանաս ելանեա ի բարձունս: —  
 Ո՞ւրեքեք:

\* Զմտաւ ածեմ զղիւրածախ կենցա-  
 ղոյս, որ իջր արչաւանօք խսկեխսկ աս-  
 պատակօք գերէ ի մէնջ, զանհնարին  
 դարձուցանելով հարկ... որպէս նախ-  
 ասացականն այն ծաղիկ թօթափեալ՝  
 զսա կոչեն կեանս: — Մոֆէր:

\* Մի հրճուեսցիս ի մարդկան կենցա-  
 ղականս. քանզի խոտոյ ծաղիկ՝ յարժամ  
 չօջափես՝ թարչամէ: — Ո՞ւրեքեք:

\* Լէր իբրև զծիծառն, ծայրիւ թևոց  
 քերեալ զՂուրբ, և մի քններ զսորս կե-  
 նաց: — Հ. Ն.:

\* Իբրև զամբան մի լայնատարր է եր-  
 կիրս համօրէն: — Այլ:

\* Յորժամ զմտաւ ածեմ զղիւրածախ  
 սնոտի երազական կենցաղոյս բազմա-  
 պատիր և քաղցրացեալ դառնութեամբ  
 պտուղ, և զմերս հովովումն ի սա գլու-  
 բեալ, զանաղան և յօգնագունակ զմեզ ի

տղմի ծովածուի կենցաղալարութեան,  
 լուծեալ և թառամեալ քան զբաղումս  
 զիս տեսանեմ, եղկելի թշուառութեամբ,  
 ի բիւր բարեացն թափուր և սնոտի ե-  
 ղեալ: . . Ո՞րպէս արդեօք եմք նսեմա-  
 ցեալ և թաքնացեալ և ծմակացուցեալ  
 զերբեմն արփիափայլս հոգի: . . Ո՞րք  
 արժանաղէս տրամեալ տխրեսցի և ո-  
 ղըմուսցի իմոյս բանազուշեալ և մեղ-  
 կեալ քաղաքալարութեանս. ո՞րիս փըր-  
 կեացէ յայսպիսի վտանգէ: — Այլ հա-  
 ւասովք աղաչելով մաղթեմ զձեզ՝ որ ի  
 ծայրս էք լերինն ընդ Յիսուսի, անկեալ  
 առ ոտս աղալակեցէք... զի բացցի աչք  
 իմ հոգւոյ: — Մոֆէր:

\* Ատեա՛ զմերձակայ կենցաղս, զորոյ  
 տեսանեա զանիւս անկարգաբար հոլո-  
 վեալս: — Ո՞ւրեքեք:

\* Մի խնդրեր յԱստուծոյ զհեշտա-  
 լիսն, այլ զօգտակարան. քանզի զայսու-  
 սիկ խնդրելով՝ ոչ տայ քեզ. և եթէ առ-  
 ցես՝ աղականին: — Ն:

\* Մեշտ զմտաւ ած զկենցաղոյս ան-

հաստատութիւն, և ոչինչ իրք որ ի ամա  
 են՝ զքեզ բաղբաղել կարեն : Զուարճա-  
 վիք առժամանակեայք երկրայինք՝ զքեզ  
 մի հեշտացուցանեն . քանզի կարթ է  
 ոգւոյ և իբրև զձուկն որսայ : — Զամե-  
 նայն վարկիր աղականացու, և զառա-  
 քինութիւն՝ անապական : — Ն :

\* Նթէ երկնից բաղձառ՝ մի ինչ քո  
 յերկրի վիցի՝ քանզի ոչ թողացուցանէ  
 նա անդրէն ի վեր թուչել : — Ն :

\* Ծաղր արա զկենցաղս՝ զանիւ ան-  
 կարգաբար հոլովեալ, և զգուշասջիր ի  
 գբոյն՝ յոր հոլովեցուցանէ՝ որք ի նմա  
 ննջեցին : — Ն :

\* Մի գառնար յարեմուտս, զի չէ  
 քեզ սահման : — Թախուս :

\* Զամենայն որ ինչ զմտաւ ածէ մարդ  
 յերկնից մինչև ի վայր, որ զինչ և ածէ,  
 ունայնս . իսկ որ կանխէ ի յիշատակս  
 Աստուծոյ՝ այնպիսին գտանի ի ճշմար-  
 տութեան : — Ա՛յլ :

\* Մտահոսան խորհուրդք երկրասի-  
 րաց՝ ոչ թողացուցանէ տեսանել զսլատա-  
 ճառան : — Գր . Լաւն :

\* Արդարև ընդունայն է ամենայն ինչ .  
 զի կենցաղս այս սնոտի է և անցաւոր .  
 և ի զուր խոռովի ամենայն մարդ, որպէս  
 սասց Նրգոյն : — Հի՛ն Երբ :

\* Յորժամ զամենայն շահիցիմ՝ ի դե-  
 լեղմանի ընակիցիմ, ուր ի միասին են  
 թագաւորք և տնանկք . քանզի մի մուտ  
 է ամենեցուն և մի եւլ հասարակաց .  
 մերկ իւրաքանչիւր որ եկն յերկիր, և  
 մերկանդամ միւսանդամ դառնալոց . և  
 բայց ի զործոց որ ի բարեաց՝ ոչ հասցէ  
 հանգստեան և վայելչութեան : — Ն :

\* Հատուցանողն չէ հեռի . և ահա ան-  
 ցաւորքն սր մօտ յիս՝ դնացեալ երթան :  
 — Վահան . Գաղթն :

\* Կեանք մարդոյ՝ սարդաբոյն է թը-  
 ուցեալ յօղս : — Ոչինչ է մարդ, նոյն-  
 պէս և կեանքս այս : — Վհայաթ . Փէլէկո :

\* Թէ չհամարիցիս ինչ զինչս աշխար-  
 հիս, քան զամենայն աշխարհս պատուա-  
 կանագոյն լինիցիս : — Որի՛ք :

\* Որ ընդ կենդանիսս (մարդիկ) զար-  
 մանամք, յորժամ մեռանին՝ ոչ ինչ այն-  
 պէս յիշեմք : — Ն :

\* Որ գերկիր յառաջ քան գերկինս խնդրէ՝ և յայտմանէ ևս անկանի . և որ դայն՝ քան դայս մեծարոյ համարի, յերկինս վայելէ բազում յօժարութեամբ : — Ն :

\* Չեն ինչ ընդհատ յերազոյ՝ իբր ժամանակայս , եթէ հեշտականք իցին և և թէ արտմականք : — Ն :

\* Որ ինչ աստ՝ ստուեր է , և որ ինչ անդ՝ արդիւնք : — Ն :

\* Չտեսանիցեն , զի ոչ ինչ է աշխարհս , և զի չեն կեանք ուրուք յայտ , կամ զվաստակս և զքրտունս անցաւոր կեանացս : Միթէ զառաքինութիւնս՝ աշխատութեամբ , և զչարիս՝ առանց աշխատութեան իցէ վճարել : — Ն :

\* Ամենայն ինչ ընդունայն է , բաց ի սիրոյն Աստուծոյ և ի ծառայելոյ նրմին : — Ն . Բ . Ա :

\* Լրու՞ն իմաստութեան է՝ արհամարհութեամբ աշխարհի ընթանալ յարբաշու թիւն : — Ն :

Փութա՞ գերծանել յերեւելիացս սիրոյ , և յաներևոյ թան փոխել : — Ն :

\* Ընդէր շուրջ հայեցես , չիք քեզ աստ տեղի հանդատանս : — Ն . Բ . Ա :

\* Անցանեմք ընդ կեանս՝ երթալ առ Աստուած : ընդէր փարիցեմք դանցիւքս : — Պ . Է . Է :

\* Շատք ի մարդկանէ զառաջին մասն կենաց իրեանց՝ ծախեն՝ առ ի թշուառացոցանել զլիրջինն : — Ա . Ե :

\* Չինչ օգտեսցեն քեզ արարարածք ամենայն , եթէ յԱրարչէն չքեալ թողցես : — Ն . Բ . Գ . Ա :

\* Ինձ միտիթարութիւն լիցի մտադիր՝ դտանիլն վրէպ յամենայն մարդկային միտիթարութեանց : — Ն . Ժ . Զ :

\* Տուր ինձ , Տէր , հոցել յամենայն ինչ՝ իբրև անցաւորս , և զիս անցաւորակից նոցին : — Ն . Ի . Է :

\* Թող զամենայն , և գտես զամենայն : Թող զգանկութիւնն , և գտես զհանդիստ : — Ն . Լ . Բ :

Այնչափ մօտադոյնս մատչի մարդ առ Աստուած՝ որչափ ՚ի բաց հեռանայ յերկրաւոր սիրտինաց : — Ն . Խ . Բ :

\* Եթէ դու յարարածս յառիս, Աստուած դարձուցե՛ղ զաչս ի բէնս: — Ն:

\* Քան զթագաւորս ևս թագաւորազն նա է՝ որ ի կարեաց ազատ է: — Ուրբ. Մար. ԵԸ:

\* Այժմ բերարդատիկ չարեք լի է աշխարհս, և չղարհուրի օք: — Ն. Եփե:

\* Ի քթթեւ ական՝ անցանէ ամենայն: Որոյ գոյ վախճան՝ չէ երկար: — Մատէ:

\* Ի պակասել աշխարհի՝ ամենայն ինչ պակասէ աշխարհասիրի: — Ն:

Ոչ յառաջանայ մարդ ՚ի ճանապարհս Աստուծոյ, մինչև ոչ էքցէ վաներաւ բաղբաղայս աշխարհի: — Ն:

\* Յաւուր յորում սկսան իսրայեւացիք ճաշակել զպտուղ երկրին Քանանու, զաղարեաց մանանայ ի տեղաւոյ: — Ն:

\* Որ յԱստուծոյ է՝ պանդուխտ է յաշխարհի: — Խորու:

\* Եկաք յաշխարհ և դնամք յաշխարհէս. և գործքն զինի մեր լիցին. և ի մուսացոնս աստի կենացս լիցուք. և ճագք հանդերձեւոյն միայն նորոգի: — Ն:

Արք՝ Եկ ի միտս, ո՛վ մարդ, և առայն՝ յորմէ զամենայն բարիս քո դտանես՝ ժամանեա հանապաղ: — Ն:

\* Կենցաղս մարդկան՝ սահաւ է, և սահաւածամանակեսյ՝ կենցաղոյս սլայ՝ ծառութիւնս: — Գր. Մարու:

\* Զանազան հեշտութեամբք յարամբոխեմք զկենցաղս, և յետոյ լի վշտօք և արտասուօք ելանեմք: — Ն:

\* Յիշեա յորժամ աշխարանքն դայցեն, և անցաւորքս երթիցեն... յորժամ բօթաբերն զերկիւղ մահուն սլտմէ, և սրտաթափ դքեղ առնէ: — Ն:

\* Այժմ ապականէ ժամանակ և հնձէ մարդ:.. Կենցաղոյս կարթն՝ փարթամութիւն՝ աստանօր թայ, յախշտակի ոսկին, բաժանի արծաթ, ծախի իշխանութիւն և շինուածն. անցանեն փառք, լուէ բունութիւնն, խափանի երկիւղն. և համայն ամենայն կենցաղոյս տաղաւարի քակախանձեւութիւնն: Զինչ ապա. ունիս զաւօրեայ աւուրն սլարենի. փախիլ յա

և եւրոպէն՝ իբր յանպիտանէ, և խնդրեա  
զհնարաւորն անդատապարտելի: — Ն:

\* Անհաստատ է ընուծիւն մարդկան  
գործոց: . . . Ոչ աշղակն և ոչ որ ամենա  
բուեստն թուի բազմաց՝ մնացական և  
անասնուն ունիցի զկէանսն . . . Ամենայն  
ինչ ի սասանուծեան և ի շարժման և ի  
փոփոխման անկարծելեաց հնազանդեալ  
է . . . ի փոքր վայրկենի ակն կալցիս ա  
մենայն հոսանաց և ալէկոծ ծփանաց: . .  
Ի ջերին յայս կենցաղս՝ եկեացէ երբեմն  
և ձմերան գործ . եկեացէ հլուանդուծիւն,  
եկեացէ պանդխտուծիւն, եկեացէ և ծե  
րուծիւն անդարձուծեանն: Ոչ միշտ կա  
լով ի վերայ ծովուս խաղաղուծեամբ՝  
իբրև նաւապետ . այլ տեսցես զամենայն  
բարեկենդանուծիւն կենցաղոյս՝ իբրու  
զսպիս խոցուածոց ի խռովուծեանէ ա  
կամայուծեամբ եկեալ, և զանազան  
հաղբ չարեացն՝ իբրու զալիս զիզեալ ի  
միմեանց վերայ՝ խռովեցուցանեն . քեզ  
զկենցաղս: — Ն:

\* Ի փոզոց բազմակոխել՝ անցանեն

և փութապէս դառնան յիւրաքանչիւր  
բնակուծիւնս, և ի փողոցն՝ ոչ ոք դա  
շարէ . նոյնպէս և ամենեքեան սահեալ  
անցանեմք ընդ այս բազմածուփ աշ  
խարհս, այլ ոչ ոք դաւարէ կամ յա  
րակացեալ մնայ, այլ զհնայ իւրաքանչիւր  
ոք ի տեղի իւր՝ ուր ստեղծաւն ի հողոյ: —  
Վահան ի Մագիսպոր:

\* Ճանապարհ օրինակի առաջի ան  
ցեալ աշխարհս . քանզի կեանք աշխար  
հիս՝ որպէս ճանապարհ ուղևորեալ ա  
րազ և առաջօր անցանեն: — Չորս . Կր:

\* Աշխարհս՝ առաւելաբոյն ևս քան  
զհնչտալիսն՝ զարտմականսն տայ: —  
Նիս . Կոս:

\* Մարդիկ՝ և ոչ ինքեանց են տեսրք,  
այլ ստացողին կամաց . յորժամ ոչ զի  
տենն ի կեանս յայտոսիկ դան, և յոր  
ժամ ոչ ախորժեն՝ վարձեալ հեռանան  
աստի . բազում ընդունայնուծեամբ  
կարձեն ախրել նմա՝ որք ըստ ժամանակս  
ժամանակս լինին՝ յախտեան մնացե  
լու մն: — Ն:

\* Մարդ՝ նման է աղայոյ, որ առեալ զլարդ՝ նախ խաղայ, և ապա կամեցեալ զեփն խմանալ՝ փեռէ զթերթան. և յորժամ կարծէ խմանալ ինչ՝ ահա ոչ ևս է վարդն ի միջի: — Այլ:

\* Եւ զօրս զայս՝ յորժամ դայ վաղիւն՝ չկարեմք գտանեւ. զի վաղն սյլ օր է և սյլ հաշիւ: — Բարձ. Մով:

\* Եթէ սէր աշխարհիս՝ թշնամութիւն է ընդ Աստուծոյ ( ըստ Յակոբայ առաքեալոյ ), յայտ է թէ թշնամութիւն աշխարհիս՝ սէր և հաշտութիւն առնէ ընդ Աստուծոյ: — Ն:

\* Ընդէր իցին սնտուք ( կենցաղաւ կանքս ). — զի չունին վախճան ինչ սլխտանի: — Ն:

\* Ահա յայօր և վաղիւ, և սյլ ոչ ևս իցեմք. երկաւուրց է հանգիստ աշխարհիս, և յաւիտեանականք-եմ տանջանք և ամօթ. ահա յսյլ երկիր կայ անցանել, և զՏէրն փառաց կայ տեսանել... յետ սակաւուց եմք երթալոց առ ահեզ և անխաբ դատաւորն, որում դաղտնիքն մեր յայտնին: — Մանրոտ:

\* Հողի մեկնեալ ի սիրոյն Աստուծոյ և միացեալ ՚ի սէր աշխարհիս՝ ի շնութիւն նմա համարի: — Մարգ. Մեթ. Կեդ:

\* Բարիք տնօրինեսցուք զկեանս մեր, զիտեղով զի ոչինչ աւելի եմք քան ըզխոտ զխրաթառամ. և փառքն մեր և գեղեցկութիւնն և մեծութիւնն՝ արագաւախճան է քան զծաղիկ խոտոյ. և շնչմունք զանազան տապախտուն փորձութեանց՝ շուրջ զմեք մածեալ կայ, և ախտք ահնարինք և հեշտացուցիչք՝ ըզմեզ վայրաքարչ առնեն. և սպարոյն գող, և մարմինս՝ օգնական, և զգայութիւնս խէթկիչ, և հեշտութիւն ձգիչ, և կարիքն ի ձեռին, և անմտութիւնն մերձ, և ծուլութիւնն խաւարեցուցիչ. յորոց յայսցանէ տիրապէս զերծանել ումեք՝ անհնար է. զի որ դամ մի մարմին զգեցեալ է և զգարչատարս իւր յերկիր հաստատեալ, յայսցանէ սուրբ և անաբատ զերծանել ոչ կարէ: — Ն:

\* Բնութիւն ոչ ըստ ընդարձակութեան կալուածոց չափէ զսահմանս գեղ

րեղմանն . անկիւնն մի ազարակի շատ է  
և աղքատի և մեծատան . և երկիր՝ որ  
ոչ բաւէր ընուլ զիղձս մեծատան՝ ի կեն-  
դանութեան նորին , բովանդակէ արդ  
զողջոյն խոկ զմեծատունն : — Ս.Մ.Բ.Բ. :

\* Խնկօք պատեն զքեզ , ո՛ր մեծա-  
տունդ , այլ դու նեխ բուրես : — Ն :

\* Խրատեա զքեզ՝ ոչ ընդգրկել զկեն-  
ցալս : — Բեհեք :

\* Ձիք հնար սրտիւ ի վառս աշխար-  
հիս ուրախանալ՝ մահկանացու եղելոցս :  
— Լ.Մ.Բ.Բ. Ս.Պ.Ը :

\* Յորժամ հասարակայն մճիւռ մա-  
հուն ի վերայ հասանէ , և արտաքս հանէ  
զարքայն ի զօրայն և զսկայն ի զօրու-  
թենէն , և տանի յայն կեանս , սուտ և  
ստուերք լինի նոցա ամենայն փրուճ  
ամբարտաւանութեանն . և վրկէ միայն  
արդարութիւնն ի մահուանէ յայն , որ  
պէս ասէ Իմաստունն : — Ն :

\* Որպէս զսարգ՝ սնտոի ոտայն ար-  
կանեն մարդիկ՝ որք շինեն և տնկեն , և  
մարմնոյ ցանկութեանց ծառայեն : — Ն :

\* Հրատարեցուք յաշխարհէ՝ ուստի  
ակամայ եմք զնալոյ՝ կամօք : — Ն .

\* Կամիս զորպէս նանբութեանն ու-  
սանել . եկ , և ի դերեզմանս ընթաս-  
ցուք . անդ տեսանես ոչէ զշինող քա-  
ղաքին՝ որոյ դու ցանկաս . անդ զտէր  
ազարակին՝ որում փափագես . և զինչ  
քեզ օգուտ այն՝ յորժամ զնա ոչ վեր-  
կեաց : — Ն :

\* Ի ծայրս ամենայնի որ ըստ աշխար-  
հի ցանկութեան ոք ժամանեալ՝ ի ստորև  
հասի ի դերեզման , և զվախճան պոռու-  
կատարումն : Պարզաբար ասել , ամենայն  
կատարեալ սկիզբն է կործանման : — Ն .

\* Ն՛կ , և որպէս զամենայնն թողեալ  
ատեցաք , և զայս փոքր կապանս՝ որով  
բերիմք ընդ աշխարհս՝ խղեսցուք . . որ-  
պէս զի մի լիցի որում զմեծ մարտն վա-  
նեցաք՝ ի փոքունոյն յաղթահարիլ : — Ն :

\* Որպէս կեանքս նանիր է , և ամե-  
նայն խորհորդ որ յորդորէ ծառայեցու-  
ցանել այս կենացս՝ նանիր է : — Ն :

\* Ի սուղ ժամանակի յանցանել ծաղ-

կի հասակին՝ ամենայն մարդ թարշամի :  
— Ա՛ճԲԵՐ . . . ՎԷՅՕՐ :

\* Ընդ երկիր քարշի կերպարանք յաւ  
ւիտենիս այտորիկ . — Ուի՛ճԲԵՐ :

\* Որպէս ի նաւի ոք ի քուն կացեալ  
և նաւն երթայ ուր երթալոցն է, նոյն  
պէս և ամենայն ոք ի քուն կայ ի նաւի  
կենցաղոյս՝ զբաղեալ չողօք . և սա կա  
տարէ զընթացսն : — Ե՛րնի՛ :

\* Յորժամ ի սլարկեշտութեան մնամք  
և վարեմք զաշխարհս՝ ոչ վայելելով  
այլ միայն ընթանալով ընդ սա, և առ  
նա (Քրիստոս) փութալով, հանգչի  
նա՝ յայս զմեզ տեսեալ — Լ՛ճԲԵՐ . Է՛ր ընդ :

\* Կեցցեն . այլ կեցցես վասն Աստու  
ծոյ, զի կեալ վասն աշխարհի՝ գործ է  
մահու : — Ս . Պաւլոսնս :

\* Կեանք մարդկան՝ բազում մա  
հուամբք ընուլ բնաւորեցան . ոչ միայն  
ըստ փոխոխման հասակացն, այլ և ի  
մեղացն՝ ի յանցանս ոգւոյն : — Բարսեղ :

\* Օր աուր մեռանիմք, և ժամէ ի  
ժամ փոփոխիմք . և սակայն կարծեմք

զմեզ անմահս : . . Գրեմք յաճախ առ  
միմեանս . թուղթք մեր անցանեն ընդ  
ծով, և ընդ յառաջել նաւուն՝ սահին  
կեանքս մեր . ամենայն ալիք ի բաց տա  
նին մէն մի վայրկեան . միայն սերտմիտ  
թիւնն՝ զոր գործեաց Քրիստոս ի միջի  
մերում՝ մնայ մեզ շահ : — ՀԵՐՆԻ՛՛ :

\* Մի զբաղեսցի հոգին ի ձեռս ըզ  
զայութեանցս՝ կապիլ ընդ կենցաղս,  
ընդ սնտոխս զբօսնուլ, զի մի տարամեր  
ժեցի ի ճշմարիտ կենացն : . . Խցէք զաչս  
ձեր յերևոյթ տեսութեանցս : — Տօնապարծ :

\* Որպէս ալիք ծովուն մի զմիով ծը  
փան ի խոռվու ժամանակն, այսպէս և  
զբաղմունք կենցաղոյս, որ է աշխար  
հիս : — Լ՛ճԲԵՐ :

\* Յորժամ ի բազում դարուց հետէ  
լինիցիմք յերկինս, զինչ թուիցին մեզ  
յայնժամ սակաւատե վայրկեանքս այս  
փորձանաց մերոց : — Այսպէս իժողոպար  
րեր իցս մի մտեալ ի ծաղիկ հասակին :

\* Արդարե նանիր և սուտ է կենցաղս  
այս . և ի զուր ամբօխի ամենայն մարդ .

ի ցանկութիւն անձին իւրոյ : — Խորհրտ :

\* Նոյն իսկ լիութիւնք կենցաղոյս՝  
փոխանակ փորձարանի լինին յոլովից : —  
Բարեւ :

\* Հարցանես յազազս յաշտենական  
կենացն , յանդիմանիս ընաւին՝ ընդ վա-  
յելս մերձաւոր կենցաղոյս կապեալ : — Ն :

\* Յո՞ խնայեաց մահ՝ յազազս ընչե-  
ղութեանն . յու՞մէ՞ ի բաց եկաց հիւան-  
դութիւն՝ յազազս ընչից : — Ն :

\* Շուրջ հայելով այսր և անդը՝ տե-  
տանեմ ի վերայ կացեալ քեզ զամայու-  
թիւնն : — Ն :

\* Որպէս քունես՝ և ժամանակ դքի-  
զանցանէ . զարթուցեալ ես և անպա-  
րապ ըստ մտացք ինչ այլ սպկայն կեանքդ  
ծախին , թէպէտե և զգալեացդ փախչի :  
Ընթացս իմն ընթանամք ամենեքեան , առ-  
յընտանի իւր կատարումն իւրաքանչիւր  
ոք ճեպելով . վասն այսորիկ ամենեքեան  
եմք ի ճանապարհի : . . Սմենայն անցա-  
նէ . ամենայն զինի քո լինի : Տեսեր ի  
ճանապարհի տունի կամ բանջար , կամ

ջուր , կամ որ ինչ պատահէ արժանի  
տեսման . փոքր ինչ զուարճացար , և ա-  
յլա զանց արարեր . դարձեալ պատահե-  
ցար քարանց և ձորոց և դահից և դի-  
տանոցաց , կամ թերեւս ուրեք գազա-  
նաց և սողնոց և փշոց , և այլոց իմիք  
խտաց . — սակաւ ինչ արտնայար , և  
ապա լքեր : Այսպիսի և կեանք . ոչ վա-  
յելչականքն մնացականք են և ոչ արտ-  
մականքն բաւականապէս ստացեալք :  
Ճանապարհ է , ոչ քո , և ոչ մերձ է  
դոյքս քո : . . Գիտեա և զկենցաղոյս , ե-  
թէ ոչ յարաման . զերկիր՝ այսօր դու  
դործեցեր , և վաղիւ այլ ոմն , և զինի  
նորա՝ միւսն : Տեսանեմ զանդաստանս  
զայստսիկ և զբազմակատարս տունս .  
քանի ահա անուանք նոցա իւրաքանչիւր  
ոք փոխոխեցան . այսր անուան ստացաւ ,  
և ապա անուանեցաւ միւսոյ ուրումն . և  
այս անուն փոխեցաւ , և դարձեալ այժմ  
այլոց ասի : — Ն :

\* Որ անցեալ ընդ վտանգս կենաց և  
հասեալ ի վախճան նոցին՝ փախադիցէ

կեալ վերստին , ախմարագոյն է քան  
 զուղեոր՝ որոյ հասեալ յեւս տաժանեղի  
 ճանապարհին , և առաջի ունեւելով զիջե-  
 վանն անդորրու , կամիցի վերստին ըզ-  
 նոյն ճանապարհ առնել : — Այլ :

\* Ո՛վ կեանք մահկանացու , քանի՛ բա-  
 զումք են խարեալք , հրատուրեալք , կու-  
 րացեալք առ ի քեն : Փախստական լի-  
 նիս , և չես ինչ . երեւիս , և ստուեր լուկ  
 ես . վերանաս , և ծուխ ես . հալածիս զօր  
 ամենայն , և դարձ առնես զօրհանապալ .  
 փախչիս ի դալդ , և դաս ի փախչելի .  
 նման ի մեկինելի , աննման ի ժամանելի .  
 քաղցր առ ախմարս , դառն առ իմաս-  
 տունս . որք սիրենն զքեզ՝ ոչ ճանաչեն ,  
 և որք խոտեն զքեզ՝ նոքա միայն ճանա-  
 չեն : Եւ արդ զինչ իցես դու , կեանք  
 մահկանացու : — Ճանապարհ ես մահա-  
 ցուաց , և ոչ կեանք . մեղօք սկսանիս և  
 մահուամբ կատարիս . ճանապարհ ու-  
 րեմն ես կենաց , և ոչ կեանք . շաւիղ ես ,  
 և ոչ հաւատար հասարակաց . այլ ումեմն  
 երկար , այլում համառօտ , ումեմն լայն ,

այլում նեղ . ինդարար ումանց , այլոց  
 տխրական , բայց ամենեցուն առ հասա-  
 րակ երազ և անդարձ : Արժան ուրեմն  
 է , ո՛վ եղիկելի կեանք մահկանացու , յու-  
 ղել քննել զքեզ , այլ ոչ վստահանալ ի  
 քեզ . ի դէսլ է անցանել ընդ քեզ , այլ  
 ոչ ընակել ՚ի քեզ . ոչ ոք զետեղի ի վե-  
 րայ արքունի փողոցի . հարկ է քայլել  
 գնալ ընդ այն՝ առ ի ժամանել ի հարե-  
 նիս : — Ս . Կալմբան :

\* Քօղաւորք երեւին մեզ և անցեալն  
 և աղաղայն . այլ միոյն քօղ է այլուոյ ,  
 միւսոյն՝ կուսի : — Այլ :

\* Ամբ մի ըստ միոջէ հոլովեալք՝ հե-  
 ոացուցանեն զյիշատակ անցեալս : — Կ

\* Գեոտոյ սահեցելոյ անհար է տեսա-  
 նել գալիունս իւր , և մեզ՝ դաւուրս մեր :

\* Ոչ ինչ ի մարդկայնոցս հաստա-  
 սուն , և ոչ ոք ամենեւին կալ մնալ յա-  
 րարեալս բնաւորեցաւ . այլ և քաղաքք  
 մեծամեծք և երեւելիք՝ շինուածովքն ,  
 պայծաւուր թեմամբ և զօրութեամբ բնակ-  
 չացն , և այլովք ըստ տեղւոյն , և վա-

ճառուն լիութեամբը, կործանեալք այժմ  
 յատուկ հնոյ պարկեշտութեանն նշմա-  
 րանք երևին. և նաւ յուրվակի ի ծովէ  
 սպրեալ թիւրապատիկ լիութեամբը և  
 արագութեամբ՝ հանդերձ բեռամբ, վա-  
 ճառափանաց զշահն ընձեռելով, միով  
 ի վերայ անկեալ հողմով՝ աներեւութա-  
 ցաւ. և զօր՝ յաղթեալ ի պատերազմի  
 յօքնակի զընդդէմակացան փախուցանե-  
 լով, ինքեանց բարօրութիւն կազմելով,  
 ողորմելի տեսութիւն զկնի եղև: Ալլքբ  
 բովանդակ և կղզիք ի մեծ զօրութիւն  
 յառաջ եկեալք, և յուր ըստ երկրի և  
 բազում ըստ ծովու կանգնելով զյաղ-  
 թանակ, յաճախ ընչեղութիւն յառա-  
 րաց ժողովեալ, կամ ժամանակաւ վատ-  
 նեցան, կամ գերիք լեալ՝ ի ծառայու-  
 թիւն յազատութենէն փոխեցան: Եւ  
 բոլորովին զօր և ասիցես ի մեծամե-  
 ծացն և յանժմբերկեաց չարեացն, վա-  
 զագոյն առեալ ունի կենցաղս՝ զօրի-  
 նակն: — Բարեւոյ:

\* Փախադէլի է մեղ փութանակի

չուել. նա և սու այն համառօտագոյն  
 ճանապարհաւ վերաժամանել. քանզի որ-  
 քանեօք չարեօք այժմ տալնատի աշ-  
 խարհ, որքան տրտմութիւնք. որպիսի  
 թշուառութիւնք նեղեն: Զրնչ են կեանք  
 մահկանացու, եթէ ոչ ճանապարհ. —  
 ուլիցէ, եղբարք իմ սիրեցեալք, զմտաւ  
 սծեք, որ ի վաստակ ճանապարհի լր-  
 քանիցի, և զլրուսն ճանապարհին ոչ  
 կամիցի: Պտուղ աշխարհի՝ աւերու-  
 թիւնն է. քանզի առ այն իսկ սծէ՝ զի  
 անկցի. առ այն բուսանի՝ զի ի հունձ  
 դայցէ. և ամենայն որ ծնանի՝ մահու  
 վախճանեսցի: — Գրե՛ք որ Պապ:

\* Ամենայն ինչ որ առ ձեզք մնացաւ  
 կան և անփոփոխելի է՝ առ յաւիտենաւ  
 կանութիւնս իմ՝ մնացական ոչ է: — Ն:

\* Աշխարհ՝ ձայն է անձանօթ և ան-  
 արձագանդ: — Ալ:

\* Տեսանէ մարդ հանապազօր զայլաւ  
 փոխել և նուազել իրաց և կերպարա-  
 նաց աշխարհի, և տակաւին յուսով զօ-  
 շտի: — Ալ:

\* Այնչափ արժան է ճանաչել զայն խարճ որչափ պէտքը իցեն յուզղել է նմա զքնացս մեր: — Ա.Ն:

\* Ընդունայն է որ ոչ ճանաչէ զուսնայնութիւն աշխարհի: — Շարտոյ:

\* Չիք չարաչորժ քան զայն՝ որ զարմանալի իմն ցուցանէ զկեանս աշխարհիս: — Ա.Ն:

\* Այս անցաւոր կեանքս է փրփուր, Չոր ժողովիս՝ ունայն եւ զուր: — Տաղ:



Ս Ի Ր Տ

Ե Լ Կ Ի Ր Ք Ի Ի Ր

Մատիցէ այր է խորութիւն սրախերոյ, և բարձր եղիցի Աստուած: — Սաղմ. ԿԳ. 8:

\* Խօսէի է գեղեցիկ ընդ սրախ խմում, հոգայի, և տառասուէր յիս հոգի խմ: — Ն. ՀԶ. 6:

\* Դժոխք և կորուստ՝ յայտնի են առաջի Տեառն. զխնդ ոչ և սիրտք մարդկան: — Ա.Մ. 1, ԺԲ. 10:

Ո ստեղծ առանձինն զսիրտս նոցա, և է միտ առնու զամենայն դորձս նոցա: — Նա քննէ զգաղտնիս սրտից մերոց: — Սաղմ. ԼԲ. 12. ԽԳ. 22:

\* Դէք զսիրտս ձեր ի վերայ զօրու-  
թեան նորա: — Ն. 10. 12:

Սիրտեցէք առաջի նորա զսիրտս  
ձեր: — Ն. 40. 10:

\* Խնուլուոցին ամենեքեան որ անմխոք  
են սրտիւք: — Ն. 2. 5:

Սիրտ իմ և մարմին իմ ցնծասցեն  
առ Աստուած կենդանի: — Ն. 29. 5:

Ուրախ եղիցի սիրտ իմ յերկնէկ  
յանուանէ քուսէ: — Ն. 2. 10:

Ուրախ եղիցին սիրտք այնոցն՝ որք  
խնդրեն զՏէր: — Ն. 29. 5:

Կեցցեն սիրտք նոցա յաւիտեանս  
յաւիտենից: — Ն. 10. 27:

\* Սիրտ խոտորեալ՝ նիւթէ գչարիտ: —  
Ա. 1. 2. 44:

Սիրտ առն ընդմտատարի՝ տրտմու-  
թիւն է անձին իւրոց: — Յեց ոսկերաց՝  
սիրտ ցաւած: — Ն. 39. 10. 50:

Սիրտ անզգամի ցաւ է կրեւեաց  
իւրոց: — Սիրտ ուրախ՝ բարեւոյն առնէ:  
Առն հոգածի՝ ցամաքեն ոսկերք: — Ն.  
3. 21-2:

\* Տուր ինձ, որդեակ, զսիրտ քո, և  
աչք քո ճանապարհաց իմոց սպասեա-  
լեն: — Ն. 19. 26:

\* Որպէս ոչ են նման երեսք երեսաց,  
նոյնպէս և ոչ սիրտք մարդկան սրտից  
նման են: — Ն. 10. 19:

\* Եթէ սոգտանիցեն զմեզ սիրտք  
մեր, այլ Աստուած մեծ է քան զսիրտս,  
և զիտէ զամենայն: — Ա. Յ. 16. 9. 20:

\* Վասն անձին ինչ ոչ սլարծեցայց,  
բայց եթէ ի տխարութիւնս: — Բ. Կ. 1. 3. 6.  
Հաճեալ էմ ընդ տխարութիւնս...  
Վասն Գրիտտոսի. զի յորժամ տխարա-  
նամ՝ յայնժամ զօրանամ: — Ն. 40:

\* Առաքեաց Աստուած զՀոգի իւր ի  
սիրտս մեր, որ ազազակէ, Աբբայ,  
Հայր: — Գ. աղ. 1. 9. 6:

\* Յետ ամենայն հրաշագարդ և կենա-  
լար բանիցն՝ զոր խօսեցաւ Յիսուս ի  
վերջին ընթրիան, և հրազինեաց զաշա-  
կերտան նաև հաղորդութեամբ մարմնոց  
և արեան իւրոյ, յիշէր տակաւին զստեղ-  
ծուած նոցին՝ զի հոգ են, և զազվազվուն

են օրերոք ամենայն որդւոց մարդկան, և ասէր. “ Ամենեքին դուք գայթակղելոց էք յինէն՝ յայսմ գիշերի. զի գրեալ է, Հարից զհօլիւն, և ցրուեսցին ոչխարքն հօտին : — ( Մար. 13. 31 ) :

Զվէճն հաւատոյ՝ շարժեալ փորձողին խաբէութեան մարտ, առ ի քէն թողացուցեալ, զմարդկային տկարութիւնս յանդիմանելով. և առ յոյս դարձի մեղաւորաց՝ որ դառնապէս արտասուեցովն՝ առ ի քէն ( Քրիստոս ) երիւք հարցմամբք սիրոյն՝ զերից ուրացուցեանցն զբժշկութիւն : — Շարհ :

\* Ոսկի ի հուր փորձի, կէն յոսկի, և այր՝ ի կէն : — Այլ :

\* Թէպէտ խոստացայ դաշնաւորեցի Տէր) քեզ հաճոյանալ, և ոչ ըստ այսմ սահմանաւ ուխտիւ փակեցայ, այլ դարձեալ գնոյն նիւթեցի չարիս : Բուռն հարի զանհաստատ հոգմոյ, որովք միշտ տատանեալ այսր անդր տարաբերիմ : — Շարհի, Ե :

\* Իբր զանդգայ պաճարս անասնոց՝

մեռանիմք, և ոչ զարհուրիմք. կորնչիմք և ոչ հիանամք. թաղեցեալ լինիմք և ոչ խոնարհիմք. տարագրիմք և ոչ տագնապիմք. եղծանիմք և ոչ զղջանամք. մաշիմք և ոչ մտաուեմք. սլակասիմք և ոչ պատրաստիմք. գնամք և ոչ զգուշանամք. գիտեմք և ոչ ևս զգամք : . . . Զի որողայթն դադոնի և հնարադիւրն աներևակի . . . անցեալն անյայտ և ապառնին կարծողական. ևս անհամբեր, և բնութիւն թերահաւատ. ոտք անհաստատք և միտք ցնդեալք. կիրք հարկաւորք և բարք անժուժկալք. մարմին մեղատմակարգ, և յօժարութիւն երկրասէր . . . բնակութիւն կաւղէն և անձրևք ուժգնակիք. կարիք անթուելիք և պատահաբք ամենագրաւք. միտք չարախնամք և անհմունք բարիատեացք . . . խաբմունք յիմարութեան և խաղալիք տղայականք. աշխատութիւնք ընդունայնք և վայելմունք երազականք. համբարք ոչնչից և պահեսաք հոգմոց. նմանութիւնք սուուերաց և կերպարանք ծիծաղելիք : — Ն. ԾԵ :

\* Մինչդեռ արթունս եմ՝ ներհեմ՝ մինչդեռ զգաստ երեւիմ՝ թմբբիմ . Ի բարեպաշտելս իմում՝ զայլթաղիմ . մինչդեռ աղօթեմս՝ և վրիպեմ . . . ծաղկիմ և ոչ պտղաբերիմ . . . հրեշտականամ յերեսս , և ի խորհուրդս զխանամ . . . զաստիմ ի պարս հեզոց , և ընդ այսս կարասւեմ . Ի մարդկանէ գոլիմ , և ի Տեսողէդ պարսաւիմ : — Այսօր՝ մաքուր հոգեկիր , վաղիւ՝ մոլի խելագար : — Ն :

\* Նրկինք առաջի կան մեր , և մեր յերկրի թափառական շրջիմք : — Ուրիշ :

\* Չէ հնար մարդոյ բնաւին ի կարեաց աշատանաւ , բայց կարճեւ մարթի . սյւլամենեին առանց կարեաց լինել՝ անհնար է : — Ն :

\* Ամենայն ոք զիւր բեռն բարձցէ :

\* Ոմն և ծնունդք իւր . ոմն և շառաւիղք իւր . ոմն և բիծք իւր . ոմն և արհածք իւր . . . ոմն և խրատունք իւր . ոմն և զօրութիւնք իւր . ոմն և աղքատունք իւր . . . ոմն և ստուերք իւր . . . ոմն և յարձակմունք իւր . ոմն և հնարք իւր . ոմն և

պատիրք իւր . ոմն և զխամունք իւր . . . ոմն և կայծակունք իւր . ոմն և կիրք իւր . . . ոմն և հրեհհմունք իւր . ոմն և սրտակաւանք իւր . ոմն և վիճք իւր . ոմն և անզունդք իւր . . . հնոցն և տապ իւր , հրասն և գոլորշիք իւր . . . գաղանն և կորիւնք իւր : — Նարեկ . Զ :

Հոգս հալողականս , անդամունս անհնարաւորս , թուականութիւնս մտաց անբարդելիս . ելմունս անկատարս , իլմունս անհաստատս : — Ն . Ի՛ն :

Աղաւինութիւնք կարծողականք , մինն՝ Գոնէ , և միւսն՝ թերեւս . Ի մի բերան՝ երկակի բարբառ , մինն եղկութիւն և միւսն խոտլութիւն : — Բաժակք զոյգ առ երկուս բերմունս , մինն արտօսը և միւսն ծծումք : — Ն . Լ :

\* Եւ արդ , զիարդ բժշկեսցիս , անձն իմ եղկելի , ի յայբանեաց թիզաց խոցեալ : — Որ յԵզիսլատս միշտ ունիս զարաիդ զլարձն : — Ն . ԽԵ . Բ :

\* Կերպ ի յառաջ զիմեալ , ոտք ի վերջ կոյս յետահարեալ . զիտութեամբ

էիցն՝ ի չէիցն՝ միշտ խաբեալ: — Ի մը-  
տացն մարտ՝ ի փոքունցն յաղթահա-  
րեալ. և ի թառանջ սրաին՝ հազադին  
դունն հրդեհեալ: — Ն. Ի Գ.

\* Կոհակօք բազմօք . . տատանեալ  
հոգիս ի յայտ աշխարհի, մարմնոյս շի-  
նուածով իբր՝ ի նաւակի: — Նաւն ի բախ-  
մանէ վայրենի ալեացն խորտակեցաւ .  
նաւուղիդն հանդէպ նաւին դեգերեալ  
ողբայ. ձեռն ի ծնօտի եղեալ՝ արտա-  
սուայ հեղեղս ի ջուցանէ: — Նմարք սա-  
կաւ մնացուածոցն՝ ի ծայրից ծփմանց  
սպլէկըյ ծովուն՝ իբր խողխողեալ բա-  
նաւոր՝ ողորմագին թախծանօք հեծէ: —  
Իցէ թէ յաւելից հայել զբազմախոր-  
տակելի տազանակ մարմնոյս իմոյ նորո-  
գեալ. իցէ արդեօք տեսանել զփշրեալս  
նաւ ողբալի հոգոյս՝ ողջացեալ: — Իցէ  
արդեօք տեսանել զյոգնածախիծ սիրտ  
վշտացելոյս՝ բերկրեցեալ: — Արդեօք  
լուայց ընդ ձայնի գուծիս՝ աւետեաց  
համբաւ ինձ առաքեցեալ: — Ն. Ի Ե:

\* Ծով կենցաղոյս՝ հանասաղ զիս ա-

լեկոծէ. մրրկեալ ալիք թշնամին ինձ  
յարուցանէ: Այլ դու նաւապետ բարի  
(Յիսուս), լեր և ինձ ձեռնտու: — Շար:

\* Աւաղական ձայնարկութեամբ զան-  
ձինս տարածանեմ վշտակրութիւն, որ  
ոչ բնաւին մեռեալ աշխարհի, և ոչ խա-  
կապէս կենդանի Աստուծոյ: — Նար. Ի Ե:

\* Զկորստեանն խորս չափելով զսր-  
բանն ոչ երբեք գաի: — Ն. Ի Զ.

\* Եթէ ոչ սիրտն յամենեսին բաշխե  
զհոգին՝ վաղվաղակի շիջանի: — Ուկէբեր:

\* Այնպիսի է մարդկեղէն բնութիւն,  
բազում անգամ ի մեծամեծան տաքիւ-  
նանայ, և ի փոքունսն զեղծի: — Ն:

\* Գիմամարտութեամբ կրից և ոչ  
ժառայելով նոցին՝ հայթհայթի ճմա-  
րիտ անշորրութիւն սրաի: — Նար. Ա. Զ.

\* Եթէ սիրտ քո ուղիղ էր՝ արարածք  
ամենայն լինէին քեզ հայելի ուղղու-  
թեան վարուց և մտտեան սրբութեան  
սրաի: — Ն. Բ. Գ:

\* Մեծ հանգարտութիւն է սրտի ու-  
րում չիցէ փոյթ ոչ դստութիւն անձին  
և ոչ արհամարհանք: — Ն. Զ:

\* Գոհ սրտի՛ չէք ինչ պակաս : — Ա՛յլ :

\* Որպէս է սպունդ ինչ յեցեալ և հանդուցեալ ( է ) սիրտն . զի մի է շարժեալն՝ ընդ իմէք խօսի բախիցի փախուկըն , և մնասիցի է խաղալոյ ցասմանն բարկութենէ : — Ուլէքէր :

\* Խաղաղական ոգւոյ՝ դէւրատար է ամենայն մնաս : — Ա՛յլ :

\* Ըստ սրտից մերոց կըռէ Աստուած դբադդ մեր : — Մասնէլ :

\* Ընդունայն արարածք , զինչ բաւիցեք դուք սունել սրտի՛ զոր ոչ դուք բնատեղծէք , և ոչ նա վասն ձեր եղև : — Ն :

\* Փշրէ Տէր զանօթս հողեղէնս ( ըզսիրտս ) , որպէս զԳեղէսնին , որպէս զի մեծապէս փայլեցուցէ զըյս է նոսին և զլայելս հաւատոց : — Ն :

\* Աստուածն ամենայն մխիթարութեանց զիտէ միայն խօսել ընդ սիրտս :

\* Փոխեա զսիրտ քս , և ամենայն ինչ քեզ հնարաւոր լիցի : — Ն :

\* Անհաստատութիւն՝ ճշմարիտ տիպ է սրտից մերոց . և զի՛ յամենայն ժամ

յամենայն իրաց նորանոր ծնանին է մեզ զբացմունք , եթէ առ վայր մի միտ դեցուք մեզ՝ ոչ ևս ճանաչեմք զանձինս :

\* Ամենայն ինչ երջանիկ և բարուք է զեաեղեալ է բնութեան . մարդս միայն անդոհ և անդոհ . . . քանզի չէ նորա այս վայր . սիրտ նորա մեծ է քան զաշխարհս , և երկիր չէ նորա հայրենիք : Որ ինչ ոչ է Աստուած՝ ոչինչ է նմա : — Ն :

\* Շատ է մարդոց բեռն անձին իւրում : — Նման . Ա . ի Գ :

\* Հնարի սատանայ պէսպէս կերպարանօք խաբել զմեզ . զոչէն էացուցանել է մեզ , և զճմարիտ էութիւնն խափանել է մէնջ : — Մարգ . Պէրր . Գ :

\* Շատք է պիտոյից մերոց՝ արուեստականք են : — Ա՛յլ :

\* Ելեալ յարգանդէ մօրն՝ օր ըստ օր է ճեպլմք , և յարգանդ երկրի մտեալ՝ զաբարիմք . իսկ մինչև մտեալ անդր՝ բազում և պէսպէս հալածիչք զկնի ընթանան : — Լա՛մ . Սա՛լ . Ե :

\* Զամենայն ինչ զոր խորհիւս զու՛

թէպէտ և ոչ գործիցես զնա, սակայն սպօք կնքեցաւ ի սիրտ քո չարութիւն:

— Գր. Մարտի:

\* Տէր, տնւր ինձ դօրութիւն, զի պինդ կալայց դէեզ. պահեա զիս, զի մի կոբուսից զբեզ: — Այլ:

\* Մանր է սիրտ մարդոյ քան զաշխարհ: Աստուծոյ միայն է տալ զօրութիւն բառնալոյ զայն: — Այլ:

\* Ո՛վ, որ զսիրտս անգնալիս՝ ի դընացս եհան (Աստուած): — Ն:

\* Մի՛ ի սրտէն երկնչիցես՝ այլ ի ձեռանէն՝ որ զսիրտն ունի. զի ուր Աստուած հաշտ էցէ՝ և ի հոյ մէջ ցօղ լինի. իսկ եթէ Աստուած կազիցէ՝ և ի փափկութիւնս մարտ և պատերազմ: — Ուրիշ. Մի. Ե:

\* Մաղթեսցուք ի ճանապարհս սրտից մերոց առնել զնացս, և հանել զմեզ ի յերկինս ընդ իւր, ազատելով յաղտաղտուկ և ի բազմավրդով կենցաղոյս. զի պարակից եղեալ սերովբէիցն՝ մուսացուք զունայնութեանս զբազմունք, հա

ւատով և իմացութեամբ անճառ. բարեաց. — Լա՛հ. Սաղմ:

\* Ոչ ոք է որ կեցցէ և ոչ փորձեսցի. զի ի ներքս ի մեզ է առիթ փորձութեանն. քանզի ցանկութեամբ ծնաք յաշխարհ: — Նա՛ն. Ս. ԺԳ.

\* Տկար ես առաւել քան զոր իմանաս: — Ն. Գ. Դ:

\* Ձեր քեզ թննամի խեռ և չար քան զանձնդ, եթէ չիցես համախոհ ընդ հոգւոյդ: — Ն. ԺԳ:

\* Անդ եմ՝ ուր խորհուրդք իմ. և անդ խորհուրդք իմ՝ ուր ըղձալիքն իմ: — Ն:

\* Բնութիւն՝ յամենայնի զինքն գիտէ վախճան, շնորհքն՝ զԱստուած: — Ն. ԺԳ:

\* Որչափ տկարագոյն է ամանն՝ նոյնպէս սաստիկ ալէկոծութիւնն: — Ուրիշ:

\* Ձինչ իցեն մարդկեղէն կիրք ամենայն. այլ հող և մոխիր, և իբրև փոշի առաջի հողմոյ. ծուխ և ոտուեր, և տերև յօդոյ սրացեալ. և ծաղիկ, և երազ, և բանդն և առասպելք. հողմ, օդ լոյծ տարած և հեղեալ. թև թռուցեալ և

ոչ ուրեք դադարեալ. վտակք սահեալք և  
ոչ ուրեք յանգուցեալք. և եթէ այլ ինչ  
քան զսոսա չնչենազոյնք կայցեն : — Ն :

\* Յնորք երևակայութեան՝ նորոգեն  
զոր ինչ բարձին ի մէնջ ժամանակ կամ  
հասակ : — Մասնի :

\* Գանգատիս ընդ տկարութիւն մար  
մնոյդ, և չարաչար զգաս զարգասիս զօ  
րութեան նորին : — Ն :

\* Բնութեամբ փառասէր է ընու  
թիւնս, և կենաստէր և դեղեցկասէր .  
և այս է որ ստորաքարէ զսա ընդ եր  
կիր. արդ եթէ այն վերին տանն բարու  
թիւնն և փառքն ճառագայթեալ ընու  
զհոգին, յուրուական իրաց կենցաղոյս  
ոչ պատրի : — Լաթ. Սղ. ԿԳ :

\* Սմենայն ինչ որ անհաս է՝ փախա  
դելի է : — Ն . ձժԸ :

\* Ո՛վ հոգի իմ, ս՛վ գեղեցիկ պատ  
կեր Արարչին, եթէ գիտէիր զպատիւ  
քո, թէ քանի սիրելի իցես Աստուծոյ,  
և սրբան մեծարեալ ի հրեշտակաց : —  
Ս . Աւրի :

\* Պայծառ է սիրտ որպէս ջուր անա  
պակ, եթէ ոչ յուզեցի ի մարկաց : — Այլ :

\* Ա՛րկ, ս՛վ Յուդա, զարծաթդ զոր  
աւեր՝ ի բոլս սրտի քո, և քնեա, թէ  
այդմ էր արծանի Տէրն քո, զոր վա  
ճառեցեր դու և գնեցին Հրեայքն : —  
Երգի . Ըստ Մատթի :

\* Մի ի հնազոյն կուրութեանց մերոց  
է՝ սակաւ յոյժ ճանաչել զչափ կուրու  
թեան մերոյ : — Օգոստ :

\* Մատուք կենաց մարդոյ են, ա  
րևելք՝ ծնունդն, արևմուտք՝ մահն, հա  
րաւ՝ յաջողութիւն, հիւսիս՝ ճախողու  
թիւն : — Սնտ . Պարոսացի :

\* Ո՛վ դու որդի մարդոյ, հայեաց ի  
քեզ. և յորժամ դու քեզ անհաս մտաս՝  
զբարձրն քան զքեզ մի քննէր, և մի հա  
լածեսցէ քննութիւն զմիտս քո. զի չար  
է հալածանք քննողաց քան զհալածանք  
չար թագաւորաց : — Ոսկի :

\* Որք և ոչ ի միտջէ կամիցին վրիպել՝  
բազում անգամ յամենայնէ ի բաց ան  
կանին : — Գր . Սարոսաթաթ :

\* Նոյն իսկ բնութիւնս՝ մեզ հակառակ կարգեցաւ : — Խոր :

\* Որ ոչ ճանաչէ զանձն՝ ոչ ճանաչի : — Ս. Եփեմ :

\* Մարդս պատկեր է Աստուծոյ, և ըստ կամացն փոփոխի . այլ Աստուած անփոփոխ կայ : — Ն :

\* Հէշտանայ ամենայն անձն և խոնարհի մտօք, յորժամ խորհի՛ յաւիտեանական առաքելնութեանցն ցանկանալով . իսկ յորժամ հայեացի առ ի մերձակայս՝ զցանկութիւնն նախապատուէ : — Բարսեղ :

\* Անհնարին է յողով մարդոյ ոչ լինել սասանումն ի փորձութեանց . և ցորչափ աղօտաբար մեղանչեմք և սուղ իբրև զտունկս ի հանդարտ օղոյ շնչեցելայ՝ հեղաբար սասանիմք : — Ն :

\* Որպէս առ ամենայն ախարհ զբժուարատեսանելի (է) զուղնաքեայ մարդարիտ, աստուստ զմտաւ անձ, զինչ է առաջի Աստուծոյ մարդ . — ամենայն իբօք ոչինչ է : — Բարս . Գրեգ :

\* Անձին մախայ՝ որ ի լիութեան իւ

րում չքաւոր համարի զինքն : — Պետր . Ուլիսթան :

\* Մի հաշուեր զինչ սպակասի քեզ՝ այլ որում իմիք կարօտ եցես : — Այլ :

\* Երջանկութիւն խստացուցանէ ընսիրտ . բանութիւն՝ խոտորեցուցանէ . սովորութիւն՝ թիւրէ : — Այլ :

\* Երջանիկ է որ ոչ նախանձի ընդ երջանկութիւն այլոց : — Այլ :

\* Աստանօր ումեմ շատ տուեալ է, ումեմ սակաւ, ոչ ումեք լիովին : — Այլ :

\* Սրտի անմահականի՛ մի ինչ մահացու : — Այլ :

\* Վախճան բանիս . զամենայն ինչ լուր . յԱստուծոյ երկիր, և զպատուիրանս նորա պահեա . այս է մարդն ամենեւին : — Ժող . ԺԲ . 15 :

ՆԵՐԱՆՁՆՈՒԹԻՒՆ

ԿՐԹՆ ԱՒՈՐ ՈՒԹԻՒՆ



Որ գտանէ զանձն իւր՝ կորուսեց  
զնա . և որ կորոյս զանձն իւր վասն իմ  
(Յիսուսի), գտցէ զնա : — Մարկ. Ժ. 59 :

\* Եկայք զուք յառանձինն տեղի, և  
հանգիջիք սակաւ մի : — Մարկ. Զ. 51 :

\* Տայր ոք ինձ թեւս՝ որպէս զաղաւ  
նոյ, զի թռչէի, վերանայի, և հեռա  
ցեալ զաղարէի յանապատի : — Սղ. ԾԳ. 7 :

\* Յանձնէ փախչի՝ որ յառանձնութե  
սնէ փախչի : — ԱՅԼ :

\* Առանձնութիւն՝ մահ՝ կենսաբուղիս՝

\* Աստուած իմ և հոգի իմ . ամենաբա  
ւական և յաւիտենական ընկերութիւն :

\* Այսպէս թողեալք ողերկրանոր թն

գաւորիս զընդարձ : ճանապարհ, երկ  
նա . որին նեղ ճանապարհաւ ի յերկրի  
զինաւորիս . թեւս աղանոյ ստացեալ՝  
զաղարես յանապատիդ, դոյլն օթեվան  
ունելով . յորում նստիս միայնացեալ ի  
բաղմամբս կենցաղավարութեանէս, ա  
կըն ունելով Քրիստոսի գալստեանն, որ  
նորոգէ զմարմին խոնարհութեան : —

Գր. Արշար :

\* Վէբք հոգւոյ՝ յառանձնութեան՝ փո  
ւին ի սպիս : — ԱՅԼ :

\* Ուխտս զիք և կատարեցէք Տեառն  
Աստուծոյ մերոյ : — Սղ. Հե. 10 :

\* Մատուցէք Տեառն զփառս և զսա  
ախ . . . Առեք ստտարագս և մտէք ի  
սրահս նորա . երկիր սագէք ի դաւիթս  
սրբութեան նորա : — Ն. Ղե. 8. 9 :

Անկեալ երկիր սագին, և մա  
տուցին նմա Ոսկի, կնդրուկ և Զմուռս :  
— Մարկ. Բ. 11 . ( Զհաւատս, զաղթս  
և զկամաւոր մեռելութիւն ) :

\* Եղբուք զուք կատարեալք, որպէս  
և Հայրն ձեր երկնաւոր կատարեալէ : — Ն :

\* Մտեք ընդ նեղ դուռն . քանի՛ ընդ-  
արձակ է դուռն և համարձակ ճանա-  
պարհն՝ որ տանի ի կորուստ, և բազումք  
են որ մտանեն ընդ նա : — Քանի՛ ան-  
ձուկ է դուռնն և նեղ ճանապարհն՝ որ  
տանի ի կեանս, և սակաւք են որ գտա-  
նեն զնա : — Ն. Ե. 15 :

\* Զինչ արարից՝ զի զկեանս յաւի-  
տենականս ժառանգեցից : ... — Յիսուս  
ասէ . Եթէ կամիս կատարեալ լինի՛լ  
կրթ, զոր ինչ ունիս վաճառեա և տուր  
աղքատաց, և ունիցիս դանձս յերկինս .  
և առ զիսաչն, և կի զկնի իմ : — Մարկ. Ժ .

\* Հայեցեալ Յիսուս յայսկոյս յայն-  
կոյս, ասէ ցաշակերտոն . Զիտրդ դը-  
ժուարին է որ զինչսդ ունին՝ մտանել  
յարքայութիւն Աստուծոյ : — Որդեակք,  
որչաի դժուարին է յուսացիւոց յինչս՝  
մտանել յարքայութիւն Աստուծոյ : —  
Իսկ ո՞ կարասցէ ապրել : — Ա. ի մարտ-  
կանէ այդ անհնարին է, այլ ոչ առ ի  
յԱստուծոյ : — Ն. 25 :

\* Են որոց վայել է յաշխարհի բնս»

կել, և են՝ որ յանապատս . շուշան ծո-  
վային՝ նուազի ի ցամաքի, մանուշակ՝  
ժաղկէ ի քարածերպս : — Ո՞ն :

\* Մանուկն (Յովհաննէս) էր յանա-  
պատս, մինչև յոր երևեայ նորա իսրա-  
յելի : — Ղ. 4 . Ա. 80 :

Ճրագն արժարժեալ հողմով անա-  
պատի՝ առաւել փայլեաց, քան փառով  
յաշխարհի (Յովէ . Մկրտիչ) : — Ա. 1 :

\* Կրօնաւորութիւն սուրբ և անարատ  
առ ի յԱստուծոյ և ի Հօրէ՛ այս է . սցց-  
կու լինել որբոց և այրեաց՝ ի նեղու-  
թեան իւրեանց . անարատ պահել զանձն  
յաշխարհէ : — Յ. 1 . Ա. 27 :

Եթէ ոք կամիցի կրօնաւոր լինել, և  
ոչ սանձահարեացէ զլեզու իւր, այլ բո-  
ւազեցուցանիցէ զսիրտն իւր, այնպիս-  
ւոյն վայրապար է կրօնաւորութիւնն : — Ն :

\* Եթէ արթունք իցեմք և եթէ ննջի-  
ցեմք՝ նուալ (Աստուծով) հանդերձ կեց-  
ցուք : — Բ. Թե . Ե. 10 :

\* Դու, ո՞վ մարդ Աստուծոյ, փախի՛ր  
յայնցանէ (յընչից), և կրթ զհետ ար»

դարութեան, զաստուածովաշուութեան, զհաւատոց, զսիրոյ, զհամբերութեան, զհնգութեան. և մարտիր զբարւոք մարտըն հաւատոց. և բուռն հար զկենացն յաւիտեանականաց՝ յոր կոչեցարն, և դաւանեցեր զբարւոք վկայութիւնն՝ առաջի բազում վկայից: — Ա. Տե՛՛. Զ. 9:

\* Վասն որոյ (աւետարանին) և զայս չարչարանս կրեմ, այլ ոչ ինչ ամօթ համարիմ. քանզի գիտեմ յո հաւատացեալն եմ և հաստատեալ, եթէ կարող է զաւանդն իմ պահել յօրն յայն: — Ն. Բ. Ա. 12:

\* Ես այսուհետեւ նուիրեալ եմ, և ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ. ըզբարւոք պատերազմն պատերազմեցայ, զընթացսն կատարեցի, զհաւատան պահեցի. այսուհետեւ կայ մնայ ինձ արդաւրութեան պսակն. զոր հատուցե ինձ Տէր յաւուր յայնմիկ, արդարն դատաւոր. և ոչ միայն ինձ, այլ և ամենեցուն՝ որ սիրեցին զյայտութիւն նորա: — Ն. Դ:

\* Աղաչեմ զձեզ... արժանի գնալ կոչմանն՝ յոր կոչեցարուք: — Եփե՛. Դ:

\* Կամ ելցուք յաշխարհէ, կամ աշխարհ ելցէ ի մէնջ: — Ֆր. Սուրբ:

\* Կոյս՝ որչափ կայ ի տան հօր իւրոյ՝ ամենեքին կարօտին նմա, և խորհին ածել զնա հարսն. իսկ յորժամ լինի աւրամբի, ոմանք պարսաւին զնա և կէսք գովին, և ոչ է պատուական իբրև զառաջինն. նոյնպէս միայնակեաց՝ որ կայցէ հրապարակադոյժ՝ հազիւ կարէ լինել հաճոյ Աստուծոյ: — Հայր՝ Սրբե՛ն:

\* Միայնութիւն՝ մերձեցուցանէ զԱստուած առ անձն: — Այլ:

\* Միայնութիւն առանց Աստուծոյ՝ անապատ է անշուր, անբոյս՝ անկեանք:

\* Ձեզ ասեմ, ո՛վ եկեղեցիք միանձանց և աշակերտութիւնք կրօնաստանաց, որք մերկամարմին մատանցդ ձեռօք՝ առ ակնկալութիւն յուսոյն պարգևաց բարեացն անբաւից՝ Տեսուն գիւնուրեալք: — Նարեկ՝ ՀԲ:

\* Որ առնու զլուծ սրբոց՝ զտուր և զառ հեռի արասցէ յիւրմէ: — ՉԳ՝ Ժ:

\* Խրատս այս վայելուչ և գեղեցիկ

է, զոր տամ ես անձին խնում և ձեզ, սիրելիք. միայն արժան է լինել և բնակել: — Ն:

\* Արժան է մարդոյ՝ յորոյ վերայ լուծ եղեալ է, զի լիցի յեցեալ ի սերն Քրիստոսի. և իցէ հեղ և հանդարտ և խոնարհ, և քաղցրաբարբառ բանիւք, և յստակ մտօք առ ամենայն մարդ. և եղիցի խօսել կշտով զբանս իւր, և փակ արասցէ զբունն բերանոյ իւրոյ ի բանից անստեաց: — Ն:

\* Դուք էք լծաբարձք, լուսնխտք, կապեալք ժողովրդեան: — Ն:

\* Փակեացուք՝ զաչս, սիլ հոգի իմ, և այնքան հեռի կացցուք յամենայն իրաց, մինչև ոչ կարել տեսանել զնոսին և ոչ տեսանիլ ի նոցունց: — Բանս է:

\* Ար ի հովտի միայնութեան բնակել կամի, զհոգի իւր միայն բերցէ անդր: — Ն:

\* Կրօնաւոր՝ որ ոչ յապաւէ յանձնէ զունայն հեշտութիւնս՝ գանձէ ճշմարիտ տաղտկութիւնս՝ որ մեան առ նմա: — Ն:

\* Միանձունք՝ կամաբք բարձողք կա

մարաց եկեղեցւոյ: Ամայութիւնք և փապաբք վիմաց՝ օթեվանք են նոցա. ապաւէնք նոցա յանմատոյց ծերպս լերանց: Ամենայն տեղի՝ ուր և իրերաց հանդիպին՝ եկեղեցի է նոցին: Դադարեալք հանգչին որպէս զաղանիս ի գլուխս Բլրոց. հաստատեալք որպէս զարծուիս ի գազաթունս վիմաց: . . . Չէ նոցա փոյթ զհանգստեան գերեզմանաց, քանզի իսաշեալք են աշխարհի. (կատարին յաղօթատեղւոյ իւրեանց, և նշխարեալ մեան, ակն ունեւոյ փոյց հրեշտակին): — Ն:

\* Հեզասահ ընթանան յառանձնութեան ալք կենաց: — Աս:

\* Յամուրս անասլատիցն ի խոր խաղաղութեան երգեն զերգս սրբոցն . . . մերձեցեալք ի սերն Աստուծոյ . . . Մեռանին և նոքա, քանզի չունին անմահ մարմին. այլ չբխտեն զմահ, քանզի օրհնութեամբ յուղարկեն զգնացեալսն. յուղարկաւորութիւն կոչեն և ոչ դիւանութիւն: — Ոսկէք:

\* Ար զինքն ուրացեալ է և ի լուծ

պատուիրանին մտեալ, բառնալ պարտի  
զխաչն Գրիստոսի: — Թաթաւ:

\* Կրօնաւոր՝ որ ոչ զնէ ի սրտի՝ թէ  
ինքն է և Աստուած միայն ի վերայ եր-  
կրի, ոչ կարէ կալ: — Վարժ Հարց:

\* Ամենայն մարդոյ ասաց (Աստուած)  
գործել զբարին և զկեանս իւր յօգուտ  
այլոց... զԱստուծոյ երկիրն զանձամբ  
սունուլ, և զամենայն մարմինն սիրոյ  
տալ և սիրտ առնել, և զսիրտն՝ ողի  
առնել. զի նորօք բոլորովին օրհնեսցեն  
զարարիչն. և չսպականել զաղօթս՝ օ-  
տար խորհրդով և զատարկաբանու-  
թեամբ: — Այլ:

\* Ձանք կրկնեն զկեանս: — Այլ:

\* (Միանձն) ունի յաջմէ զնիչ խա-  
ղաղութեան, և յահեկէ իւրմէ զհաս-  
տատութիւն որդեգրութեան, և ի գը-  
լուխն իւր ունի զսրտին պարծանաց, և  
ընդ աջմէ ամեալ զկամար սրբութեան,  
և ճշմարիտ զգաստութեամբ պատեալ  
զկողս ի զօրութեան Գրիստոսի: — Գր. Լ:

\* Բայց դու՛ ո՛ր անձն, որ ընծայեցար

Աստուծոյ, մի՛ խորհրդակից քեզ առ-  
նուր (զսատանայ), այլ մարտիր զբա-  
րիօք մարան, ուչ ունելով մտերիմ խոր-  
հըրդով և արծանաւորապէս՝ ըստ աւե-  
տարանին Գրիստոսի կրօնաւորել... ա-  
մենահեշտ լծողն, որ թեթեւ է առաքի-  
նեաց անձանց և ծանր՝ աշխարհասիրաց .  
— Լուծ իմ քաղցր է յաղագս յուսոյն,  
և բեռն իմ փոքրօղի՛ յաղագս առաւել  
վարձուցն հասուցմանց: — Ն:

\* Ընդ որում Բանն յաւիտեանական  
խօսի՛ նա ի բաղում կարծեաց զերծ գը-  
տանի: — Ն. Թ. Ա. Գ:

\* Չէ անկ կրօնաւորի ի խնդիր լինել  
բարւոյ իմիք՝ բայց Գրիստոսի միայնոյ...  
Յորժամ ցայն վայր ոք հասանէ՛ մինչև  
ոչ խնդրել մխիթարութիւն յարարա-  
ծոց, ապա սկիզբն առնու զքաղցրու-  
թեանն Աստուծոյ ճաշակս վայելել լիո-  
վին. յայնժամ գոհութեամբ տանի ա-  
մենայն աղցից որ ընդ նա անցանեն. ոչ  
ընդ մեծն ինչ խնդայ, ոչ ընդ փոքրն  
տրտմի. այլ յԱստուած միայն դնէ ըզ-

յոյս իւր, որ է նմա ամենայն յամենայնի: Չկորնչի ինչ նմա. չմեռանի ինչ. ամենայն ինչ կենդանի է նմա, և կամաց նորա արբանեկէ: — Ն. ԻՆ:

\* Որչափ յանձնէ ելանես՝ այնչափ առ Աստուած փոխիս: — Ն. ԾԶ:

\* Վանակահնդ, որ ի սուգ կս և ի խաչ ելեալ, ծիծաղիս և խնդաս. աղէ սաս. Քրիստոս այնպիսի ինչ ո՞ւր արար. լուար երբեք յումեքէ. այլ սըրսմեցաւ բազում անգամ: . . Գեռ սգոյ ժամանակ է և նեղութեան և ճնշելոյ զմարմինդ: — Ո՞վ է:

\* Արդարև տուն սգոյ է վանորայն . . ուր մենութիւնն է, ուր չիք ծաղր, և ոչ մարմնաւոր իրաց թախանձութիւն: . . Լապտերք հաստատեալ ի բարձունն՝ ամենեցուն որ անդր դիմիցեն՝ բաց ի բաց երևին: — Ն:

\* Այս է սեպհական վայելս (մաքրեցելոցն հոգւով). լուել յամենայն խուճափմանց աշխարհիս, և մտաւորութեամբ ի միայնութիւն նստել. նոքս

կարող են ճանաչել, թէ բուժանէ զհագւոյն քաղց ի սուէ և ի դիշերի՝ արտասուքն, և յագէցուցեալ զուարճացուցանէ: — Լ. Բ. Ս. Ս. ԻՍ:

\* Տեսի զյուսայն իմոյ քաղցրութիւն. ընթաղբոս՝ յինէն՝ բարկութիւն. — Ժառանգեցի զՍայրենի սէրն. արտաքս դնա՞ աղտեղի ցանկութիւն. — Աւի՛ զլստուղ աղօթից իմոց. տեղի՛ տուր անսղտուղութիւն: — Ն. Զ:

\* Եթէ յերկինս թռանել փափազեմք՝ արժան է թողուլ լքանել զանցաւորս, և առնուլ զերկոսին թեւս աղքատութեան, որովք մարթ է ժամանել ի տեղի՛ ուր զանձն մեր է, և անդ վայելել ի նոյն: — Ս. Ա. Ե. Ի՛:

\* Մեռանել՝ յառաջադիմել է: — Ս. Ե. Ի՛:

\* Ոչ ինչ ինձ այնչէս թուի՛ հաճոյ՝ իբրև կափուցանել զգայութիւնս, արտաքոյ մարմնոյ և աշխարհի լինել, և ոչ յոք ի մարդկայինս մերձենալ. . . լուսոյ յաւելլուած առնելով զլոյսն, մինչև յաղբիւրն երթիցուք ճառագայթիցն, և հանա

դիպկեսցուք երանելոյ կատարածին : —  
Գր. Աստուծո՞ք :

\* Սուրբ զղումն, սուրբ խոնարհու-  
թիւն, սուրբ սէր, սուրբ եռանդն և  
սուրբ խնդութիւն՝ առնեն զհոգին բա-  
րի : — Ս. Ե՛րէր :

\* Այս են ներքին կրթութիւնք մար-  
դոյ . Յիշատակ կատարածի, մահու և  
զատաստանի, և անվախճան տանջա-  
նացն . երկիւղ մահու . յիշատակ անկման  
արուսեկիին և դիւաց . յիշատակ անկման  
և անհնազանդութեան Աղամայ, և սլա-  
տուկասին զոր ընկալնւ նա և ամենայն  
տոհմ՝ նորա . — յիշատակ հնազանդու-  
թեանն՝ Քրիստոսի, և ամենայնի՝ զոր վա-  
սըն մեր ի յանձն էսու . — չարչարանք և  
կիրք նորա և Մօր իւրոյ . — խոկումն վարուց  
առաքելոցն և տանջանաց վկայիցն, վըշ-  
տաց և նեղութեանց՝ որոց տարան սուրբ-  
քրն . — Չեմեռանդն սլաշտոնասիրու-  
թիւն . — ատելութիւն հեշտութեան ըզ-  
կալեացս և անձին կամաց . — մի լինել  
յանձնաղբաստան . — սիրել զնուապտու-

թիւն, զարհամարհանս և զխրատ . — ան-  
պատրուակ խոստովանութիւն մեղա-  
նաց . — ատել ի սրտե զմարդկային գո-  
վութիւն և զկոչիւն սուրբ . ճշմարիտ  
խոնարհութիւն՝ ըզձիւք և մտօք առաջի  
Աստուծոյ . — սէր մարտիրոսութեան ի  
փառս Աստուծոյ և հաւատոց . — տենչ և  
փափազ դնալոյ առ Աստուած . իղծ  
ուղղութեան մոլորելոց, և ասպշխա-  
րութեան մեղաւորաց, դարձի անհաւա-  
տից, հերետիկոսաց և հերձուածողաց : —  
Սիրտ խաղաղ անխռով ի փորձութիւնս .  
— զամենայն ընդունել իբրև յԱստուծոյ  
ձեռաց . — սիրել զնախատիւն և մի զըք  
նախատել . դատիլ և ոչ դատել . մի  
արտնջել ընդ բամբասանս . — փախչիլ  
յամենսյն փափկութեանց, մանաւանդ  
յաղօթիցն սլահոն . — հրաժարել յամե-  
նայն հաճողականաց, ի բանից, ի տես-  
լեանց, ի բուրմանց, յանուշակ ճաշա-  
կաց . . . ցանկալ վշտակութեան ի հոգի  
և ի մարմին . — խնդրել ի Քրիստոսե  
զհամբերութիւն, զխոնարհութիւն, ըզ-

գլխապետութիւնն , որ կարեւորքն են հո-  
գւոյ : — Ս . Յ . Լ . Ճ Գ :

\* Սրտի բեկեցեցելոյ զառ ի մեղացն  
յիշուամի զմտառ ածեցելոյ՝ նշանակութիւնն ,  
այս ինչ . Աչք խոնարհ և սիրտ բարձր .  
պլուսի կոր և հոգի պարզ . — Բան հեղ և  
որտմտութիւն հեռի . . . հայհոյանք զու-  
մեքէ անախորժակք՝ յասելն և ի լսել  
բաւական համարելով զիւրն ինքեան . —  
միշտ և հանապազ թախիժ սրտի ար-  
տաքս ելեալ . յուրախութեան ժամանա-  
կի՝ յանկարծակի արտասուք զծնօտիւն  
հարեալ՝ շուրջանակաւ բըբացն . . . հե-  
ղահամբոյր և շրթանցն շարժողութիւն՝  
առ ի խօսս օգտակարս և ի պիտանիս  
լսողացն ի զօգուտն գործեցելոյ . . . յիշու-  
ղութեամբ մտացն՝ կամ զանցեալն գոր-  
ծեալ և կամ զսրտահեղութիւն՝ երկնչեւ .  
Որպէս խթանաւ իւրք վարեալ՝ ուղղակի  
առ գործն ընթանալ : Զարեամբ չափ  
նեղիւն աստէն՝ հեշտութիւն առ յոյսն  
համարել . ի խաչ հանելով զմարմինս՝  
ցանկութեամբ սորոյս պիտոյիւք . զվե-

տոյս յարակայ թողեալ՝ յառաջինսն  
միշտ նկրտել . . . Զհոգիս սրբութեամբ  
պահել՝ երեքեան իւր կերպարանօք . ըզ-  
բանիս զօրութիւն ի մեզ՝ զարդարեալ  
խոհականութեամբ . . . զօրէնս Աստու-  
ծոյ գործել և զկորդ միտս պատասել .  
զի հատն Աստուծոյ բուսցի ի պարարտ  
երկիր սերմանեալ . . . Եւ մի բղջխոհ  
լինել . . . այլ քաղցր ցօղովն Տեառն ող-  
ջախոհ լինել վրնջողին . Եւ գերանական  
ձայնն արժանի լինել լսելոյ : — Գրեհ-  
րէ՝ կրի :

\* Ահա հրաժարեցի յաշխարհէ և յա-  
մենայն կենցաղավարութենէ սորա . ա-  
պաւինիմ ի քեզ , Քրիստոս . ուխտեմ  
միաւորել ընդ քեզ . պահեմ զաւանդս  
զայս մինչև յօր մահուն իմոյ , զամե-  
նայն աւուրս պանդխտութեան իմոյ ,  
մինչև եմ ես : Զի Աստուած իմ ես դու ,  
խոստովան եղեց քեզ . Աստուած իմ  
ես դու , և բարձր արարից զքեզ . .  
Աստուածային զօրութեամբ քո փրկե-  
ցեր զիս ի դժոխոց . յորժամ ընկալցիս

զիս ի յիւս վախճանի իմոյ, և ի գալն ի մում առ քեզ: — Մառտոս:

Զգեցեալ զտէրունական պատմութեանն, որ է անարատ խոնարհութիւն և մեծ պսակ քրիստոնէութեան սուրբ անուան Տեառն: . . . Զգլուին ծածկեալ լի արտասուօք և անդադար սաղմոսերգութեամբ . արիացեալ ամենայն զօրութեամբ իւրով ի մարտ՝ ընդդէմ ամենաբոյժ շարժմանց, ի բաց խլէլ զըստ մարմնոյ կամս . . . ոչինչ զանցաւորս զայս և զհողեղէն խորհուրդս յինքեան բերելով . այլ ճշմարտիւ յերկինս գումարել բոլորեւ զանձն, որպէս առաջին սուրբ Հարքն, բնաւ եթէ գուցէ իսկ աշխարհ՝ չգիտելով, բնաւորեալ միացմամբ և անդադար օրհնութեամբ: Անձկալի սրտիւ ակն ունել գալստեան ֆրիստոսի՝ յերկնից . սիրել զնոյն Տէր Աստուած մեր՝ ամենայն զօրութեամբ և անարատ սրբտիւք . և սիրել զընկերն իբրև ցանձն: . . . Կուսան հոգւով և կուսան մարմնով . զի Տէրն՝ զայս երիս սկանչէ յամենայն

մարդոյ հաւատացելոյ . զԱրբուժիւն մարմնոյ, զճշմարտութիւն լեզուի, ըզհաւատս ուղիղս: — Ն:

\* Զարթիւր, ընդէր ննջես, անձն իմ . վառեա զլապտեր քո, պատրաստ ունելով . զի յորժամ դայցէ փեսայն՝ դտանիցիս արթուն: Եւ յամենայն ժամ գոչեա ասելով, Աստուած, փառք քեզ: — Հին Ծարակ:

\* Ահաւասիկ, մեք թողաք զամենայն, և եկաք զինի քո (Տէր Յիսուս) . արդ զինչ լինիցի մեզ: — Ամէն ասեմ ձեզ . ամենայն որ ոք եթող զտուն, կամ զեղբարս կամ զքորս կամ զհայր կամ ըզմայր կամ զկին կամ զորդիս, կամ զազարակս, վասն անուան իմոյ, հարիւրս պատիկ առցէ, և զկեանսն յաւիտեանս կանս ժառանգեսցէ: — Մարկ. ԺԹ. 50:

\* Ոչ կարեմ լինել ընդ Աստուծոյ և ընդ մարդկան . զի ի վեր անդր բիւրք և հաղարք՝ մի կամս ունին, բայց մարդիկ բազմադիմի կամս ստացան . ոչ կարեմ որոշիլ յԱստուծոյ և դալ զհետ մարդկան: — Արեւն:

\* Որ ոք կամիցի կատարեալ լինել՝ կատարեսցէ զկամս կենարարին : — Յ՝ՎԾ. Գ. առ 1 :

\* Հնացեալ ախտ հոգւոյ և չարութեան վարժումն՝ ժամանակաւ հաստատեալ՝ դժոխարուժեղի է, և կամ անբուժելի բոլորովին ի բնութեանն : — Բար 1 :

\* Առաջին քայլ հեռեւորին Քրիստոսի՝ իցէ հրաժարումն յանձնէ, այսինքն է, ի զբայութեանց, ի կրից, ի կամաց, ի դատմանց և յամենայն շարժմանց բնութեան : Որ զայսօքիւք զանց առնէ, եթէ և զմի ոտն եղեալ իցէ յերկինս, ի կամեւն զնեւ և զմիւսն՝ ի վայր կործանեսցի : — Վ. Է. 1 : Պ. առ 1 :

\* Հնազանդութիւն՝ ապաշխարութիւն է մտաց, վասն այնորիկ և դերագոյն քան զամենայն ճգոնս մարմնոյ : Գոյզն ինչ հնազանդութիւն՝ հաճոյագոյն է Աստուծոյ քան զամենայն սպաս՝ զոր թէ հարկանիցես նմա : — Յ՝ՎԾ. Խ. առ 1 :

\* Որ կամիցի կրօնաւոր լինել՝ թողցէ զկամս իւր արտաքոյ դրան վանացն, զի

միայն Աստուծոյ կամօքն վարիցի : — Ս. առ 1 :

\* Որ ստուգել հպատակ իցէ կամացն Աստուծոյ՝ ոչ վարի զարարածովք ինչ. բայց յԱստուծոյ՝ զամենայն ունայն և ոչինչ համարի. ցանկայ մեռանեւանձին, և նմա նուիրել յամենայնի և յամենայն ժամու : — Ս. առ 1 :

\* Որ կարող իցէ ասել, Տէր ոչ ունիմ այլ ինչ կամս՝ բայց զբոյբ, ոչ ևս է յինքեան, այլ միացեալ ընդ Աստուծոյ : — Յր. Ս. առ 1 :

\* Որպէս նաւուղիոն հանապազ հայի ի բեւեռն երկնից, այսպէս հարկ է նկատել հանապազ զկամս Աստուծոյ, առ ի կալ անայլայլակ յամենայն սլատանարս կենաց : — Ն. առ 1 :

\* Յուէտ ի սկզբան կենաց և ի կատարածի՝ ի դեպ է առանձնանաբ. զառաջինն՝ առ ի խորհել զոր պարտն է առնել, յերկրորդումն՝ զոր ինչ արարեալ իցէ : — Ս. առ 1 :

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ  
ՓՐԿՈՒԹԻՒՆ ԱՆՁԻՆ



Զամենայն ինչ բարուք դործեաց  
(Յեխուս) - Մարի. Ե. 57 :

\* Եթէ կամիս ի կեանսն յաւիտենա-  
կանս մտանել՝ պահեա զպատուիրանսն :  
- Մարի. ԺԹ. 17 :

\* Ի՛նչ ուղղեսցէ երկտասարդ զճանա-  
պարհս իւր, այլ ի պահել զբանս քո : -  
Սաղմ. ձԺԸ. 9 :

\* Եղբրուք դուք կատարեալք, որպէս  
և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է : -  
Մարի. Ե. 48 :

\* Ընդէ՛ր կայք աստ զօրս ցերեկ՝ դա-  
տարէք . . . Երթայք (դործեցէք) և դուք

յայդի իմ, և որ ինչ արժան իցէ՝ տաց  
ձեզ : - Ն. Ի. 6. 4 :

\* Արթուն կացէք, զի ոչ գիտէք յո-  
րում ժամու Տէրն ձեր գայ : . . . Երանի  
է ծառային այնմիկ, զոր՝ եկեալ Տէրն՝  
դոցէ արարեալ այնպէս ( որպէս պար-  
տըն է ) . . . ի վերայ ամենայն ընչից իւրոց  
կացուցէ զնա : Ապա թէ ասիցէ ծա-  
ռայն չար՝ ի սրտի իւրում, Տէր իմ  
յամէ զգալ . . . ուտիցէ և ըմպիցէ . . . գայ-  
ցէ տէր ծառային այնորիկ՝ յաւուր յո-  
րում ոչ ակն ունիցի, և ի ժամու՝ յո-  
րում ոչ գիտիցէ, և հարեսցէ զնա ընդ  
մէջ . . . անդ եղիցի լալ և կոճեկ ատա-  
մանց : - Ն. ԻԴ. 42-51 :

\* Ո՛չ կարացէք մի ժամ արթուն կալ  
ընդ իս : Արթուն կացէք և աղօթս ա-  
րարէք, զի մի անկանիցէք ի փորձու-  
թիւն : - Որ համբերեացն խաղառ՝ նա  
կեցցէ : - Ն. ԻԶ. 40 : ԻԴ. 15 :

\* Որ կառիցի զանձն իւր կեցուցա-  
նել՝ կորուցէ զնա ( ճգամբք և մեռե-  
լու թեամբք ) . և որ կորուցէ զանձն իւր

վասն իմ՝ կեցուսցէ զնա : — Ն . ԺԵ . 28 :

\* Աւասիկ տապար առ արմին ծառոց զնի . ամենայն ծառ որ ոչ առնիցէ զպառու թարի՝ հատանի և ի հուր արկանի : — ՄԻԲ . Գ . 10 :

\* Եթէ անկիցի փայտն ի հարաւ և կամ ի կողմն հիւսիսոյ , ուր անկիցի փայտն՝ անդ կացցէ : — ԺՊԷ . ԺԱ . 5 :

\* Արարէք այսուհետև պտուղ արծառնի ասպշխարութեան : . . . Գայ հզօրացոյն . . . հեծանոցն ի ձեռին իւրում , և սրբեացէ զկալ իւր , և ժողովեացէ զցորեհանն ի շտեմարանս իւր . և զյարդն այրեացէ անշէ ջ հրով : — ՄԻԲ . Գ . 12 :

\* Ոչ ոք արկանէ ձեռն զմաճով՝ և հայիցի յետս , եթէ յաջողեալ իցէ արքայութեան Աստուծոյ : — ՂԿԻ . Ժ . 62 :

\* Եղիցին դօախք ձեր պնդեալ ընդ մէջս , և ճրագունք լուցեալք , և դուք՝ նըմանողք մարդկան՝ որ ակն ոռնիցին տեսուն իւրեանց՝ թէ երբ դառնացցէ ի հարսանեաց , զի յորժամ դայցէ և բախիցէ՝ վաղվաղակի բանայցին նմա : . .

Եւ դուք եղերուք պատրաստք , զի յորում ժամու ոչ կարծիցէք՝ դայ Որդի մարդոյ : — Ն . ԺԲ . 36 . 40 :

Ձինչ է այս զոր լսեմս դբէն . տուր զհամար տնտեսութեան քո : — Ն . ԺԶ . 2 :

\* Ձայն բարբառոյ յանապատի . Պաարաստ արարէք զհանապարհ Տեսուն , և ուղիղ արարէք զլաւիդս նորա . ամենայն ձորք լցցին , և ամենայն լերինք և բլուրք խոնարհեցին . և եղիցին դժուարինքն ի դիւրինս , և առապարքն ի հարթ ճանապարհս : — Ն . 9 . 5 :

\* Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ՝ որ առաքեացն ( կոչեաց ) զիս , մինչ աւուր կայ . դայ գիշեր՝ յորժամ ոչ ոք կարէ գործել : — ՅԿԻ . Թ . 4 :

Եւ մինչ ես դանդաղեմ ( գործել ) , այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ ( սրբի և փրկի ) : Ն . Ե . 7 :

\* Առքայութիւն երկնից բունաբարի , և բռունք յախշտակէն զնա : — ՄԻԲ . ԺԱ . 12 :

\* Որ ոք գիտիցէ զբարին՝ և ոչ առնիցէ՝ մեղք են նմա : — ՅԿԻ . Գ . 17 :

\* Այս է սէրն Աստուծոյ՝ զի զզատուիւ  
րանս նորա պահեսցուք՝ և պատուիրանք  
նորա չեն ինչ ծանունք: — Ա. Յ. 45. 5:

\* Որ յաղթէն՝ տաց նմա ուտել ի  
փայտէն կենաց: — Յ. 7. 1:

\* Ահա դամ վաղվաղակի, և վարձք  
իմ ընդ իս, հատուցանել իւրաքանչիւր  
ըստ գործս իւրեանց: — Ն. 16. 22:

\* Արդ ժամ իսկ է մեզ ի քնոյ զարթ-  
նուլ. զի այժմ մերձ է մեզ փրկութիւն՝  
քան յորժամ հաւատացաքն. զիչերն  
մերժեցաւ և տիւն մերձեցաւ... իբրև ի  
տունջեան զգաստացեալք շրջեսցուք: —  
Հ. 12. 1:

\* Գուռն (փրկութեան) բաց էր ինձ  
ի Տէր. ոչ ետու հանգիստ հոգւոյ ի-  
մում: — Բ. 14. 1:

\* Ահաւասիկ ժամանակ ընդունելի,  
անա օր փրկութեան: — Ն. 2. 5:

\* Որ սերմանէ ճշդելով, ճշդելով և  
հնձեսցէ. և որ սերմանէ առատութեամբ՝  
անատութեամբ և հնձեսցէ: — Ն. 10. 6:

\* Գնեսցէք զժամանակս, զի աւուրքս  
չարութեան են: — Ն. 5. 16:

\* Ահիւ և դողութեամբ զանձանց փրկ-  
կութիւն գործեսցէք: — Փէլեո. Բ. 12:

\* Ոչ ետ զմեզ Աստուած ի բարկու-  
թիւն, այլ ի փրկութիւն: — Ա. Թ. 1. 5. 9:

\* Բաժանորդ եղևաք Գրիստոսի. միայն  
թէ զակիզբն հաստատութեան մինչ ի  
վախճան պինդ կայցուք: — Եբր. Գ. 14:

\* Յիշեա զու զայն՝ որ հաստատեացն  
Ղբեղ՝ յաւուրս մանկութեանքս, մինչ-  
չև հասեալ իցեն աւուրք չարութեան.  
և հասցեն ամբ՝ յորս ասացես՝ Ոչ են  
կամք իմ ի դոսա... Յաւուր՝ յորժամ  
չարժեսցին պահապանք տանն (յօժա-  
րութիւնք բնութեան), և թիւրեսցին  
արք զօրութեան (լանք և կարողու-  
թիւնք)... ի բարձունս հայեսցին, և ասպ-  
շութիւն ի ճանապարհին (անզգայու-  
թիւն ազգմանց խղճի և օրինաց Տեա-  
ւուն):... Մինչև կործանեալ իցէ լար  
արժատոյն և խորտակեալ մանեակ ոս-  
կւոյն (ժամանակն բարեպատեհ), և ման-  
րեալ սափորն յաղբիւրն, և ընկրկեալ  
անիւն ի դուրն (պակասեալ զօրութեան

մարմնոյն և հոգւոյ՝ ի գործեւ զբարին, և հասեալ ի վախճան կենաց): Ժող. Ժ. 1:

\* Որ զանձն իւր ոչ բժշկէ ի գործս իւր, եղբայր է նա այնորիկ՝ որ անձին առնիցէ: — Ա. Բ. 9:

\* Ասացի թէ այժմ սկսայ. այս է նորոգումն աշոյ բարձրելոյն: — Մ. 10: 29, 10:

Երանի թէ յաջողեալ էին ինձ ճանապարհք իմ՝ ի սրահեւ ինձ զարդարու թիւնս քո: — Ն. ճԺԲ. 5:

Գնայի ես յանդորու, զի զստուտուիրանս քո խնդրեցի: — Յամենայն կատարածի տեսի զվախճան. յոյժ անդորր էին ինձ սկսուտուիրանք քո: — Ն:

\* Եթէ ոչ լինէր աշխատութիւնն՝ ոչ կարէր մարդ ունել զԱստուած ընդ իւր՝ վասն զի բնութեամբ է մարդ ջանս, և զնոյն խնդրէ Աստուած ի նմանէ: — Վարդ. Հրնց:

\* Մի մասնեացես իմոցս կամաց զանդս հոգւոյս՝ վարել ի գերութիւն: — Նորի. 48:

\* Որ կամի որսորդ լինել՝ արկցէ ըզս

ցանց իւր յամենայն ժամ: — Յանց ընկեցեալ, և ձուկն ոչ ընտրի՝ մինչև ի ցա մաք ելանէ: — Զ. Ժ. 1:

Զբարիս գործել, մի ձանձրասցուք. զի ի ժամանակի իւրում հնձեցուք՝ առանց լքանելոյ: — Գ. 10: 6, 10:

\* Զինչ քաղցր քան զաշխատութիւն՝ յետ անցանելոյ: — Աշխատասիրին միայն քաղցր է հանգիստ: — Ա. 10:

\* Երջանիկ է որ զվախճան կենաց ընդ սկզբանն գիտէ հաւասարել: — Ա. 10:

Խաղացի ի խորն (ընաւակդ, զանձնը՝ ի դժուարինս). արկէք զգործիս ձեր յորս: — Գ. 10: 6, 4: — Ի գիտութիւն անձին՝ ուր ոչ առձեռն սկսուտուիրանս և մերձ կայցեն հնարք, հարկ է խաղալ խուզել ի խորս:

Աստուածապաշտութեան կրթութիւն՝ և աստ և անդ տայ ստուղ. զի աստ նորոգէ, անդ սլակէ: — Ու. 11: 1:

\* Ոչ զաղարեկ միտք ծնանել զխորհուրդս, բայց դու զվատթարսն ի բաց խլեա, և զբարիսն մշակեա: — Ն:

\* Մերձ է ի վախճանն՝ որ սղըրգն է: — Նեղս:

\* Երանի որ ոչ ապախտ առնէ զառաքինութիւնս . ի հեծանոցէ դատաւորին ոչ լիցի խաղ: — Ն:

Երանի որ ճեպեցիք ի հանդերձեալ կեանսն . վասն զի մերձակայքս փախն և ապականին և ի մահ՝ ձգին: — Ն:

\* Զինարդ ասէ, լուծ իմ քաղցր է և բեռն իմ թեթև, եթէ՛ Նեղ և անձուկ է ճանապարհն: — Մինն՝ յաղագս բնութեանն փորձութեանց, և միւսն՝ վասն յօծարամտութեանցն ձեռնամուխ եղևլոցն: . . . Զօծարութիւն չարչարելոցն՝ և բնութեան իրացն յաղթեաց: — Ուրի՛ք:

\* Կամ ի բարին կամ ի կործանումն՝ յորում դտանի մարդ, ի նոյնն և գնաց: — Վար՝ Հարանց:

\* Առողջացեալք սիրով հոգւոյն՝ յառաքինութեան ասպարէզն նահատակեցուք, ընդդէմ մնասակարացն զուղլութեան վարսն: — Գր. լսո՛ս:

\* Զեռք ճշմարտեալ ի բարի գործս՝

են մշակք սլատրաստեալ հանդերձեալ աշխարհին արքայութեանն երկնից բուրվառք ևն անուշահոտ խնկով՝ ի հրոյ Հոգւոյն Սրբոյ . . . Անօթէ խորհրդոյ խաչին՝ որ խլէ զփուշ՝ յանդէ անիծիցն, և տնկէ զծառն կենաց, որ պտղաբերէ ի մեզ զՔրիստոսի մարմինն և զարիւնն — Ն:

\* Անցանէն ժամք և առուրք և ամք, և յառաջադէմն նկրտի: — Ն:

\* Ո՛չ գիտէք՝ եթէ որ յասպարիսին ընթանան՝ ընթանալ ամենեքին ընթանան, բայց մի ոք առնու զյաղթութեանն. այնպէս ընթացարուք՝ զի հասանիցէք: . . . Նքբա զի զեղծանելի պտակն առնուցուն, և մեք զանեղծութեանն: — Ա. կրն. Թ. 24:

\* Սնանց ևն յիշատակք մրցողաց, և մեծալայելուչ ևն փառք արդարոց . անթառամ ևն սլառք՝ որ վասն բարեպաշտութեան ճգնին: . . . Սմք մաշին և վարք հաւատացելոցն հաստատուն կան . աշխարհս ծերանայ, բայց առաքինութիւն սուրբ մանկանայ: Ո՛րչափ ազգաց յազգս յիշի Յ՛ր . . . որչափ նեոք մարտեան ընդ

միում աշտարակի . որչափ մուրճ ման-  
րեաց մի վէ՛նն : — Վահագն :

\* Ոչ սխալէ յողոյն ակնկալութենէ՛  
որ մտանէ ոգւոյն վարձկան , որպէս և  
պարտն է : — Ն :

\* Որ բազում ուղղութիւնս ունիցի՛  
այնու վաղվաղակի զմեղսն խաղաղէ .  
իսկ մերկանդամ յորժամ խոցիցի նե-  
տիւ՛ զազոյ վէրս առնուցու : — Ուիէք .  
Մարի . ԻԶ :

\* Առանց առաքինութեան՛ ամենայն  
խոտան է . . . և հասակ կատարեալ և  
բնութիւն , և յանապատի բնակել , և  
այլ ինչ նոյնպիսիք՛ անչա՛ք են առանց  
բարոյից բարւոքոց . . . Մի միայն է աղ-  
նուականութիւն , յորժամ զկամսն Աս-  
տուծոյ որ առնիցէ : — Ն . ԻԴ :

\* Սնհար է կրկին խնդութիւնս ու-  
նել , և յաշխարհի գրգանս վայելել , և  
անդ ընդ Գրիստոսի թագաւորել : —  
Նահան . Ա . ԻԴ :

\* Մի լինիր անոյս յուղղութենէ ի  
հոգևորս , զի կայ քո դեռ ժամ և ժամա-  
նակ : — Ն . ԻԲ :

\* Սկիզբն գաղղութեան՛ սկիզբն չա-  
րաչար վարուց : — Ն . ԻԷ :

\* Գիւրաւ յաղթի արտաքին թշնա-  
մին , եթէ մարդն ներքին չիցէ յաւարի  
հարեալ : — Ն . Գ . ԺԳ :

\* Քաջալերեաց և զուարթացո զանձն .  
միայն ի ճանապարհ անկիր , և վաղվա-  
կի երթայցես յառաջ . մի զբուռն փակի-  
ցես և մի զմուտն խնուցուս : Կարճ է  
ժամանակ աշխարհի , և սակաւ ինչ աշ-  
խատութիւն : — Ուիէք . Մարի . ԿԷ :

\* Ոչ ծոյլս կամի լինել զմեղ Աս-  
տուած , վասն այսորիկ ոչ զամենայն  
ինչ ինքն գործէ . և ոչ հպարտս , և  
յայն սակս ոչ զամենայն ի մեղ ապաս-  
տան արար : — Ն . ԶԲ :

\* Չէ բուսական մի միայն առաքինու-  
թիւն՛ համարձակութեամբ յանդիման  
կացուցանել առաջի բեմին Գրիստոսի .  
այլ բազում և սէսսլէս և ազգի ազգի ,  
և ամենայնի իսկ և բնաւի պէտք են : —  
Ն . ԵԺԷ :

\* Ժամանակս սոյս է նահատակելոյ . և



\* Աշխատութիւնք ծնանին զի՛առս՝  
վաստակք՝ առթեն զպարգևսն : — Ն :

\* Ամենայն որ ի սուրբսն և յաստուա-  
ծայինսն աշխատասիրէ՝ անձինն մանա-  
ւանդ երախտաւոր լինի : — Պր՞իզ :

\* Մարմնոյ՝ ամս տուաք , տացուք հո-  
գւոյ աւուրս : — Պե՞ր . Ո՞ւրբ :

\* Մարդ՝ և ի հանգստեան իւրում  
դատաւարտեալ է ի վաստակ : — Այլ :

\* Չաշխատութիւն՝ հարկ արար մեզ  
ընութիւն , ընկերութիւնն՝ պարտս , այլ  
սովորութիւն կարէ փոխել ի հեշտու-  
թիւն : — Այլ :

\* Ժամանակս այս սակաւ է , և հան-  
դերձեալքն անթիւ և անբաւ : — Բր . Մի՛ :

\* Գալ փորձութեանն ի հարկէ է .  
բայց կորնչել ի փորձութենէն՝ չկայ  
հարկ ի վերայ . և այս յայտնի է յառա-  
քինեացն . . . զի թէ ի փորձութենէն էր՝  
ամենեցուն ասպա պարտ էր վնասիլ . իսկ  
թէ ոմանք զերծան , որք չզերծանն՝  
յինքեանց համարեացին զվնասն և ոչ ի  
փորձութենէ . զի փորձութիւն հանասլազ

արթունս առնէ և արիացուցանէ : — Ն :

\* Որ սակաւ մի մնայ՝ շատ յամէ : — Ն :

\* Լեզուաւ՝ ըստ ժամանակի օրհնեա  
զԱստուած , կենօքէ՝ միշտ : — Օգո՞ր :

\* Ոչ ընութեամբ ինչ էր այնպէս դիւ-  
րին առաքինութիւնն , այլ Քրիստոս  
յիւրում զալստեանն՝ արար զնա դիւ-  
րագոյն : . . . Այնպէս դժուարին և քա-  
րուտ և խորածոր իմն է ճանապարհն  
կուսութեան և առաքինութեանց , և  
այնպէս դիւրեցաւ և հարթեցաւ , զի և  
կանանց անգամ դիւրին է գնալ ընդ  
այնպիսի արքունական և անկասկած  
ճանապարհ : . . . Ոչ վասն զի ընութիւնն  
ինչ փոխեցաւ , այլ զի իւրք իրաց եղև  
պատճառք : — Ո՞ւրբ . Ե՞ :

\* Ոչ վայրասլաք ինչ կեալն լաւ իցէ ,  
այլ բարւոքն կեալ : — Ն :

\* Չիք հնար միոյ ումեք յայսց առաքի-  
նութեանցս՝ առանց փորձութեանց գո-  
յանալ , կամ առանց մեծի համբերու-  
թեանց ի գլուխ ելանել : — Սոր՞ի :

\* Ամենայն առաքինի անձին պար-

գեւեցաւ ինքն լինել տաճար հողեւորա-  
կան , և ինքնին անարատ քահանայ , մա-  
տուցանել զհողեւորական պատարադն .  
ոչ զայլ՝ այլ զիւր ոգի և զմիտս , մար-  
մնովն հանդերձ ողջակիղեալ աստուա-  
ծային հրովն , ի վերայ սրբութեան սե-  
ղանոյն սիրոյն Աստուծոյ , պատարադ  
բանական և կենդանի : — Ն :

Ընտիր առաքինութիւնն ընդ հարկաւ  
երբեք ոչ մտանէ . զի որ առ Տէր առա-  
քինութեանն ծառայէ՝ ազատ է ի մէջ  
մարդկան : . . Պարտ և արժան է իմաս-  
տուն անձին ի մեղացն ծառայութենէ  
փախստական լինել , և մի՛ ի մարդկան  
ծառայութենէ : — Ն :

\* Ներքին և հոգեւոր մարդ՝ ոչ կարէ  
ամբառնալ , բայց ի վերայ աւերակաց  
արտաքին և հողեղէն մարդոյն : — Ա.Ն :

Եթէ իցես ծոյլ՝ և ոչ ալիքն ինչ  
քեզ օգնեսցես . և եթէ իցես փոյթ՝ և  
ոչ մանկութիւն ինչ քեզ վնասել կարէ :

... Ոչ հասակի՛ այլ ի կամս իրաց է  
զգաստութիւնն : — Ուրի՛ք :

\* Զտկարն՝ և փրկական զեղքն ի մահ  
արկանեն , ոչ վասն իւրեանց բնութեանն՝  
այլ յաղաքս նորա պղերգութեանն : . .  
Տկարն՝ և ի Պօղոսէ վնասի , իսկ զօրա-  
ւորն՝ և ոչ ի սատանայէ զրկի : — Ն :

\* Ոչ եմք տեսրք վախճանին , լիցուք  
առաքինութեանն : Ն :

\* Այնպիսի է չարութեանն բնու-  
թիւն . ստացողացն միայն է սատակիչ .  
իսկ առաքինութիւնն ընդէմ նմին՝ ոչ  
զստացողն միայն՝ այլ և զմերձաւորսն  
օգտել կարէ : — Ն :

\* Եւ սոքա և նոքա մարդիկ . ընդէր  
սոքա ոչխարք և նոքա ուլք : — Ոչ զի  
զայլայլութիւն բնութեանն՝ այլ զայլայ-  
լութիւն յօժարութեանն ունցիս : — Ն :

\* Ամենայն ոք զիտակ է զործոց բա-  
րեաց , միայն առնելն է պակաս : — Գ.Բ.Է :

\* Յաւք և մահունք պակիկն միայն վա-  
սըն համբերութեանն որով կրին : — Կիւր :

\* Յանցանք են և չկամելն լինել կա-  
տարեւադոյն : — Հեւն :

\* Երանի՛ որք զգործս աշխատութեանն՝

ոչ ի փառս մարդկան և կամ վասն աստեացս սիրոյ ծնանին, այլ ի Գրիստոսի ձեռս՝ որպէս ի բոյն սրբութեալ ամիսփեկն: — Լա՛մբ: Սղ՛. 29:

\* Ակիզքն չարեաց՝ անփութութիւն բարեաց: — Գր. Աստուածաբան:

\* Որպէս չէք յաղթութիւն առանց պատերազմի, և ոչ առաքինութիւն առանց հակառակորդի: — Լա՛մբանք:

\* Անկ է մեզ փութալ ձեպիլ ի սանդղխտութեանս յայսմիկ. քանզի երկար է ճանապարհն, համառօտ կեանքն, ստիպէ կոչումն աստուածային, և վտանգէ յապաղումն: — Թա՛մբ: Անտին:

\* Աստուած ոչ զակիզքն խնդրէ ի քրիստոնեայն՝ այլ զվատարածն: — Այլ:

\* Երկու ընտանութիւնք են ընդ Աստուծոյ, մին՝ արարչութեանն, և միւսն՝ առաքինութեանն: — Ու՛րբ:

\* Արդարն՝ պատանս վախճանին իւրոյ ունի զվարան առաքինիս: — Եր՛նչ:

\* Հաւատք և իմաստութիւն՝ յորժամ զառաքինի ոք գտանէ՝ զչետ երթան միմեանց: — Ի՛նքս:

\* Նա միայն է այր՝ որում չէք ինչ առոր տկարանայ: — Ն:

\* Առաքինութիւն՝ յօժարութեամբ և ոչ ի հարկէ լինի: — Բարսէղ:

\* Որպէս մէք՝ այնպէս և գործք մեր, բարի կամ չար: Մէք ծառ, գործք մեր պտուղք: — Օգոստոս:

\* Բարբարոսք քանդեն զշնուածս, զառաքինութիւն՝ ոչ կարեն ջնջել բըննաւորք: — Այլ:

\* Դժուարին է առաքինութիւնն, և դիւրին է արքայութիւնն: — Եր՛նչ:

\* Վիտք՝ փառք են յառաքինութեան, որպէս սրատառուածք ի դրօշ պատեւազմի: — Այլ:

\* Այս է որ հնազանդեցուցանէ զմեզ Աստուծոյ, Հնազանդութիւնն. որում չէք վեհադոյն առաքինութիւն: — Լա՛մբ:

\* Որչափ բանամք զբերանս՝ այնչափ և ձգեմք զհոգին: — Ն:

\* Աղօթք դատարկին՝ դատախազ է անձին. և յանձն աշխատասէր՝ հանգչի հոգին: — Տօնապարհ:

\* Աւր սէր և խոնարհութիւն ոչ է, հոտեալ և ի բաց ընկեցեալ է առաքելութիւնն: — Ա՛յլ:

\* Մուտք մտլութեանց՝ եւս դորժեն առաքելութեան: — Ա՛յդ. Պար:

\* Առաքելութիւն առանց կրօնից՝ վարդ է ձեռագործ: — Ա՛յլ:

\* Եթէ ի դրախտէն՝ խաբելովն աստ զմեզ ընկեց (սատանայ) յերկիր անխժից, և ընդ ծառայութեամբ դրաւեաց, ապա աստի՛ յորժամ խաբիցէ՛ ո՛ր կամիցի ընկենուլ, եթէ ոչ յանդունդս դբա՛ ժողոց: — Խարստ:

\* Երկրքումք կազմի առաքելութիւն. Աստուծոյ տալովն և մեր ջանալովն: — Ն:

Համբերողին աչք՝ խոնարհութեամբ և ոչ տառապանօք կորանան. բերանն կարմրութեամբ լուծեան կնքի. — դոյն անկասկած և անվնաս . . . վարչամակ մարուր զանջօք ածեալ. . . հողի նորա բազմի ի գահ հեղութեան: — Տերդալ:

\* Երանի որ զվարս բարձրագոյն ունիցի և զխորհուրդս նուաստս. զի Քրիստոսի նման է այնպիսին: — Նեդո:

Երանի որ ոչ ապախտ առնէ զառաքելութիւնս. ի հեծանոցէ դատաւորին ոչ լիցի խաղ: — Ն:

\* Մարդ եմ, և ընդ դեան մարտնչել հարկիմ. մարմին զգեցեալ, և ընդ անմարմին զօրութիւնս կուրիմ. . . նա աղեղնաւօր է և ես վահանաւօր. ուսիր և աստի՛ զերկչոտութիւն նորա. աղեղնաւորն մերձ երթալ ոչ համարձակի, այլ ի հեռուստ ձգէ: — Ուրից:

\* Որ ոչ շատ ատեայ զմտլութիւն՝ ոչ շատ սիրէ զլաւութիւն: — Ա՛յլ:

\* Աւր յօժարութիւնն է պատրաստ՝ խափանումն և ոչինչ: — Բարեւ. Միրդ:

\* Ոչ ոք ոչ ընթանալով էաւ զյաղթանակն. աշխատութիւնք՝ ծնանին ըզփառս. վաստաղք առթեն զպսակսն: — Ն:

\* Ո՛վ մարդ, կամ ի դեհենէն զարհուրեցիր, և կամ արքայութեանն փափադեա: — Ն:

\* Զգործն՝ զոր ետուր ցիս՝ կատարեցի: Ամենեցուն արժան էր կարողանալ ասել զայս յաւուր յորում համարս պարս:

հանջեսցի: Որ ինչ և ի հաճոյիցն Աստուծոյ առաջի լիցի ինձ՝ պարտ է համարել և յԱստուծոյ հրամայեալ, և պարապել ի նոյն ըստ կամացն Աստուծոյ, այս է՝ անվրէպ և անխռով: Մի և զմիով իւէք եղեց անփոյթ, և մի զակատեցայց յինչ զի միօրինակ չար է և յուլութեամբն գործել զդործ Աստուծոյ, և սեփականելն անձնասիրութեամբ և սուտ նախանձու. զի առ հաճոյս անձին գործի յայնժամ. . . և փառքն Աստուծոյ պատրուակ լինին խաբէութեան. և կեղծաւորեալն անձնասիրութիւն տրամի ի չյաջողելն: Տներ ինձ, Տեր, հաւատարիմ լինել ի գործելն, և անշիտթ յելլ իրացն: — Ֆեֆեան:

\* Ոչ ոք զկնի անցելոյ տօնին՝ ի վաճառն դնայ. և ոչ յետ հանդիսիցն երթեալ՝ պտակի. իսկ դու զկնի պտեւրազմացն քաջանաս: Եւ ոչ յետ կենացն՝ բարեպաշտէ ոք: — Բարսեղ:

\* Նուաճել զանձն՝ զաղտնիք են զօրութեան: — Այլ:

\* Որ սիրէ զառաքինութիւն՝ չփախագէ այլում իմէք: — Այլ:

\* Ալխատութիւնք՝ ի հեռուս ընտանութեամբ վարժեալք՝ անտրամագոյնք անկանին կրթեցելոց: — Բարսեղ:

\* Յաղթէ՝ որ ոչ թուլանայ առ ի վիշտսն ի վերայ եկեալս. իսկ առաւել յաղթէ՝ որ և ինքն ախորժելով երկունս ի ցոյցս համբերութեան ի վերայ ձգէ: — Ն:

\* Չափ յառաջադիմութեան մերոյ ի հոգևոր կեանս՝ է չափ զարգացման մերոյ ի մեռելութիւնս: — Հեֆեան:

\* Առ ի յաղթող լինել մեծամեծ փորձութեանց՝ հարկ է կրթել ի յաղթութիւն փոքունցն, և զօրութիւն ստանալ: — Ֆր. Սալէր:

\* Մեռելութիւն որկորստութեան՝ այբու բեն է հոգևոր կենաց: — Վէֆե. Պաւլ:

\* Ոչ այնքան մեռելութիւնն է կարևոր՝ որքան ընտրութիւն մեռելութեանց. այն է, հակառակելն ընդաբոյս յօժարութեանց: — Ֆր. Սալէր:

\* Որ յԱստուծոյ և ի մարդկանէ դան

մեզ մեռելու թիւնք՝ պատուականագոյնք  
են քան զթելադրեալսն ի կամաց մե-  
րոց: - Ն:

\* Մի վնասիր վասն թերութեանց  
քոց. ատեա զնոսին խոնարհութեամբ  
և հանդարտութեամբ. խռովել ընդ այն՝  
չարիս քան էթէ բարիս առթէ: - Ն:

\* Այնպէս պարտ է մեզ կեալ յաշ-  
խարհիս յայսմիկ՝ որպէս թէ հոգիս մեր  
յերկինս էր, մարմինս ի գերեզմանի: - Ն:

\* Գլուխ բանիցս. գանձն անփոյթ մի  
առնէր. հանդերձեալ ես զինի փոքր ինչ  
ժով անդր երթալ: - Նեղոս:

\* Մոռացիս զաշխատութիւնս՝ իբրև  
զալիս ծովու անցեալս, և մի զարհու-  
րեոցիս: - Յովթ. ԺԱ. 16:

\* Զառաքինութիւն միայն չէ մարթ չա-  
րաչար գործել, զի եթէ չար ինչ գործէր՝  
ոչ ևս էր առաքինութիւն: - Պատմ. Է:

\* Եթէ յետ այսր գործոյ զոր գոր-  
ծեմս՝ կայր ինձ մեռանել, գործէի ար-  
դեօք, կամ զիմորդ գործէի: - Բերնարդ:

### Ս Ո Ւ Գ

## ԵՒ ՄԻԻԹԱՐՈՒԹԻԻՆ

Երանի սգաւորաց, զի նոքա մխ-  
թարեացին: - Մարթ. Ե. 4:

\* Բարի է երթալ ի տուն սգոյ՝ քան  
երթալ ի տուն արբեցութեան: - Սիրա  
խմաստնոյ ի տան սգոյ, և սիրտ անմտի  
ի տան որախութեան: - Ժող. Է. 2:

\* Երանի որ լան այժմ, զի ծիծաղես-  
ցին: . . Բայց վայ՝ ձեզ մեծատանցը, զի  
ընկալայք զմխթարութիւն ձեր: Վայ  
ձեզ որ ծիծաղէքը այժմ, զի սգայցէք և  
լայցէք: - Ղու. 2. 21. 24-5:

Երանեալ է մարդ՝ զոր յանդիմա-  
նեաց Տէր ի վերայ երկրի: Ի խրատուէ  
Ամենակալին մի հրաժարեցես, զի նա

ցաւեցուցանէ և միւսանգամ անդրէն  
հաստատէ. հ'ար, և ձեռք նորա բժշկե-  
ցին: — Յ՞Ք. Ե. 17:

\* Սկսաւ Տէր խոցոտել զիս, բայց  
խաղառ մի սպանցէ զիս: — Ն. Զ. 9:

\* Ո՞չ ապաքէն իբրև զվերածութիւն են  
վարք մարդոյ ի վերայ երկրի, և իբրև զառ-  
օրեայ վարձկանի կեանք նորա: — Ն. Է. 1:

\* Մի համարէք եթէ եկի արկանել  
խաղաղութիւն յերկիր. ոչ եկի արկանել  
խաղաղութիւն, այլ սուր:.. Եւ թշնա-  
մէք առն՝ ընտանիք իւր: — ՄԴԲ. Ժ. 54:  
ՂԿ. ԺԲ. 55:

\* Մի խռովեցցին սիրտք ձեր, և մի  
զանդիտեցցին:.. Եթէ սիրէիք զիս՝ ա-  
պա ուրախ լեալ էր ձեր: — Յ՞ԼՏ. ԺԵ. 28:

Ոչ թողից զձեզ որքս. դամ առ  
ձեզ:.. Եւ ես աղաչեցից զՀայր, և այլ  
միտիթարիչ տացէ ձեզ, զի ընդ ձեզ բը-  
նակեցցէ ի յաւիտեանս. զՀողին ճմար-  
տութեան... առ ձեզ բնակեցցէ, և ընդ  
ձեզ եղիցի: — Ն. ԺԴ. 18. 16:

Տրտմութիւն եղի զսիրտս ձեր (յոր

ժամ ասացի՝ [Թէ] Երթամ ես առ առա-  
քիչն իմ. (Ն. ԺԶ. 6). Ամէն ամէն առ  
սեմ ձեզ, զի լացջիք և ողբասջիք դուք,  
և աշխարհ խնդասցէ. դուք տրտմեսջիք,  
այլ տրտմութիւն ձեր յուրախութիւն  
եղիցի:.. Դուք այժմ տրտմութիւն ու-  
նիք. այլ դարձեալ տեսից զձեզ, և ու-  
րախ լիցին սիրտք ձեր. և զուրախու-  
թիւնն ձեր ոչ ոք հանիցէ ի ձէնջ: — Ն.  
ԺԶ. 20. 25:

\* Զբաժակն՝ զոր ետ ինձ Հայր, ո՞չ  
լմպիցեմ զնա: — Ն. ԺԸ. 11:

\* Դստերք Երուսաղեմի, մի Լայք ի  
վերայ իմ, այլ լացէք ի վերայ անձանց  
և որդւոց ձերոց... Զի եթէ ընդ փայտ  
դալար՝ զայս առնեն, ընդ չորն զինչ վե-  
նիցի: — ՂԿ. ԻԳ. 28. 31:

\* Յիսուս իբրև ետես (զՄարիամ)  
զվ Լայր, և որ ընդ նմայն էին Հրեայքն  
Լային, խռովեցաւ յողի իւր իբրև զայ-  
րացեալ:.. Եւ արտասուեաց Յիսուս: —  
Յ՞ԼՏ. ԺՍ. 55:

\* Այժմ անձն իմ խռովեալ է. և զինչ

ասացից, եթէ՛ Հայր, պարեցո զիս ի ժամէ աստի յայսմանէ. — այլ վասն այնորիկ եկի ի ժամս յայս: — Յ՝ 15. ԺԲ. 27:

\* Ունիմք այսուհետեւ քահանայապետ մեծ... կարող չարչարակից լինել տկարութեանս մերոյ. զի փորձ է ամենայնիւ ըստ նմանութեան, առանց մեղաց:..

Որ յաւուրս մարմնոյ իւրոյ աղօթս կ պաղատանս՝ առ այն որ կարողն էր ապրեցուցանել զնա ի մահուանէ, ուժգին գոչմամբ և արտասուօք մատուցանէր: — ԵԲԻ. Դ. 14-Յ. Ե. 7:

\* Եւ սկսաւ տրտմել (Յիսուս) և հոգաւ: Յայնժամ ասէ ցնոսա. Տրտում է ոգի իմ մինչև ի մահ: — Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՛ անկաւ ի վերայ երեսաց իւրոց, կաց յաղօթս, և ասէ. Հայր իմ, եթէ՛ հնար է, անցցէ բաժակս այս յինէն. բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու: — Ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին: — Ոգիս յօժար է, բայց մարմինս տկար: — ՄԻԻ. ԻԶ. 58: ՂԻԻ. ԻԲ. 41: — ՄԻԻ. ԺԴ. 58:

\* Եւ էր ի տագնապի, և մտադիւրութեամբ ևս կայր յաղօթս. և հոսէին ի նմ. Խոտունք էբբև զկայլակս արեան՝ ու ն ոլուն հեղեալ յերկիր: — Եւ երեկցաւ նմա հրեշտակ յերկնից, և զօրացուցանէր զնա: — ՂԻԻ. ԻԲ. 42-4:

\* Եւ գոչեաց Յիսուս ի ձայն մեծ, Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՛ր թողեր զիս: — ՄԻԻ. ԻԷ. 46:

\* Թէպէտ և որդի է՛ ուսաւ ի չարչարանաց անտի՛ղհնաբանութիւնս: — ԵԲԻ:

\* Չկատարումն Տեառն տեսէք: — ՅԻԻ. Ե. 11: — Եւ ուրախ լինիլէք որք այժմ սակաւիկ ինչ ըստ պատշաճի իւրացդ՝ տրամեալ էք ի սկեսպէս փորձութիւնս:.. Չի և Քրիստոս վասն ձեր մեռաւ, և ձեզ եթող օրինակ, զի զհետ երթայցէք զհետոց նորա... որ չարչարեալ և ոչ սկսէր սպառնալիս: — Ս. ՊԵՐ. Ա. 6. Բ. 19:

Համբերութեամբ ընթացուք ի պատերազմն՝ որ առաջի կայ մեզ. հայեսցուք ի զօրագլուխն հաւատոց և ի կա-

տարիչն Յիսուս . որ փոխանակ ուրախու թեանն որ նմա առաջի կայր , յանձն առ զխաչն , արհամարհեաց զամօթ : Աղէ , ածէք զմտաւ , որ զայսպիսի համբերութիւն ի մեղաւորաց հակառակութենէ անտի կրեաց , զի մի աշխատ լինիցիք անձամբք ձերովք և լքանիցիք . . . և մուսացարուք զմխիթարութիւնն՝ որ ընդ ձեզ իբրև ընդ որդեակս խօսի . . . Ի խըրատու համբերութեան կայք : Իբրև յորդիս մատուցեալ է ի ձեզ Աստուած . որ որդի է՝ զոր ոչ խրատիցէ հայր : Ամենայն խրատ՝ առ ժամանակն ոչ ուրախու թեան թուի , այլ արտմութեան , ըայց յետոյ պտուղ խաղաղութեան նու վաւ կրթեցիւոցն հատուցանէ յարդարութիւն : — Եբր . ԺԳ :

\* Որ ըստ Աստուածոյն արտմութիւն է՝ ասղաշխարութիւն ի փրկութիւն առանց զզջանալոյ դործէ . իսկ աշխարհի արտմութիւն՝ մահ դործէ : — Բ կրն . Է . 10 :

\* Ոչ են արժանի չարչարանք ժամանակիս՝ հանդերձեցի փառացն : — Հր . Ը :

\* Որպէս կցորդ եմք չարչարանացն (Քրիստոսի) , նոյնպէս և մխիթարութեանն : — Բ կրն . Ա . 7 :

\* Օրհնեալ է Աստուած . . . ամենայն մխիթարութեան , որ մխիթարէն զմեզ յամենայն նեղութիւնս մեր , առ ի կարող լինելոյ մեզ մխիթարել զայնտիկ՝ որ յամենայն նեղութիւնս իցեն : — Զի որպէս առաւելան չարչարանքն Քրիստոսի ի մեզ , նոյնպէս և ի ձեռն Քրիստոսի առաւել լիցի և մխիթարութիւնս մեր : — Ն . Ա . 5-8 :

\* Յամենայնի նեղեալք , այլ ոչ նուազեալք . կարօտեալք՝ այլ ոչ տարակուսեալք . հաալժեալք՝ այլ ոչ լքեալք . չարչարեալք , այլ ոչ սատակեալք : . . . Թեպէտև արտաքին մարդս մեր ասղականի , այլ ներքին մարդս մեր նորոգի որ ըստ օրէ . զի առժամայն յաճախութիւն թեութեւ նեղութեանս մերոյ՝ ի յաւիտեանական առաւելութիւն զմեծութիւն փառացն դործէ ի մեզ : — Յամենայնի նեղեալք , արտաքոյ մարտք և ի ներքոյ արհաւիրք : — Ն . Դ . 7 . 16 : Ե . 5 :

\* Լնում զպահասութիւն նեղու-  
թեանցն Գրիստոսի՝ ի մարմնի իմում: -  
Կողմ. Ա. 24

\* Մի տաղտկայցէք ի նեղութիւնս  
յայտոսիկ... յառաջագոյն ասէաք ձեզ,  
եթէ նեղութիւնք հասանելոց են ի վե-  
րայ մեր: - Ա. Թե. Գ. 5:

Յիշեցէք զաւուրսն զառաջինս, յորս  
լուսաւորեալք՝ բազում ճգանց և չարչա-  
րանաց համբերեցէք. մերթ ի նախա-  
տինս և ի նեղութիւնս խայտառակեալք,  
մերթ կցորդք այնպիսեաց վաստակաւո-  
րացն լինել: . Բանդի դիտելք՝ թէ լա-  
ւադոյն ևս ստացուածս ունիք անձանց  
յերկինս, ուր կանն և մնան: Արդ մի  
մերժէք ի ձէնջ զհամարձակութիւնն ձեր,  
յորում կայ մեծաց վարձուց հատու-  
ցումն: Պիտոյ է ձեզ համբերութիւն, զի  
զկամս Աստուծոյ արարեալ՝ հասջիք ա-  
ւետեացն: - Եֆ. Ժ. 52:

\* Վշտանայցէ՞ որ ի ձէնջ. - յաղօթս  
կայցէ: Բերկրիցի՞ որ. - սաղմոս ասաս-  
ցէ: - Յով. Բ. 12:

\* Ամենեքին որ կամեցին աստուած-  
պաշտութեամբ կեալ ի Գրիստոս Յի-  
սուս, ի հալածանս կացցեն: - Բ. Տէ. Գ. 12:

\* Բազում նեղութեամբ պարտ է մեզ  
մտանել յարքայութիւն Աստուծոյ: -  
Գործ. ԺԳ. 21:

\* Հոգին Սուրբ... վկայէ ինձ և ասէ,  
եթէ կապանք և նեղութիւնք մնան քեզ:  
- Ն. Ի. 22:

\* Ճշմարիտ շնորհք Աստուծոյ են, և  
թէ բարւոք ինչ մտօք տանիցի որ վշտաց՝  
յանիրաւի. քանզի զինչ երախտիք ի-  
ցեն, եթէ յորժամ մեղանչիցէք՝ տանջի-  
ցիք և համբերիցէք. այլ եթէ զբարիս  
գործիցէք՝ չարչարիցիք և համբերիցէք,  
այն շնորհք Աստուծոյ են. զի ի դոյն  
իսկ կոչեցարուք: - Ա. Պե. Բ. 19:

\* Աստ է համբերութիւն և հաւատ  
սրբոց: - Յայ. Ժ. ԺԳ. 10:

\* Ես (Տէր) զոր սիրեմ՝ յանդիմա-  
նեմ և խրատեմ: - Ն. Գ. 19:

\* Ամենեքեան որ համբերեսցեն քեզ,  
(Տէր), մի ամաչեսցեն: - Եւ ևս քեզ

համբերի զօրհանապագ: — Սաղմ. ԻԳ. 5. 5:

\* Արդ, ընդէր տրտում ես, անձն  
իմ, կամ ընդէր խռովես զիս. յուսա  
առ Աստուած, խոստովանեա նմա. փրը  
կիչ երեսաց իմոց Աստուած է: — Ն. ԽԱ:

\* Սպասեցին աչք իմ բանի քում,  
Տէր. ասացի, երբ մխիթարեսցես զիս:  
— Ն. ձԺԸ. 82:

Տէր, զի բազում եղեն նեղիչք իմ,  
և բազումք յարեան ի վերայ իմ: Բա  
զումք ասէին զանձնէ իմէ, թէ չէք փրը  
կուլթիւն սորա առ Աստուած իւր: — Ն. Գ:

\* Չայս որպէս յիշէի՝ տառապէր յիս  
անձն իմ. քաջակերէի զի մտից ընդ յար  
կաւ սքանչելեաց տանն Աստուծոյ:

Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ՝ մը  
խիթարուլթիւն քո ուրախ առնէր զանձն  
իմ: — Ն. ԽԱ. 5: ՂԳ. 17:

Ոչ կամէր մխիթարել անձն իմ.  
յիշեցի ԿԱստուած, և ուրախ եղէ, և  
նուազէր յիս հոգի իմ: — Ն. ՀԵ. 4:

\* Ընդ երեկոյս հանգիցեն լալիք. ա  
ռաւօտոսց եղիցի ուրախուլթիւն: — Ն. ԻԹ:

Երթալով երթային և լային՝ ոչք  
բարձեալ տանէին զսերմանիս իւրեանց:  
Գալով եկեոցեն և ցնծացեն՝ ոչք առեալ  
բերիցեն զորայս իւրեանց: — Ն. ձԻԵ:

Գարձո, Տէր, զգերուլթիւնս մեր,  
որպէս զուղիս ի հարաւոյ: Ո՞՞ք վարէին  
արտասուօք՝ ցնծուլթեամբ հնձեցեն: —  
Ի դարձուցանել Տեառն զգերուլթիւն  
Սիոնի, և եղաք մեք մխիթարեալք:  
Յայնժամ լցան բերանք մեր խնդու  
լթեամբ, և լեզուք մեր ցնծուլթեամբ: — Ն:

\* Քրիստոնէուլթիւն ոչ բառնայ ըզ  
տըրտմուլթիւն, այլ արգահատէ: — Այլ:

\* Մի անպատուեսցես զարտօսը, որ  
բազում արտասուաց արժանաւոր-ախ  
տացար, և ապա ողորմուլթիւն գտեր: —  
Գր. Աստուածաբան:

\* Որ զսխալելն Աղամայ՝ անձին իւ  
րում ոչ գրեցէ, և զմեղս ամենից՝ ին  
քեան ոչ համարեսցի... կորոյս զիւրն  
արդարուլթիւն, որպէս անախտակիր գոլ  
բնուլթեանս. և ոչ բերկրի սիրտ առ  
զուարթուլթիւն երեսաց՝ աւետեօք յու

սոյն... եթէ ոչ յառաքելայն Քրիստոսի  
ուսեալ՝ ամենայնիւ ահա ըստ Աստուծոյ  
տրամեացի: — Նորէի. Ծ:

Ի հանգստեան իւրում վաստակեալ,  
ի խրախուժեան ինքեան տրամեցեալ.  
դիմօք ժպտեալ և մտօք խոցեալ, կերպ  
ի ծաղր և աչք յողբումս. երեսք զսիրոս  
փանս ձևացուցանէ, և արատաւքն ըզ-  
դատնութիւն սրտին ճշմարտէ: Ըմպա-  
նակք երկու յերկոսին ձեռին, մինն ա-  
րեամբ և միւսն կաթամբ. երկու բու-  
րանոցք կայծակնաւորք, մինն խնկով և  
միւսն ճենճերիւ: — Ն. Լ:

\* Ախտք՝ արօր են որ սլատառէ զան-  
դաստանս հոգւոյ, զի ի խոր ակօս արկցէ  
ամենիմաստն սերմանահան զսերմանսն  
երկնայինս: — Պոսէ-է:

Ախտք՝ հուր են. եթէ ոսկի ես՝  
փորձէ դքեզ և սրբէ. եթէ յարդ՝ կի-  
ղեալ ծախէ: — Օգոստ:

\* Հաղորդութիւն տրամութեանցն ըզ-  
սաստկութիւն տրամութեան փոխոխե-  
սովոր է: — Ոսէի:

\* Չիք զոք ամենեւին սուրբ ի տրամու-  
թենէ գտունել. այլ ոմն սակաւ և ոմն  
բազում ունի խրատ տրամութեան: . .  
Մի համարելցոք թէ մեք միայն իցեմք ի  
տրամութեան. քանզի չէ հնար՝ թէ  
մարդ է և զանցաւոր կեանս կեայ՝ թէ  
առանց տրամութեան իցէ. այլ թէ այս-  
օր ոչ՝ սակայն վաղիւ, և թէ վաղիւ ոչ՝  
սակայն երբ և է անկանելոց է ի տրո-  
մութիւն: . . Չորօրինակ չէ մարթ մար-  
դոյ անմահ լինել, նոյնպէս և ոչ առանց  
տրամութեան: . . Որ տրամութիւնն  
յորում և իցէն՝ քան զամենայն տրամու-  
թիւնս զժնդակ համարի, և իւրով փոր-  
ձիւն և եթ զգայ վշտին: . . Ամենեւին իսկ  
տհաճ է ազգ մարդկան և արանջող և  
քրթմնջող... մինչդեռ ի մանկութեան  
իցեմք՝ ասեմք, Տայր ոք ծերացեալ. և  
յորժամ դուրսն սպիտակ ալիս սկսա-  
նիցին, ասեմք. Աւաղ քեզ մանկու-  
թիւն, ո՞ւր իցես: . . Մի միայն է ճանա-  
պարհ յայնպիսի անհնարութեանէ. — ա-  
ռաքինութեան: — Ն:

\* Ի տիրակալանսն գոհասցիս, և լուծն  
թիթեանայ: — Ն:

\* Յօժարութիւն չարչարեւոյն՝ և բը-  
նութեան իրացն յաղթեաց: — Ն:

\* Ամենայն բեռն ծանր է, Քրիստո-  
սին միայն թեւաւոր: — Օհոսոս:

\* Նեղութիւն՝ շարժէ գողորմութիւնն  
Աստուծոյ, որպէս հողմք զանձրեւս: —  
Վարդ. Հրց:

\* Ոչ փոքր սիրտիւնն է վշտացելոյ՝  
հայելի տղայս անհոգս և անմեղս: — Այլ:

\* Տրամութիւն և խնդութիւն՝ յոր-  
ժամ ըստ իրաց աշխարհիս իցէ՝ մահ և  
ապականութիւն գործէ: Իսկ ըստ Աս-  
տուծոյ լեալ՝ միտթարութիւն ընձեռէ, և  
յուսով զխնդութիւն, ըստ խոստացեալ  
բարեացն: — Գր. Լուս:

\* Իբրև զնաւ եցեքառադաստեան՝  
արհամարհէ զալիս աշխարհի (Պահք,  
Աղօթք և Ողորմութիւն): — Վահագն:

\* Եթէ իւրեանց բռնութիւնն (անօ-  
րինաց) զիս տանջէ, և յիմն ոչ հային յի-  
րաւունս, ևս ոչ տրամիմ: — Վհ. Գողթն:

\* Ոչ զրկին զրկեալքն՝ եթէ ժուժկա-  
լութեամբ տանիցին ամենայն չարչա-  
րանացն. այլ և մեծամեծ շահս գտանեն  
անձանց, թէպէտև յԱստուծոյ խրատի-  
ցին կամ ի սատանայէ: — Ուլիք:

\* Էջի հուրն (ընդ Երեց մանկանցն),  
զի մի այրեսցիս ի հրոյն: — Ն:

Վասն այնորիկ տրամիմք՝ զի և ոչ  
զմիտյ աւուր զյանցանս մեր ճշմարտիւ-  
քննեմք: — Ն:

\* Անհնարին իսկ է ցանդ ի տրամու-  
թեան լինել, զի և բնութիւնն իսկ այնու-  
չէ բաւական. այլ քանզի միշտ յուրա-  
խութեան կամիմք լինել, վասն այսու-  
րիկ թուի մեզ թէ ցանդ ի տրամութեան  
կայցեմք. և ոչ վասն այնորիկ միայն,  
այլ քանզի զբերութիւնն և զբարիսն  
վաղվաղակի մոռանամք, և զտրամու-  
թիւնն վաղվաղակի յիշեմք: — Ն:

\* Անհնար է ցորչափ կրեմք զտկարս  
զայս մարմին՝ ազատ լինել ի մեղաց,  
կամ ի վշտաց և ի տաղտկութեանէ: —  
Նահ. Ա. Ին:

\* ժամանակ վարձուց են ժամանակը վշտացի և կրից: — Ն:

\* Չէ ինչ ծանր զմարդկայինս արհամարհել արհուրանս՝ յորժամ աստուած ծայինքն մերձ կայցեն. այլ մեծ և ծանր է՝ յերկոցունց միանգամայն վրէպ դտան՝ և մտադիւր տանել վտարանդու թեան սրտի, ոչ զանձն ինդրելով, և ոչ զարդիւնս իւր ինչ յիշելով: — Ն. Բ. Թ:

\* Ոչ է արժանի նկատող լինել խորոցն Աստուծոյ՝ որոյ չիցէ առեալ զճաշակ վշտաց՝ վասն Աստուծոյ: — Ն:

\* Յաշխատութիւն ծնեալ ես, ընդէ՞ր խնդրես զճանգիտս: — Ն. Ժ:

Խաբիս՝ եթէ այլ ինչ խնդրես ի վիշտս՝ քան զհամբերութիւն: — Ն. ԺԲ:

\* Յորժամ ցայն վայր հասանիցես՝ մինչև քաղցրանալ քեզ վշտաց վասն Քրիստոսի, ապա գիտասցես զի յաշողեալ է քեզ, քանզի գտեր զարքայութիւն յերկրի: — Ն:

\* Եթէ առ ի փրկութիւն մարդկան՝ դոյր ինչ լաւագոյն և պիտանի՝ քան ըն-

չարչարանս, ապաքէն ցուցեալ էր զայն Քրիստոսի՝ և ըանխ և օրինակաւ: — Ն:

\* Չէ ճշմարիտ համբերող՝ որ կամի համբերել որոց հաճոյ թուի անձին, կամ որոց հաճոյ իցէ ինքն: — Ն. Գ. ԺԹ:

\* Ոչ զգալ խռովութիւն ոգւոյ կամ տաղնապ սրտի, ոչ այժմու ժամանակիս է՝ այլ հանդերձեցոցն վիճակ: — Ն. ԻԳ:

\* Չէ փոքր և ի փոքունս անգամ թողուլ զկամս անձին: — Ն. ԼԹ:

\* Ճշմարիտ յառաջադիմութիւն մարդոյ՝ է ուրացութիւն անձին: — Ն:

\* Ամբարձ զաչս քո առ Աստուած ի վեր, և ոչ տիրեցուցեն զքեզ մարդկան արհամարհանք յերկրի: — Ն. ԽԱ:

Մի տրտեսցիս վասն բանիցն ասացելոց զքէն. ոչ առաջին և նոր ինչ է, և ոչ վերջին, եթէ յերկարակեաց լինիցիս: — Ն. ՀԵ:

\* Թշնամանեաց ոք. — դէր զնշան խաչին ի վերայ լանջաց. յիշեա զայն ամենայն որ գործեցան, և ամենևին միանգամայն ցասուան շիջանի: . . Դու քեզէն

պատուեալս զանձնդ, և չիցէ որ որ թշնա-  
մանեւ կարիցէ: . . . Զբազմացն կարծիս  
և զթշնամանս ի բաց թողեալ՝ ի մին  
միայն փութասցուք, չգիտեւ ինչ խիղճ  
զանձանց: — Ուիիք:

\* Տրտմականքս զորս կրիցէք յանցա-  
ւոր աշխարհիս՝ լուծանիցին. քանզի և  
աշխարհս իսկ ի վախճան եկեսցէ. և  
բարութիւնքն՝ յորս վայելելոց էք՝ ան-  
մահ մասցեն: — Ն:

\* Յոր վիշտս և իցեմք և զմտաւ ածի-  
ցեմք զայլոց վիշտս, կարևոր գտանեմք  
մխիթարութիւն, և լինիցիմք գոհա-  
ցողք: — Ն:

\* Որ սովորն է նեղութեան՝ չտալտա-  
կայ ինչ ընդ ճնշելն: — Ն:

\* Զինչ արտփական ի վիշտս, քան  
զայն՝ զի Աստուած տեսանէ զիս. Աս-  
տուած թուէ զհաւաքանս իմ, կռէ զնե-  
ղութիւնքս, հայի յարտասուս իմ, և է  
սրբութիւն իմ կրթէ զնոսին: — Մատիւ:

\* Որ փախեաւ ի մարմնոյ ցաւոց՝ ոչ  
տեսանէ զբարիս արդարոցն: — Գր. Մարտի:

\* Սրբարեւ թշուառ է նա՝ որ ոչ կարէ  
սիրել կամ գործել կամ մեռանել: — Սյլ:

\* Զչարիս յորոց ազատես՝ համարեաց  
ի բարին, և հանաքազ ուրախ լիցիս: — Ն:

\* Զամենայն ինչ զմտաւ ածեմք՝ բաց  
ի մերոց մեղաց. վասն այտորիկ ուրախ  
սուսիմք զանօգուտ ուրախութիւն աշ-  
խարհիս այտորիկ, որ վաղվազակի չի-  
ջանի և բազում տրտմութիւնս ծնանի:  
Տրտմեսցուք տրտմութիւն՝ որ մայրն է  
ինչուութեան, և մի բերկրեսցուք ընդ  
ուրախութիւն՝ որ զտրտմութիւն ծնա-  
նի: . . . Նեղեսցուք նեղութիւն՝ ուստի  
հանգիստ բղխէ. . . աշխատեսցուք սա-  
կաւիկ մի յերկրի՝ զի փափկանայցեմք  
յերկիրն, ի ժամանակաւոր նեղութիւնս  
նեղեսցուք, զի յանբաւսն հասանիցեմք  
հանգստեան. մի ծուլասցուք ի վայր-  
կեանս, զի մի հեծիցեմք յանեղբարականս.  
Թէ նեղիցիս ինչ այնպիսի նեղութիւն՝  
յոյս հանդերձելոցն սուաջի կայ: Զես լա-  
քան զՊօղոս, և ոչ ազնուական քան  
զՊետրոս, որք ոչ երբեք վայելեցին ի

բարիս աշխարհիս այսորիկ . . . եթէ ի նոյն քաղաք՝ յոր նորայն արժանի եղին հասանել կամիցիս երթալ, ընդ այն ճանապարհ զնա՝ որ անդ տանիցի. հանազըստեան ճանապարհն շտանի անդ, այլ ներդրթեանն. այն ընդարձակ է, և այս անձուկ, ընդ անձուկն զնասցուք: — Ո՞վ:

\* Յորչափ մարդիկ իցեն մահկանացու և դիւրափնասելի իրք, և զգերեզմանսն՝ յորոց եղեն՝ տեսանեն, անբաժանելի ունին լծակցեալք ընդ կեանսն և ըզտորտմութիւնն, թէպէտև փոքր ինչ հաղորդք իցեն խորհրդոյ. քանզի մշտընջենաւոր մահու յոյսն՝ (կասկածն) . . .

անյայտութեամբ հանդերձելոյն՝ յամենայն ժամ զարհուրեցուցանէ, և միշտ զմերձաւոր ուրախութիւնն սրաչարէ ահիւն, և յուսացելովքն՝ զխնդամտութիւնն ամբոխէ: — Նիւս. Կառ:

\* Ներկեալ հոգի՝ ոչ ախորժէ լինել ի բազում հեշտութեան, այլ հանդիտմիայն խնդրէ: . . . Թոյլ տայ մեզ (Աստուած) ներկել, զի ի սէրն իւր ձգեսցէ զմեզ: — Բար. Մալ:

\* Ոչ էր ինքն արտմութիւնն մահ, այլ աշխարհի տրտմութիւնն ներդորժէ զմահն: — Յովհ. Իսառ:

\* Ո՞վ ոք ի մարդկանէ հեշտեալ և ըստ մտաց դիւրին շրջի ի սմա (աշխարհի). և կամ ո՞վ ոք առանց դառնութեան ել ի սմանէ: — Սարգիս:

\* Ամենայն առաքինութեանց՝ համբերութիւնն է միջոց: — Ն:

\* Ծագիկ արքայութեանն ստղոյ՝ նեղութիւնն է. եթէ կամիմք զստուղն կրթել նախ զծագիկն հաւաքեսցուք: Հաւածեալք եղիցուք սստ, զի հասանիցեմք վերին կոչմանն: — Շորհ. Մրի:

\* Պտուղ չարչարանաց՝ յարութիւնն է: — Դիւնիս. Աղէս:

\* Ընդէր հառաչես և արտասուես, սիրելի, վասն զի հարկանիս և հալածիս, և ի կապարան արկանիս. զի՞ ողբաս զմասնաւոր չարչարանս զայս: — Պարտէր աղօթել բովանդակ մարմնոյդ իսկ լուծումն լինել. մասնաւանդ էթէ ոչ վայրապար մարմնոյ՝ սյլ որ ի մարմնի են ապականութիւնք: — Ո՞վիք:

\* Ուր ինքն (Քրիստոս) խաչեալ և չարչարեալ, և սուրբքն իւր նեղեալ և տառապեալ, աօտի զիւրդ ոչ շիկիմք՝ հանդիստ ի նմանէ խնդրել՝ - Ն :

\* Չէք հնար յայտմանէ՝ ի փորձանայ՝ ուղիղ - ընթացիցն զերժանեալ, և ոչ ծանեաք զոր. զի եթէ զտանուտէրն բեեղձերուդ կոչեցին (ապա զինչ զընտանիս նորա) : - Լ. Բ. Ս. Ի. Գ :

\* Նեղ ճանապարհի ընթացողաց՝ բազում տեղեկութիւն պիտոյ է : - Ն :

\* Մարդ՝ ոչ զսրտի նեղութիւն կարէ քննել, և ոչ նմա օգնել. Աստուած որ քննէ և օգնէ վաղվաղակի, յորժամ կաշկանմամբ զերեսս նորա թախանձեմք :

\* Տիրապէս ուրախութիւն այն է՝ որ զհակառակամարտ տրամութիւնն ոչ ունի առնթեր : Աշխարհիս ամենայն ուրախութեանց վախճանն՝ տրամութիւն է : - Ն . Ա . Ե :

\* Հաճեցան օրհնեալն Յիսուս և Մայր նորա ամենասուրբ՝ անցանել ընդ ջուրս դառնութեան վշտաց, որպէս զի դառն

նութիւն ճաշակաց նոցին՝ զմերս քաղցրացուցէ : - Ս . Աւրե՛ս :

\* Որ ոչ կամի անգթանալ ի Քրիստոս՝ մի խնայեսցէ անձին : - Աւել :

\* Կրել՝ հարկ է, արել՝ ոչ : - Աւել :

\* Սէրն՝ ամենայն տրամութեան խափանիչ է : - Խրո՞ր :

\* Ընախրքն՝ ոչ վարձա աւնուլ ի Քրիստոսէ, այլ ճգնել վասն Քրիստոսի ցանկային : - Խրո՞ր :

\* Առաջին հաց մարդոյ՝ ցաւքն են, և առաջին պէտք՝ դարման նոցին : - Աւել :

\* Ոչ նախ զծիածանն և ապա զամպն, այլ նախ զամպն և ապա զծիածանն աւարէ Աստուած : - Աւել :

\* Նման է հողիս անկոց՝ որք ոչ արձակեն զանուշահոտութիւն իւրեանց՝ եթէ ոչ կոխիցին և ճմլեցին : - Աւել :

\* Աւրախութիւն՝ բաւական է ինքեան, տրամութեան՝ պիտոյ են կարեկիցք : - Ն :

\* Ո՛հ, որքան տգէտ է մարդ՝ առ կարեկից լինել ցաւոց, մի բան Աստուծոյ դարմանէ զվէրս սրտի. « Երանի սգաւորաց » : - Աւել :

\* Հողի ցաւած՝ նման է լերին բարձու, որոյ գագաթն ասպլեր ոչ բուսուցանէ ծաղկունս, այլ մտաազոյն է երկնից, յորմէ յստակագոյն նշմարին որ ի շուրջն և որ ի ստորեւն կան: — Ա՛յլ:

\* Մեծամեծ ցաւք յերկնից գան, և յերկինս ձգեն զմեզ: — Ն:

\* Ոչ թշնամեացն՝ այլ բարեկամաց իւրոց ասաց Գրիստոս, ըմպել զլաժակ իւր, և կրել զխաչ իւր: — Որո՞քն:

\* Ոչ ցաւքն՝ այլ խուռլու թիւնն վնասէ հոգւոյն: — Ն:

\* Վաճառաստան է կենցաղս այս, և զոր ինչ վաճառէ ոք աստ երկամբք անձին՝ զգործս վաստակոց, զնոյն գտանէ ի հանդերձեալսն՝ պատրաստական անձին: — Խո՞ք:

\* Մի ձայն է խնդութեան և ցաւոց՝ որ ինչ այլազանութիւն ի նոսին՝ մարդկան հնարք են, որպէս ի զբօսանս: — Ա՛յլ:

\* Ի բարիս փոխին և չարիք՝ ի ձեռս Աստուծոյ: — Տե՛նե՛ն:

\* “Նեղութիւն զՀամբերութիւն գործ

ծէ, և համբերութիւն զՀանդէս, և հանդէսն զՅոյս. և յոյսն ոչ ամպէցուցանէ:” Տեպանէս, ուր հանէ զքեզ նեղութիւնն. — յանամպէղի յոյսն: Հիւանդանամ, բարեմտեա, զի զոր սիրէ Տէր՝ խրատէ: Աղքատանամ, որախ լեր, զի զՎազարու բարխն ընկալցիս: Անողատուիս յաղագս անուանն Գրիստոսի. կրանելի ես, զի քեզ ամօթն՝ ի փառս հրեշտակաց փոխեսցի: Նա առնու զօրնութիւն ի նեղութենէ, որ զմարդկային օգնութիւնս՝ իբրև զանտիս քամահէ, և ի կարողին ասրեցուցանել զմեզ ի յոյս՝ հաստատի: — Բարձր. Սող. Եթ:

\* Սաղմոս՝ ի բարեղէն սրտէ արտասուս արտաքս արտակոչէ: — Ն:

\* Հառաչանքն՝ իւրովի ուսուցանէ մարդոյ զամենայն օգտակարութիւնս իւր: — Վարդ. Հարանց:

\* Հրեշտակային զուարթութիւն՝ կրօնաւորական պարզութեամբ: — Ա՛յլ:

\* Լալ զանդարմանելի իրս՝ յիմարութիւն է քան գթութիւն: — Ա՛յլ:

\* Որ ընդ ամենեցուն լայ՝ դաչու իւր կորուսցէ: — Այլ

\* Որք խղզկեն զձայնս արդարոցն, և կթէ ուրեք ինչ գտցես տխրաբոյն՝ ձայն արձակեալ, հաւանեցիս՝ եթէ ամենեքեան զաշխարհս զայս և որ ի մահեանք զժուարին են, զայնոսիկ հառաչեն: Վայ ինձ, զի սանդիտութիւն իմ յերկարեցաւ. քանզի ցանկութիւն ունի լուծանել և ընդ Քրիստոսի դոլ: . . . Արտասուեաց և Տէրն ի վերայ Ղազարու. արտասուեաց և ի վերայ Երուսաղեմի, և երանէ զազաւորսն, և դարձեալ՝ որք լանն: . . . Որք և արաստօք Սրբոցն՝ յազաղս Աստուծոյ սիրոյն լինէր. . . զման զի արտասին այն՝ որպէս սերմն և փոխարէնք լինին յախոնհական ինդութեանն: . . . (Քրիստոս) ամենայն ուստեք զմեր ակարութիւնս տեսանելով՝ չախովք ոմամքք և սահմանօք զհարկաւորսն շուրջ էաս զկիրս. քանզի գանախոտակցութիւնն՝ իբրև զգազանային ինն արտաքս խոտորեցոյց. իսկ

զարտմասերն և զողբասեր՝ որպէս գանապղի՝ հրածարեցոյց. ինքն՝ գնաւասանութիւն մարդկային բնութեանս եցոյց, և զմեզ՝ յիւրաքանչիւրոցն անուելութեանցն պղատեաց, ոչ հեշտանալ յախոսըն և ոչ անպայարար ունել ասորտմականն՝ հրամայելով. . . և զարտասըն իբաւացոյց, զքնականն ի մարմնի լինել զպատահումն թողացոյց: . . . Հեշտութիւն ինն արտմեցելոցն յազբան՝ զանխաբար լալովն՝ ունայնացուցանէ զնոսա ի ծանրութեանն: . . . Արտասըն (Քրիստոսի) ոչ է օրինադրութիւն՝ առողբալ, այլ չափ բարեձեւագոյն եղեալ և օրինակ հաւատի. ըստ որում օրէն է՝ պարկեշտաբար և գեղեցկապէս ի բնութեանս մեալով ի սահմանս՝ բերել ըզսորտմականսն: — Բարսիլ:

\* Չոր օրինակ որդունք ի կակղաղոյն փայտոն յաւեա ծնանին, նոյնպէս և արտմութիւնք ի թուլացեալ բարուց մարդկան բուսանին: Միթէ յաղամանդեայ էր Յովթայ սիրտն. միթէ է քա-

րանց էին արարեալ նորա աղիքն . . .  
 ( և սակայն ) ոչ հառաչեաց , և ոչ ար-  
 ձակեաց ձայն անտոհմիկ . այլ զհռչակե-  
 լին զայն և առ ամենեսեան դուլեալ դո-  
 հուլթիւնն բարբառեցաւ , Տէր ետ և Տէր  
 առ . և այլն : — Ն :

\* Աւղղեսցի քիչ յամենայն ժամ  
 խնդալն՝ եթէ կեանք քո առ Աստուած  
 հայիցին . և յոյս հատուցման՝ թէ թեա-  
 ցուցանէ զկենցաղոյս արտմութիւնսն : —  
 Ի բաց առաքելով՝ զանձնդ ուրախու-  
 թիւն , և զմերձակայիս զբայութեամբբ  
 զանցանելով՝ առ յոյս յաւիտենակա-  
 նացն ձգեա զմիտսդ , որոյ և յատուկ ե-  
 րևումն՝ բաւական է զանձնդ ուրախու-  
 թեամբ ընուլ , զհրեշտակացն ցնծութիւն  
 ի սիրտս մեր բնակեցուցանելով : — Ն :

\* Որ զհշտութիւն լալեաց ոչ զբայ՝  
 զուրկ է ի մեծէ հեշտութենէ : — Այլ :

\* Գառն են այն արտասուք՝ որ ոչ ան-  
 կանին ի ծոց ուրուք , և ոչ ոք սրբէ ըզ-  
 նտսին : — Այլ :

\* Քանի՛ քաղցր են արտասուք՝ երբ  
 խնդան սիրտք : — Այլ :

Մ Ա Հ

ԵՒ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ



Մի մուտ է ամենեցուն յաշխարհ ,  
 և մի ել հասարակաց : — Ի՞նչ . Ե . 6 :

\* Պատահար մի պատահելոց է ամե-  
 նեցուն . . . և ինձ պատահեսցէ նոյն : —  
 Ժող . Բ . 15 :

Ամենայն ի մի տեղի երթայ , ամե-  
 նայն եղև ի հողոյ , և ամենայն դառնայ  
 ի հող : — Ն . Գ . 20 :

\* Ի կաւոյ կազմեալ ես և դու ի բր-  
 զիս . անդասին կազմեալ եմք : — Յ՛՛ԼԻ . 19 :

\* Իսկ արդ եթէ դու մեռանիցես՝ ան-  
 շէն մնացէ առ ի ներքոյ երկնից : — Ն .  
 ԻԲ . 4 :

\* Ազգ երթայ և աղբ դայ, և երկիր յաւիտեան մնայ: — Ժող. Ա. 4:

\* Այր կանանցածին սակաւակեաց է... որ իբրև զծաղիկ ծաղկեալ թօթաւ փեցաւ. խոյս ետ իբրև սուուեր, և մի կացցէ: — Այր վայտնանեալ զնաց. անկեալ մարդ, և ոչ ևս իցէ: — Յովբ. ԺԴ. 1. 10:

Որպէս եւ յորովայնէ մօր իւրոյ մերկ, դառնայ երթալ որպէս և եկեալ էր, և սչինչ առցէ ի վնասակոյ իւրմէ, եթէ երթիցէ ի ձեռին իւրում: — Ժող. Ե. 3:

\* Երեկեանք եմք, և ոչ գերեմք. քանզի սուուեր են կեանք մեր ի վերայ երկրի: — Յովբ. Բ. 9:

\* Իմ կեանք թեթեւագոյն են քան զսուրհանդակ. փախեալս և ոչ երևեցան: — Կեանք իմ թեթեւագոյն են քան զխօսս... իբրև զամպ ջնջեալ ի յերկնից: — Ն. Թ. 23: Է. 6. 9:

\* Ո՞վ է մարդ՝ որ կեցցէ և ոչ ահացէ զմահ: — Սող. — 2Բ. 43:

\* Ինքն ի գերեզմանի զնաց, և ի տաճ

դանի տքնեցաւ: Զչեա նորա ամենայն մարդ զնասցէ, և յառաջ քան զնա անլծիւք: — Յովբ. ԻԱ. 32-5:

\* Գիտեմք՝ եթէ երկրաւոր տաճար չէ նուածոյս մերոյ քակտեցի... և ընդ այս տնդտկամք: Ղի զընտկոթիւն երկնից փափագեմք զգեհնու... որ եմք ընդ յարկաւս այամիկ՝ տաղտկամք ծանրացեալք. Ղի ոչ կամիմք մերկանալ, այլ զայն ի վերայ այսր զգեհնու, զի ընկզմեսցի մահկանացու ի կենաց անտի... Որչափ յամեմք ի մարմնի տաճարնամք ի Տեառնէ... այլ համարձակեմք և առաւել ևս՝ հաճեալ եմք ելանիլ ի մարմնոյ սատի և մտանել առ Աստուած... Քանզի զի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ սուաջի ատենին Քրիստոսի. զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով զոր ենչ գործեաց յառաջ, եթէ բարի և եթէ չար: — Բ. Կորնթ. Ե. 1-11:

\* Գիտեմք՝ եթէ վաղվաղակի է լինելուց մերկանալ յինէն մարմնոյս սյսուելի: — Բ. Պետ. Ա. 13:

\* Մահ մարդոց է հանգիւտ իւր : —  
Յովբ. Գ. 25 :

\* Երանի մեռելոցն՝ որք ի Տէր ննջեա  
ցին, այժմիկ վաղվարակի. քանզի հան  
դեան յաշխատութիւնէ իւրեանց. բայց  
միայն դորժք իւրեանց չողան զհեա նո  
ցա : — Յոյ. ԺԴ. 15 :

\* Խոսովեսցին ամենեքեան որ անմիտ  
են սրտիւք. ննջեցին զքունս իւրեանց և  
ինչ ոչ գտին : — Սաղմ. 26. 5 :

\* Արդարք յաւիտեան կեցցեն :

\* Ի վախճանեւ առն արդարոյ՝ ոչ  
կորնչի յոյս : — Աւակ. ԺԱ. 7 :

\* Արդարոյ՝ ամենայն մահ պատուա  
կան է : — Օբ. 1 :

\* Ոգեք արդարոյ՝ ի ձեռին Աստուծոյ  
են, և ոչ մերձեսցի ի նոսա մահ : Թուե  
ցան յաջս անզգամաց՝ թէ մեռան . . .  
բայց նորա են ի խաղաղութեան . . . յոյս  
նոցա լի է անմահութեամբ : . . . Ի ժամա  
նակի այցելութեան իւրեանց պայծա  
ռասցին, և իբրև կայծակն ընդ եղէգն  
ընթացին : — Իմոս. Ժ. 1-7 :

Արդարն՝ թէ հասցէ ի վախճանեւ  
ի հանգստեան եղիցի . . . զի հաճոյ եղեալ  
Աստուծոյ՝ սիրեցաւ, և կենդանոյն ի  
միջոյ մեղաւորաց փոխեցաւ : . . . Կատա  
րեալ ի սակաւուն՝ ելից ժամանակս եր  
կայնս. զի ցանկալի էր Տեառն անձն  
նորա : — Ն. Գ. 7 :

\* Յոյց ինձ, Տէր, զկատարած իմ և  
զթիւ աւուրց իմոց, քանի՞ն է, զի գի  
տացից թէ որչափ ինչ օրակասեալ է յի  
նէն. ահա չափով կզեր զաւուրս իմ : —  
Սաղմ. 143. 5 :

\* Աստուած մեր՝ Աստուած կենարար,  
և ի նմանէ են եւք մահու : — Ն. ԿԿ. 21 :

\* Եթէ կեամք և եթէ մեռանիմք՝  
Տեառն եմք : — Հոս. ԺԴ. 8 :

\* Տէր, հան ի բանտէ զանձն իմ. դո  
հանամ զանուանէ քումէ : — Սաղմ. ՃԽԱ :

Եհան զիս (Տէր) ի զբոյ տառապա  
նաց, ի կաւոյ և ի տղմոյ :

\* Յորժամ մահ՝ լինիցի ի փրկութիւն  
վասն առաջին ուխտին յանցանաց, զա  
ւետիս աւցեն հրաւիրեալքն ի ժառան  
գութիւն յաւիտեանից : — Եբ. Թ. 15 :

\* Եթէ իցեն հազար հրէշտակք մա-  
հաբէրք, մի ի նոցանէ՝ զնա մի խոցեացէ՝  
միթէ իմասցի (հիւանդն) արտիւ իւրով  
զառնալ առ Տէր: — Յով. 19. 24:

\* Ես իսկ (Յիսուս) եմ յարուցիւն  
և կեանք. որ հաւատայ յիս՝ թէպէտ և  
մեռանի՝ կեցցէ. և ամենայն որ կենդա-  
նի է և հաւատայ յիս՝ մի մեռցի ի յա-  
ւիտեան: Հաւատոս սոյսիկ: — Յոհ. ԺԱ:

\* Բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ  
զի վարժուցից զնա: — Ն. 16:

Մի լայք, զի չէ մեռեալ՝ այլ ննջէ:  
— Լուծէք զդա, և թողէք երթալ: —  
Ղուկ. Թ. 52: ԺԱ. 44:

\* Արդ, արձակեա զժառանգսքս, Տէր,  
բոս բանիք քում ի խողաղութիւն: — Ն:

\* Հայր, ի ձեռս քո աւանդեմ զոգի  
իմ: — Զայս իբրև ասաց (Յիսուս) եհան  
զոգի: — Ն. ԻԳ. 46:

\* Արէ, որ ննջեալ և կանգնեաց ի մե-  
ռելոց. և լուսաւորեաց զքեզ Քրիս-  
տոս: — Եփե. Ե. 14:

Յորժամ դսցցէ իառատր լինիլ ի

մէջ սրբոց իւրոց, և սքանչելի ի մէջ ա-  
մենայն հաւատացիւոց: — Բ. Թեո. Ս. 10:

\* Ամենեցուն վախճան մերձեալ է. ըզ-  
գասացարուք այսուհետև: — Ա. Պեդր. Գ:

\* Որպիսի ինչ են կեանք ձեր, զի ի-  
բրև զմերիկ էք, որ առ սակաւ մի ե-  
րեալ՝ և ապա ապականեալ: — Յով:

\* Կեանք՝ խառնուրդ է ընչի և ոչ ընչի:

\* Մի ածեր, Ողորմած, ինձ օր տա-  
րածամ ի համառօտս երբի, անթոշակ  
ապաձեռնութեամբ ընդ անկատար ու-  
ղին հետեւել. . . և մի իբր յանկարծա-  
դէպ հինից ասպատակ՝ գիշեր մահուն  
ինձ պատահեացէ: . . Մի հոսանք կեն-  
ցաղոյս զիս ողորկեսցեն. մի հանգիստն  
մահ բերցէ. . . մի վախճանն անյարմար՝  
ի վերայ իմ արշաւեսցէ. և մի շնչոյս  
վերարձակութիւն ըմբռնեալ ի խոնարհ  
լիցի: — Նորեկ. ՀԲ:

\* Ողորմեա, Տէր, մահու մեղապար-  
տիս՝ յաւուր արձակման շնչոյս կենդա-  
նութեան, մինչ աչացս ողորմագին հա-  
յեցուածս ի բարձունս կողկողիցի: . . Ե-

զոր յայնմ ժամանակի ոչ ժամանեցից  
պաղատել, այսօր ընկալցիս մարդասի-  
րապէս, ո՛ր երկայնամիտ, բազմաշնորհ,  
ամենակեցոյց: — Ն. ՀԳ:

\* Օրհնեսցի անուամբ քո, Գթած,  
վիհն իմ հանգստեան. ողորմութեամբ  
քո ցցի գուբն իմ գերութեան. ընդար-  
ձակեսցի քե ինձ տեղին թշուառու-  
թեան. անդորր եղիցի, խնամող, ինձ  
բանան բարկութեան . . . յուսով քո  
շտեմարանեսցէ զիս յարկն այն անձկու-  
թեան: . . . Դու գովեալ, (իցես) ընդ  
իս՝ ի սենեակն վտանգի: — Ն. ԿԵ:

\* (Դու՛ որ) ապակհանացուս աւան-  
դեալ՝ անեղծ ստանաս: — Ն. ԿԴ:

\* Յանձն առ՛ հոմ քեզ յաւուրս՝ զքո  
յարմարեալ տաղաւարս, պահպանա-  
ողոյս որ ի սիրն: — Ն. ԶԳ:

Եւ եթէ հասից յամս ծերութեան՝  
քե առաջնորդեալ՝ արժանիս մահու, մի  
թողցես զսկարութիւնս. մի անարգեր  
զալիսն . . . մի շնչման հողմոյ մատներ  
զառկայծեալն . . . մի առայնց տածել՛

յարկն խարխալեալ. մի անպատիւ՝  
պատկերն հնացեալ . . . մի ամբարձմանն  
թեք՝ փեռեալ . . . մի պատկերն խօսուն՝  
անկեալ: — Ն. ԶԵ:

\* Ի կալման աչացս՝ հայեցուած սըր-  
տիս մի ստուերասցի, այլ զուարթասցի  
պայծառասցի վայեչասցի. ընդ քեզ փայ-  
լեսցի, Տէր Երեսու Բրիտոս: — Ն. ԴԽ:

Կանխեսցէ ցօլդ ողորմութեան,  
յառաջեսցէ արբուսցէ զանդաստանս  
պարեալ անկեալ ոսկերացս թշուա-  
ռութեամբ ի վիհն մահու. ծաղկեցուսցէ  
պողբերեսցէ բաժակդ երկնաւոր ա-  
րեան կենարարիդ՝ զերկիրս խնամեալ  
աւուրն լուսոյ, որ անծախասպէս միշտ  
պատարադի՛ յիշատակ կենաց փրկու-  
թեան հոգւոց ննջեցեւոց: Զի ամենայնիւ  
մահացեալ հոգիս՝ մարմնովս մեղաց, շը-  
նորհօք քո, Գթած, ի քեզ զօրացեալ՝ քե  
նորողեցայց, զատեալ ի մեղաց, անմահ  
կենդանութեամբ ի յարութեանն արդա-  
րոց՝ Հօր քում օրհնեսցեալ: — Ն. ԴԵ:

Այս ամենաթշուառ և խաւարար-

գեւ շիրմին են անա սրտաբեկ և յորքնա-  
թախիժ արգահատու թիւնք: — Ն. ԿԶ:

\* Երանի որ դնայ ի գերեզմանս՝ կըն-  
ուել զածիւն իւր: — Այլ:

\* Բողանդակ կեանք՝ ուսուցն է մա-  
հու: — Փէլիսփ:

\* Ասաց ոմն ի հնոցն. Մահ՝ ոչ իմա-  
ցեալ՝ մահ է. մահ իմացեալ՝ անմահու-  
թիւն է: Որ զմահ ոչ գիտէ՝ երկնչի ի  
մահուանէ. իսկ որ գիտէ զմահ՝ ոչ եր-  
կընչի ի մահուանէ: — Եղիշէ. Բ:

\* Ողջոյն ընդ քեզ, ո՛ր մահ, գրաւա-  
կան անանց կենաց: — Այլ:

\* Քրիստոս՝ եթող մահու զկրին իւր,  
այլ բթացոյց: — Յաղթէ մահ, այլ ոչ

ստանայ ի սպառ զմեռեալն: — Այլ:

\* Քանի գեղեցիկ է մեռանել՝ մինչ-  
չե մահու ցանկացեալ. և քանի բարի է  
մեռանել՝ յորժամ կենաց ոք ցանկա-  
նայցէ: — Յ՝ԼՃ. ՃԳ:

\* Այսուհետև աւուրք իմ մերձեալ  
հասեալ կան ի կատարած անդր. հարկ  
է զաչս հոգւոյս անվրէպ ունել ի նաւա-

հանդիսս մահուն: Արժան է ինձ զտիւ և  
զգիշեր խոկալ կրթիլ ի դատաստանս  
Տեառն. խնդրել դասնել զգիր համա-  
րոց իմոց, և տեսանել, թէ սալսոց ինչ  
եցեմ եթէ առնըլոց: — Ն:

\* Նաւ՝ որ բարձեալ տանի զմեզ, ան-  
դուլ անդադար յառաջ ինաղայ ի նաւա-  
կայս անվախճան կենաց: Եթէ ոչ կա-  
րիցես նշմարել զուղեւորութիւն քո, ա-  
ղէ քննեա և տես, ո՛ր դնացիս այնքան  
ժողովք մարդկան, ի նախամարդոյն մինչ-  
չե ցղեռածինն. անա հնացեալ սրակա-  
սեցին ամենեքին, և մնայ և ոչ ոք: — Ն:

\* Ի բարձրաւանդակում կամ ես լե-  
րին, և հոգւոյ աչքք նկատեալ զխոտմ  
զնաւս՝ որ սահազնաց լինին ընդ ծովա-  
ծուփ ալիս կենցաղոյս, ոմն ընդ արեւելս  
խաղայ և ոմն ընդ արեւմուտս. է որ յա-  
ջողեալ հողմով շնորհացն Աստուծոյ՝  
զնայ անխտոր, և է որ հարեալ ընդ  
խուլթս և սրբելս՝ խորտակում գոր-  
ծէ, և անդնդասոյց կորնչի. սրբա են  
որ յարեւմուտս ընթանան: — Ն:

\* Անցին նորա յաշխարհէ՛ սահեալք ընդ գետ ժամանակի . առ անգամ մի ևեթ լսելի եղև ձայն նոցա յախունս գետոյն , և լսեաց իսպար : Աղէ , ասացէք , յո՛վ դնացին նորա : — Երանի մեռելոց՝ որք է Տէր ննջեցին : . . . Արդէս դնաւ վարեալ է հողմոց հեռացեալ անհետացան խունս բազմութիւն ծերոց և աղայոց . դիրազոյն իցէ թուել զաւազովկեանս՝ քան զնոսա : . . . Աղէ , ասացէք , յո՛վ դնացին նորա : — Յանցանել նոցին՝ ստուերք ունայնք ելանէին ընդ աւաջ : աշխարհ՝ անխեղելի Քրիստոսէ՛ ճակատեցուցանէր ընդդէմ նոցա զմեծութիւն , զխառս և զվայելս իւր : Իսկ այն ինչ ակնարկեալ նոցա յայն՝ տեսին յաւերժ զյաւիտենականութիւն : — Նշուլատիպ յոյժեցաւ նոցա խանչ յաւաջադահեամ ի հեռատարնէ . այլ ոչ աւեկեքեան հայեցան ընդ նա . էր որ աւեկին . Չինչ իցեն ալիքս սյս՝ որ սահին զմեօք . կամ զինչ լինիցի յեա երազած սահ ուղևորութեանս այսորիկ , չգիտեմք

բնաւ . և ո՞ գիտիցէ : Եւ յասել նոցա զայս՝ անհետացան գետափունքն : Եւ էր որ ուշի ուշով միտ եղեալ դադանի ձայնից՝ դառնային յարևմուտս , և երգէին զարլալցոսն անտես և զօրն աներեկ : . . . Յանձանօթ ծագաց անտի՛ ուր գետն թափի , հնչեն հանապազ ձայնք կրկին . մին ասէ . Ի խորոց յարդացի առ քեզ , (Տէր) , լուր ձայնի իմում . . . Եթէ զանօրէնութիւնս իմ քննես , ո՞ կարէ կալ առաջի քս . այլ է քէն է քաւութիւն և փրկութիւն : Միւսն ասէ . Օրհնեալ դու վեալ Տէր . սուրբ , սուրբ , սուրբ , Տէր դօբութեանց . լի են երկիրք և երկիր փառօք քովք : — Այլաւ և՛ մեք՝ դնացսք ընդ հուզ և մեք է տեղին՝ ուստի ձայնքն ելանեն ողբոց և ձայնք յաղթական օրհնեալ դութեանց : Աղէ , ասացէք , յո՛վ երթա՞մք մեք : — Երանի որոց է Տէր ննջեցին : — Մէնի :  
\* Մահ՝ աղբիւր է՛ յարմէ ամենեցուն կայ մնայ բնպել , էթէ վաղ և էթէ անազան : — Այլ :



Ո՛վ հոգի իմ, չէք ուստեք քեզ երկիրչ, բայց ի չաղաղակեւոյ առ Տէր յամենայն զօրութենէ քումէ: — Պատիւ:

\* (Հողի վրաստ) Եթէ ըրձումն մահու ինքեան լսիցէ, Սյո՛ս առէ: — Նարեկ. 1:

\* Յիշատակեա յամենայն ի վերս քո, և մի մոռանար զյաւիտեանական դատաստանն. և ոչ լինի զբաղումն ի վերայ անձին քո: — Եւրեմ. 1:

\* Օրհաս՝ պահէ՛ յորում ստիպեալ հուշեոյ ելանել ի մարմնոյն՝ անկանի ի սիրտ՝ որ յեռ ամենայն ի մեռանի: — Պատիւ:

\* Ո՛վ Յիսուս, դու չէիր կարօտ հրեշտակի՝ յօրհասին քում. վասն իմ եկն նա: Ե՛ղ, սուրբ հրեշտակ, եկ, քաղցր մտիթարիչք Յիսուսի վշտացեւոյ և օրհասականի՝ յանձն անդամոց իւրոց: — Ն:

\* Ողջոյն ընդ քեզ, սուրբ եկեղեցի՛դ ուղղօրեառ, որ երկնեցիք զիս յարգանքի քում, և անուցեր կաթամբ քով: Սյ՛ւ, մի, ս՛ղ եկեղեցի, չտամ քեզ ողջոյն հրաժեշտի. քանզի տեսից զքեզ յերկինս, ի դեղեցկադոյն քումդ մասին:

Ո՛հ, տեսից անդ զաղբերս քո՝ և զօղաւորած. զմարդարէսն և զաւանքեալս՝ զհիմունս քո. զվկայս՝ զօհս քո. զիւրսանս՝ ծաղկունս քո. զխոնտովանողս՝ վայելչութիւնս քո. զամենայն սուրբս՝ բարեխօսս քո: Ահա կապուցանեմ զաչս իմ, սուրբ եկեղեցի՛, ողջամբ մնա՛ անեմ քեզ ի վերայ երկրի. հանդիսեցայց քեզ յերկինս: — Ն:

\* Իմ՝ յանկենցարս յայս կենցաղս վարութիւնս հայելոյ՝ կարօտեմ որ վաղվաղակի հասանեմ թաղաղական շիրմի, և ի շուայեալ յայմիկ շիոթութենէ՝ երբու շահատակելով իսխ չիւք, ի վնասակար այս և ի մահացոցիչ բազմապաւտեր կենացս զերծեալք: — Մոգիւ:

\* Սւազիկ նուրբեալ եմ և ես յայմ հեալ՝ ընանել զկեանս զոյս տալտկալի, և լինել ընդ Քրիստոսի թերեւս անտանօր հանդիսեցոյք միմեանց՝ զուարճալի և դեղեցկադոյն հանդիսեմբ, բունակցելով ի միասին մշտնջնաւորապէս: — Ուրիւ. 1:

\* Չամենայն դէործո՞ղկատարած նախ  
քան զսկիզբն խուզեա : . . Ի գիշերի և ի  
տուն շեան՝ ի վերջին օրն հայեցիս : — Ն :

\* Արդ ժամանակ կարեալ է զձեռս  
իմ, ոչ ևս է ինձ հնար ծաղկաքաղ լինել  
յամայի աւուրքս : — Բռնե :

\* Եթէ չար քան զամենայն՝ զմահ  
վարկանիս, ընդէր այնպէս վարիս՝ որ  
պէս զի զամենայն զառնութիւն նորին  
կրիցես : — Այլ :

\* Եթէ ճշմարիտ կենացն ցանկացիս՝  
միշտ ընկալ զմարդկային մահ : — Նեղոս :

\* Ատոհացիք միշտ, բայց մի երկնչիք  
ի մահուանէ : — Ն :

\* Ի վերայ մեռելոց մի ողբար, զի հա  
սարակաց է ճանապարհն, և որ ժամա  
նէն՝ երանելի է : — Ն :

\* Քարշեցէք զմայրդ իմ՝ ի վերայ իմ,  
այսինքն է՝ զհողդ (ասէր Յովն . աւե  
տարանիչ ի հանդատեանն), և ծածկե  
ցէք զիս մինչև ի ծունկս : . . Քարշեցէք  
զմայրդ իմ ի վերայ իմ՝ մինչև ի սարա  
նոցս իմ . . . Արկէք կտաւ վարչամակ ի

վերայ երեսաց իմոց, քանզի այլ ոչ ևս  
տեսանելոց էք զիս յայտ մնցաւոր աշ  
խարհիս : — Հանգիստ Յովն :

\* Անցանէր մահ յայսկոյս շուրջ զՍի  
մէնիւ, և ի նա ոչ մերձեայր . իբրև  
արձան էր եղեալ ի ճանապարհին՝ զՍի  
մէնս : . . Աշխատեցաւ ծերն հայել յամե  
նայն ծնունդս, թէ ո՞տացէ ներումն ծե  
րութեանն : . . Եկն նախախնամողն Աս  
տուած՝ արձակել զկենդանակալ նաւն և  
կապել ի նաւահանդիսոն մահու, մինչև  
եկեացէ միւսամբամ : . . Հողին Սուրբ  
կոչեաց զՍիմէոն . Աբի, ծեր, և առ ըզ  
կատարումն ի տղայեդ : . . Արդ, արձա  
կեա զիս, Տէր, ըստ բանի քում՝ ի խա  
ղաղութիւն . զի ես քեզ մնայի արձակել  
զիս՝ ծննդեամբ քո . հրամայեա, Տէր,  
մահուն, հանգուցանել զիս, որպէս և  
խոստացար . արգելէր զիս մինչև ցայժմ՝  
տեսանել զքեզ յաշխարհի . արդ բաց  
ինձ զդուռն հրամանաց քոց, ելանել, զի  
տեսի ես զփրկողդ Աստուած : Արդ՝ ար  
ձակեա զիս, Տէր իմ, զի ժամ է ինձ նըն

դ

Յեւ է հող. հրամայեա հողմոյն մահու  
 շնչեւ առ իս, որպէս զի երթեալ յօ-  
 թեկանս՝ մնացից քեզ, մինչև եկեալ՝  
 առցես զիս անտի : . Շատ սքնեցայ,  
 Տէր, մնալով քեզ է ճանապարհս աշ-  
 խարհիս, սցսուհետե տուր ինձ ննչեւ : -  
 Յայսմաւոր :

\* Նստելով առ գերեզմանի ընկերի  
 քո՝ յիշեսցես անդ և աւասրցես ի մտի  
 քում՝ թէ և ինձ պատրաստ է այս. և  
 արտասուես վասն մեզաց քոց : - Թրոր :

\* Արա սուգ ըստ արժանեաց (մեռե-  
 լոյն) որ մի, վասն բարանաց. և ի  
 վազին՝ մխիթարեանց զսիրտ քո, վասն  
 հրամանացն Աստուծոյ : - Ն :

\* Հրածարելով յաշխարհէ մարմնով,  
 յետ մահու՝ խափանին ամենայն խոր-  
 հուրքք. և առժամայն լուծանի մարմնա-  
 կան պատերազմն : Ի հանդէս այնուհետե  
 հանդերձելոցն ժամանեալ, զարհուրեալ  
 դողամ առաջի անեղ բեմին, զնախա-  
 գործան հրապարակեալ. քանզի ամենե-  
 քեան իւրաքանչիւրոցն արժանաւորին  
 հատուցման : - Հին Շարախ :

Զփողոյն բարբառ և սոսկալի ըզ-  
 ձայն՝ ի յորժամ առնում ի միտս իմ,  
 մեռանիմ յերկիրդէն. քանզի նախա-  
 գործեալքն հրապարակին, և առաքումն  
 լինի ի գեհնն անշէլ . . . Այլ նախ քան  
 զհրածարումն գթմ, Տէր, և կեցո : - Ն :

\* Հաւատ ունելով՝ հողի խաղաղու-  
 թեան, էրթ առ ստեղծիչն՝ որ փչեաց  
 յերեսս առաջին մարդոյն : Ահա հրածա-  
 րումն կենաց յաշխարհէ, զաստուածա-  
 դատ վճիռն ունելով, ասէ. Հող էիր, և  
 է հող դարձցիս : - Ն :

Պատկեր Աստուծոյ կոչեաց զքեզ՝  
 մարգարէն, ո՛վ անձն իմ : Ահա եհաս  
 ժամ՝ որ բերէ զքահատումն : Զխարդ ոչ  
 մեկնեցաւ յինէն անարժան դործք իմ :  
 Ե՛ որոշումն լինի ի յաններեկի և ի մեծի  
 ատուրն : - Ն :

\* Հոսանուտ ես, ո՛վ մարդ, ընդէր  
 բարձրապարանիս, ընդէր մեծամտես.  
 Ընդէր ոչ յիշես զըստաստանն. ընդէր  
 ոչ հողաս զվախճանն : Յախտակողն  
 մերձ է. պատրաստ լեր յեւ, և խնդրեա

ի Քրիստոսէ՛ միայն անմահ թագաւորէն, զորս ի մէնջ փոխադրեցան՝ հանգուցանել՝ ուր ուրախացելոցն բնակու թիւնքն են : — Ն :

\* Ո՛վ ազգ մարդկան, զի՞ ընդունայն խռովիմք . — ընթացս սակաւ է զոր ընթանամք . ծուխ մրդկեալ է կենցաղս . և որպէս մոծիբ և փոշի՛ առ սակաւ միէր, և վաղվաղակի լուծանի : — Ն :

\* Ողբամ և տրտմիմ՝ յորժամ ի միտ առնում զմահ . և տեսանեմ ի դերեղմանի եղեալ զգեղեցիլութիւնս մեր, որ ստեղծաք ըստ պատկերի Աստուծոյ, անկերպարան և անփառք, և ոչ ունելով տեսակ : Ո՛վ սքանչելութեանս . զի՞նչ է այս խորհուրդս՝ որ յաղագս մեր հողածնացս եղև . զիմրդ մասնեցաք յապականութիւն . զիմրդ լծակիքք եղաք մահու, ճմարտապէս Աստուծոյ հրամանան, որպէս և գրեալ է, որ շնորհէ ննջեցելոց զհանգիստ : — Ն :

\* Յորժամ ծննդականքն լեն ի ծնանելոյ (միտք), յայնժամ և պահապանք

տանն շարժեցին, և սիւնք նորա տկարանան և խոնարհին (մարմինք) . յայնժամ և երկու գլուխքն խոնարհեցին, վարդն և բեհեղն : — Եստէր :

\* Ոչ և մի գործ՝ զորոց բունն հարին (մարդիկ), ոչ ճակատեցաւ ընդդէմ մահուն, և փրկեաց զնոսս : — Ոչ լցաւ կողորդ մահուն ի ճաշակելն զնոսս՝ որք յառաջ եղեն քան զորդիսն . այս ընդարձակ բերան մահուն՝ ի հարցն լրումն և զորդիսն սպասէ ընդունել : — Լւմբ . Ժող :

\* Շշուկ մահու է՝ յորմէ դողայ ամենայն երկիր : — Վարդան :

\* Երկիր՝ թաքուցեալ զարեգակն ի զիշերի, կոչէ զմեզ ի զբայութիւն գերեզմանի՝ յոր մտանելոց հմք, իբր արեգակն թաղեալ յիրաական ծոց : — Ն :

\* Բարիօք է մարդկան յիշատակ մահու . զի հանապազ հայելով յեկս մարմնոյ՝ ամենևին մի ծառայեսցուք մարմնոյ ցանկութեանց . . . այնքան համբերութեամբ տարեալ ամենայնի, մինչ զի զլճանալ թշնամոյն՝ թէ ընդէր իսկ մարտեայ : — Վանախան :

\* Անհնար է երկիցս քամել զբաժակ  
կենաց : — Ա.Ս.:

\* Աչ ոք կամէր ըմպել զբաժակ կե-  
նաց, եթէ ոչ էր օժեալ Աստուծոյ ըզ-  
շքրթունան՝ մեղո : — Ա.Ս.:

\* Պատրաստ լիցո՞ւք չուեւոյ աստի .  
զի թէպէս և հասարակաց վախճանի օրն  
չև ևս հասանիցէ ի վերայ, սակայն իւ-  
րաքանչիւր կտտարած առ դուրս կայ,  
եթէ ծեր ոք իցէ և եթէ մանուկ : — Ուլբ :

\* Ի Քրիստոսի դաղըստեանն՝ քուն է  
այնուհետև մահ : . . Յողթեաց մահու . . .  
քուն եղեն իրքն . զի լայցեա և զտիպ-  
ցեա : . . Նաւահանգիստ իօկ խաղաղու-  
թեան է մահ : . . Եւ արամեցաւ և տագ-  
նապեցաւ (Քրիստոս ինքն) , սակայն  
չխուսաբեանց ի մահուանէ : — Ն :

\* Եթէ բարոք խիղճ ունէիր՝ ոչ եր-  
կնչէիր ի մահուանէ : Լու է քեզ խոր-  
շիւ ի մեղաց՝ քան ի մահուանէ : — Եթէ  
այսօր-չես պատրաստ՝ զխորք առ վաղիւն  
լինիցիս : — Ն.Մ.Ն. Ա. Ի.Գ :

\* Եթէ ստակալ է մահ՝ թերևս վը-

տանգաւոր ևս իցեն կեանք երկարք : Ն :

\* Տեսեր զոք յօրհասի, յիշեա՛ զի և  
քեզ կայ ընդ նոյն ճանապարհ երթալ :

\* Ի դաւյեալին սահուն՝ յոյժ այլապ  
թուեսցին քեզ կեանք քո : — Ն :

\* Եթէ դու ոչ հողաս այժմ վասն ան-  
ձին քո , ո՞ հողասցէ քեզ յետ քո : — Ն :

\* Ուսիր այժմէն մեռանիլ աշխարհի,  
որպէս զի յայժմամ կեցցես ընդ Քրիս-  
տոսի : — Ն :

\* Զի խորհիս կեալ ընդ երկար , որ  
և ոչ մի օր ունիս աներկեան : — Ն :

\* Յուշ լիցի քեզ վախճանն, և զի  
ժամանակ կորուսեալ՝ ոչ ևս դառնայ :  
— Ն . ԻՆ :

\* Ո՛վ աշխիզ դու , կենաց կցորդ և  
մահու մեծարիչ՝ ամօք զքեզ ի տուն : —  
Ուլբ . Եվե :

\* Որ ի մահուանէ չերկնչի՝ արտաքոյ  
բուսութեան սատանայ է : — Ն . ԵՔր :

\* Այնպէս զիւրաւ մերկոսցո՞ւք զմար-  
մինն , որպէս զհանդերձս ինչ ի բաց  
մերկանալ յանձնէ : — Ն :

\* Չի՞ հոգայցես վասն կատարածի ,  
թէ պէտ և մօտ իսկ է . զի իւրաքանչիւր  
կեանք կարճ են և մօտ ի կատարած : — Ն :

\* Ի մեռանել մեղաւորի՞ ամենայն ինչ  
կերպարանափոխ լինի նմա , բայց յանձ-  
նէն : — Մառնի :

\* Մահ արդարոյ ոչ զրկէ զնա և ոչ  
յիմեքէ . քանզի հաւատք որոշեալ էին ի  
նմանէ զամենայն : — Ն :

\* Անմահ սրտի՞ չիք ինչ մահացու :

\* Անստուգութիւն մահուան թմբերե-  
ցուցանէ և յապահովէ զմեզ . ստուգու-  
թիւնն և արհաւիրք՝ անհզ յարդարեն  
զյիշատակ նորին : Եթէ անստոյգ է՝ ա-  
պա անիրաւ է որ ոչ խոկայ և չպտու-  
րաստի առ այն . իսկ եթէ ստոյգ՝ անմը-  
տութիւն է երկնչել ի յիշատակէ նո-  
րին , կամ ի մոռացօնս արկանել զնոյն :  
Առաջին քայլ կենաց՝ առաջին է և  
առ գերեզման անդր : . . Մեռանիմք  
հանապազօր . ամենայն վայրկեան բառ-  
նայ ի մէնջ մասն մի կենաց , և քայլ  
մի յառաջ վարէ ի զամբանն : . . Ա-

մենայն կեանք մեր օրհասք են երկար և  
զմեղակ : . . Իցե՞ ինչ ի կրօնս յանկա-  
զոյն առ արթուն պահել զմեզ՝ քան  
զանստուգութիւն յետին աւուրն : . .  
Ուր կայ մնայ քեզ մեռանել՝ իբր իշխես  
կանգնել քեզ տուն մնայուն՝ ի տեղուջ  
անդ գերեզմանիդ : — Չիք վայրկեան ու-  
րում չիցէ մարթ լինել քեզ յետին , և  
չիցէ լեալ միոյ յեղբարց քոց : . . Եթէ և  
ընդ աշխարհի սկիզբն առեալ էր կե-  
նացդ , սակայն և յայնժամ անցեալն՝ ոչ  
յերկարագոյն և իրագոյն ինչ թուէր . . .  
և ոչ հապտատագոյն քան զանցեալս ի-  
ցին աւուրքն ապաղայք : Ամենայն ինչ ան-  
ցանէ ընդ քեզ և որպէս զքեզ . երագու-  
թիւն աննահանջի վարէ զամենայն յան-  
զունդս յաւիտեանականութեան : Նախ-  
նէք մեր ճանապարհ հորդեցին մեզ երէկ ,  
և մէք առ վաղիւ՝ յետագայից մերոց : —  
Քանզի անստոյգ է մահ , պարտ ուրեմն  
է քեզ մեռանել զօրհանապաղ . չառնել  
զորժ՝ յորում չկամէիր ի վերայ հասա-  
նել քեզ անհո . . . Ամենեքին կամիմք

կեալ լաւագոյնս , և մեռանիւք՝ մինչև սկսեալ բարոք կեալ : Որքան գուն գործեա հեռացուցանել է քէն զյիշատակ մահու , այնքան մերձեցուցանէ զքեզ առայն , և հասցէ է ժամու իւրում : — Յորմէ հետէ Գրիտոս՝ գլուխ մեր՝ համբարձաւ յերկինս , չիք մեր աստ տեղի բնակութեան : — Արդար՝ է վախճանելն ոչ ցաւի ընդ անջատումն յերկրաւորացս ինչ , քանզի չթողու ինչ յերկրի . սիրտ նորա ընդ հոգւոյն թռանի յերկինս . . . Տեսանէ զամենայն ստաւել , բաց յայնմանէ՝ զոր վասն Աստուծոյ գործեաց . անխուժ ընդ անցեալն , անկասկած ի ներկայէս , մտախօ՛ յըզձալն ապագայն , ննջէ է Տէր : — Մատիշ :

\* Երկրայիս եթէ իցին հանդերձեալք՝ և կեաս՝ որպէս թէ չիցեն աներկբայապէս : — Ն :

\* Ամենայն ինչ բարոք է զետեղեալ է բնութեան և երջանիկ . մարդս միայն անդո՛ և անդո՛ . . . քանզի չէ նորա տեղիս այս : . . . Սիրտ նորա մեծ է քան զաշ

խարհս . երկիրս չէ նորա հայրենիք : Որ ինչ չէ Աստուած՝ ոչինչ է նմա : — Ն :

\* Մի հարցաներ՝ զինչ է հանդերձեալն լինիցի . այլ քննեա մանաւանդ՝ զինչ գուն գործիցես : — Ն :

\* Ար ետես զալիս՝ ետես զմահ : — Սի՛. Անն :

\* Հրաւերս ( մահու ) որ էր հեռաւոր , եկն եհաս և քեզ , և ոչ անցանէ , և ոչ ներէ քայլ մի ոտին . և ահա թողուս զամենայն և զամենեսեան , և երթաս միայն և միայնացեալ : . . . Եկն ահա յանկարծակի մի պահ , և ամենայն ունայնացաւ . փոքր մի ջերմութիւն , և ահա ամենայն ոչինչ . փոքր մի ցաւ , և ամենայն ընդ վայր և անտի . մի դիշեր խորին և խաւարացեալ և եղկելի , և տանին իբրև զլատապարտեալ , ուր տաւողքն տանին , և ոչ զիտես : . . . Մեծ է է մարմնոյ հոգւոյդ յայն աշխարհ անցանելն : . . . Մի է ճանապարհն , և այլ ոչ դոյ շաւիղ . մի է կամուրջն , և դարձ այլ ոչ . . . զժուարին է անցն , բայց ամենե

քեան ընդ նա անցանիցեն։. Մեծ և անցայտ է մահու խորհուրդս, անձն իմ... և միայն որ զփորձ առեալ է՝ նա գիտէ։. Եւ արդ զի՞նչ է իցէ մարդ. — Ոչ ինչ... սառեալք... երազ անկայուն։ Ահա վերացաւ. ահա գնաց. ահա անտես եղև. ահա խաղաղացաւ։. Ի՞նչ որ երևեցին էր՝ իբրև զաներևոյթ։. Ահա ելանէ ուր տարողքն տանին, և յայնժամ կորիցեն ամենայն խորհուրդք նորա։ — Գր. Մարտի։

\* Ի գերեզմանս՝ յողորմ հանեմք և արտասուեմք, յորժամ տեսանեմք զայս մեծ խորհուրդս. տեսանեմք, որ ամենայն գեղեցկութիւն մարմնոյ անդ է թառամեալ. որ՝ ամենայն վայելուչ աչք՝ անդ է խաւարեալ. որ՝ ամենայն խօսող բերան՝ անդ է լռեալ, և ամենայն ճարտասան լեզու անդ է կապեալ. և ամենայն գէտք՝ անդ է մաշեալ. և ամենայն գեղեցիկ հասակ՝ անդ է փտեալ. ամենայն իշխանի իշխանութիւն՝ անդ է դադարեալ. ամենայն մանկութեան զօրութիւն՝ անդ

է խաղաղեալ. և ամենայն ունայնութեան ջանք մարդկան և աշխատութիւնք՝ անդ է խափանեալ, անդ է լռեալ, անդ է դադարեալ։. Մի՛ մոլորիք երխտասարդք և կուսանք անմխթ. մի՛ խաբիք յունայն ձեր գեղեցկութիւն մանկութեանդ. զի և մեք գեղեցկացաք և անուշահոտեցաք, և ցանկացաք և զուարճացաք և բարեկենդանացաք. և ահա որպէս տեսանէք՝ մոխիր և տիղմ ժահնոտ և զազրութիւն. այն ամենայն այս էր։ Ի մէնջ՝ որ նախ երթեալ էմք և ի գերեզմանս բնակեալ՝ ուսարուք, և սեփականեցէք զձեզ։. Մի՛ խաբեսցուք մեք զմեզ... մի՛ արկցուք զմեզ այսօր ի չարիսն, և ի վաղիւն բնկեսցուք զբարիսն. զի բազումք բազում ինչ խորհեցան, և ի վաղիւն ոչ հասին։ Եկեսցէ և գիշեր՝ որ հատանէ զվաղիւն։ — Ն։

\* Անօթ խեցեղէն, որ զերկրայինս եւեթ խորհիս, և խորտակումն մահուն պատրաստագոյն (է)։ — Ն։

\* Իւրաքանչիւր ոք աստ յառաջ քան

զեւանեւն ի մարմնոյ՝ իւր տէր է և իւր  
դատաւոր. իսկ անդ՝ ոչ իցէ իւր տէր: — Ն:

\* Ոչ զիտես՝ եթէ յանօթ է մարմնինդ. քանզի այսօր իբրև զերազ անցանէ, և վաղիւն՝ որպէս ստուեր երեւիցի: — Ն:

\* Մեռելու թիւն քրիստոնէից՝ չէ մահ, այլ նմանութիւն և կարծիք մահու է: . . Ոչ է պարտ երկնչել և դողալ. զի դուզնաքեայ և զանարգ վայրս թողլով՝ յայլ փոխիմք, յառաւել պայծառ և վերադոյն, որ ոչ ունի վախճան, և ուր չըոյցար և ոչ աշխատութիւն, և ոչ արբամութիւն, այլ միշտ անցաւ և անհող: — Բարս. Մով:

\* Արդէս ալիք հարեալ զվիճէ՝ փոխին, հարեալ մահն ի տէրունեան մարմին՝ խորտակեցաւ յաստուածութենէն: — Ն:

\* Արով բանիւ և իցէ՝ հարկ է մեռանել. և եթէ այսպէս իցէ՝ այն լաւ է զի վասն Աստուծոյ մեռանիցիս: — Ոսկ. Երայ:

\* Մահ է ճանապարհ ամենայն աշխարհի, և ամենեքեան երթամք ընդ այն ճանապարհ: — Մանրոսկ. ԻԳ:

\* Ամենայն կեանք մարդոյ այսպէս կատարի, յայսօրն և ի վաղիւն: — Սարգ:

\* Նախ առաջին ինքն (Քրիստոս) դնաց զանգղին ճանապարհս մահու, կոխելով ինքնիշխան կամօք ի վերայ նորա. և զմահուն ճանապարհն՝ ընդ որ ամենեքեան զարհուրին զնալ՝ արդարք և մեղաւորք, կենաց ճանապարհ զնա աբար, զիւրաբնալի ամենեցուն. ոչ ըզբնութիւն նորա փոխիտելով, այլ զզբնութիւն նորա ի կենդանակէն դօրութիւն զարձուցանելով: . . Ձի յորժամ երեւմք եթէ մեռաք յաշխարհս՝ յայնժամ առնումք զկատարեալ յարութիւնն մեր: — Ն:

\* Մահ՝ եթէ թշնամի է մարմնոյ՝ բարեկամ է հոգւոյ: — Կարոլ. Պօրբոմ:

\* Յանգղին ժամու մահուան, Եկ, Յիսուս, մի անաղան.

Լեր փրկիչ իմ և սաշտտան: — Բեռն:

\* Մահուկ ես, մի վտահանար. մի կարծեր հասարակաց ինչ ունել դաշինս.

քանզի որ Տեառն՝ իբրև զգեց գիշերի  
այնպէս դայ : — Ուրի՛ք :

\* Ա՛յլ է մարմին և այլ մահ, և այլ  
ապականութիւն . . . քանզի մարմին գործ  
եղև Աստուծոյ, իսկ ապականութիւն և  
մահ՝ ի մեղաց ի ներքս մտին : — Ն :

\* Կեանք՝ վայրկեանս է յորում կեամ,  
և ոչ որում մնամ : — Այլ :

\* Ինքն (մեռեալ մարդ) ի հոշն ան-  
մուռնչ, ոչ ի գովինն սխրանայ և ոչ ի  
պարսաւելն գժուարի : Այս է մեծա-  
տանցն և անդամացն եզր վարթամու-  
թեան : — Լա՛մբ. Սաղմ. ԽԸ :

\* Ծով մահուն երկիւղի և անյուսու-  
թեան՝ ցամաքեցաւ առաջի նորս Իսրա-  
յելի, որպէս զգալին՝ հնոյն է : — Ն. ԿԵ :

\* Ա՛հա արեգակն միշտ նոյն է, և ոչ  
նուազին աստեղքդ և լուսաւորքդ . իսկ  
զմեր մանկութիւնն՝ ապականէ երիտա-  
սարդութիւնն, զնա՝ ծերութիւն, և ըզ-  
ծերութիւն՝ մահն : Եւ թիւ աւուրց ըն-  
թացից մերոց ընդ այս պէսպէս ազա-  
կանութիւնս՝ եօթանասուն ամ, ասէ :

Իսկ եթէ անցանէ ընդ սահմանեալ  
կեան՝ ոչ է կենդանի, այլ որպէս ան-  
ժամ ոք ցաւօք և հեծութեամբ, զիա-  
կիր ինքեան, և կենդանւոյն մեռեալ : —  
Ն. ԶԹ :

\* Զթաղաւորն՝ ի կառաց, զիշխանն՝  
ի միջոյ զօրաց, զգառաւորն՝ յամուր  
քաղաքաց, ի ստորև քարչեր մահն՝ յիւր  
ծառայութիւն, և ոչ տայր թոյլ ընա-  
կել յաշխարհս սիրելի : — Ն. ՃԶ :

\* Ա՛յսուհեաւ այլ ոչ է դուռն աղ-  
կեալ ի վերայ բնութեանս՝ երկիւղ մա-  
հուն. և ոչ նիդ ի վերայ նորա՝ անյու-  
սութեանն երկաթ . այլ խորտակեալ  
(էղև) ֆրիստոսիւ : — Ն :

\* Զի ի ճանազարհի եմ և յընթացս՝  
զիտեմ հաստատուն. և զի ժամանելոց  
եմ ի մայրաքաղաք գերեզմանին՝ հա-  
ւատամ ճշմարտագէս : — Ն. ՃԺԸ :

Թագաւոր լինիմ, և վախճան նմին  
Ղկերեզմանն տեսնեմ. իշխան քաղա-  
քի, և կատարած՝ զմահն : — Ն :

\* Որ մեռանելոցն է յաւուր միում՝

կարէ մեռանել և յամենայն աուր : —  
ԼԻՒԻՐԱՆԻ :

\* Մեռանել՝ յառաջադիմել է : — ԱՅԼ :

\* Երկնից կամարքն յայտնեցան , մար-  
դէկ ընդ հրեշտակս խառնեցան . . . դժու-  
րոց կապանքն կոտորեցան , և մահուն՝  
լոկ անուն մնաց . զի մանկունք և տկար  
կանայք՝ աղարտեն զնա : — ԵՐԷ՛Կ :

\* Չէ արժան ի մահուանէ փախչել ,  
այլ ի չար կատարածէ : — Ն :

\* Սափոր է մեր հողեղէն բնութիւնս ,  
որ յերթեհեկ կենացս՝ յանկարծ մանրի  
մահուամբ : — Ն :

\* ( Սուրբն իլարիոն ) արհամարհեաց  
զմահ , առ ի զերծանել ի մահուանէ : —  
ՀԵՐՈ՛Ն :

\* Իւրաքանչիւր ուրուք մահ՝ արձա-  
զանդ կենաց իւրոց է : — Ի՞նչ . Լ՛Ե՛՛Լ :

\* Յանկայր ( Աբամ ) մահու հասանել ,  
զի մահուամբն՝ զկենդանութիւն զացէ :  
— ԲՊՐՈ՛ՒԷ՛Է :

\* Զմահն՝ առաջի դնեմ կենաց . քան-  
զի յաղագս մեռանելոյն մօրմտով՝ լինի

մեզ կենդանանալն հողուով : — ԱՐԴ մեռ-  
ցուք , զի կեցցուք : — Ն :

\* Ճշմարտութիւն՝ լուսապայծառ ևս  
երևի յաչս քրիստոնէի՝ յօրհասին . և  
ինքն իսկ մահ՝ վերջին ճաճանչ լուսոյ է  
չողացեալ ի նմին . լըջս պայծառ , որ չը-  
տես անէ զանցս հաւատոց ի սլատճառն՝  
իսկ հաւատոց : — ՄԷ՛Կ :

\* Թաղեցոք ի ստուերական մթան  
հաւատոց , և յանձն առցուք զարհաւիրս  
մահու . միայն զմիտանալն ընդ Քրիստոսի  
առաջի՞ դնելով , և յօրհասի նորին և ի  
մահու և ի տապանին . . . Ո՛վ աշխարհ ,  
արկ զիս ի մոռացօսս , որպէս և ես զքեզ ,  
և որպէս կախմս անձամբ զանձն իսկ  
մոռանալ : — ՅԷ՛ԿԵ՛ԼՆ՝ :

\* Ոչ երկնչեմ յօրհասէ և ի գերեզ-  
մանէ , զի ազնուագոյնն յիս մասն՝ յաղ-  
թական լիցի մահու . քունն մահաութի՝  
ուչ արկցէ զիս ի գիշեր մշտնջենաւոր .  
կեցից անդրագոյն ևս քան զդամբանն :  
Զօրութիւն՝ որ զդեցոյց ինձ զկեանս՝  
անկցէ միտանդամ զթեկս նորին : — ԱՅԼ :

\* Զյաւիտեանականն միայն կամիմ խորհնել. երանելոյ յաւիտեանականութեանն միայն ցանկամ փափագել : — Նէի. Տ՝Լ՛Է՛Կ :

\* Փետայ բարձանց երկնաւոր, քեզ յանձն առնեմ զչոզի իմ. ժողովեցայց յշտեմարանս կենաց, և մտից յաշխարհն լուսոյ . քե և մտի յաշխարհս՝ մեղօք, և քե ելանեմ ի սմանէ. քե վաստակեցի յօչընչէ, և քո հրամանաւդ հրաժարեմ յաշխարհէ, և առ քեզ դամ. զի արժանի եղեց տեսանել զքեզ և վայելել յանսպառ ուրախութիւնան, ընդ սուրբս քո : — Մ՝Ա՛Լ՛Կ :

\* Փողն երկնաւոր ի բարձանց հնչէ, և ասէ. Արէք, օրհնեալք Քրիստոսի. աշաւասիկ թագաւորն երկնաւոր սլարդեւեալ է ձեզ հանգիստ և ուրախութիւն՝ ի կեանս անմահ, փոխանակ աշխատութեան և ճգնութեան ձերոյ : Արէք, տեսէք զՔրիստոս թագաւորն, ըզփեսայն անմահ՝ որում ցանկացայքն : . . . Արէք. տեսէք զնորասքանչ վայելչու-

թիւնն և զմեծ փառան : Արէք. տեսէք զարքայութիւն նորա՝ զոր սլատարաստեալ է ձեզ : Արէք. տեսէք զտենչալի Տէրն ձեր, զոր սիրեցէք, յաղագս որոյ աշխատեցարուք, վասն որոյ ճշնեցարուք, յաղագս որոյ չարչարեցայքն : Եկս՛յք, տեսէք բազում համարձակութեամբ՝ որում ցանկայիք . և ցնծաովք նովաւ յանձառելի ուրախութիւնան, և զխնդութիւնն ձեր ոչ ոք հանցէ ի ձէնը : — Ն :

\* Դու՝ վարդապետեցար յաղագս ի Քրիստոս ննջեցելոցն, թէ, Սերմանի աղականութեամբ, և յառնէ առանց ապականութեան . . . մի՞ զնա ողբար՝ որպէս զմնդակ ինչ կրեալ. զի փոքր ինչ լինի՝ երկնից փող զնա զարթուցանէ, և տեսցես զնա մերձ կացեալ բեմին Քրիստոսի : — Բ՝Կ՛Է՛Կ :

\* Անհրաժարելի են մահուն օրէնք. ընդ ամենայն հասակս նմանապէս անցանին, և ամենայն ըստ կարգի բաղմաց մի լեալն՝ զարձեւալ լուծանիլ (սլարասի) : — Ն :

\* Մանուկ կորուսեր, այլ հրեշտակս ունիս, ընդ որս պարես շուրջ զաթուռովն Աստուծոյ: — Ն:

\* Գու և զայս զմտաւ անձ. զի ոչ մեռաւ մանուկն, այլ ի բաց տուաւ. ոչ վախճանեցաւ սիրելին, այլ զնաց, և սուղ ինչ յառաջագոյն էառ զճանապարհն՝ զոր և մեզ հարկաւորաբար լինի երթալ: — Ն:

\* Ամենայն որ ըստ բնական կարգի է՝ բարի է. և զինչ բնականագոյն քան զմահ ծերոյ: — Այլ:

\* Առաքինութիւն ազնուացուցանէ զմահ: — Այլ:

\* Եթէ յամենայն ժամ մարթ է մեռանել՝ ոչ ոք տարածամ մեռանի: — Այլ:

\* Բզխեցէք, բզխեցէք արտասուք, ի վաղուց վախճոյժ փափագողք, բզխեցէք. քանզի որ արգելոյրն զելս ձեր՝ հրածարեաց ի կենցաղոյս . . . Իսկ ես կեամ, զի կենդանւոյն մեռաց. և այս իցեն կեանք. ընդէր, աղէ, սիրեցաք, կամ ընդէր թողաք զմիմեանս: — Ս. Բեռնարդ: (յեղբար յի այն ինչ վախճանեալ):

\* Փութացելու մն առ վերին կեանսն՝ ծանրագոյն քան դամենայն զտանջանս և զկապարանս է՝ ընդ մարմնոյն յերկարել: — Բարեղ:

\* Որ ստեղծն դմեղ և կենդանացոյցն Աստուած՝ առանձինն ետ իւրաքանչիւր անձին վարս կենաց, և այլոց այլ սահման ճանապարհի հաստատեաց. զի ումն յաւէտ մնալ ի մարմնի տնօրինեաց, և զոմն՝ ճեպով լուծանել ի կապանաց մարմնիցն հրամայեաց, ըստ անճառելի իմաստութեանն և արդարութեան իւրոց բանիցն: — Ն:

\* Ամենայն ի մարթ է զիմակալէ՛ ըաց ի մահուանէ: — Այլ:

\* Զօր ամենայն անկն կալ մահու, և ժամու ժամու փափագեանց նմին: — Կլեմ:

\* Առ դրունս յաւիտեանականութեան կամք. Յաւիտեանականութիւն հաստատեալ է ի կէտ մահուան. և մահ կարէ հասանել յամենայն բոպէի: — Այլ:

\* Քսանէ չորիցս անգամ յաւուր ի դէպ է պատրաստել ի մահ: — Յր. Պրոք:

\* Եթէ կամիս մեռանել է Տէր, մեռիւր նախ քան զմահ. մեռիւր մեղաց և պատրանաց աշխարհի: — Ա՛յլ:

\* Վայ որոց կ'ընեն յաշխարհէ՛ ոչ գիտելով եթէ վասն էր մտին յաշխարհ: — Ա՛յլ:

\* Որք հանապաղ զմահն խողան՝ սրբեն զխիղճ մտաց իւրեանց. և յորժամ սուրբ իցէ խիղճն՝ չիք երկիւղ մահու:

\* Յորմէ հեռէ Կենարարն մեր էարք զբաժակ վլտաց և զմահու, լցաւ այն քաղցրութեամբ՝ վասն սիրելեացն Աստուծոյ: — Տր. Սաւիլ:

\* Տէր, վախճան արա կենաց իմոց, զի ես ոչ առնեմ վախճան մեղաց իմոց: — Ա՛յլ:

\* Քանի քաղցր է մահ՝ որում կեցեալ իցէ բարւոք: — Օգոստոս:

\* Փրկիլէ իմ Տէր, մեռայց սիրով սիրոյ քո, որ մեռարք առ սէր սիրոյ իմոյ: — Տր. Աստիլ:

\* Կեանքն մեր Քրիստոս՝ մեռանելովն սպան զմահ. ի մեռանելս մերում՝ մնայ

մեզ մաքտնչել ընդ թշնամոյ յաղթեցելոյ: — Օգոստոս:

\* Յերկրի եմք, այլ ոչ վասն երկրի. երկինք են հայրենիք մեր: — Ա՛յլ:

\* Քանզի կայ մնայ մեռանել յառուր միում՝ զինչ օգուտ իցէ սպասել վաղուին: Լաւագոյն է վաղագոյնն, մանաւանդ յորժամ պատրաստ որ իցէ: — Ա՛յլ:

\* Ոչ վասն այլոյ իմիք տրամեցուցանէ զիս մահ, բայց զի զանդաղէ ի դալն: Ոչ դարչելի, այլ մանաւանդ զեղեցիկ է ինձ մահն: Յորմէ հեռէ Քրիստոս սիրեաց զնա՝ հաճոյ է ինձ՝ նաև ի ցաւսն, քանզի առ կրան կայ յախտենականութիւն երջանիկ: — Հերոսիմ:

\* Ո՛վ Յիսուս, ընկալ զիս ի գիրկս՝ զոր տարածեցեր վասն իմ ի վերայ խաչին: Ընկալ ողորմութեամբ քով մեծաւ՝ զողիս իմ ի ձեռս քո: — Յոսոփ. Լաւր:

\* Քանի մեծ խաիր զանազանութեան է ընդ որ եմս այժմիկ յերկրի, և ընդ որ լինիցիմ յերկինս, և թէ եզեց արժանի այնմ հասանել: — Ա՛յլ:

\* Այ՛ մեծ է անկանեւ ի ձեռս Աստուծոյ կենդանոյ, այլ քաղցր է յոյժ անկանեւ ի ձեռս Աստուծոյ՝ զոր մեռոյց Սէր, եթէ ոք սէր ընդ սիրոյ հասուցանիցէ նմա: — Ա.Ս.Լ:

\* Սիրողին զԱստուած՝ մահ սանդուղք են ելից ի լեւոն Տեառն և ի խորանս սքանչելեաց նորուն: — Բէրն:

\* (Կոյս մի յոյժ զանգիտող ի մահուանէ, շնորհօք Տիրամօրն յաղթեալ երկիւղին, ասէր ի ժամ օրհասին. Չասէի և Ողջոյն ընդ քեզ Մարիամ՝ մի, եթէ գիտէի այնույերկարեւզկեանս իմ):

\* (Ոչ գիտէի թէ այգքան քաղցր իցէ մահ, ասէր մեծ աստուածաբանն Սուսերեզ, ի մահուան իւրում):

\* (Սուրբ զհարիւրապատիւն խոստմանց քոց վայելեմ, Տէր Յիսուս, մի ի թարուածեամբ զոր զգամս ի ժամուս. ասէր առաքինսակրօն ոմն միանձն՝ յօրհասին):

\* Վարք բարիք շաւիղ են բարոյ մահու. և մահ՝ բարի՝ ճանապարհ է երջանիկ և յախտենական կենաց: — Ա.Ֆ.Բ.Պ.Պ.:

\* (Ս. Փելլքս Կանտալիկ՝ իբրև յայտնեցաւ նմա ի Տեառնէ մահն մօտալուտ, փութացաւ երթալ տալ աւետիս եղբարցն, եթէ ահա հրաժարելոց եմ յաշխարհէ, ահա մեռանիմ, և երթամ տեսանել զԱստուած զ՛այր իմ):

\* Ոչ ուստեք էր մեզ երկիւղ մահու, եթէ էաք՝ որպէս արժան էր մեզ լինել: — Ուլիէ:

\* Զինչ առաւել փափագելի ի վերայ երկրի. — Բարուք մեռանել: Զինչ առնել իցէ առ ի բարուք մեռանել. — Կեալ քրիստոնէաբար: — Զխորդ կեցցուք քաջ քրիստոնէաբար. — Փափագելով այնմ սոսկապէս և ուժգին: — Եւ զխորդ ուղղել զվարս. — Թոտորելով ի մեղաց. կեւլով զգաստութեամբ, խոնարհութեամբ, մեռելութեամբ, և ստեղ առ Աստուած դեմելով՝ աղօթիւք: — Թ.Պ.Լ. Ա.Ն.Բ.Պ.Պ.:

\* Ահա շիջանի ջահ կենաց քոց, վառեա՛ զեռանդն սիրոյդ: Ահա մերձենայ ժամ մեկնելոյ քո. զարթո՛ զամենայն զօրութիւնս հոգւոյդ, մինչև իցէ հըն-


չեալ: — Այլ ընկա՛լ զմահ՛ ի պատիւ առ  
մենակարգող թեանն և իշխանութեան  
Աստուծոյ, ի խոստովանութիւն ճշմար-  
տութեան նորա, ի ծանօթութիւն նուա-  
տութեան քո, ի քառութիւն մեղացդ, և  
ի փոխարէն անբաւ երախտեացն: — Այլ:

\* Ի զար է մարդոյ տրամել ընդ փի-  
նելն մահկանացու, այլ խնդալ արժան  
է՛ զի վախճանի այն զոր չկամէրն լինել:

\* Աղօտածածանչնչոյլ զամբանի՛ պոյ-  
ծառաքոյն է քան զբոլոր փիլիսոփայո-  
թիւն: — Այլ:

\* Զարձուբելի է գերեզման՝ յոր ոչ  
կացցեն մերձ կտատք: — Այլ:

\* Ելաւոյն մահի՛ծ մահու է սէրն, և  
բարձր կանգատեան զ խոյ՛ խոնարհու-  
թիւն և յԱստուած աղաւինութիւն: —  
ՅԷ. ՍԷԷ:



Չեք եղիլի քան զնա՛ որ զամենայն  
ճանաչիցէ բաց յԱստուծոյ, և չեք եր-  
ջանիկ քան զնա՛ որ թեպէտ և զայլ ինչ  
ոչ գիտիցէ՛, այլ ճանաչիցէ զԱստուած  
և սիրեսցէ: — Օհոսոս:

\* ՉԱստուած յիշել կանաղազ՝ բա-  
րեզալտութիւն է. և յազումն ոչ ունի  
աստուածապէր չողի. բայց բանիւ ան-  
ցանել յազազս Աստուծոյ՝ յանգսնու-  
թիւն է, մտօք՝ բազում չափով յերացն  
արժանաւորութենէ ի բաց մնացեալ: —  
Բարսեղ:

\* Յորժամ յազազս Աստուծոյ ինչ ի-  
մանացեա, և թէ նուազ ինչ իցէ՛ բար-  
ձրացս, և եթէ բարձր՝ չարեա, մի զԱս-

տուած , այլ զքեզ , զի և ոչ զգուշադոյն  
իցէ առաւել քան զչափն : — Ուրի՛ք :

\* Յորժամ ի վերին խորան միտքն  
հային , ոչ ունին ուր դադարեացին և  
հաստատեացին , յազազս Աստուծոյ ե-  
րևմանցն : — Գր . Աստուծոյ Բարե-  
բան :

\* Այս ևն աւետիքն զոր լուսաք ի նը-  
մանէ , և պատմեմք ձեզ . զի Աստուած  
լոյս է , և խաւար ի նմա չիք : — Ա . Յ . Գ . Ա . 5 :

Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւո-  
րէ . և խաւար նմա ոչ եղև հասու : —  
Յ . Գ . Ա . 5 :

Յորոյ երեսացն երկնչէին և փախ-  
չէին երկինք և երկիր . և տեղի ոչ գը-  
տաւ նոցա : — Յ . Գ . Բ . ԻԱ . 15 :

Գու ահաւոր ես , և ո՞ր կարէ կալ  
առաջի քո . որպէս երևեցար դու յերկ-  
նից . . . երկիր երկեաւ և սարսեաց ընդ  
յառնեւն Աստուծոյ ի դատաստան : —  
Ետ զձայն իւր Բարձրեաւն , և խռովեցաւ  
երկիր : — Ս . Գ . Զ . 8-9 : — ԽԵ . 7 :

\* Աստուած եկաց ի ժողովս աստուա-  
ծոց , և ի միջի նոցա դատէր զնոսա : —  
Ն . ԶԱ . 1 :

Թագաւոր մեծ ի վերայ ամենայն  
երկրի Աստուած է : — Ն . ԽԶ . 8 :

\* Ամպ և մէգ շուրջ է զնովաւ . յե-  
րաւունս և յարդարութիւն ուղղեալ է  
առաջի նորա : Հուր առաջի նորա դնաս-  
ցէ , այրեսցէ շուրջ զԹշնամիս նորա : —  
Երևեցան փայլատակունք նորա տիեզե-  
րաց , ետես և սասանեցաւ երկիր : —  
Լերինք՝ որպէս մոմ հալեսցին յերեսաց  
Տեառն , յերեսաց Տեառն ամենայն եր-  
կիր : Պատմեցեն երկինք զարդարու-  
թիւն նորա . տեսին ամենայն ժողովուրդք  
զփառս նորա : . . . Երկիր պագցեն նմա  
ամենայն հրեշտակք նորա : . . . Զի դու  
բարձրեալ ես ի վերայ ամենայն երկրի .  
յոյժ բարձրացար ի վերայ ամենայն կը-  
ւոց : — Ո հայի յերկիր , և սոյ դողալ  
սմա . մերձի ի լերինս , և ծխեսցին : —  
Ն . Գ . Բ . 29 . 52 :

\* Յարիցէ Աստուած , և ցրուեսցին  
ամենայն թշնամիք նորա . փախեան ա-  
տելիք նորա յերեսաց նորա : Որպէս պա-  
կասէ ծուխ՝ այնպէս պակասեսցին . որ-

պէս հալի մոմ առաջի հրոյ՝ այնպէս կո-  
րիցին . . . Յնծասցին առաջի նորա (ար-  
դարք), և խռովեացին յերեսաց նորա :  
- Ն. ԿԷ. 4-6 :

\* Տէր, ո՞ նման է քեզ : - Ն :

\* Քերտութեքն լծեալ ի կառս քո՞ ոչ  
երբեք ծանեան զտեղի քո . և այժմ յո՞ր  
կողմն ընթացցին միաք իմ պատմեւ ըզ-  
քէն : - Ե՛րբ : - Աբբայ, Հայր, ամենայն  
ինչ հնարաւոր է քեզ : - Մորէ՛. ԺԳ. 56 :

\* Ճամարտութիւն քո մինչև յամպս .  
Աբղարութիւն քո՞ որպէս լերինք, Աս-  
տուած . Իրաւունք քո՞ որպէս խորք բա-  
ղումք : - Ն. ԼԵ :

\* Եկայք, և տեսէք զգործս Աստու-  
ծոյ, որ արար զնշանս և զարուեստս ի  
վերայ ամենայն երկրի : - Եկայք, և տե-  
սէք զգործս Աստուծոյ, որպէս զի անեղ  
են խորհրդովք՝ քան զամենայն որդւոց  
մարդկան : - Ն. ԽԵ. 9 : ԿԵ. 5 :

\* Ո՞վ է աստուած մեծ՝ որպէս զԱս-  
տուած մեր . - Դու ես, Աստուած, որ  
առնես զքթանչիկս : - Ն. ՀԶ. 15 :

\* Ո զնէ յամպս զգնացս իւր, և շըր-  
լն նա ի վերայ թևոց հողմոց : - Խորք՝  
որպէս զգնաս վերարկու է նորա : . .  
Դարձուցանես զերեսս քո ի նոցանէ  
( յարարածոց քոց, ի մարդկանէ ) և  
խռովին . հանես զոգի ի նոցանէ, պա-  
կասին և ի հող դառնան : Առաքեսս գո-  
զի քո և ստանաս զնոսս, և նորոգես  
զերեսս երկրի : - Ն. ՃԳ :

\* Աստուած թագաւոր մեր յառաջ  
քան զյաւիտեանս, որ արար զերկու-  
թիւն ի մէջ երկրի : - Ն. ՀԳ. 15 :

\* Աստուած՝ ի տաճարի իւրում յայտ-  
նի : - Ն. ԽԵ. 4 :

\* Ահաւասիկ թագաւորութիւնք երկ-  
րի ժողովեցան, և անցին ի միասին .  
ինքեանք տեսին և զարմացան . խռովե-  
ցան, սասանեցան, և գողումն կալաւ  
զնոսս : - Ն. 5 :

\* Աստուած՝ Աստուած մեր յաւի-  
տեանս յաւիտենից . և սա հովուեացէ՛  
զմեզ յաւիտեան : - Ն :

\* Բարձր է Տէր . զխոնարհս տեսանէ :

և զբարձունս ի հեռատանէ ճանաչէ : —  
Ն. ձԼԷ. 5 :

3<sup>o</sup> երթայց ես յողոյ քուսէ . կամ  
յերեսաց քոց ես յո՞ փախեայց : Թե եւ  
լանեմ յերկինս , դու անդ ես . և թէ իւ  
ջանեմ ի դժոխս , և անդր մօտ ես : — Աւ  
սացի , Խաւար՝ ուրեմն ծածկեաց զիս . —  
Խաւարն՝ ի քէն ոչ խաւարանայ , և զիւ  
շերն որպէս տիւ լուսաւոր եղիցի : Խոս  
տովան եղեց քեզ , Տէր , զի անկէ և  
սքանչելի ես . սքանչելի են գործք քո . և  
անձն իմ սիրեաց յոյժ : — Զանգործս իմ  
տեսին աչք քո , և ի դէրս քո ամենե  
քեան զբեցան : — Ն. ձԼԸ. 5 . 9 :

\* Դու լուսաւոր առնես զճրագ իմ ,  
Տէր . Աստուած իմ , լոյս արա ինձ ի խա  
ւարի : — Ն. ԺԷ. 29 :

\* Օրհնեալ Տէր Աստուած Խորայելի ,  
որ առնէ սքանչելիս միայն . և օրհնեալ  
է անուն սուրբ փառաց նորա յաւի  
տեան : Լցցի փառօք նորա ամենայն եր  
կիր : — Օրհնեսցեն զնա երկինք և երկիր ,  
ծով և ամենայն որ զեռայ ի նոսա : —  
Ն. ՀԱ. 20 : ԿԸ. 57 :

\* Խոնարհեցոյց զերկինս և էջ . և մեզ  
ի ներքոյ ոտից նորա : Եւ ի քրովբէս և  
թռեալ . սլացաւ նա ի թևս հողմոց : Եւ  
զխաւար ի ծածկոյթ իւր , և շուրջ զնո  
վաւ են յարկք իւր : Ի փայլատակել նո  
րա առաջի նոցա՝ ամալք անցուցին զկար  
կաւտ , և զկայծակունս՝ հուր : Որոտաց  
Տէր յերկնից , և Բարձրեալն ետ զձայն  
իւր ի կարկուտ և ի կայծակունս հուր :  
— Ն. ԺԷ. 11 :

\* Ահա ծանեայ զի Աստուած իմ ես  
դու . զԱստուած օրհնեցից ի բանս իմ , և  
զՏէր գովեցից ի խօսս իմ . յԱստուած  
յուսացայ , և ոչ երկեայց . զի՞ արասցէ  
ինձ մարդ : — Ն. ԺԹ. 10 :

\* Աստուծոյ ծանօթութիւնն է ազ  
բիւր յաւիտեանական կենաց : — Կէ-բէ-ը :

\* Բազում խորհուրդք են ի սրտի  
առն , բայց խորհուրդ Աստուծոյ յաւի  
տեան մնայ : — Ա. Թ. ԺԹ. 21 :

\* Աստուած ոչ հեռի ինչ է յիւրա  
բանչիւր ումեքէ ի մէնջ : — Գ. Թ. ԺԷ :

\* Աստուած է որ յաջողէ ի մեզ զը-

կամեղն, և զառնեղն վասն հաճութեան :  
— Փիլիպ. Բ. 15 :

\* Ահ մեծ է անկասկելի ձևուս Աստուծոյ կենդանոց : — Եբր. Ժ. 51 :

\* Յերաւել է երանելի զայն՝ որ զԱստուած՝ իւր փառս առնէ : — Իսր. 42 :

\* Աստուած, քո արուեստք՝ անդրատանելիք, քո չափք անչափելիք : — Նաբի. Ժ. 2 :

\* Թաղաւոր էից ամենից, ... սկզբնահայր և նախաշաղիղ սիրոյն ընթացից :

Դու, ըստ մարդարէին, մնաս յափտեան՝ յանբաւ բարձրութեան. և ես կորնչիմ, ըստ նորին բանի : — Ն. Գ. 29 :

\* Անձկութեան փափազ յարախորժելի... Որում զոչու թեամբ մեծաւ ըստասեն անմահականայն անեղից ըստաբերան ըոցաշնչութիւնք : — Ն. Գ. 9 :

\* Քեւ ստեղծանին ի նորոգութիւն յարութեան՝ ամենայն եղեալքս առ իքէն, յայնմ ժամանակի՝ որ է օր վերջին յայտմ կենցաղի, և օր առաջին երկրին կենդանաց : — Ն. Լ. 9 :

\* Ամենեքին առ մեծութիւն ծնեալ եմք, այլ չեք ոք մեծ, բայց մի Աստուած, զի դոհ է յինքեան. և այնչափ մեծ լինի մարդ՝ որչափ ընու Աստուծով : — Այլ :

\* Ի թափառել մտաց ընդ սրբազան և յաւերժական տառս աստուածաշունչս, ուր չեք տեղի չափոյ և ժամանակի, ոչ պլ ինչ լսելի լինի՝ բայց անկումն իրեք ի ծոց յափտեանակնութեան : — Շարապ :

\* Զաստուածեղէն յուռութան յուռութեսցոք, և նովաւ ցածնուն ամենայն՝ վերացն զայրացեալ դասք : — Ուիլիք :

\* Մեշտ յեշեա զԱստուած, և երկինք՝ միտք քո լինիցին : — Ն :

\* Պահանջէ զմեզ Աստուած՝ միշտ յեշել : — Ն :

\* Եթէ դոհանաս զԱստուծոյ՝ շատաօր նովաւ միայն : — Ն. Մ. Բ. Գ :

\* Որ խնդրէ ինչ բաց յԱստուծոյ և ի վրկութեան անձին, ոչ գտցէ՝ բայց վիշտս և նեղութիւնս : — Ն. Բ. Ա. Ժ. 1 :

\* Ուր և եցես, ընդ որ և զարձցիս՝ թշուառական ես, եթէ ոչ դառնաս առ Աստուած : — Ն. Ի. Բ :

\* Դէր յԱստուած զամենայն զոյս  
քո , և նա եղիցի քեզ երկիւղ և սէր :

\* Մի՛ ինչ համարիր՝ ելթէ իցէ ոք ի  
քո կողմն կամ հակառակ քո . այլ զայն՝  
զի ընդ քեզ իցէ Աստուած՝ յամենայն  
գործս քո : — Ն . Բ . Ա . Բ :

Որում կամիցի օգնել Աստուած՝ ոչ  
ոք կարէ ստնանել նմա : — Ն :

\* Ի վեր քան զամենայն և զամենեսին՝  
հանգիւր անձն իմ յԱստուած , զի նա է  
յաւիտենական հանգիստ սրբոց : — Ն :

\* Ահա Աստուած իմ , և ամենայն  
ինչ . և զինչ այլ պիտոյ իցէ ինձ , կամ  
իմ այլում փափաղիցեմ : — Ն . ԼԴ :

\* Աստուած է խորութիւն հնարից ,  
բարձրութիւն կենաց , կատարումն բա-  
րեաց : — Ն . ԾԹ :

\* Աստուծոյն՝ յաւեժ կենդանականք  
( են ) , և ի վեր քան զամենայն փոփոխ-  
մունս և զվախճան : — Ուլիք :

\* Զինչ երջանիկ քան ծառայել ոյնմ՝  
որ երջանիկս առնէ զծառայս իւր : — Մա :

\* Զոր ինչ կրեաց ոք վասն Աստու-  
ծոյ՝ կեցցէ Աստուծով չափ : — Ն :

\* Պարգէք Հողոյն Սրբոյ , որոյ ըս-  
կիզքն և միջոցն և կատարածն՝ լի է եր-  
կնաւոր մեծութեամբն : — Եղիշ :

\* Լաւ է Աստուծոյ լինել , և ոչ ին-  
քեանց : — Դիւնիս :

\* Տուր Աստուծոյ գոր կարես . և Աս-  
տուած՝ ամենակարողութեամբն իւրով  
տացէ քեզ : — Այլ :

\* Լաւ է դան բարեկամաց՝ քան ըզ-  
բրժինս թշնամեաց . ո՞րքան ևս առաւել  
Աստուծոյ խրատն : — Ուլ . Ե :

\* Յորժամ Աստուած ընդ մարդկան  
իցէ՝ չէք այնուհետև ոչ երկիւղ ուստեք  
և ոչ կասկած յուժեքէ , այլ համարձա-  
կութիւն առ ամենայն ինչ . որ եղև իսկ .  
զի առաջին և անչարժ չարիքն քակե-  
ցան , և պատիժքն որ ի վերայ աղբի  
մարդկան կային՝ ի միջոյ բարձան , և  
մեղաց ջիւք հատան , և սանտանայի բըռ-  
նութիւն զիջաւ , և անկոխ դրախտին  
ճանապարհ՝ մարդակոտոր սուղտկան  
բացաւ նախ . երկնից կամարքն յայտնե-  
ցան , մարդիկ ընդ հրէշտակս խառնե-

ցան . և յաթոռն խալ արքունական հասանէր մեր ընուծիւնս . և դժոխոց կասպանք կոտորեցան , և մահու անունն ևեթ լոկ մնաց . . . և կանայք ևս փշրեցին զխայթոցս մահու : - Ն :

\* Աստուծոյ միայն է ոչ ըստ կարծեաց դատել : - Ն :

\* Մի միայն խնդրէ Աստուած , զի ընտանութիւն կալցին ընդ նմա : - Ն :

\* Որ ( Աստուած ) փոքր ինչ հայցէ , և մեծամեծս պարզէ : - Ն :

\* Չոր Հայրն երկնաւոր կտրէ՝ ոչ որ կարէ կրկին պատուաստել : - Սուրբ :

\* Մեծ բարի է գիտել զինչ Արարիչ և զինչ արարած : - Ուրեք :

\* Ոչ ինչ է հեշտ քան զաստուածային լսելութիւնս : - Ն :

\* Մերձենալ առ Աստուած և խօսել պարտ և արժան է միայն ընդ միայնում :

\* Հայեա յերկին , և իմա , առ ո՞վ քո բանդ իցէ : - Ն :

\* Յորժամ Աստուծոյ զօրութիւնն դարձեսցէ , զիարդն՝ մերձ մի կացցէ : - Ն :

Ուսիր մի քննել՝ յորժամ Աստուած գործէ . մի հարցաներ ըստ ընուծեանն , յորժամ ընուծեանն արուեստաւոր գործիցէ : - Ն :

\* Հայր ակնարկէ . Որդի գիտէ . գործք՝ Հոգւովն կատարին : . . . Ինքեանք զինքեանս գիտեն . փախիր առ լուծիւնն , ո՞ սկար , և փառս առը Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ : - Երբեմն :

\* Չինչ և խնդրեմք՝ իմաստուն է , գիտէ ( Տէր ) տալ . և զի գթած է՝ կամի տալ . և զի զօրաւոր է՝ կարէ տալ : - Այլ :

\* Չիք այլ ուրախութիւն՝ քան առ Աստուած նայելն և նորա գիտութիւնն : - Երեւի :

\* Որքան ի տեսութիւնն Աստուծոյ որ վերանայ , այնքան և նա յանհասութիւնն բարձրանայ : - Լոմբ . Սուրբ . փի :

\* Մնաս և ի տեսանելն անհաս ( Աստուած ) , և յիմանալն անճառ . ոչ անբան անհասութեամբ՝ այլ բանաւորապէս . և յեւս տեսանելն՝ առաւել զիտել թէ անհաս է : - Ն . ՀԶ :

\* Մի հաներ ի մտաց քոց բնաւ՝ զվիշտումն Աստուծոյ . այլ է ճաշակելն՝ օրհնեալ զպարզեւիչ դարմանոյն . յընթացսն՝ զուզղիչ ճանապարհին . ի ննջելն՝ զմեթեթարիչ տկարութեանդ . ի դարձելն՝ ընդատրաստիչ նիւթոյն . ի դատարկանալն՝ զուսուցիչ հանգստեանն . ի տկարանալն՝ զքարիչ մեղացն . յարդարանալն՝ զզօրացոյցիչն ի նոյն : Եւ լիցի յամենայն ժամ մտաց քոց վերահայեցողութիւնն՝ առ Աստուած և ի խոստացեալ պարզեանն : — Ն . ձԳ :

\* Ուր դու ես , Տէրք երկինի , երկինքն ի ներքոյ քո է : — Երկու յաւիտեանցն տէր էս , և յերկուս քեզ օրհնութիւն : — Ն . ձԳԳ . ձԳԴ :

\* Աստուած զամենայն մարդկան ճշնապարհ ճանաչէ . իսկ զճանապարհն Աստուծոյ՝ ոչ ամենայն մարդիկ : — Ն . Ա :

\* Տէր , ցորչափ այլում ցանկամ՝ բաց ի քէն , սնովատաակ լինիմ հանապաղ . զի ոչ ինչ ոչ լնու զտեղծեալն ի պատակեր քո՝ բաց ի քէն : — Գր . Պառ :

\* Աստուծոյ ուրախութիւնն անհաղորդ է . առ ի ճաշակել զայն , հարկ է միայն զայն ճաշակել : — Պառ . Ե :

\* Թո՛ւ ի իմ եթէ Աստուած խնդրէ զխըռնս ի մարդկանէ , և կամի զի մեծամեծքն խնդրեսցեն զինքն : — Այլ :

\* Աստուած լի ( է ) ի կարօտս , զերաւիր ի լիսն : — Ասէ ոմն ի Սրբոցն . Յամենայնի ճանաչի Աստուած , և առանց ամենայնի . և ի ձեռն զխտութեան ճանաչի , և ի ձեռն անդիտութեան : . . Յամենայնի ամենայն է , և ոչ յվիթք ոչ ինչ : — Եր . Գ :

\* Աստուծոյ խնայալի լոյսն՝ ազդէ մինչև ցորչումն շնչոյ և ողբոյ . սակայն որքան կափուցեալ է հոգւոյս աչս՝ ոչ կարէ տեսանել զնա իւր մերձ . սպա թէ բանայ՝ տեսանէ : — Լ . Բ . Բ . Եր Ը՞ր :

\* Չիք այլ ինչ ախորժիկ Աստուծոյ և զուարճալի մեզ՝ քան ընտանութիւն ունել առ նա , և մեր հայր կոչել . քանզի . . . եղև մեզ Աստուած՝ որ ամենեցուն Աստուած է : — Խոս . Գ :

\* Ե՛կ ի միտս քո, ս՛լ մարդ. առ այն՝  
յորմէ զամենայն բարիս դասնես՝ ժա-  
մանեա հանապաղ. մանաւանդ ի սկզբան  
աւուրն և ի վախճանի: - Ն:

\* Ո՛վ բերկրալի ձայնիս, որք միտս  
ունին. քանի՛ հեշտալի է զամենեցունցն  
Աստուած՝ մեզ ընտանեբար կոչել սրտի  
մտօք կամ երկիր պաղանկէ: - Ն:

\* Զատիր յարարածոց, և զտցես  
զԱստուած: - Ս. Թեբեզ:


\* Որպէս զօղս՝ ծծեւոյ կարօտ եմք,  
նոյնպէս և նորա (Աստուծոյ) օղնակա-  
նութեանն: - Ուրբ. Մրբ. Իբ:

\* Եթէ իմաստութիւն Աստուած է,  
չչմարիտ իմաստասէր է աստուածա-  
սէրն: - Օրբ. Գ:

\* Աստուած միայն. Աստուած միայն.  
և միշտ Աստուած միայն: (Զայս յեղոյս-  
զեր առաքելի սն):



### Ս Է Ր



Աստուած Մէր է. և որ կայ ի սէրն՝  
բնակեալ է յԱստուած, և Աստուած ի  
նմա բնակէ: - Ա. Յ. Լ. Գ. 15:

\* Հաստատեաց (Աստուած) զսէր  
աստուծոյ զօրութեան իւրոյ: - Ա. Բ. Գ. 5:

\* Դէք ի սիրտս ձեր. սիրեցի զձեզ,  
ասէ Տէր: - Մ. Գ. 2:

\* Յայսմիկ է կատարեալ սէրն նորա  
(Աստուծոյ) ի մեզ, զի համարձակու-  
թիւն ունիմք յաւուրն դատաստանի.  
զի որպէս նայն է՝ և մէք եմք յաշխար-  
հիս յայսմիկ: Եւ երկիւղ ոչ դոյ ի սէր.  
պլ սէրն կատարեալ ի բաց մերժէ զեր-  
կիւղն. զի երկիւղ ընդ տանջանօք է.  
և որ երկն չին՝ չէ կատարեալ ի սէրն:

\* Մէք սիրեացուք զԱստուած. զի նա  
նախ սիրեաց զմեզ: - Այս է սէրն Աս-

տուծոյ. եթէ զպատուիրանս նորա պահեացուք, և պատուիրանք նորա չեն ինչ ծանուցք: — Ա. Յ՝ 15. Գ. 14:

\* Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի կուրիցէ, այլ ընկալցի զկենսանս յաշխարհանս: Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի իւր յաշխարհ՝ թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նուառ: — Յ՝ 15. Գ. 17:

\* Ո՞ր պատուիրան է մեծ յօրէնս. — Յիսուս ասէ. Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն օրով, քումէ, և յամենայն անձնէ քումէ, և յամենայն մտաց քոց, և յամենայն զօրութենէ քումէ. այս է մեծն և առաջին պատուիրան: Եւ երկրորդն նման ամին. Սիրեսցես զընկերքո՞ իբրև զանձն քո: Յայս երկուս պատուիրանս՝ ամենայն օրէնք և մարդաբէք կախեալ կան: — Մ՝ 10. ԻԲ. 56: Մ՝ 11. ԺԲ. 50:

\* Լրումն օրինացն՝ սէր է: — Հ՝ 13. ԺԳ:

\* Պատուիրանն նոր ասմ ձեզ, զի Սէրիցէք զմիմեանս, որպէս իրեցի ես ըզձեզ, զի և դուք սիրեալիք զմիմեանս:

\* Որ սիրէ զպատուիրանս իմ և պահէ զնոսա, նա է որ սիրէ զիս. և որ սիրէն զիս՝ սիրեսցի ի Հօրէ իմմէ. և ես սիրեցից զնա և երեւցուցից նմա զիս: — Յ՝ 15. ԺԳ. 54: ԺԳ. 21:

\* Հուր եկի արկանեւ յերկիր. և զինչ կամիմ, թէ արդէն իսկ բորբոքէր: — Ղ՝ 1. ԺԲ. 49:

Որչեակք իմ, վոքք ինչ ժամանակ ընդ ձեզ եմ. խնդրիցէք զիս, . . . և ուր եսն կրթամ՝ դուք ոչ կարէք գալ (այժմ): . . . Եւ եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի, զարձեալ դամ և առնում զձեզ առ իս. զի ուր եսն իցեմ՝ և դուք անդ իցէք: . . . Ոչ թողից զձեզ որքա. դամ արձեզ: Փոքր միւս ևս և աշխարհս ոչ ևս տեսանէ զիս, բայց դուք տեսանիցէք զիս: — Յ՝ 15. ԺԳ:

Եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեացէ, և Հայր իմ սիրեսցէ զնա. և ար

նա եկեցոյք և օթիւլանս առ նմա ա-  
րասցոյք: Եւ որ ոչն սիրէ զիս՝ զբանս  
իմ ոչ պահէ: — Ն:

\* Եթէ սիրէիք զիս՝ ազա ուրախ լեալ  
էր ձեր՝ եթէ ես առ Հայր երթամ: — Ն:

\* Սիմոն ( որ առ երեսո խնդրես սա-  
աուել զԱստուած ), ունիմ ինչ ասել  
քեզ: . . Տեսանին զայս կին ( մեղուցեալ  
և զղջացեալ ). մտի ի տուն քո ( ի սիրտ  
քո ) . ջուր օտից իմոց ոչ ետուր . իսկ սա  
արտասուօք իւրովք եթաց զոտս իմ, և  
հերով իւրով ջնջեաց . համբոյր մի դու  
ոչ ետուր ինձ . սա աւաօիկ յորմէ հետէ  
մտեալ եմ՝ ոչ դադարեաց ի համբուրե-  
լոյ զոտս իմ . իւրով զգլուխ իմ ոչ օծեր .  
սա՛ իւրով անուշիւ օծ . վասն որոյ թու-  
ղեալ լիցին սմա մեղք իւր բազում, զի  
յոյժ սիրեաց: Զի որում շատ թողու-  
ցու՛ շատ սիրէ, և որում սակաւ՛ սա-  
կաւ: — Ղ. 40-7:

\* Կինն մեղաւոր՝ բոլոր անձամբն  
տարածեալ յոտս Փրկչին՝ ոչ դադարէր  
ի լալոյ, քանզի անդադար էր ի սիրե-  
լոյ: — Պ. 1-5:

\* Սիրեցից ( և ես ) զքեզ, Տէր, զօրու-  
թիւն իմ, Տէր, հաստիչ իմ, ապաւեն  
իմ և վրկիչ իմ: — Մ. 1. Ժ. 2:

\* Եկեց և ես զկնի քո, յոր վայր և  
երթիցես: — Մ. 1. Բ. 19:

Ընդէր ոչ կարեցեմ գալ այժմ ըզ-  
կնի քո . արդէն զանձն իմ իսկ եղից ի  
վերայ քո: — Յ. 15. Ժ. 57:

Դիր զիս իբրև զկնիք ի վերայ սըր-  
տի քո: — Ե. 6. Բ. 6: — ( Ասէր զայս ար-  
դեօք և Աշակերտն՝ զոր սիրէրն Յիսուս,  
անկեալ զանջօքն նորա ):

\* Բունն է իբրև զմահ՛ Սէր . . . թը-  
նիչք նորա իբրև զթուիչս բոցոյ հրոյ:  
Զուրք բազումք ոչ կարեն զսէր շիջու-  
ցանել, և գետք՝ ոչ արգելցեն զնա: —  
Ե. 6. Բ. 6:

\* Թագաւոր սիրկի, թեպէտ և ծած-  
կեցաք ի տեսլենէ ( քումէ ), աչք մեր  
յանաւորք ( խնդրեն զքեզ ): — Ն. Թ. 5:

\* Երևեցս զերեսս քո ի ծառայս քո:  
— Յագեցայց լուսով երեսաց քոյ: —  
Մ. 1. Բ. 19:

\* Որպէս փափազէ եղջերու յաղբերս  
 չուրց, այնպէս փափազէ անձն իմ առ-  
 քեզ, Աստուած: Ծարաւի է անձն իմ առ-  
 քեզ, Աստուած, հզօր և կենդանի. երբ  
 եկից երևեցայց երեսացդ Աստուծոյ...  
 Ի ձայն ցնծութեան խոստովանութեան,  
 և ի ձայն բարեկենդանութեան: - Ն.  
 ԽԱ. 2. 5. 6:

Պատրաստ է սիրտ իմ, Աստուած,  
 պատրաստ է սիրտ իմ, օրհնել և սաղ-  
 մոս ասել քեզ փառօք իմովք: - Զար-  
 թիք, փառք իմ, զարթիք սաղմոսիւք և  
 օրհնութեամբ. և ես զարթեայց առա-  
 լօտուց: - Ն. ԾԶ. 10:

\* Ես ննջեմ, և սիրտ իմ արթուն  
 չայ: - Երբ: ...

Տքնեցուցանէ զքուն ի գիշերս եր-  
 կայն՝ անձուկն: - Զքծն:

\* Աստուած, Աստուած իմ, ես առ-  
 քեզ առաւօտ անենմ. ծարաւեաց առ-  
 քեզ հողի իմ, քանիդատիկ ևս մարմին  
 իմ. որպէս երկիր անասլատ և անչուր,  
 ուր ոչ գոյ ի մմա ճանապարհ: ... Վասն

դի լաւ է ինձ ողորմութիւն քո՝ քան ըզ-  
 կեանս իմ, և շրթունք իմ դռկեացեն ըզ-  
 քեզ: ... Զի թէ յիշէի զքեզ յանկողնի  
 իմում՝ ընդ առաւօտս կանխեալ խօսէի  
 ընդ քեզ: - Ն. ԿԲ:

\* Գոհանամ զքէն, բարեգութ, այն  
 ինչ զարթուցեալ անձկութեամբ սիրոյ  
 քո յիշատակի: - Ն. ԿԵ. ԳԲ:

\* Պարծանք գորութեանց մերոց՝ դու-  
 ես, Տէր, և ի կամս քո բարձր եղիցի  
 եղջեր մեր: - Սող. ԶԸ. 16:

\* Օրհնեա, անձն իմ, զՏէր, և ամե-  
 նայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա:  
 Օրհնեա, անձն իմ, զՏէր, և մի մտաւ-  
 նար զամենայն անբն նորա: Ո քաւէ  
 զմեզս քո. բժշկէ զամենայն հիւանդու-  
 թիւնս քո: Ո վերկէ յապականութենէ  
 զկեանս քո. պսակէ զքեզ ողորմու-  
 թեամբ և զթութեամբ: Ո ընու ի բա-  
 րութենէ զցանկութիւն քո. նորոգեսցի  
 որպէս արժւոյ մանկութիւն քո: ... Օրհ-  
 նեցէք զՏէր՝ ամենայն դորձք նորա. ընդ  
 ամենայն տեղիս է տէրութիւն նորա.  
 Օրհնեա, անձն իմ, զՏէր: - Ն. ՃԲ:

\* Օրհնեցից զՏէր է կեանս իմ. ոտդ մոս ասացից Աստուծոյ իմոյ՝ մինչև եմ ես : Քաղցր եղիցի նմա օրհնութիւն իմ, և ես ուրախ եղեցի ի Տէր : — Ն. ճԳ. 55-4 :

\* Այս օր է զոր արար Տէր, եկայք, ինծասցուք և ուրախ եղիցուք ի սմա : — Ն. ճԺԿ. 2 :

\* Որպէս աչք ծառայի ի ձեռն ստեան իւրոյ. որպէս աչք ազախնոյ ի ձեռն տիկնոջ իւրոյ, այնպէս են աչք մեր առ քեզ, Տէր Աստուած մեր : — Ն. ճԻԲ. 25 :

\* Ձեք աղէտք դժնդակազոյն քան ըզւինեւն ընդ Աստուծոյ, որով միայն մարթ է լինել երջանիկ : — Օգոստ :

\* Սկիզբն ամենայնի և կատարած անվախճան և ամեներջանիկ՝ Սէր է : — ԱյԷ :

\* Չհետ երթայք սիրոյ : — Ա. ԿԳԷԲ :

\* Գիտութիւն առաջնորդէ, այլ սէր հասուցանէ : — Գիտութիւն հարարացուցանէ, այլ Սէր շինէ : — ԱյԷ :

\* Եթէ ունիցիմ զմարդարէութիւն և գիտիցեմ զսորհուրդս ամենայն, և զասմենայն գիտութիւն. և եթէ ունիցիմ

զամենայն հաւատո՞ մինչև զԼէրինս փոփոխելոյ, և Սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ :

Եւ եթէ չամբիցեմ զամենայն ինչն իմ՝ աղքատաց, և մասնիցեմ զմարմինս իմ յայրումն, և Սէր ոչ ունիցիմ՝ ոչինչ օգտիմ : — Եթէ զԼեզուս մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց, և Սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրև զպղինձ՝ որ հնչէ, կամ իբրև զծնծղայս՝ որ զօղանջնն :

\* Սէր երկայնամիտ է, քաղցրանայ. Սէր՝ ոչ նախանձի, ոչ ամբարհաւածէ, ոչ հարարանայ, ոչ յանգզնի. ոչ խընդրէ զիւր, ոչ գրգռի, ոչ խորհի զչար. ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն : — ( Սէր ) Ամենայնի տեէ, ամենայնի հաւատայ, ամենևին յուսայ, ամենայնի համբերէ : — Սէր ոչ երբեք անկանի : Եթէ մարգարեութիւնք են՝ խափանեսցին, եթէ լեզուք՝ լուեսցեն, եթէ գիտութիւն՝ խափանեսցի. քանզի փոքր ի շատէ զխտմք, և փոքր ի շատէ մարգարեանամք. այլ յորժամ եկեսցէ կատարումն ( թագաւ

ւորու[թիւն սիրոյ], յայնժամ փոքր ի շատէս խափանեսցի:.. Այժմ տեսանեմք իբրև ընդ հայելի՝ օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման. այժմ խելամուտ եմ փոքր ի շատէս, այլ յայնժամ դիտացից որպէս և նայն ծանեաւ զիս: Բայց արդ մնան հաւատք, յոյս, սէր. սոքա երեքեան, և մեծ քան զսոսա Սէր է: - Ն. Ժ. Գ:

\* Սէր՝ ոչ պարտի անցանել, վասն զի մնացական է: - Գր. Արշար:

\* Սէր յԱստուծոյ ծնեալ է, և չիք նմա հանգիստ՝ բայց միայն յԱստուած: - Ն. Դ. Գ. Ե:

Սէր միայն թեթեւացուցանէ զամենայն ծանրաբեռն, և կրէ հաւասարացէս զամենայն անհաւասար: - Ն:

\* Սէր՝ ձկտի առաւել քան զկար իւր, և զամենայն հնարաւոր համարի:.. Սէր՝ ամենայնի բաւական է, և ձեռներէց ի կատարումն: - Ն:

\* Ուր և խնդրէ ոք զանձն՝ գթէ ի սիրոյ: - Ն:

\* Աստուած իմ, սէր իմ, դու իմ բուրովին, և ես՝ քո բնաւին: - Ն:

\* Աստուածասէրն՝ առ Աստուած դընասցէ: - Բարեւ:

\* Սիրելին՝ իմ՝ ինձ, և ես նմա: - Երբ:

\* Զարթուջիք զսէրն (Աստուծոյ) մինչև կամեսցի: - Ն:

Ժամ է զարթնուլ ի քնոյ, և առնուլ զսիրտս մեր ի վերայ բազկաց մերոց՝ առ Աստուած յերկինս: - Զ. Ժ. Ե:

\* Սիրելին (Աստուած) ի սենեակս մեր: Երգեսցուք զսէրն. երգեսցուք և ուրախ լիցուք: - Երբ. Թ. 3:

\* Ոչ այնքան յուսոյն հանգուցիւ՝ որքան սիրոյն կապանօք բերիմ: - Նարեհ:

\* Ոչ ի տուրան՝ այլ ի տուողն յաւետ կարօտիմ. ոչ փառքն են ինձ անձկալի, այլ փառաւորեալն համբուրելի. ոչ կենացն փափագանօք՝ այլ կենարարին յիշատական միշտ ձենձերիմ. ոչ վայելիցն տարփանօք հեծեմ, այլ հանդերձողին տենչանօք՝ յերկկամանց աստի կականիմ: Ոչ զհանգիստն խնդրեմ,

այլ զհանգուցչին զերեսս աղաչեմ. ոչ հարսնարանին խնճոյիւք՝ այլ փեսային անձկութեամբ մաշխմ: - Ն:

\* Ծորումն անապական սիրոյ քո՝ հեղացի (Է հոգիս իմ, Տէր): - Եւ մի երբեք լիցի հեռացեալ յանձկութենէ սրտի սիրոյ սենեկիս: - Ն. ԻՆ. ԼԾ:

\* Ակամայիցն բռնադատելոց՝ ոչ է կատարեալ սէր: - Ն. ԲԷ. ԻԷ:

\* Սահմանան սիրոյ՝ զպարտեացն արմատ կրճատեաց (Աստուած): - Ն. Կ:

\* Իբրև ի քրայս ընտրութեան փութոյ քո սիրոյ՝ հանապազ մեռանիմ, և ոչ երբեք պարզիմ. միշտ խառնիմ զուգիւ, և ոչ ևս միանամ: - Ն. ԿԹ:

\* Եղիցի սղորմութիւն Ստեղծողիդ՝ ընդ իս, և շունչ սղոյոյս իմ ընդ քեզ անբաժանօրէն կատարմիացեալ ի մի: - Ն:

\* Անձկութեան փափաղ յարախորժելի... Ի սիրոյ հաւանութենէ՝ աստուածապէս ի մէջ պարարիս: - Ն. ՂԳ:

\* Չիք ինչ հաւոր՝ ուր սէր Հօր է, և ոչ այն ինչ որ ցաւեցուցանէ՝ ուր փառքն փրկաստի են: - Մաշտոց ԿԻՂ:

\* Սէր համբերող է. սիրէ զլուսթիւն, սիրէ զխոնարհս, սիրէ զնուաստս, սիրէ զմաստունս:.. Սէր՝ յանարգութեան անդ իւրում՝ յենու ի միտս իւր և համբերէ. աղմբկի, և լուռ և ցած է:.. Ոչ հոգոյ զաւուրց, ոչ աղերսի զամաց:.. Սէր տեսանէ զանձն իւր, և գիտէ զչափ կարգի իւրոյ:.. Սիրէ զմահնայն մարդ, և սիրելի է ամենայն մարդոյ:.. Հանէ և զնէ զբարիս:.. Սէր լոյս, սէր աշ, սէր՝ ակն բարեաց:.. տիպ ամենայնի: - Սէր թեւակոխի ընդ իմաստութեան և ցանկալի են շահք գնացից իւրոց:.. Որ ստանայ զսէր՝ երանի է անձին նորա, զինովս և կատարին սլաուդքն զգուակիք: - ԶԳԾ:

\* Լուծ թիթե (Սէր), ընդ որով աւմենայն ինչ կքի: - Ն. Կ:

\* Որ սիրէ՝ ոչ ճնշի: - Ս. Լ:

\* Ոչ որ զմարմին մարդոյ և զձայն ունիցի՝ մարդ իցէ, այլ որ զհոգին Աստուծոյ և զսէր ունիցի՝ նա է մարդ:

Որ սէր իցէ՝ ամենայն չարիք հաւա-

ծականք: . . Յորժամ սէրն ի միջի իցէ՝ ոչ յինչս խնայեմք և ոչ յանձինս: — Ուրի:

\* Մանկունք՝ որ ի տղայական հասակի էին, որք զձայն ամպոյ և կամ զհոտանս ջրոյ յորժամ լսէին՝ զարհուրէին, և ի գիրկս մարցն խուճապէին, այնչափ ի սէրն Աստուծոյ վառեալք՝ որք զսպառնալիս թաղաւորացն արհամարհեցին: . . Յորժամ մարմինքն վիրաւորեալ վիրօքքն, և սիրտն տրտմեալ և հոգին զարհուրեալ, կային ի համբերութեան . . . փորձութիւնքն ի ստանայլէ իբրև զամպ ի վերուստ որոտային, կամ չարչարանք մարմնոյ՝ որ իբրև զալիս ծովուց՝ զմեօք անցանեն . . . և այս ամենայն անցեալ լինէր, և ժամանէին ի տեղի սպանմանն: Այսպէս ապականեցին սուրբքն ամենայն զմարմնաւոր կեանս իւրեանց, և ընկալան զհոգևորն և զանապական . . . զի ուսան ի Քրիստոսէ, թէ Ուր են եմ՝ անդ և պաշտօնեայն իմ եղիցի: — Յայսմ:

\* Առողջացեալք սիրով Հոգւոյն՝ յառաքինութեան ասպարէզն նահատակես

ցուք, ընդդէմ քնասակարացն զուղղութեան վարսն: — Գր. Լուս:

\* Նա միայն գիտէ զչնորհա Հոգւոյն՝ որում աղբին: — Ն:

\* Ի նեղութեան և յանդորրու՝ անքակ մեալ ի սէրն որ առ Աստուծ է, ամենայն սրբութեամբ հոգւով և մարմնով, ասեմ միշտ: — Ն:

\* Սէր է կենդանի երանութեամբ լրցեալ: — Սէր՝ աղբիւր է ամենայն բարեաց՝ որ արբուցանէ զսուրբ անձինս, և գրաւական ամենայն երանութեանցն, և մեծութեան պարգևացն Աստուծոյ բաշխող: — Սէր սուրբ՝ հոգւոյ և մարմնոյ անեղծ ստացուած է: — Սէր՝ աւետիօք կենդանի յուսոյն՝ սփոփիչ է նեղութեան և վշտաց, և լուծիչ ամենայն զժնդակութեանց ի վերայ եկեւոց, որ զինուորին ընդդէմ առաքինութեան հանդիսից: — Սէր սուրբ՝ բանալի է զբրան կենաց՝ որ զկեանսն բաշխէ: . . Ամենայն արուեստք արդարութեան՝ սիրով յարդարին: — Հաւանութիւն հա

ւատոց և սուրբ սիրոյն՝ յոր կողմ յոր-  
 դորի, զամենայն հաւանեալն ի Քրիս-  
 տոս՝ ժողովէ. և է նա նաւահանգիստ  
 մեր: — Զյիշատակ սրբութեան սիրոյն՝  
 որպէս խորիխ մեղու ունել ի քիմս  
 բերանոյ իւրոյ, զի նա է որ քաղցրա-  
 ցուցանէ զգառնութիւն չարին: — Ն:

\* Ամենայն արարածք ի ներքոյ զօրու-  
 թեան (Սատուծոյ) կախեալ կան, բայց  
 զսիրելիս իւր և զկամարարս՝ ի ներքոյ  
 վարագուրի խնամոց սիրոյն պահէ յա-  
 մենայն վտանգից: — Ն:

\* Վասն այսորիկ յաճախագոյն ա-  
 սեմ զբանս սիրոյն, վասն զի այս է բա-  
 րի և ընդունելի Սատուծոյ, և նոյն ինքն  
 հրամանք նորին: — Ն:

\* Ոչ որ զսիրելի ունի՝ երջանիկ է, այլ  
 որ զճամբիտ սիրելին: — Օհոսոս:

\* Սերոյ՝ իւր ինչ ոչ գոյ, բայց յԱս-  
 տուծոյ. զի ինքն է և Սատուծո: — Եւոգր:

\* Ամենայն տեսակք առաքինութեանց  
 վասն այնորիկ լինին, որպէս զի առ-  
 սերն Սատուծոյ նորք ճանատարն ա-

խայուք. և Սիրոյն եզր կամ սահման՝  
 ոչ է. . . որքան ձկախ ոք՝ այնքան կա-  
 ռօտ փափագանայն աճէ: Իսկ սր համա-  
 ըի զինքն յեզր սիրոյն հասեալ, վասն  
 այսորիկ կարծէ՝ զի ոչ սիրէ: Կոպ թէ  
 ոչ՝ ամենայն սիրողի սիրոյ վախճան՝ է  
 տեսանելն զսիրելին. և զմերս սիրե-  
 լոյն որքանն՝ այժմ անկար է փափագո-  
 զացս ակասնել. ուստի միշտ անլախ-  
 ճան փափագն աճէ, մինչև առ նա հա-  
 սանէ. թողում ասել՝ թէ և ոչ յայն-  
 ժամ դադարէ: — Լոբբ:

\* Ամենայնի մարթի գիւրաւ լօախ-  
 տել, և ոչ այնմ լանջաց (Ջանասիրաց)  
 վատթարութիւն ինչ լինել: Ոքի յու-  
 զիւղն, և ի սրտի՝ սեր է: — Ոհ. Մոբ. Խն:

\* Կատարեալ սիրողին՝ նոյն են կամք  
 և սիրտ ընդ սիրեցելոյն: — Խոսոս:

\* Հաճոյագոյն է յաչս Սատուծոյ՝  
 դործ փորձ՝ մեծաւ սիրով կատարեալ,  
 քան դործ մեծ՝ սակաւ սիրով: — Ն:

\* Ճմարիտ մեծ նա է՝ որոյ մեծ է  
 Սեր: — Ն:



\* Հ'ւր (Տէր) զսիրա իմ՝ քաղցր սիրոյ հարուածովք, զի և ես արժանի եղեց յասեւ, խոցոտեալ սիրով եմ ես : — Կիրակի . . Ս. Ե. Բ. :

\* Գեղեցիկէ իմ, աղանիկ իմ . — Ընդ ամենայն ոգւոյ՝ որ արժանի նմա (Տեառն) իցէ խօսելոյ, են բանքս այս : Զինչ քան զայսպիսի բանս հեշտական կայցէ : — Բար . . Մ . . :

\* Յաճախ սիրեմք (յարարածոց) զոր ջունիմքս, կամ զոր չկարեմքս ունեւ միտ . այլ առ Աստուած՝ ունիմք զմեծ զայս շնորհ, զի առանց ստանալոյ կարեմք սիրել զնա . և ընդ սիրելն՝ ստանամք զնոյն ինքն : — Պատիւ . . :

\* Արդարեւ մեծ է սէր՝ եթէ ի սկիզբն իւր անդր վերադարձցի : — Ն :

\* Եթէ զԱստուած սիրիցես՝ անմահ է դու թն, հանազաղ նորոգի սէրն, միշտ բորբոքի անձուկն . ոչ ծերանայ, ոչ հնանայ : — Ո . . Բ . . Ե . . Բ . . :

\* Սէրն աստուածային և յանհնարս հնարի, և ժախ յաղազս վրկութեան, և

չանայ ընդ նեղ և ընդ նուրբ ծերպս մըտանել, առ ի շահ և յօգուտ լսողաց : — Մանրակ . Թ . :

\* Թեպէտ և մեծ է վայելութիւն կուսանաց, բայց առ սիր : պայծառութեանն՝ նուաղին ամենայն լուսաւորութիւնք առաքինութեան, որպէս ի ճառագայթից արեգական՝ ծնանին ամենայն պայծառութիւնք աստեղաց : — Ն . Ժ . Ա . :

Սէր՝ աղ համեմիչ է ամենայն առաքինութեան . և ուր սէր ոչ մտանէ՝ ապականի, և արտաքս ընկինուն յարքայութենէն : — Ն :

\* Հարկ է սիրողին անընչանալ . Սէր և ինչք՝ ի միում անձին ոչ բնակին, զի սէր զինչս թօթափէ կարօտեւոցն յօգնականութիւն : — Ն :

\* Աստուած՝ սիրովն իւրով նման մարդկան եղև, և եցոյց՝ թէ մարդիկ իւրեանց սիրովն՝ նման Աստուծոյ լինելոց են : — Ն . Ի . Ե . :

\* Երկբայութիւն և սէր ի միասին ոչ բնակէ : — Ն :

\* Զինչ խանդաղատական քան զսէրն՝ ազատ լինել յամենայն խոռոչութենէ, և զսատուածային հաճոյսն կատարել — Ն՛:

\* Ըստ որում և անեղ բնութիւն աստուածութեան՝ անքննելի է, այսպէս և բնութիւն սիրոյն: — Որ խնդրեն զնա՝ մերձ է ի նոսա աստուածապէս — Ն՛:

\* Գոյ՞ հնար ումէք իսկապէս սիրոյն Աստուծոյ հասանել: — Գոյ հնար, և հաւատամ. թէպէտ և ես իսկ անճաշակ եմ շնորհացս այսոցիկ և քաղցրութեան, և զրկեալ ի սիրոյն Աստուծոյ, սակս իմոյ տարտամութեանս և հեղձութեանս: — Սարգիս՛:

\* Զսէրն Աստուծոյ՝ ստորադրեցոցոր մեղ կեանս և յոյս և խնդութիւն և արքայութիւն և անճառ բարիք, և սլակ սլարձանաց: — Ն՛:

\* Է՛ և սիրոյն կեանք:.. կեանք է և սիրոյն: — Ն՛:

\* Առանց սիրոյ՝ ամենայն ինչ ընդ վայր է և ի զուր: — Ն՛:

\* Սերելին ասել՝ զճամակամութիւն

նչանակէ. զի ուր սէր է՝ չիք բաժանումս կամաց: — Շարհ. Մարթի:

\* Երանի որ քաղցեալ է սիրոյն Աստուծոյ, զի արբցէ զանճառ ուրախութեանցն զմայլումս, աստ մասնաւորաբար, և ի հանդերձեալսն՝ կատարեալապէս: — Ն՛:

\* Սէր՝ աղբիւր հրոյ է, և որչափ բըղխեսցէ՝ այնչափ ստիպէ զծարաւին: — Սէր հաստատութիւն հրեշտակաց. Սէր՝ ուղղութիւն յապա յաւիտենին: — Յահ. կլէմէս:

\* Ի սիրոյ՝ որ մեծ է քան զամենայն լաութիւնս և քան զմարտիրոսութիւն իսկ, եթէ ի բաց հանցես զերկայնմտութիւն՝ նուազի և ոչ իմիք ազդէ: — կիլր:

\* Որչափ քննէ ոք զանօրէնութեան էտրհուրդսն՝ այնչափ անեղր առ մեզ զԱստուծոյ սէրն տեսանէ: — Լուիս:

\* Յերկիւղին ստիպելոյ՝ մարմինս ըզպարանոցն խոնարհեցուցանէ, և միտքն ոչ. մարմինս գոլէ, և միտքն անխժանէ, իսկ սէրն՝ զմիտս յափշտակէ, և ընդ նմին զմարմինս: — Ն. Սարգիս. ԻԱ:

\* Աւաքեալ՝ կատարումն զսէրն ա-  
սէ . . և զընտուծիւնն՝ ընդ նմին բերէ : .  
Նոյն և Հաբքն կրանելիք՝ մինչև ցայս  
կէս ընթացան , և զբոլ մեզ ուսու-  
ցին : — Ն . ԻԵ :

\* Ծփեւոյ հոգւոյն յերկիւղէն՝ նաւա-  
հանգիստ սէրն է : — Ն :

\* Ամենայն աւաքինուծեան վախ-  
ճան՝ սէրն է որ առ Աստուած : . . և թէ  
այսմ արտաքոյ եմք՝ ի նանիր է աշխա-  
տուծիւնն . և թէ յայս ժամանեմք՝ զվ-  
րումն դտաք : — Յորժամ փափաքեմք՝ և  
հասանեմք : — Ն :

\* Անչափ՝ միայն Աստուծոյ սէրն է և  
աւատ . ապա թէ ոչ՝ եղականացս ամե-  
նայնի չափ կայ : — Ն . ԻԹ :

\* Ո՛վ , թէ սրբան սաստիկ ունի ըզ-  
բորբորումն՝ արկեալ ի Տեառնէ հրոյն  
յերկիր : — Ն . ԿԱ :

\* Յորժամ սիրելի լսեմք՝ մի հարեան-  
ցի անոցուք ընդ բանս , այլ պարտակե-  
ցուք և կրեւ զսիրելուծիւնն : — Ն . ԶԳ :

\* Բնութիւնս սիրէ զսէրն , և օրէնքն՝  
զնոյն ուսուցանելովն՝ օգնէ : — Ն . ԶԷ :

\* Օրհնութիւնն՝ սիրոյ է պտուղ . զի  
ոչ զուք կարեմք օրհնել՝ զոր ոչ սիրեմք .  
և սէրն իւրովի յորդորի սիրել զսիրե-  
ցեալն : — Ն . ԴԵ :

Գոհանալն՝ նմա պատշաճի՝ որ ըզ-  
հարադատութիւն սիրոյն ի մէջ երկեղին  
և ճգնութեանն ծաղկեցոյց : Սրբ յետ  
վաստակոյն՝ հանգիստ , յետ երկեղին՝  
սէր , յետ ողբոյն՝ գոհութիւն : . . Որ  
զայն ոչ սերմանէ՝ զայս ոչ կարէ հնձել .  
որ այնու ոչ բժշկէ զաչս մտացն , յայս  
լուսոյս սչ կարէ տեսնել . որ լայ ոչ  
անկար է նմա ցնծալ . որ մաղթէ ոչ՝ ան-  
կար է նմա օրհնել . որ զարհուրի ոչ՝ ան-  
կար է նմա սիրել : — Ն . ԴԹ :

\* Ձիք այլ ինչ որ զտուփումն սիրոյն  
Աստուծոյ ի մեղ աճեցուցանէ՝ եթէ ոչ  
վբանչեղեաց նորին քննութիւն . զի թէ  
միայն զպատուիրանս կատարեմք , և ոչ  
զայտասիկ որոնեմք , ոչ երբեք յառա-  
ջանայ անձնիշխան միտքս՝ յանախտու-  
ծիւն սիրոյն : — Ն . ԾԺԸ :

\* Քաղցրութիւնն՝ ընդարձակութիւն



\* Սէր սիրողին՝ տայ առաւել քան զոր խնդրեմք և իմանամք: . . Զմարդա- սիրութեան դարացի փակ՝ յոյժ ի բաց մղէ, և զյորդութիւն սիրոյն առաւելութեամբ ի մեզ ծառայէ: — Ն:

\* Հեռի են ի միմեանց սիրելն և դործելն. Սէրն անաշխատ է, և դործն՝ աշխատութեամբ: Սէրն ոչ կարօտանայ ժամանակի, և դործն կատարի. բայց նախ է դասիւ սէրն՝ քան զդործելն: Վասն սիրոյն՝ լինիմք ի դործն ձեռնամուխ: ասլա թէ այս ոչ լինի՝ որ հիմն է, դործն՝ ի նանիր աշխատութիւն է: Բազում անգամ փրկութիւն կատարեալանց դործոյ, բայց դործն ոչ առանց սիրոյն. որպէս և կնոջն՝ թողաւ մեղքն, զի յոյժ սիրեաց. և Սիմոնին՝ որ դործով մեծարէր ի ճաշիթողիչն, ոչ այնպէս: Սուր դիւրին դործ՝ սէրն առ Աստուած, և համարձակ առ նոյն: — Լ. Բ. Ս. Գ. Ը. Թ. Ը. Թ. Ը.

\* Առ ի տնկել զսէրն Աստուծոյ ի սիրտս մեր՝ պարտ է հաշածել անախ զերկիր: — Յր. Պործ:

\* Աստուած իմ, տուր ինձ սիրել ըզքեզ, և ասլա արտ ընդ իս՝ զինչ և կատարես: — Լ. Բ. Ս. Գ. Ը. Թ. Ը.

\* Սուրբ մաքրութիւն սրտի՝ տեսանէ Վաստուած, սյլ ճշմարիտ եղանակն ճշակէ զնա: — Ե. Բ. Ս. Գ. Ը. Թ. Ը.

\* Սէր՝ է ուղղեալ կամք՝ ի յամենայն երկրաւորացս յետս դարձեալ, և շողկապեալ յԱստուած՝ անբաժանաբար. երկացեալ հրով Հոգւոյն Սրբոյ, յորմէ և առ ո երթայ վառեալ, հեռի յամենայն պղտեղութենէ և յապականութենէ մեղաց: Ոչ զիտէ զիտիոխուսն. բարձրացեալ ի վեր քան զամենայն՝ որ մարմնաւորաբար սիրեցեալ լինին. զօրաւորացն և անյաղթահարելի յամենայնի. ծայր ամենայն բարեգործութեան. փրկութիւն վարուց. սոլառուածք երկնային հրամանացն. մահ մեղաց. կեանք առաքինութեան. զօրութիւն պատերազմուղաց. սրբոց մտաց զէն. վարձ կատարելոցն. առանց որոյ ոչ ոք հաճոյանայ Աստուծոյ, որով ոչ ոք կարէ մեղանչել:

պողաւէտ ի յապաշխարողքն, ուրախութեամբ ի յառաջատեալքն, փառաւորեալ ի ժողովալողքն, յաղթութիւնի մարտիրոսքն, գործաւոր ի հաւատացեալքն, յորմէ ամենայն բարի կայանայ: — Պ. Ար. Գ.:

\* Սէր՝ Աստուած է. իսկ որ զսա տեսանել և պատմել ջանայ՝ կոյր ի խորս ծովու աւազ թուէ: Սէր՝ ի գործողութեան իւրոյ՝ նմանութիւն Աստուծոյ է, որչափ ի մարդկանէ կարողութիւն է. իսկ գործովք՝ արբեցութիւն բարի է հոգւոյ, և ինքնութեամբ իւրով՝ աղբիւր հաւատոյ է, անզուսգբ երկայնմտութեան և ծով խոնարհութեան: — Սէր ձգումն է հաւաստի ամենայն հակառակ իմացուածոց. վասն զի սէր ոչ իմանայ զչար: — Սէր և անախտութիւն և որդիութիւն Աստուծոյ՝ սեռիւ միայն բաժանին, և բնութեամբ մի են. որպէս հուր և բոց և լոյս. որպէս սոքա ի մի ընթանան գործնոյնպէս և զնոսա իմասցիս: — Ըստ չափոյ պահասման սիրոյ՝ յաւելու երկիւղ. վասն զի ուր երկիւղ

ոչ գոյ՝ կամ լցեալ է սիրով, կամ մեռեալ է հոգւով:.. Երանի որ առ Տէր այնպիսի ստացաւ տուփութիւն, որպէս ունի տուփոյն չարեաց՝ առ տուփեկին իւր:.. Երանի որ այնպէս կարօտի Տեառն՝ որպէս քաղցեալն կարօտի առ հաց:.. Երանեալ որ փութայ հաճել ըզՏէր, որպէս հաճեն սիրելիք զմիմեանս: — Ոչ այնպէս կարօտի մանուկ մատաղ՝ ստեանց մօր իւրոյ, որպէս որդի սիրոյն՝ բաղձայ Տեառն: — Որ ոք ունի առ սյլ ումեք սէր և տուփումն՝ նա միշտ զտեսակ նորա կերպարանէ ի մտի, և զներքին մարդն քաղցրացնուցանէ տեսեամբն. մինչ զի և ի քուն՝ ոչ ջրուի սէր ի նմանէ. այսպէս գիտէ լինել ի վերայ սիրոյ մարմնաւոր և երկրաւոր: — Խոցեալ ոմն նուաւ՝ և ասէր սքանչեւապէս, եթէ Ես ննջեմ բնութեամբ մարմնոյս, և միտս իմ հսկէ ի բազմութեանէ սիրոյ նորա:.. Եթէ դեմք սիրելւոյն յայտնեալ՝ ամենայնիւ փոխէ և ուրախ և անտխոր գործէ զմեզ, զինչ արասցեն երեսք Տեառ

ուրն՝ որ ի սրբեալ հոգի անտեսանե-  
լապէս եկեալ գործակցեացի : — Յոր-  
ժամ մարդ ամենեւեմբ խառնեսցի ընդ  
սէրն Աստուծոյ՝ յայնժամ և արտաքոյ  
տեսակ մարմնոյն՝ որպէս հայելի ինչ ըզ-  
հոգւոյն ցուցանէ զպայծառութիւնն : —  
Յ՝ԼՅ . Կլե՛մոս :

\* Ասա մեզ, ո՛վ գեղեցիկէ յառաքի-  
նութիւնս, ո՛ր արածես զոչխարս քո .  
ո՛ր զաղարեցուցանես ի մէջօրէի : Լու-  
սաւորեա զմեզ . արբո զմեզ . առաջնոր-  
դեա մեզ . հան զմեզ առ քեզ , վասն զի  
ելանել կարօտիմք առ քեզ . վասն զի  
դու տիրես ամենայնի : Իսկ այժմ զհոգի  
իմ դու բորբոքեցեր , և ոչ կարեմ յանձն  
առնուլ զբոց քո . վասն այնորիկ միշտ  
օրհնեմք զքեզ : — Դու տիրես զօրու-  
թեանց ծովու . զխոտովութիւն ալեաց  
նորա՝ դու ցածուցեալ սպանանես . դու  
խոնարհեցուցանես որպէս զվիրաւորս՝  
զամբարտաւան խորհուրդս . և զօրու-  
թեամբ բազկի քո ցրուեսցես զթշնամիս  
քո , և անպատերազմելի զտոբողոն քո

գործեսցես : . . . Ասա՛ որպէս յերկնից՝  
երևեսցաւ ինձ տիրուհին առաքինու-  
թեանց , և յունկն հոգւոյ իմոյ խորհր-  
դաբանելով , ասէ . Այո , սիրելի , եթէ  
ոչ արձակեալ մեկնիս ի թանձրութենէ  
մարմնոյ , զտեպութիւն իմ՝ որպէս և է՝  
տեսանել ոչ կարես , ո՛վ տուիող իմ :  
Իսկ զսանդղոցն այնորիկ հետեւեւոյն Յա-  
կոբայ զաստիճանս՝ զկաղմածան իմա-  
նալ , զբռաքինութեանցն զկարգ և զշար ,  
պէս՝ և ուսանիս . իսկ ես ի գլուխս նո-  
ցա ամենայնի բազմեալ եմ . որպէս ասէ  
մեծ սպասաւոր խորհրդոց իմոց՝ Պօղոս ,  
եթէ Երեքեանն այտօքիկ հաստատեալ  
են , Հաւատ , Յոյս և Սէր , և մեծ քան  
զամենեսեան Սէր է :

Ելցուք ի վեր , ելցուք ընդ ելս աս-  
տիճանաց յօժարութեամբ ի սիրտս մեր ,  
ո՛վ եղբարք , լսելով ստողին . Եկայք , ել-  
ցուք ի լեառն Տեառն և ի տուն Աստու-  
ծոյ մերոյ՝ հաստատողի զսիրտս մեր , և  
ի վերայ բարձանց կացուցանողի , յաղ-  
թեւ օրհնութեամբ նորա : . . Վասն զի

Աստուած սէր է, և Սէր՝ Աստուած է. որում՝ գովութիւն ամենայն, որոյ կա-  
րողութիւն, որոյ զօրութիւն. որ է ա-  
մենայն բարեաց պատճառ. որ այժմ էր,  
և է և եղիցի, անսահմանելի յաւի-  
տեանս, լոյս. ամէն: — Ն:

\* Սէր ամենայն ուրեք խօսի... Որ  
ոչն սիրէ՝ բարբարոս համարի զլեզու  
սիրոյ: — Բեռնար:

\* Որ սիրէն՝ սիրէ, և այլ ինչ ոչ գի-  
տէ... Սիրեմ, քանզի սիրեմ. սիրեմ՝ զի  
սիրեցից: Սիրեւոյն՝ չեք երկիւղ. երկի-  
ցեն՝ որք ոչն սիրեն: Ես որ սիրեմս՝ ոչ  
երկբայիմ սիրիլ, որպէս և ոչ ընդ սի-  
րեալ: — Ն:

Սէր՝ արդեւնք իւր, վարձք իւր...  
պտուղ իւր, վարուժ իւր: — Ն:

\* Յատկապէս՝ միայն սէր ունի զփա-  
կանս սրտի: — Սէր միայն է օրէնք սըր-  
տի: — Պսսի-է:

\* Սիրեցի. — Ոչ ամենայնի է ասելն՝  
Սիրեցի, այլ կարօտելոցն արդէն և ա-  
ռաւելեցիլոց քան զժառայութեանն եր-

կիւղ, և ի հոգւոյն լեալ որդեգրութիւն:  
— Բարսեղ:

\* Զինչ է այն առաջին բարին. — Մեր-  
ձաւորութիւն Աստուծոյ, և ի ձեռն սի-  
րոյ՝ առ նա հպեւն: — Ն:



Յ Ի Ս Ո Ի Ս



Տէր, կամիրք գՅխուս տեսանել: -  
Յ՝ 15. ԺԲ. 21:

\* Լերուք իմաստասէրք Աստուծոյ. ուսարուք գՅխուս՝ ի վարժարանի նորա: - Պատմիչ:

\* Արժան է ամենեցուն ուսանել զիմաստասիրութիւն. այսինքն է, ճանաչել և սիրել գՅխուս: - Յ՝ 15. Բ. 10:

\* Աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն. զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է Օծեալ Տէր: - Ղ՝ 1. Բ. 10:

\* Դու ես Բրիտանոսն՝ Որդի Աստուծոյ կենդանոյ: - Մ՝ Բ. ԺԶ. 16:

Դու ես Բրիտանոսն որդի Աստուծոյ, որ յաշխարհ դալոց էիր: - Յ՝ 15:

\* Ի սկզբանէ էր Բանն. և Բանն էր առ Աստուած. և Աստուած էր Բանն: . . Ամենայն ինչ նովաւ եղև: . . Նովաւ կեանք էր. և կեանքն՝ էր լոյս մարդկան: . . Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ՝ որ դալոց է յաշխարհ: . . Եւ Բանն մարմին եղև, և ընկեաց ի մեղ. և տեսաք զիսուս նորա: . . լի շնորհօք և ճշմարտութեամբ: - Յ՝ 15. Ս:

\* Մեծինն Որդի՝ որ է ի ծոց Հօր: - Ն: Ոչ ոք ել յերկինս՝ եթէ ոչ որ էջն յերկնից՝ Որդին մարդոց, որ էն յերկինս: - Ն. Գ. 15:

\* Տեսանէ (Յովհաննէս) զՅխուս՝ զի դայր առ նա, և ասէ. Ահա առիկ դառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեզս աշխարհի:

\* Դու ո՞վ ես: - Նախ, զի և խօսիմս խի ընդ ձեզ: - Ն. Ը. 25: - Ես եմ Առաջին և ես Յետին. և ես եմ կեանք, և ես նոյն՝ որ մեռայ, և եմ կենդանի. և ո՞նիմ զիսականս մահու և զըժոխոց: - Յ՝ 15. Ս. 17:

\* Ես և Հայր իմ մի եմք: — Յ՝ԼՅ. Ժ:

\* Դուք կոչէք զիս Աշորդապետ և Տէր, և բարուք առնէք, քան զի եմ իսկ: — Ն. ԺԳ. 15:

\* (ԱՅԼ) Ես եմ ի միջի ձերում իբրև սպասաւոր: — Ղ՝Կ. ԻԲ. 27:

\* Ես չեմ յայտ աշխարհէ: — Ելի է Հօրէ և եկի յաշխարհ. դարձեալ թողում զաշխարհ, և երթամ առ Հայր: — Յ՝ԼՅ. Ը. 25:

\* Ես եմ Յարութիւն և կեանք: — Ն՝

\* Ես կենդանի եմ, և դուք կենդանի լինելոց եք: — Ն. ԺԳ. 19:

\* Ես եմ Լոյս աշխարհի. որ դայ ըզկնի իմ՝ ընդ խաւար մի գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց: — Ես Լոյս յաշխարհ եկի, զի ամենայն որ հաւատայ յիս՝ ի խաւարի մի մնացէ: — Ն. ԺԲ:

\* Ես Յիսուս... Աստղ սոյժառ առ ուսեան, և Հոգի, և Փեսայն՝ որ դաւրցն եմ: — Յ՝Գ՛Կ. ԻԲ. 16:

\* Ես եմ Ճանապարհ և Ճշմարտութիւն և կեանք. ոչ ոք դայ առ Հայր, եթէ ոչ ինև: — Ն. ԺԳ. 5:

\* Ես եմ Գուռն ոչխարաց. ընդ իս թէ ոք մտանիցէ, կեցցէ. մտցէ և ելցէ, և ճարակ դացէ: — Ժ. 9:

Ես եմ Հովիւն քաջ. հովիւ քաջ գանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց:.. Ես եմ հովիւն քաջ. և ճանաչեմ զիման և ճանաչիմ յիմոցն... և զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց... և ձայնի իմում լուիցեն, և եղիցին մի հօտ և մի հովիւ... զօտարի գնեա ոչ երթիցեն, այլ փառ խիցեն ի նմանէ, զի ոչ ճանաչին ըզձայն օտարաց: — Ն. Ժ. 11-5:

\* Ես եմ Որթն ճմարիտ. և Հայր իմ մշակ է. ամենայն ուռ՝ որ յիս է և ոչ բերէ պտուղ, սրբէ զնա, զի առաւել ևս պտղաբեր լիցի:.. Ես եմ Որթ, և դուք ուռ. որ հաստատեալ է յիս՝ և ես ի նա, նա բերէ պտուղ յոյժ:.. Եթէ ոք ոչ է հաստատեալ յիս՝ եւ նա արտաքս իբրև զուռն, և ցամաքեցաւ. և ժողովին զնա և ի հուր արկանեն, և այրի:.. կացէք յիս, և ես ի ձեզ: — Ն. ԺԵ. 1-6:

\* Ես եմ Հացն կենաց. որ դայ սն

ին՝ ոչ քաղցիցէ, և որ հաւատայ յիս՝ ոչ երբէք ծարաւեսցի: . . . Զի հաց յԱստուծոյ է՝ որ իջանէ յերկնից, և կեանս տայ աշխարհի: — Տէր, յամենայն ժամ տուր մեզ զհացն զայն: — Ն. Զ. 54-7:

\* Ես՝ ծարաւեւոցն տամ յԱղբերէ ջրոյ կենաց ձրի: — Յայրն. ԻԲ: — Եթէ ոք ծարաւի իցէ՝ եկեսցէ առ իս և արբօցէ: Ար հաւատայ յիս, որպէս և ասեն գերք, գեաք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանութեան: — Յ. Է. Ի. 57:

Զի գէրն կատարեսցի, ասէ (Յեսուս). Ծարաւի եմ: — Ն. ԺԺ. 28. — Տուր ինձ ըմպել: — Ն. Գ. 7: — Եթէ գիտէիր դու զսարգեան Աստուծոյ, և ով է որ ասէք ցքեզ՝ թէ Տուր ինձ ըմպել, դու արդեօք խնդրէիր ի նմանէ, և տայր քեզ ջուր կենդանի: . . . Ար ըմպէ ի ջրոյն՝ զոր ևս տայ նմա, մի ծարաւեսցի յախտեան. այլ ջուրն զոր ևս տայ նրմա՝ եղիցի նմա աղբիւր ջրոյ բղխեսցելոյ ի կեանսն յախտենականս: — Տէր, տուր ինձ զջուրն զայն, զի մի ծարաւեսցից, և

մի եկից այսր ( յաղբիւր երկրաւոր ) հասնել ջուր: — Ն. Գ. 7. 10. 15:

\* Քրիստոս ի մարմնի. դողալով և խնդութեամբ խայտացէք. դողութեամբ՝ վասն մեղացն, և խնդութեամբ՝ վասն յուսոյն: — Գր. Ա. Կոթմաթաբոն:

\* Սկսաւ Յիսուս առնել և ուսուցասնել: — Գործք. Ա. 1:

\* Ռաբբի, ո՞ր են օթեկանք քո: — Եկայք և տեսէք: — Յ. Կ. Ա. 58: — Աղուեսսուց որջք գոն, և թռչնոց երկնից բոյնք. այլ Որդոյ մարդոյ՝ ոչ գոյ ուր գիցէ զգլուխ իւր: — Մարթ. Բ. 20:

\* Արդէ մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել, և զանձն իւր տալ փրկանս՝ փոխանակ բազմաց: — Մարթ. Բ. 20:

\* Իսկ ընդէր կամիցիս զանձնդ դնել, անսարտականդ մահու: — Գր. Լուս:

\* Ակն ունէի թէ ո՞ տրտմեսցի ընդ իս, և ոչ ոք էր. և մխիթարիչ ինձ ոք ոչ գտաւ: — Սաղ. ԿԲ. 25:

\* Ետուն ի կերակուր ինձ լեղի, և ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ: — Ն:

\* Եւ Յիսուս վաստակեալ է ճանապարհէն՝ նստէր է վերայ աղբերն : - Յովհ. Դ. 6 :

\* Ահաւասիկ սա՛ եկն վազս առնլով է վերայ Լերանց, խայտալով է վերայ բլրոց : - Երէ. Բ. 8 :

Երևեցան զնայք քո, Աստուած, զնայք Աստուծոյ թաղաւորին մերոյ սրբոյ : - Սաղ. ԿԵ. 25 :

\* Զայն եղբորորւոյ իմոյ բաղխէ է դրանն ( սրտից ) : - Բնաց ինձ, մերձաւոր իմ. զի գլուխ իմ լցաւ ցօղով, և վարսք իմ է շաղից գիշերայնոյ : - Ն. Ե. 2 : - Սիրելին է սենեակս մեր : - Ն. Թ. 5 :

\* Ես՛ որ զիսն սիրեն՛ սիրեմ : - Ա. ա. 1 :

\* Եկայք առ իս, ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ : - Առէք զլուծ իմ ձեզ, և ուսարուք յինէն՝ զի հեղ եմ և խոնարհ սքրտիւ. և գաջիք հանգիստ անձանց ձերոց, զի լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրօղի : - Մով. ԺԲ. 29. 30 :

\* Զի՛ Որ ոչ է ընդ իս՛ հակառակ իմ

է, և որ ոչ ժողովէ ընդ իս՛ ցրուէ : - Ն :

\* Ո՞վ է իմ մայր, կամ ո՞վ են իմ եղբարք. - Ահաւասիկ մայր իմ և եղբարք իմ : Որ առնիցէ զկամս Հօր իմոյ՝ որ յերկինսն է, նա է իմ եղբայր և քոյր և մայր : - Ն. 49-50 :

\* Ամէն ասեմ ձեզ, զի բազում մարգարէք և արդարք ցանկացան տեսանել՝ զոր տեսանէքէ, և ոչ տեսին. և լսել զոր լսէքէ՛ և ոչ լուան : - Ն. ԺԳ. 17 :

Ազրահամ՝ հայր ձեր՝ ցանկացաւ տեսանէլ զօր իմ. ետես և ուրախ եղև : - Յովհ. Ը. 56 :

\* Ամբարձին զաչս իւրեանց՝ և ոչ զոք տեսին, ըսցյ միայն զՅիսուս : - Մով. 1 :

\* Եկն Որդի մարդոյ՝ կեցուցանել ըզկորուսեալն : - Ն. ԺԸ. 11 :

\* Թոյլ տուք մանկուոցէ՛ դալ առ իս, և մի արգելուք զչոսս. զի այդպիսեացէ արքայութիւն երկնից : - Ն. ԺԹ :

\* Եկից և ես զինի քո, յոր վայր և երթիցես : - Մով. Ը. 19 :

\* Տէր, յով երթաս : - Ուր ենն եր-

Թամ՝ դու ոչ կարես դաւ այժմ՝ զինի  
 իմ. բայց ապա եկեսցես զինի իմ: — Ըն-  
 դէր ոչ կարիցես դաւ զինի քո. արդէն  
 զանձն իմ իսկ եղից ի վերայ քո: —  
 Չանձն քո գիցես ի վերայ իմ: — Յճ:

\* Ոչ գիտէք զինչ խնդրէք. կարէք  
 քննել զբաժակն՝ զոր ես քննելոց եմ,  
 կամ զմկրտութիւնն՝ զոր ես մկրտելոց  
 եմ՝ մկրտել: — Մարի: ԻՍ. 22:

\* Ինքն Յիսուս ոչ հաւատայր զանձն  
 նոցա. քանզի ինքն գիտէր զամենայն.  
 և զի ոչ էր պիտոյ, եթէ ոք վկայեսցէ  
 վասն մարդոյ. զի ինքն իսկ գիտէր՝ զինչ  
 կրէր ի մարդն: — Յճ. Բ. 24-3:

\* Լինէր (երբեմն) մորեկ մեծ հողմոյ,  
 և զալիսն ի նաւն զեղոյր, մինչ գրեթէ  
 լի իսկ լինել. եւ ինքն (Յիսուս) ննջեր  
 ի խելս նաւին, ի վերայ բարձի. . և զար-  
 թուցեալ սաստեաց հողմոցն և ծովուն.  
 ասէ. Դադարեա՛ս, կարկեաց: Եւ դադա-  
 րեաց հողմն, և եղև խաղաղութիւն  
 մեծ: — Մարի. Դ. 37:

\* Տալիթա՛ս, կուսի. Ալլիկ դու, քեզ

ասեմ, արի: Եւ վաղվաղակէ յարեաւ  
 աղջիկն և գնայր. . . և ասաց տալ նմա  
 ուտել: — Ն. Ե. 41. 45:

Մտեալ (Յիսուս) ի տուն, ոչ ու-  
 մեք կամէր յայտնել, և ոչ կարաց ծած-  
 կել: — Ն. Ե. 24:

\* Չամենայն ինչ բարուք դործեաց  
 Սա: — Ն. 57:

\* Եւ մինչդեռ ելանէին յերուսաղէմ  
 (ուր չարչարելոցն էր), երթայր Յիսուս  
 առաջի քան զնոսա. և զարմացեալ էին  
 որ զհեռն երթային, և երկնչէին: — Ն.  
 — Եմուտ յերուսաղէմ՝ ի տաճարն. և  
 հայեցաւ չորջ զամենեքումք. և զի էր  
 երեկոյացեալ ժամն՝ ել ի Բեթանիա: —  
 Ն. Ժ. 52: ԺՍ. 11:

\* Հանին զնա արտաքոյ քաղաքին. և  
 ածին զնա մինչև յարտեան լերինն՝ յո-  
 լոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր,  
 զահալէժ առնել զնա. և նա անցեալ  
 ընդ մէջ նոցա՝ գնայր: — Ղուկ. Դ. 29:

\* Իբրև մերձ եղև ի դուռն քաղաքին,  
 և ահա ելանէր մեռեալ մի, որդի միամօր

մօր իւրոյ . և նա էր այրի : . . Ետնս զնա  
Տէր , գլխացաւ ի նա , և ասէ , Մի՛ լար :  
Եւ մատուցեալ մերձեցաւ ի դադաղսն .  
և ասէ . Պատանի դու , քեզ ասեմ , ա-  
րի : Կանգնեցաւ և նստաւ մեռեալն , և  
սկսաւ խօսել : Եւ ետ զնա ցմայր իւր : -  
Ն . Ի . 11-3 :

\* Զայն եբարձ կին մի , և ասէ . Երանի՛  
է որովայնին՝ որ կրեացն զքեզ , և ըս-  
տեանցն՝ որ զիեցուցին զքեզ : Եւ նա ա-  
սէ . Նա՛ երանի այնոցիկ է՝ որ լսեն ըն-  
բանն Աստուծոյ և առնեն : - Ն . ԺԱ . 27-8 :

\* Եկեացեն առուքք ցանկանալոյ ձեզ  
մի յառուրցն Որդւոյ մարդոյ տեսանել  
և ոչ տեսանիցէք : - Ն . ԺԵ . 22 :

Առ մեզ ագիր (Տէր Յիսուս) , զի  
ընդ երեկս է , և տարածամեալ է օրս  
(կենաց) : - Ն . ԻԳ . 29 :

\* Ո՛չ իսկ և սիրտք մեր ճմլէին ի մեզ՝  
մինչ խօսէր զճանապարհայն . և ո՞րպէս  
բանայր մեզ զգիրս : - Ն :

\* Ասէ Մայրն նորա . Որ զինչ ասիցէ  
ձեզ (Յիսուս) արասլիք : - Յ . Կ . Բ . 5 :

Ասէ Մայրն ցՅիսուս . Գինի ոչ ու-  
նին (կարօտեալքն) : . . Ասէ Յիսուս .  
Լցէք զթակոյկսդ ջրով . և լցին զնոսա  
մինչև ի վեր . և . . . ճաշակեաց տաճարա-  
պետն զջուրն՝ զինի եղեալ : - Ն :

\* Ծովն ի սաստիկ հողմոյ շնչելոյ  
յուզէր . . . տեսանէին զՅիսուս՝ զի գնայր  
ի վերայ ծովուն . . . և նա ասէ ցնոսա .  
Ես եմ , մի երկնչիք : Եւ կամէին ընդու-  
նեւ զնա ի նաւն . և վաղվաղակի եհաս  
նաւն յերկիրն՝ յոր երթայինս - Ն . Զ . 16 :

\* Մարթա՛ իբրև լուաւ թէ Յիսուս  
գայ , ընդ առաջ գնաց նորա : . . . ( Ապա )  
կոչեաց զՄարթամ՝ գբոյր իւր լւելեայն ,  
և ասէ . Վարդապետն եկեալ է , և կոչէ  
զքեզ : Նա իբրև լուաւ , յարեաւ վաղ-  
վաղակի , և եկն առ նա . . . ետես զնա ,  
անկաւ առ ոտս նորա , և ասէ . Տէր , ե-  
թէ աստ էիր դիպնալ՝ ոչ էր մեռեալ  
եղբայրն իմ : Յիսուս՝ իբրև ետես զնա  
զի լայր , և որ ընդ նմայն էին՝ լային ,  
խառվեցաւ յոզի իւր իբրև զայրացեալ ,  
և ասէ . Ո՛ր եղիք զնա : Ասեն ցնա .

Տէր, եկ, և տես: Եւ արտասուեաց Յիսուս: — Ն. ԺԱ: — Ո՛վ դաւրևստ Յիսուսի. ո՛վ կոչմունք Յիսուսի. ո՛վ արտասուք Յիսուսի:

\* Արտասուօքն՝ զարտասուս եբարձ յամենայն աչաց: — Զառար. ԿԻԳ:

\* Ո՛վ երջանիկ կնոջն, որ բուռն հարեալ զտախցն Տեառն, զի յօղս թռչել կարասցէ: Զայս գոչեցին Մարթա և Մարիամ (Կալայ զնա և ոչ թողից): — Հեղոյս:

\* Ետես Մարիամ զՅիսուս. երկու երկունք գթութեան ստիպեցին զնա. յիշատակ մեռելոյն (Ղազարու), և տեսիլ կենդանի սիրելւոյն. ոչ ճշեաց ըստ աշխարհական կարգին, այլ յոյժ ցանկութեամբ եկեղ զարտասուսն առաջի ողորմածին. այնչափ աղիողորմ տեսեալ՝ մինչև դամենայն Հերբայեցիսն բարձրակական լացոյց: Ի նոյն միաբանութիւն և Տէր մեր հաւասարեաց. արտասուս առ արտասուս, և տրտմութիւն առ տրտմութիւն. համարեաց, եթէ՛ զայն

սուգ սգացաւ: . . . Ստորութիւն՝ զոր էարկ առ մարդիկ՝ արտասուօք, զնոյն փոխարէն սահանջեր առ վիժին՝ արտասուօք: — Մաթթէ:

\* Ասէին Հրեայքն, Տեսէք (զՅիսուս). ո՞րչափ սիրէր զնա (զբարեկամն իւր): . . . Ասէ Յիսուս. Ի բաց արարէք զվեմք: . . . Ի ձայն մեծ ազաղակեաց, և ասէ. Ղազարէ, արթ, եկ արտաքս: Եւ ել մեռեալն: — Ն:

\* Ասացի ես ձեզ՝ թէ երթամ և գամ առ ձեզ: . . . Զխաղաղութիւն թողում ձեզ. զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ՝ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ: Մի խոովեսցին սիրտք ձեր, և մի՛ զանդետեսցեն: — Ն. ԺԴ. 57:

\* Էին անդ կանայք բազումք, կային ի հեռաստանէ և հայէին, որք եկին ըզկնի Յիսուսի ի Գալիլէէ, սլաշտել ըզնա: . . . Եւ ահա սլատահեաց նոցա Յիսուս, և ասէ. Ո՛ղջ էք: . . . մի՛ երկնչէք. երթայք, ասացէք եղբարցն իմոց, զի երթիցեն ի Գալիլէա, և անդ տեսցեն զիս: — Մաթթ. ԻԵ. 55: ԻԸ. 19:

\* Յեղեալ է սէր Փրկչին, զկնի նորին բարձեալ զխաչ մարմնոյն ( Մագդաղեանացին ), հեռեկաց զկնի խաչեցելոյն, մինչև եգիտ զտեհնչալին. երազեաց քան զամենեսեան՝ էառ զփափագելին. յորդառատ եհեզ զարտասուն, և նորին աչօք ետես զյարութիւնն : — Գր. Ստանդ :

\* Էր երեկոյ է միաշաբաթուոյ աւուրն, և դրօք փակելուլք... եկն Յիսուս, և կաց է միջի նոցա, և ասէ ցնոսա. Ողջոյն ընդ ձեզ : Իբրև զայս ասաց, եցոյց նոցա զձեռս և զկողան իւր... Ապա ասէ ցթովմաս. Բէր զմատունս քո, և անրկ այսր. և տես զձեռս իմ. և բեր ըզձեռն քո, և մխես է կողս իմ. և մի վնիւր անհաւատ, այլ հաւատացեալ : — Տէր իմ և Աստուած իմ : — Յովհ. Ի. 19. 27 :

\* Սիմոն Յովնանու, Սիրեո զիս՝ առաւել քան զդոսա : — Այո՛, Տէր, և դու զիտես՝ զի սիրեմ զքեզ : — Արածեմ զդառննս իմ : — Ասէ ( Յիսուս ) եւ ըրցս անզամ. Սիրեո զիս : Տրամեցաւ Պետրոս՝ զի ասաց ցնա երեցս, թէ՛ Սի-

րեո զիս. և ասէ ցնա. Տէր, դու զամենայն դիտես, և դու իսկ զամենայն ճանաչես, և եթէ սիրեմ զքեզ : — Արածեմ զդառնս իմ : — Յովհ. ԻԱ. 15-8 :

\* Եհան ( Յիսուս զաշակերտան ) մինչև է Բեթանիա. ( յարահեռեղն Յիսուսի՝ հանապաղ և չարձրանայ ) . ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա... և ասէ. Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն՝ յերկինս և յերկրի. ( ոչ նոր ինչ վասն իմ, այլ վասն ձեր ) : Որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ ըզձեզ... Երթայք յաշխարհ ամենայն, և քարոզեցէք զաւետարանն՝ ամենայն արարածոց : — Ուսուցէք նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ : Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչև է կատարած աշխարհի : ( Անմեկին է Յիսուս է սիրողաց իւրոց, է կեանս և է մահու ) : Եւ եղև յօրհնելն նորա զնոսա՝ մեկնեցաւ է նոցանէ, և վերանայր յերկինս... և նստաւ ընդ աջմէ Հօր ( քարեխօս խնդրողաց իւրոց է վերայ երկրի ) : — Մարկ. Մարկ. Գ. 1 :

\* Ձեք այլով իւրք փրկուիթիւն (բայց Յիսուսիւ) . զի և ոչ անուն այլ զոյ է ներքոյ երկնից՝ տուեալ ի մարդիկ, ուրով արժան իցէ կեալ մեզ: — Գործք: 1:

\* Ոչ համարձակեաց նոցա հոգին Յիսուսի (որոց առաւել քան զչափ իւրեանց թեւակոխէին): — Ն. ժՁ. 7:

\* Սերեաց զմեզ (Յիսուս), և ելոյժ զկապանս մեղաց մերոց՝ արեամբն իւրով: — Յայրն. Ա. 5:

\* Ո՞վ մեկնեացէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի. նեղութիւն, թէ անձկութիւն, թէ հալածանք, թէ սով, թէ մերկութիւն, թէ վիշաք, թէ սուր... — Հաստատեալ եմ, եթէ ոչ մահ և ոչ կեանք, և ոչ հրեշտակք, և ոչ իշխանութիւնք, և ոչ որ կանս և ոչ հանդերձեալքն, և ոչ զօրութիւնք, և ոչ բարձրութիւն, և ոչ խորութիւն, և ոչ այլ ինչ արարած՝ կարէ մեկնել զմեզ ի սիրոյ անտի Աստուծոյ, որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր: — Հովհ. Ը. 55. 58:

\* Եթէ ոք ոչ սիրէ զՏէր Յիսուս ի զիցն նզովեալ: — Ա. կորն. ժՁ. 7:

\* Յամենայն ժամ զմահն Յսուսի ի մարմինս մեր կրեսցուք, զի և կեանքն Յիսուսի՝ ի մարմինս մեր յայտնեսցին: Քանզի միշտ մեք՝ որ կենդանիքս եմք՝ ի մահ մատնիմք վասն Յիսուսի. զի և կեանքն մեր՝ յայտնի լինիցին ի մահկանացու մարմինս մեր: — Բ. կորն. Գ. 8:

\* Ես՝ օրինօք օրինացն մեռայ, զի ընդ Աստուծոյ կեցից, և ընդ Քրիստոսի ի խաչ ելից: Եւ կենդանի եմ այսուհետև, ոչ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս. . . որ սիրեացն զիս և մատնեաց զանձն վասն իմ: — Գողոթ. Բ. 19:

\* Ի Քրիստոս Յիսուս՝ ոչ... ինչ կարող է... այլ հաւատք՝ սիրով յաջողեալք: — Ն. Ե. 6:

Տացէ ձեզ (Աստուած)... բնակել Քրիստոսի՝ հաւատովք՝ ի սիրտս ձեք. սիրով արմատացեալք և հաստատեալք: Ձի կարող լինիլք հասանել ընդ ամենայն սուրբս, զինչ է լայնութիւն և երկայնութիւն և բարձրութիւն և խորութիւն. հանաչել զառաւելութիւն

գիտութեան սիրոյն փրխտոսի . զի լըց-  
լէք ամենայն լրութեամբն Աստուծոյ : —  
Եփե . Գ . 16 :

\* Ճշմարտեալք սիրով՝ անեցուցոյք ի  
նա զամենայն , որ է գլուխ փրխտոս :

\* Գնացէք սիրով , որպէս և Փրխտոս  
սիրեաց զմեզ , և մատնեաց զանձն իւր  
վասն մեր՝ պատարագ և զհնումն ի հոտ  
անուշից : — Ն . Գ . 15 : Ե . 1 :

\* Աբի որ ննջեալ , և կանգնեաց ի  
մեռելոց , և լուսաւորեցէ զքեզ փրխ-  
տոս : — Ն . 14 :

\* Մեծասցի փրխտոս ի մարմնի ին-  
մում , եթէ կենօք և եթէ՞ մահու : Զի ինձ  
կեանք՝ փրխտոս է , և մեռանել՝ շահ : —  
Փիլի . Ա . 20 :

Զցանկան՝ ելանել և ընդ փրխտո-  
սի լինել՝ առաւել լաւ համարիմ : — Ն :

\* Վասն որոյ յամենայնէ զրկեցայ . . .  
զի՛ զփրխտոս շահեցայց , և դատյց նը-  
մա : — Հաւատովք ճանաչել զնա և ըզ-  
որութիւն յարութեան նորա , և զհա-  
ղորդութիւն շարճարանաց ն . ա . Կեր-

պարանակից լինել մահու նորա , [Եւ ո՞ր-  
պէս հասից ի մեռելոցն յարութիւն : — Ն :

Մեր առաքինութիւն յերկինս է ,  
ուստի և Փրկչին՝ ակն ունիմք , որ նորո-  
գեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ :

\* Եթէ յարերուք ընդ փրխտոսի՝ ա-  
պա զվերինն խնդրեցէք , զվերինն խոր-  
հեցարուք . մի զայս որ յերկրի աստ է : —  
Կաղ . Գ . 1 :

\* Յիսուս միածինն՝ անմահութեանց  
պարգեւատուն՝ երևեցաւ մեզ . խափա-  
նեաց զլօրութիւն մահու : — Շարհ :

Նա զգծոխս գերեաց՝ մահուամբն  
ելրով , և զհզօրն կայեաց . Տէր օրհ-  
նութիւն Տեառն Աստուծոյ՝ յարուցե-  
լոյն ի մեռելոց : — Եկայք մանկունք ա-  
ռազաստի երկնաւոր Փեսային , երգես-  
ցուք ընդ հրեշտակս օրհնութիւն : — Ն :

\* Դու ես , փրխտոս , կեանք և յա-  
րութիւն ազգի մարդկան . Դու յարու-  
ցեալ՝ նորոգեցեր զայլսարհս . Յոյս յա-  
րութեան մերոյ , աղբիւր կենաց և փր-  
կութեան , ողբմեա : — Ն :

\* Դու ես Տէր մեր . դու ես , Քրիստոս , փրկիչ մեր . զքեզ օրհնեսցեն անձինք մեր : — Ժամօհեր :

\* Երեկոցար ի փրկութիւն ժողովրդեան քո , ի փրկել զընտրեալս քո : — Ա՛հա :

\* Յիսուս Քրիստոս՝ երէկ և այսօր նոյն և յաւիտեան : — Ե՛բբ . ԺԳ . 8 :

\* Ո՛վ բան Աստուծոյ , ո՛վ լոյս և կեանք և իմաստութիւն և զօրութիւն . զուարճանամ ամենեքումքք անուամբքք քով :

Ո՛վ բան իմացեալ և մարդ տեսեալ , որ զամենայն բերես՝ ի վեր ամբարձեալ բանիւ զօրութեան : — Գր . Առօթաբան :

\* Ո՛վ ամենապարզև ձեռն Յիսուսի , և առ իս զարճցիս՝ կարկառմամբ շնորհի աջոյդ սբոյ : — Նարեկ . ԼԲ :

Քրիստոս թաղաւոր , լոյս ի խաւարի՝ սրտից մթացելոց : — Քո կտակն՝ աւեւ տարան է . քո վճիռն՝ ազատութիւն է . քո մատեանն՝ շնորհ է : — Ն . ԽԳ . ԽԳ :

\* Զիք իմ թաղաւոր՝ առ իշխել շըն

չոյս , բացել քէն , Քրիստոս , որ անբռնաւ զատհնազանդեցուցանես լծոյն քաղցրութեան . որ բառնաս զկարիս մեղաց՝ ամենակարգ բանիւ . որ արեամբդ քո ստացար և մարմնովդ կերակրես . որ կարգեալ սահմանեցեր ուխտ կենաց շնորհաւ զրեղի . որ յոգի քո կնքեալ կցորդ քեզ դու լով՝ չօրքում մատուցեր ժառանգակցաւ զէս . որ յանուն զենման միշտ յիշատականքն չարչարանաց՝ առ նոյն բարերար աղօթել՝ զմեզ համարձակեցեր : — Ն . ԽԹ :

\* Մնացեն ընդ իս , կենարար , քոց կրից պաշտեցեալ մասունք . զի իբր զաւանդ դանձու զիս պահեալի քեզ , կենաց նորոգման ընծայեցուցին : — Ն . ԿԶ :

\* Եթէ ոչ էր (քո) արբեալ կրկնակի բացալ՝ զանդեալ ընդ լեղւոյ , ոչ էր հեղեալ մաղձն իմ մթերեալ նախնի դաւնութեանն : — Ն . ՀԷ :

\* Փրկեա , Տէր Յիսուս , աղաչեմ զքեզ , փրկեա , բարերար , կարկառեա՛ առ իս զաջէ ամենազով , և օգնեալ ինձ սովաւ՝ զերծոյս ամենեցունց ընդդիմացողայ : — Մատն ,

Տէր Յիսուս , վերացս աներևութից՝ զայս՝  
 ձէթ լուսանիւթ . և արկի սոյն խարանս  
 խոցոյ մահացուի՝ զկաթուած օրհնութեան  
 իւղոյդ փրկութեան , անապակ գինեաւ  
 սիրոյդ : — Մատն սա՛քո , Յիսուս , որով  
 զհրաշխիսն դարմանադրես : — Ն . ՂԳ - Գ :

\* Որ լսես զհեծութիւն կապելոց , և հայրս  
 յաղօթս խոնարհաց , և ընդունիս զիւրնդ -  
 բուածս նոցա , Աստուած իմ և թագաւոր  
 իմ , կեանք իմ և ասլաւէն իմ . յոյս իմ և  
 վստահութիւն իմ , Յիսուս , Աստուածդ  
 ամենայնի , սուրբդ , հանգուցեալի հոգիս  
 սրբոց : Մխիթարութիւն վշտաց , և քաւ  
 ւարան մեղուցելոց . . առաքեա զպահպա-  
 նողական զօրութիւն աջոյքո , և փրկեա  
 զիս . . . որպէս զի զյիշատակ սոսկալի ե-  
 սուրբ քո անուանդ՝ միշտ համբուրեալ շըր-  
 թամբք հոգւոյ ըղձութեան շնչոյ , կեցից  
 պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ կարդան  
 զքեզ ի բոլոր սրտէ : — Ն . ՂԳ :

\* Ոչ յառեցի (միշտ) զազն ոգւոյս ի  
 գլուխն իմ կենաց Քրիստոս , որով ընդ  
 արեւն հետեցայց . — Ն . ԾԵ :

\* Գրեացես , ո՛վ Տէր , զվէրսքո ի սրտի  
 իմում , զի ընթերցայց ի նոսին զցաւ և  
 զսէր . զցաւ՝ առ ի կրեւ վասն քո զամե-  
 նայն ցաւ . զսէր՝ առ յո՛չինչ գրեւ վասն քո՝  
 զամենայն սեր : — Օգոտ :

\* Կարողութեամբ իւրով հաստատեաց  
 զմեզ՝ Քրիստոս , տկարութեամբ իւրով՝  
 այց արար մեզ : — Ն :

\* Գաղտնիք սրտին Յիսուսի՝ երևին  
 ընդ պատառուածս կողին : — Բիւն :

\* Ո՛վ գթութիւն , քանի մեծ են կա-  
 պանքքո , որ բաւական եղեն զԱստուած  
 կապել : — Լուր . Յոտրին :

\* Հաւատա՛մ , ո՛վ հոգիդ քրիստոնեայ ,  
 կրկիր պագ . յուսա , սիրեա : Ո՛վ Յիսուս ,  
 վերացողքոդ՝ և սեսից զքեզ Ո՛վ Յիսուս ,  
 խօսեաց սրտիս , և լուսայց քեզ . խօսեաց՝  
 խօսեաց , խօսեաց . մի և եթ՝ վսյրկեան՝  
 մնայ ինձ , խօսեաց : Տուր ինձ արտասուս՝  
 առ ՚ի տալքեզ պատասխանի . հար զվէմն՝  
 և բղխեսցեն ջուրք յուսալից սիրոյ՝ խա-  
 ուն երախտադիտութեամբ ոգւոյ զզջա-  
 կանի՝ հոսեւ յերկիր : — Պոտիւն :

\* Ո՛վ Յիսուս, դու չեիր կարօս հրեշտակի յօրհասին քում: Վասն իմ եկին նա: Ե՛կ սուրբ հրեշտակ՝ եկ քաղցր մխիթարիչք Յիսուսի շնորհակցեց կօրհասականի յանձըն անդամոց իւրոց: — Ե՛:

\* Չիք յաշխարհի մեծ քան զՅիսուս և չիք է Յիսուս՝ մեծ քան զզոհ իւր և է զոհի անդ՝ չիք մեծաւոյն քան զլուսն յեօրին: — Ե՛:

\* Մինչև ստրուկքն մերկասցին և ծառքեսցէ աիւ յա իստենական երանու թեան՝ երթայց ի միայնու թիւնս, ի լեռան զմրոնենեայց և ի բլուրս կնդրիկի խոկալ անդանօր ի ճամբարս թիւնս յա իստենականս և ամբառնակ զանձն իմ առ Սասուած զլլմամբ և աղօթիք որպէս խոնկ զի ամբառնայ յերկինս: Լուծանելով զինքըն և բոցակէզ ծախելով: — Անդ է Գառլ գոթա տեգանիցես, զի Սասուածն յըրմէ փախչիս՝ ոչ առ այլ ինչ հեամմուտ լինի քեզ, բայց զի է ձեռին իւրում կրէ զայն զոր զօն խնդրես, զողբոյլ անդորրու թիւն անհնար է քեզ գտանել զնոյն՝ եթ՝

ոչ կանխեսցէ բարեբարն այն՝ համանել քեզ յանալ քան զմահ, որ և սանդնակէս հեամմուտ է քեզ: — Ոչ խնդրեմ էս զողորմութիւն հրեշտակաց և զնրբոց, այլ մեծան և ծայրագոյն կարօտ իմ գթութեամբ զոր միայն կարող է աալ: Սասուածն խաչեալ: Ես միայն կարող է զիս յարուցանել զոր են խաչեցի: Փառասորհա, Տէր, զզօրութիւնս քս, և ցոյց յիս ի մեղացեալս և յանարժանս, թէ զինչ է Աստուած մարդացեալ ի փրկու թիւն մարդկան, և որքան հզօր իցեն շնորհք ի վերայ յուսաբեկ սրտի: — Ե՛:

\* Քրիստոս՝ ի միում յինքեան տաբալ զամենեպի: — Կի զրեւ: —

\* Որ տրամեցողանէ զհոգին Քրիստոս սի՝ ոչ ամբառնայ զգլուխի իւր ի վեր: — Ե՛:

\* Փրկիչն մեր է առ զփոշս, և եզ ի գլուխ իւր, և կնքեսց զանձինս մեր աբեամբ անձին իւրոյ և առ զսուրն և զնիւ զակատեղ սրոյն ի ծառոց անտի կենաց, և երարձ զանէծս, և բեկեղաց ի խաչս փայտին: — Զփօն: —

\* Չոր ոչ կրեաց Փրկիչն՝ որք միանգամ  
ի կենցաղումս են վիշաք: — Մ֊Գիտ:

\* Անհնար է ումէք ստանալ զՅիսուս,  
բայց եթէ ջանիւ և խոնարհութեամբ և  
անդադար աղօթիւք: — Հայրն Մ֊Վ֊Կ֊:

\* Բանն Աստուծոյ՝ Փրկիչն հոգւոց և  
մարմնոց, կատարեալ զամենայն արդա-  
րութիւնս, և լցեալ աստուածեղէն իմաս-  
տութեամբ, պայծառասպէս՝ ուսուցանէր  
պարկեշտ կրօնաւորութիւն, որ պատշաճ  
էր որդւոց մարդկան, և լռեցուցանել  
զսկիզբն մեղաց: Քանզի ուսոյց՝ զբար-  
կութիւն խաղաղացուցանել, զցանկու-  
թիւն չափաւորել, զախորժականն մեղ-  
մացուցանել, զարտմութիւն մերժել, հա-  
զորդ լինել առ ողորմութիւն. զսէր  
ածեցուցանել, զանափառութիւն ընկե-  
նու. ի վրէժ առնըլոյ հեռանալ, քինա-  
խնդիր մի լինել, զմահ արհամարհել՝  
ոչ անիրաւութեամբ այլ համբերելով ան-  
օրինացն, Աստուծոյ օրինացն հաւանել,  
զթագաւորս պատուել, զԱստուած պաշ-  
տել, զհոգի անմահ իյ Աստուծոյ հաւա-

տալ, դատաստանի յետ մահու ակն ու-  
նել, պարգեւաց սպասել յետ յարու-  
թեան, տալ յԱստուծոյ բարեպաշտու-  
թեամբ կեցեւոյն: Չայս ամենայն ուսու-  
ցանելով բանիւք և գործովք հանդերձ  
մեծաւ հաստատութեամբ, և փառաւո-  
րեալ յամենեցունց վասն երախտեացն  
զոր առնէր, սպանաւ յետոյ խաչիւ,  
որպէս և յառաջ քան զնա իմաստունքն  
և արդարքն. քանզի արդարք՝ անիրաւաց  
դժպէի երեին: — Վ՛. Ս. Արդաւն:

\* Վասն այսորիկ եկն (Քրիստոս), ոչ  
զի փախիցէ ի մերոցն ախատանացն, այլ  
զի ի մենջ ևս բարձցէ: Ո՛վ. Մրխ. Գ:

\* Որ եկն՝ զամենայն չարիս մեր եկն  
քակել, իբրև զբժիշկ, և ոչ իբրև զլա-  
տաւոր: — Ն:

\* Վասն այնորիկ Քրիստոսի գութն  
նուազագոյն է ի մեզ, քանզի ամենայն  
ոյժ յայս ցանկութիւն վատնի: — Ն. Գ:

\* Վասն այնորիկ ամենայն ինչ եղև,  
յայն սակս իսկ և Աստուած մարդ եղև,  
և զամենայն հնարս հնարեցաւ, զի զմեզ  
ժողովեսցէ: — Ն. Ժ. 2:

\* Ընդ ամենայն ճանապարհորդեալ  
ընդ հասակսն Քրիստոսի և ընդ զօրու-  
թիւնսն, իբրև Քրիստոսի աշակերտ:

— Գր. Առաքաւածաբան:

\* Համբեր ընդ Քրիստոսի և վասն  
Քրիստոսի, եթէ թագաւորիւ ցանկաս  
ընդ Քրիստոսի: — ՆՄան. Բ. Ե:

\* Երանի մարդոյ որ առնուցու ի միտ՝  
զինչ է սիրելն զՅիսուս, և ուրանալ զան-  
ձըն՝ վասն Յիսուսի: — Ն. Է:

\* Պարտ է թողուլ զսիրելին վասն սի-  
րելոյն. զի այս են կամք Յիսուսի՝ սի-  
րել մեզ զնա՝ առաւելքան զամենայն: —  
Միայն նորա սէրն հաստատուն է և հա-  
ւատարիմ: — Ն:

\* Զնա սիրեա՝ որ ի թողուլ ամենայնի՝  
չթողու զբեզ: — Ն:

\* Առաւել վնաս է մարդ անձամբ ան-  
ձին՝ որ ոչ սիրէ զՅիսուս, քան եթէ  
աշխարհս և ամենայն թշնամիք իւր: — Ն:

\* Յորժամ մերձ կայցէ Յիսուս՝ ամե-  
նայն ինչ բարեք է և դիւրին. յորժամ  
հեռի կայ Յիսուս՝ ամենայն ինչ խիստ է  
այնուհետև: — Ն:

\* Բազումս ունի Քրիստոս փափա-  
գոյս արքայութեան իւրոյ, սակաւս իս-  
չաբարձս: . . . Ամենեքին ցանկան ուրա-  
խանալ ընդ նմա, սակաւք կամին վըշ-  
տանալ ընդ նմին: Բազումք են որ եր-  
թան զհետնորա՝ մինչև ցրեկանել հացին,  
սակաւք՝ ցարբումս բաժակի չարչարա-  
նայն: — Ն. Ժ:

\* Որք զՅիսուս վասն Յիսուսի սիրեն՝  
և ոչ յանձանց մխիթարութիւն, յա-  
մենայն վիշտս և յանձկութիւնս սըր-  
տից իւրեանց՝ օրհնեն զնա, որպէս ի մը-  
խիթարութեան մեծի: — Ն:

\* Որքան հեռի յուղղութենէ մնային  
բազումք՝ եթէ ոչ նկատէին զօրինակն  
Քրիստոսի: — Ն. Գ. ԺԷ:

\* Ե՛կ, ե՛կ Յիսուս, զի առանց քո չիք  
ինձ օր կամ ժամ ուրախութեան: Դու  
ես խնդութիւն իմ, և առանց քո թա-  
փուր է սեղան իմ: — Ն. Է:

\* Այնպէս սաստիկ է հուրն Քրիստո-  
սի. այնպէս ի վեր քան զքնութիւն առ-  
նէ զյօժարութիւնս: — Ու. Ե. Է:

\* Հեծեն միշտ միտք դառնապէս, թէ յո՞ եհան զմեզ Գրիստոս, և յո՞ իջուցաք մեք զանձինս: — Ն. ԵՔԴ:

\* Քրիստոս լիով ի խոնարհ, լիով ի վեր, լիով ի մարմնի, լիով յամենայնի: — Ն. ՓԷԼԻՊ:

\* Չէ բաւական չմատնելն զՅիսուս ընդ Յուդայի, այլ և սիրել արժան է զնա՞ ընդ այլոց աշակերտաց: — Մ․․․ի:

\* Աստուածամարդն երկրպագու չօր առաւել քառս մատոյց Աստուծոյ, քան զոր բարձքնն ի նմանէ ամենայն դարք և ներթանոսք: — Ն:

\* Որ Գրիստոսի լինի տաճար՝ մեհեան դիւաց անդ ոչ յաջողի: — Խոօր:

\* ԶՅիսուս տեսեալ՝ փրկիմք տիրապէս և կենդանանամք զանմահ կենդանութիւն: — Ն:

\* Խաչակից լին Գրիստոսի զբովանդակ սերն փոխադրեա առ Տէրն: — Գր. Մարտ:

\* Որ Աստուծոյ բաւական եղև (Քրիստոս), չիցէ՞ ինձ բաւական: — Այլ:

\* Առանց սիրոյ՝ ոչ ոք կարէ պատմել վասն քո (Տէր Յիսուս): — ԵՔԴԻՄ:

\* Սէր՝ որ իմացականին է առ իմանալին ներգործութիւն... Սէր՝ որ ճաշակ ունի հանապազ զմարմին և զարիւն Քրիստոսի և զցնծութիւն: Սէր՝ որ կոխէ գերկիւղն, ծանուցեալ թէ ոչ զայս եցոյց առ ինքն վերածիչ՝ Քրիստոս՝ ճանապարհ. զի ոչ ասաց հաստատուն կացէք յերկիւղ իմ, այլ թէ հաստատուն կացէք ՚ի սէր իմ. զի երկեւղն միշտ է բաց տանի ի նմանէ, և սերն մերձեցուցանէ: Մարդս՝ ամենիշխան է, այլ ծառայեցուցանէ զնա միայն սերն: . . . Եկեալ Գրիստոս՝ չիօսեցաւ սաստիւ, չլսրովեաց զոք, չպատժեաց. առ ամենեւեան մերձեցաւ. և կատարած սիրելոյն՝ զմահն վասն մեր արար, և մահ այնպիսի պէսպէս անարգանօք, և իւր այնքան ներգործութիւնն: Այս կիրք քաղցրութեանս՝ յինքն յափշտակեաց զներքին մարդն, և զերազանց եհան երկեղին, և ուղղեաց մեզ սէր առ Աստուած՝ բնաւո-

բապէս և առանց հարկի: Չի որչափ քննէ ոք զտնօրէնութեան խորհուրդն՝ այնչափ անեղբ զսէրն Գրիստոսի առ մեզ տեսանէ, և սիրոյն տոջորումն և բաղձանքն աճէ, և չիք ա՛հ կամ երկիւղ՝ որ յետ ընկրկէ: — Լ. Բ. Բ.:

\* Արդարացեալացս ի Գրիստոս և զիբը կութիւն ունողացս՝ նորին արեամբն, զինչ այլ բաժին յանդրազ միտան, քան ուրախ լինել ի Տէր՝ յամենայն ժամ: այլ թէ սնտոի զբաղանք՝ յայմանէ վրիպէ, աւանդ դրժանացն. այլ Ս. Հոգին՝ որ ի թիկունս հասանէ տկարութեանս մեբում, մաղթեսցուք, զի զօրացուցե ի քննելն զայս, և ոչ անձանց կեալ՝ այլ Գրիստոսի: — Կ. Բ. Բ.:

\* Գլուխ և աւարտ խնդրումածոց իմոց՝ այս են. Տէր Աստուած իմ, որ խաչեցար վասն մերոյ փրկութեան, արժանի արա և զիս զտրուսո՛ւ խաչակից լինել քեզ և գերեզմանակից. որով ընդ քեզ յարեայց, ըստ նմանութեան յարութեան քո. կերպարանակից առնել քեզ

զմարմին խոնարհութեան խոց նըւաստութեանս, ի ճամարիտ ի պարզ և յանյօղ բնութիւն փառաց յարութեան քո. զի բեկոր ինցեղէն յօգապատ ծանրութիւն դանդազ և տաղտկալի մարնոցս՝ ի հող մնացեալ, թիթեացայց հողաղլաւ ի ծածկել զի վերոյ զմարմինս իմ, զի ընկցի մահկանացուս ի կենաց անտի: Եւ այսպէս յարուցեալ փառօք՝ թիթեացայց ճախրելով, օգադնաց եղեալ ընդ առաջ քո՝ համարձակ երեսօք՝ ի հանդիպումս քո. զի ընդ ամենայն սուրբս քո արժանի եղէց ազաղա կել ճայնիւ մեծաւ. Յնծացէք ամենայն յաւիտեանք. ցնծացէք երկինք և երկիր և ամենայն արարածք. զասք անմարմնոց և ամենայն արդարոց. զի ասէր Աստուած մեր երեւեցաւ մեզ. տօնեցէք յարզուարճ մշտնջենաւոր խնդութեամբ, զի դատեցաւ Տէր զլստատպտան իւր. էառ զլրէժ ի թնամեաց մերոց, և փրկեաց զմեզ յամենայն նեղութեանց մերոց. յայսմ հետէ ցնծասցուք և ուրախ

Լիցուք ի տէր Աստուած մեր : — Կիր-  
Աղօթ+ :

\* Եւաց նա (Քրիստոս), զի ոչ ուրախ  
եղև սա (Երուսաղէմ) : — Բարձր . Մարտի :

\* Պատրաստեցին խունկս, զի եկես-  
ցեն օծցեն զնա (Քրիստոս) : Այժմ խնկօք  
անուշահոտութեան, հարսն՝ օրիորդօք  
ընթանայ զհետ նորա, որպէս ասէ .  
Օրիորդք սիրեցին զքեզ, օծանել զքեզ  
և զանկողինս քո . որ է միտք մեր և հո-  
գի . և այսպէս կարեմք օծանել զանկո-  
ղինս նորա, լուսնալ զսիրտս ի խղճե-  
չարեաց, ըստ Պօղոսի, և սրբել զմար-  
մինս՝ ջրովն խոստովանութեան և ար-  
տասուաց . որպէս զի տարցի զմեզ թագա-  
ւորն ի սենեակ իւր : Այժմ ելանէ սիրելին  
Մարիամ և ասէ . Չմեռն էանց, անձրեք  
անցին, ծաղիկք երևեցան յերկրի . ձայն  
տատրակի լսելի եղև յերկրի մերում . այ-  
գիք ծաղկեցին և հառն զհոտս իւրեանց .  
զի փեսայն ննջեաց ընդ շքով վկոխն՝ յե-  
րկրոյի ուրբաթուն . և այժմ յերկրոյի  
չաբաթուն՝ կամի երևեցուցանել զգէմանն :

և լսելի առնել զբարբառն՝ որ յոյժ  
քաղցր է ձայնն, և գեղեցիկ տեսիլն :  
Եւ այսպէս յնո շաբաթուն տրտմու-  
թեան՝ ամենայն բարեաց արժանաւոր  
օրն փայլէ . որ օր՝ իշխանաբար տիրէ  
ի վերայ ամենայն տուրց . յորում ա-  
ռաջին լոյսն ծագեաց . ի յայնմ լուսա-  
ւորութեանաւոր և Տէր մեր յառնելով  
և յայնմ աւուր ընկալաւ զյաղթութիւն .  
ասելով . Այս օր է զօր արար Տէր,  
և այլն : . . . Զարթեաւ որպէս ի քնոյ՝ Տէր,  
որպէս հօօր՝ զի թափէ զգինի, և եհար  
յետա զթշնամիս իւր . . . Զորօրինակ  
ննջելով ոք գողացեալ ինի յուճիմեւ, և  
իբրև զարթնու՝ գողանայ զգողն իւր .  
այսպէս և զՔրիստոս՝ ննջեալն մա-  
հուամբ՝ գողացաւ մահ և տարաւ եմոյծ  
ի դժոխս . և յարեաւ, արար կապուտ  
կողոպուտ զայրն գերութեան նորա . . .  
Այս է խաչ՝ խաչիչ խաչահանուաց իւ-  
րոց, և գերի՝ գերիչ գերեմարաց իւրոց  
դի որպէս Փարաւոն՝ ջուրքն սրով հեղ-  
ձուցանէր զմանկոտին՝ հեղձաւ . . . և Գո

զիտդ՝ որովն որով զբազըւմս սատակէր՝ եղև սատակեալ այսպէս և սատանայ՝ մահուամբն որով զամենեսեան ետզան՝ սպանեալ եղև: — Ն:

\* Ապտակէին, զայրացուցանէին, տանջէին (զՅիսուս), և նա բառնայր զմեղս պլոց. մեռանէր, և զպլոց մահս լուծանէր: — Ո՛հ. Ե՛:

\* Այսր խորհրդով (մահուան ֆրիտտոսի), հալածեցաւ ի մերս տապանէ ազգան մահացան, և ընկալաք զսաղարթն ձիթենուոյ աղունաքեր՝ ընդ երեկս առւորն՝ բանիւն կենաց: — Յ՛հ. Իմաստ:

\* Ոչ ի յանդաման ֆրիտտոսի բեհեզ, և ոչ ի գլուխն՝ թագ փայլէր, ոչ հարատութիւն ծառայիցն... այլ մեծ ինչ ծածկեալ ի փոքր ինչ: — Ա.Ն:

\* «Եղերուք կատարեալք. » Զոր եթէ չէր հնար՝ ոչ օրինադրէր ամենաբարին Յիսուս, որ գիտէ զստեղծուածս մեր, և զամենայն ինչ մեզ ի բարի մատակարարէ: — Սարգիս:

\* Եթէ ձայնն Յիսուսի է որ կոչէ զմեզ ի մեռելութենն, և Հոգին Սուրբ է որ ծնանի զմեզ ի գերեզմանաց՝ ծնունդ նորոգ և սքանչելի, ապա զինչ արդեօք սակս փառացն ասիցես: — Ն:

\* Եթէ յանունն Յիսուսի պատերազմիմք, արժանի անուանն այնորիկ նա հատակեսցուք: — Ն:

\* Եւ այժմ բաց ունի զկողն առաջի Հօր, զի նովաւ զհաշտութիւն խնդրէ ի նմանէ, և գթաւութիւն մեղաց մերոց: Եւ Լուր ի կողէն Ագամայ՝ հրդեհել զամենայն մարգկային բնութիւնս, և եւ Լուր ի կողէն Յիսուսի՝ շէջուցանել զհրդեհն անօրէնութեան: — Ն:

\* Ա՛լ բարի Յիսուս, խիտ է ամենայն. գու միայն ես հանգիստ: — Օ՞հ:

\* Մէ՛ սրբեացի միս փուշն, վասն զի եկեալ Յիսուս ֆրիտտոս՝ զփուշ մեղաց խնց արտաքս խլեաց. լուծան նզովքն, լուծան անէծքն՝ որ ասէր ինձ, Փուշ և տատասկ բուսցի քեզ. վասն զի գօսապան փուշքն, և արտաքս խլեցան տա-

տասկըն . և երեքիկին հաւատոյ յօրինեալ  
պսակ ի վերայ գլխոց մերոց եղաւ : —  
Ուիբ :

\* Լուծութիւն սրտիս՝ քեզ զօրասցի  
(Տէր Յիսուս) . ճանապարհդ ամենայնի,  
վաստակ անդամոցս քեզ հանգիցէ : Օ-  
ծեալք , իւր մեր ուրախարար , վիշաք  
սրտիս քեզ մոռանցին : Բաժակ փրկու-  
թեան մերոյ , վտակք արտասուացս քեզ  
արգելցին : — Շահան վիշ :

\* Քանի սիրելի և խաղաղարար է  
անուն քո , Յիսուս , մանաւանդ և յայն  
պիտումն վայրի (վշտաց) : — Մարտի :

\* Ծարաւի ես . — Ես իսկ եմ աղբիւր  
կենդանութեան քաղցրաբուղիս և անու-  
շաճաշակ : Քաղցեալ ես . — Ես իսկ եմ  
հացն կենաց իջեալ յերկնից : — Աստ :

\* Աւետարան (Քրիստոսի) տաց աւե-  
տիս աշխարհի , եթէ Աստուած յերկրի  
և մարդիկ յերկինս : — Շահան . Մարտի :

\* Մինչ լուռն կայր (Քրիստոս) զմար-  
մինս նոցա բժշկէր . և մինչ խօսէր՝ զո-  
գիս նոցա ասողջացուցանէր : — Ն :

\* Ոչ իսկ է ազատ ոք՝ այլ միայն որ ի  
Քրիստոսն կեայ : — Ուի :

\* Յորժամ Քրիստոս խորտակէ՝ ո՞ր  
այլ ոք այնուհետև ուղղեւկարնացէ : — Ն :

\* Մահ ինքն ընկնոյր զղէնն , մերկ  
առ ոտս թաղուորին ընթանայր : — Ն :

\* Ոչ տեսաք զմարտն , և զյաղթոս  
թիւն առաք . նահատակութիւնքն՝ Տեա-  
ռն , և պսակքն՝ մեր : — Ն :

\* Տէրն յաղագս քո մեռաւ , և զոս  
յաղագս քո ինքեան դանդաղիս : — Ն :

\* Ոչ ամաչես լիրբ ( Հրեայ ) . դու  
արեամբ ոչխարի փրկեցար , և ես ա-  
րեամբ Տեառն ոչ փրկիմ : — Ն :

\* Չի գանգիտես ի դեռնախօշտի լի-  
նելոյ . Յիսուս ընդ քեզ հանգիցէ : —  
Հերնի :

\* Մի ինչ մեծ համարեւ քան զՔրիստո-  
սոս , քանզի և նա ոչ ինչ քան զմեզ  
մեծ համարեցաւ : — Կիորիան :

\* Երբ հնար իցէ խաւարանալ այնմ  
որ զլոյսն (Քրիստոս) ի սրտի իրում  
կրկցէ : — Ն :

\* Միթէ ոչ կերակրեցէ Յիսուս զկե-  
րակրէչ իւր: — Ն:

\* Էջ յերկնից հովիւն քաջ, որ եզ  
զանձն ի վերայ ոչխարաց, և հովուեաց  
զեկեղեցի ի վայրի դալարուջ երկնից  
արքայութեանն, և ժողովեաց զուշանս  
մեռելութեան աշխարհի: — Օգոստոս:

\* Ա՛ր ուրախութիւն ոչ տիրէ և տայ  
զպտուղ արտասուացն՝ հայել յասպտա-  
կած նորա երեսն, ի կոփած վասն իմ  
գլուխն, յարիւն ճապաղ ի ձեռնն: —  
Լաճբո. Սաղմ:

\* Ես զձէթս միայն կրեմ. . . և լոյս  
ճրագիս՝ դու ես, Տէր: — Ն:

\* Իմ տոփալին՝ ի ծայրս է ամենայն  
փառաց. բայց ո՞չ հնարէր ինձ, և զվարճ-  
մտութիւնս իմ՝ որ յառաւելութենէ  
սիրոյս՝ լուծանէր, թէ փառքն նորա  
որպիսի է: — Ն. Սաղմ. ժԸ:

\* Սնիւ շրջանի ժամանակացս հոլո-  
վեալ էր՝ յորժամ եկն Քրիստոս, և  
մարդկութիւն ի ստորև էր քարչեալ, և  
անյոյս էր ի փրկութենէ: — Վասն իմ

փրկութեան հեռի եղև ի փրկութենէ,  
և Աստուած թողաւ յԱստուծոյ, և լոյսն  
և կեանքն որդն անուանեցաւ: — Ն. ԻԱ:

\* Սիրտ՝ որ ուղիղ է՝ իւրովի զիւր փըր-  
կութիւն ոչ կարէ ճանաչել, թէ և բիւ-  
րըս վաստակէ, այլ ի ձեռն յուսոյն մե-  
րոյ Քրիստոսի: — Ն. ԼԱ:

\* Ուր մարտն սատանայի ոչ է՝ խա-  
ղաղութիւն է, և ուր մարմնոյս տաժա-  
նելի կիրք ոչ՝ փափկութիւն. և ուր  
Քրիստոսի սէրն և անճառ բարեացն  
վայելա՝ ուրախութիւն և ցնծութիւն:  
Յայս խաղաղութիւն կոչեաց զմեզ Քրիս-  
տոս՝ փափկանալ, յասեւն, Օ՛ն, արևք,  
զնասցուք աստի: — Ն. ԼԶ:

\* Ժողովեալ ամենայն ազգք՝ տեսին,  
զի մարմնովն Քրիստոսի աղեղն սատա-  
նայի փշրեալ էր. խաչիւն՝ զէնն նորա  
խորտակեալ. և յարութիւնամբն՝ ասպարն  
ընդ ամենայն տիեզերս այրեալ: Զինչ  
այլ այսու հետև բաժին սոցա. եթէ ոչ  
ցնծութիւն և ուրախութիւն. զի ի  
զերութենէ դարձան, ի ծառայութենէ



\* Յերկնէ և յերկրէ և յորոց ի ստա-  
 են վայելչութիւնք, ինձ բաժին՝ միայն  
 դու. ինձ ընտրելի կենակցութիւն՝ ընդ  
 քեզ. ինձ սիրելի խօսակցութիւն՝ միայն  
 ընդ քեզ: . . Քանզի զինչ օգուտ ինձ եր-  
 կին և երկիր՝ եթէ ոչ այնպիսի բարեգութի  
 Տեառն առնն թեր լինիցիմ: ինձ նորա  
 տեսն՝ բաժին յամենայնէ, և նորա շնոր-  
 թեամբ հայելն և քաղցրութեամբ խօ-  
 սելն: — Ն. ՀԲ:

\* Հողին Սուրբ և Հայր նորա՝ (Քրիստոսի)  
 մարմնովն ի սիրտս մեր բնակէ,  
 և մէք նորա մարմնովն յերկինս մտա-  
 նեմք: — Ն. 22:

\* Մաղթեսցուք մարդասիրին Աստուծոյ՝  
 օճառաւ Միածնին արեան սրբել զմեզ,  
 և ի պարս սպիտակազգեաց դասուցն՝  
 զոր ետես Յովհաննէս՝ եկեալ ի վշտաց  
 մեծաց՝ յերկնիցն հանդիսա խառնել:  
 զի և մէք արժանի լիցուք երգել ընդ  
 նոսին և ասել, Փրկութիւն Աստուծոյ  
 մերոյ, և ոչ մերոյ գործոցն, և Գառինն  
 նորա՝ որ եբարձ զմեզս աշխարհի, որուն  
 վատք, և ն: — Ն. 26:

\* Արդարեւ հաստատեցաւ աշխարհ՝  
 յորժամ խարխոս իւր ընդ ամէ Հօր  
 բազմեցաւ: — Ն. ՂԲ:

\* Պատարաք եմ երախտագործիդ.  
 ոչ խոյս տամ զուարակս, այլ օրհնու-  
 թեամբ ի մտաւորական ոգւոյս սիրոյ ար-  
 տաքս բղխեալ, զոր իբր ի սեղան ող-  
 ջակիդեմ բորբոքմամբ սիրոյ ի վերայ սըր-  
 տիս. և զճենճեր անուշահոտ օրհնու-  
 թեանն՝ ի կարդալն զանուն քո և ի վա-  
 ուաւորելն զքեզ՝ քաղցրացուցանեմ: —  
 Ն. ՃԺԵ:

\* Եթէ ոք ի վտակէ կողին ի սիրտ իւր  
 ձգէ, միթէ ոչ ի քաղցրութենէ զմայլեալ  
 աղաղակէ, Ես օրինօք օրինացն մեռայ,  
 զի Աստուծոյ կեցից, և ընդ Քրիստոսի  
 ի խաչ ելից: — Ն. ՃԺԷ:

\* Ե՛կ, բարի ցանկութիւն, և ելեալ  
 ի միջոց սոցա՝ յերկինս վերացուք, առ  
 յոյսն մեր Քրիստոս. և յայնժամ՝ թէ  
 յարձակին թշնամիքն ի վերայ մեր, և  
 տեսանեն զտեսչանս մեր ի ներքոյ փրկ-  
 չին մերոյ թևոց, խոովին սարսեն և

տեղի տան 'ի բարկութենէ սրտմտու-  
թեան նորաւ — Ն. ճԾ:

\* Գլուխն իմ (Քրիստոս) ի վերոյ է  
ի խանութեանց և պետութեանց, և  
իմ յոյսա և հոգիս՝ ի նա միացեալ, և  
յետ ելիցն ի մարմնոյս՝ առ նոյն ունիմ  
ժամանեմ: Հաւատ պիտոյ է առ Քրիստոս  
և սէր. և ստեղծանէ նա ազա  
զայս հոգեկան ուրախութիւնս: — Ն:

\* Ա՛ տայր ինձ այսօր զերկրորդ դա-  
լուսոյն Քրիստոսի, յորժամ մերձենայր  
փրկութիւն մեր և բարձրացուցանէաք  
զգլուխս մեր: — Ն. ժԳ:

\* Ո՛վ հոգի և մարմին, յորժամ դան՛  
և նեղեն զքեզ փորձութիւնք, զնորա  
(Քրիստոսի) դործան պատմէ, և յամօթ  
լինին փութապէս: Յոյց, թէ մի ստի-  
պեր զիս ի չար. չեմանձին տէր. ամբիժ  
Գառիսն արեամբն եմ գնեալ. անգամ  
եմ Աստուծոյ. խաչիւն եմ զօրացեալ.  
մկրտութեամբն եմ մեռեալ ի հանդեր-  
ձեալ յոյսն եմ արձանացեալ՝ Քրիստոս  
սիր: — Ն. Ը:

\* Տեսից զերկինս՝ զգործս մատանց  
քոց, զոր մատունքն հեղուսեալք ի խա-  
չին՝ սակղծին, և դատասկըն փորեալք  
բեւեռօքն՝ յօրինեցին մեզ: — Ն:

\* Տէր, ոչ կամիմ կեալ՝ եթէ ոչ մե-  
ռայց ընդ քեզ: — Ա. Ը:

\* Կինն մեղաւոր բոլոր անձամբն տա-  
րածեալ յոտս Փրկչին՝ ոչ դադարէր ի  
լալոյ, քանզի ոչ դադարէր ի սիրելոյ:  
— Պ. Ի. Ի:

\* Զցանկութիւնս սրտի քո յանձն  
արա ի Տէր, ոչ որպէս ի քեզն են, այլ  
որպէս ի ծոցի Յիսուսի: — Ա. Ը. Ի:

\* Յարտասուէն Յիսուսի ի վերայ  
Ղազարու՝ ոչ ևս տայ մեզ դաս, այլ ի  
դէպ է ասել թէ ինքնին ուսանի ինչնոր,  
որ քստմնեցուցանէ զմարդկութիւն իւր  
սուրբ: — Արտասուք նորա չին որպէս  
զայլս ի կրիցն՝ ի քաւութիւն մեղաց  
մերոց, այլ յօրհնութիւն միոյ ի խնդու-  
թեանց մերոց: — Ա. Ը:

\* Մարիամ կայր առ զերեզմանին՝  
կնդրելով զՅիսուս, սիրէր և սպասէր:

Աստուած իմ, ուսո ինձ սիրել և սպա-  
սել: — Ն:

\* Աստուածային մանկիկ (Յիսուս),  
ընդգրկեա զիս, զի լացցուք ի միասին-  
դու՝ առ սէր իմ, ես՝ առ սէր քո: Դու  
ածցես զիս ի դարձ, և ես զքեզ ստա-  
ցայց. դու արդահատեսցիս ինեւ, ես  
կազդուրեցայց քեւ: — Այլ:

\* Երանի քեզ, ո՛վ Աստուածազգեաց  
(Յովհ. Աւետար.) և քումդ հոգւոյ, զի  
տիրապէս զսլատուականն ընտրեցեր և  
սիրեցեր, և ոչ կարծեօք, որոց անմա-  
քուրքս ծառայեմք: — Լ՝ՄԻ:

\* Դու՝ թէ կամիս ընդ Քրիստոսի  
վերանալ տես, թէ ո՛վ զնա իջոյց, և  
զնոյն յանձին կալ. և զքեզ սրբէ, և ընդ  
ինքեան վերացուցանէ: — Յ. Եղևի:

\* Քրիստոս՝ չափով իւրոյ խոնար-  
հութեանն՝ եհան էած զմեզ ի բարձրու-  
թիւն: — Ն:

\* Ա՛րկ, ո՛վ Յուզա, զարծաթդ զոր  
առեր՝ ի բով սրտի քո, և քննեա, թէ  
ո՞նչմ էր արժանի Տէրն քո, զոր վա-

ճառեցեր դու և գնեցին Հրեայքն: —  
Ն. Տօնադարձ:

\* Ազամայ բնութիւնս՝ ի Քրիստոս  
երիտասարդացաւ: — Ն:

\* Յետ երեկոյի այսմ կենցաղոյս՝ ընդ  
առաւօտն հասարակաց յարութեանն  
Սրբոցն՝ երևեսցի (Քրիստոս), և ի տի-  
ածէ զմեզ յանվախճանն: — Մի-  
Յոյրն:

\* Գանձ է (Քրիստոս) յազարակի,  
չէ ի մարմին պատրուակեցաւ, որ ոչ է  
ամենեցուն հասանելի կամ փափագելի,  
այլ միայն գիտողացն, որք և վաճառեն  
զամենայն կենցաղոյս զբաղանք, և զնա  
ի սիրտս սիրոյն գնիւքն սեփհականեալ  
ստանան: — Լ՝ՄԻ. Եր Լ՝Ի:

\* Ծարաւն Յիսուսի՝ յաղբերէ սիրոյն  
բղխէր: — Լ՝ՄԻ. Յ՝ՄԻ:

\* Աքիւնն Յիսուսի՝ սպիտակացու-  
ցանէ և սրբէ. ցաւն սաստիկ՝ ածէ զմեզ  
ի սէր սաստիկ. կողին բացուած՝ կցորէ  
զսիրտ ընդ սրտի: — Ն:

\* Երիս տաղաւարս կամիմ առնել ի

Յիսուս . զմին՝ ի ձեռան , զմի՝ յոտան , և զմիս՝ ի կողան . անդ կամիմ հանդչել և ննջել , և աղօթել . անդ դամենայն ինչ առնել : — Ն :

\* Գու ես , Յիսուս , կեանք մեր , դու հանգիստ յամենայն աշխատանս մեր :

\* Ո՛վ երանելի գեղարդն . եթե փոխանակ այնր գեղարդան լեալ էի ես , ոչ ևս կամէի արտաքս ելանել ի կողից Գրիստոսի . առէի ապաքէն . Այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից : — Ն :

\* Աղէ , ամենաբազմալիզ Յիսուս , ծծեա զլուծն իմ՝ շնչով քով՝ հզօրեղապէս և մինչև ի խորս , որպէս զի ստուգիւ թաղեցայց ի քեզ , և ի միանալս ընդ քեզ՝ հակեցայց . և մի ոք գիտասցէ զթաղուծն իմ ի քեզ՝ բաց ի սիրոյ քուսէ , որ կնքեսցէ զիս և աւանդեսցէ քեզ անլուծանելի հանգուցիւ : — ԳԵՐԳՐՈՍ :

\* Զի՞ ևս կայ ինձ ընդ աշխարհի , ո՛վ անձկալիդ իմ Յիսուս . և ոչ յերկինս բաց ի քէն այլ ինչ խնդրեմ : Զքեզ միայն կամիմ , քեզ միայնոյ փափազեմ , քեզ

միայնոյ ծածրաւիմ , ի քեզ միայն նուազեալ հալիմ , ո՛վ իմ բաղձալի . ամենայն կեանք իմ անցեալ յինէն՝ գնացին՝ զհետ քո . . . Տուր ինձ այնպէս իսպառ թուղուլքանել զանձն իմ , մինչև չգտանել յիս ինչ հետոյ իմոց : Ո՛ր , ո՛ր Տէր , այնպէս իսպառ փոխեա զիս ի փափազ սիրոյ քո , մինչև բաց ի քէն չունել ինձ չունչ : Տուր ինձ այնպէս կորնչել ի քեզ , մինչև յաւիտեան չգտանել ինձ զիս , բայց ի քեզ միայն : — Ն :

\* Փրկիչն մեր բարեգութ ի լուանալն զոտան Յուդայի՝ քանի՛ նեատ սիրոյ արձակէր առ սիրտն այն ապառուս . ո՛չ . քանի՛ փրկիչ սիրայինք : Եւ դո՛ւ Յուդա , աշակերտ ապստամբ , զինչ արդեօք զբայիր՝ տեսանելով զՏէրն խոնարհեալ առ ոտս քո պիղծս , որպիսի պատերազմ ահաւոր ի խստացեալ սրտիդ . սրպիւսի՛ յոյզք և կողուցք : Ո՛չ ճանաչիցես զՏէրդ . ո՛չ գիտիցես՝ զի Աստուած քո է : — ԱՆ :

\* ԶՅիսուս միայն խնդրեմ . Յիսուսի

միայն փափագեմ. միայն Յիսուսի կա-  
րօտիմ. (ասէր Ս. Յրանչ. Պորճ. յետ  
ընդունելոյ զյետին թշուակն) :

\* Ո՛վ Յիսուս, Յիսուս, Յիսուս: Խըն-  
դա և ուրախ լեր, հողի իմ, յիշատակաւ  
երանելի հայրենեացն՝ զոր ժառանգեա-  
լսես՝ յետ պանդխտութեանդ: Ո՛վ Յի-  
սուս, Յիսուս, Յիսուս: Մխիթարեանց,  
հողի իմ, զի վախճան եղիցի ցաւոց քոց՝  
և դադարեացեն վիշտք քո, և հասցե  
նաւարկութիւն քո ի հանդիստ: Ո՛վ  
Յիսուս, Յիսուս, Յիսուս: Յնժա՛ հողի  
իմ, զի մերձենայ կատարած կենաց քոց,  
և վերջ աքսորանացդ. լուսեցեն պատե-  
րազմունքդ, և կանգնեսցի յաղթանակն՝  
չնորհօքն ֆրիստոսի: — Կրեհոնիս:

\* Յորժամ զՅիսուս տեսից, թէպէտե-  
կարճ իցեմ հողեւորական հասակաւ,  
որպէս Չաղքէոսն այն, ի վերոյ քան  
զմոլաթղենին ելից, սպանանելով զան-  
դամքս երկրաւորս, զմարմին խոնարհու-  
թեանս. ցայնքան՝ մինչև զՅիսուս ըն-  
կալացց, և լուսցց, Այսօր եղև փրկու-  
թիւն: — Գր. Աստուածաբ:

\* Պատեցաւ (ֆրիստոս) ի խանձա-  
լուրս, այլ ի բաց պատառեաց զպա-  
տանան... Ծարաւեցաւ, այլ աղաղա-  
կեաց, Եթէ ոք ծարաւի իցէ՝ եկեսցէ առ  
իս և արբցէ. այլ և աղբերանալ խոս-  
տացաւ հաւատացելոց:.. Վաճառեցաւ,  
և յոյժ դեւրագին, այլ դնեաց զաշխարհ  
մեծագնի՝ իւրով արեամբն: — Կ:

\* Ուր խաղաղարարն ֆրիստոս բնա-  
կէ՝ ամենայն արկածք խռովութեան ի  
բաց մերժին: — Խոսք:

\* Որ կրեաց զմեղս իմ՝ նոյն կրեաց և  
չցաւս իմ: — Այլ:

\* Չամենակիր Բանէն կախեալ է ու-  
սումն քո, լսողութիւնդ: — Ետէիս:

\* Բևեռեսցի բոլորովմբ ի սրտի քում՝  
այն որ բևեռեցան վասն քո՝ ի խաչին:  
— Օհոսք:

\* Տնր ինձ, Տեր Յիսուս... լքանել  
զամենայն ինչ, և ի քո քաղցրութիւնդ  
հայել զսակաւ ընթացս նանիր կենցա-  
ղոյս: Իսպառ բարի, հան ի սրտէ իմէ  
զաշխարհական ցանկութիւն, և վերա-

ծեալ բարձրացոյ միշտ 'ի բուսմէ երեսաց  
 գիտութիւն : Չունիմ յանձնէ քեզ նուէր ,  
 զքեզ՝ սուր ինձ զօրութիւն՝ տալ քեզ ,  
 և ողորմութեան հատուցումն ընդունել :  
 Քեզ փառք յաւիտեանս , ամէն : — Լա՛հ :

\* Ո՛վ խաղաղութիւն , անձկալիզ  
 սրտի իմոյ , ո՛վ Յիսուս , որ ես խաղա-  
 զութիւն իմ , որ հաշտ առնես զիս ընդ  
 Աստուծոյ , ընդ անձին իմոյ և ընդ ամե-  
 նեցուն , և այսու հաշտեցուցանես զեր-  
 կինս ընդ երկրի : Ե՛րբ իցէ , ո՛վ Յիսուս ,  
 հրբ իցէ զի հաւատով թողութեան մեղաց ,  
 անդորրութեամբ խղճի մտացս , քաղցր  
 վստահութեամբ ի գթութիւն քո , հա-  
 ւանութեամբ , կամ յարելով և հաճելով  
 ընդ յաւիտեանական կամս քո՝ յամենայն  
 դէպս կենաց , գտից զխաղաղութիւնն  
 դայն՝ որ ի քեզն է , որ ի քէն դայ , և որ  
 ինքնին իսկ դու ես : — Պա՛հ :

\* Լէ՛ր պաշտպան , լէ՛ր պաշտպան ,  
 Յիսուս , օծեալ Աստուծոյ : Փութա առ-  
 մեզ , փութա առ մեզ , կենարար , որ կե-  
 ցուցեր զԵւս և զծնունդս նորս : Օգնեա

մեզ , օգնեա մեզ , Փրկիչ , որ վրկեցեր  
 զազգս մարդկան՝ ի տաղնապ ժամանա-  
 կին . զի համբերեսցուք շարաշուք մա-  
 հուցն . և իջցուք , հանդիցուք , և յարե-  
 ցուք , լիցուք արժեանի զքեզ տեսանել :  
 — Մարտիր :

\* Չինչ խնդրես՝ զոր ոչ գտցես ի Յի-  
 սուս : Հիւանդ ես . նա է բժիշկ քո . —  
 պանդուխտ ես . նա է դուրիս քո . — ի  
 վիշտս ես . նա է թագաւոր քո . — վտան-  
 դիս ի թշնամեաց . նա պաշտպան քո է . —  
 ի մթան կաս : նա է լոյս քո . — ո՛րբ ես .  
 նա հայր քո է : — Նա է փեսայ քո , բա-  
 րեկամ քո , եղբայր քո : Յիսուս է ամե-  
 նայն՝ որում կարես և սլարտիս բաղձալ՝  
 զի իցէ : — Բե՛ռնարդ :

\* Յորմէ հետէ ծանեայ զՅիսուս և  
 տեսի դոյզն ինչ ի հիացուցիչ գեղոյ նո-  
 րին , ոչ եւս ի ստեղծականացս ինչ հրա-  
 պուրէ զսիրտ իմ . դարչելի է ինձ ամե-  
 նայն յերկրի : — Թե՛րեւ :

\* Ո՛վ մարդիկ , զիտրդ մոլորեալ դան-  
 դաչէք յայսկոյս և յայն՝ խնդրելով

զբարիս մարմնոյ և հոգւոյ . — սիրեցէք  
զՅիսուս, զբարին՝ յորում ամենայն բա-  
րեք, որ բոլորովին բարի է, և ամենայն  
ըղձից ձերոց բաւական : — Անէլ՛ :

\* Սուրբ, սուրբ, սուրբ, սրբութիւն  
մեր և արդարութիւն, յոյս և ուրախու-  
թիւն, Տէր Յիսուս Քրիստոս, քեզ  
փառք յաւիտեան : — Լա՛մբ :



Ա Ս Տ Ո Ւ Ա Մ Ա Մ Ի Ն

\* Ո՛վ է սա՛ որ երևեալս է իբրև զա-  
ռաւօտ գեղեցիկ, իբրև զլուսին ընտիր,  
իբրև զարեգակն զամանալի յօրինեալ :

\* Ամենեկն գեղեցիկ էս, ( ո՛վ կոյս ),  
և արատ ինչ ոչ քո ի քեզ : — Երէ՛ Ձ :

\* Բազում դասերք ստացան զմեծու-  
թիւն, բազումք արարին զօրութիւն .  
բայց՝ դու առաւելեղեր, և անցուցիր զա-  
մենեքումբ : Սուտ հաճութիւն և ընդ-  
ունայն գեղ կնո՞՛ ոչ գոյ ի քեզ : —  
Արա՛մ . ԼԱ 29 :

\* Ոչ ինչ այսպիսի յաշխարհի՛ որպէս  
Աստուածածինս Մարիամ : Շրջեա խոր-  
հրդովք քովք, ո՛վ մարդ, ընդ ամենայն  
արարածո, և տես, թէ իցէ՞ ինչ հանգէտ

ամա, և մեծ քան զՍուրբ Կոյս Մարիամ Աստուածածին: . . — Զերկինս մտածութեամբ յուզեա, և զամենայն զանտեսանելի զօրութիւնս զմտաւ ս՛ծ, և տես, թէ գո՞յ այլ այսպիսի սքանչելիք յամենայն արարածո: . . Թուեա զսքանչելիսն, և սքանչացիր ընդ յաղթութիւն Կուսին . . . Ոչ երբէք զատախազի իգահանն, քանզի ունի ազգակից՝ որ և զ՛հիշտակս յաղթահարէ ի փառս: — Ո՞նք ի Ս. Հարց:

\* Դու քան զամենայն արարածս ամենասիրելի ես, ամենասիրող ես, ամենասիրեցեալ ես: — Ֆր. Սուրբ:

\* Տէր արար զքեզ, հաստատեաց զքեզ, պատրաստեաց զքեզ յարգանդէ, գեղեցիկդ ի կանայս: — Երգ. Թ. 6:

\* Պարտէզ փակեալ և աղբիւր կ՛ընքեալ: — Ն. 12:

\* Ո՞ր աղտիւր այնպիսի անուշահոտութիւն ստացաւ՝ զոր մեր աղտիւրս, հոսմամբ շնորհին խնկեալ լինի: Հոտոտեացիս ի նորա լուսաւոր շուշանն, և

գտցես ի նմա զՀոգւոյն անմահ անուշահոտութիւնն: — Ուրի՛ք:

\* Իւղ անոյղ հեղեալ է անուն քո: — Երգ. Ս. 2:

\* Քանզի իբրև զճնշումն խառնութեան ինկոց կնդրիլ և զմընսի ընդ տաշխին և կասիայի, բորբոքեալ հրով մաքրութեան, բարդեցեր զծուխ բուրման անուշահոտ սրբութեան՝ ի հոտոտելիս Աստուծոյ և Հօր հաճութեան. զարուք մաքրեալ, բարութեամբ լցեալ, հեղութեամբ արձանացեալ, առաքինութեամբ կատարեալ, քաղցրութեամբ աղբիւրացեալ, Սուրբ Աստուածածին: — Նարեկ:

\* Մի է աղանի իմ, կատարեալ իմ:

\* Ե՛կ, ի Լիբանանէ, Հարսն, եկ այսր ի Լիբանանէ. եկեսցես և անցցես ի Գլխոյ հաւատոց: — Երգ. Դ. 7. 8:

\* Սրտակաթ արարեր զմեզ միով ամամբ քով (հեղութեան), և միով քառամանեկաւ պարանոցի քո (խոնարհութեան): — Ն:

\* Լիւր, դուտոր, և տես, զի ցանկա-  
ցաւ թագաւոր (յաւիտենից) գեղոյ քո :  
Սա ինքն է Տէր քո :

\* Տարցին զքեզ թագաւորի՝ կուսանք . .  
ածցին ցնծու թեամբ և ուրախութեամբ,  
և տարցին ի տաճար թագաւորի : —  
Սաղմ. ԽԳ. 16 - 7 :

\* Քանի գեղեցկացար, և քանի քաղ-  
ցրացար . Սէր ի փափկութեան քում :  
— Երեմ. Ե. 6 :

\* Այս ամենայն եղև, զի լցցի որ ա-  
սացաւն ի Տեառնէ . Ահա կոյս յղասցի  
և ծնցի Որդի . և կոչեսցեն զանուն նորա  
Էմմանուէլ, որ թարգմանի, Ընդ մեզ  
Աստուած : — Մատթ. Ա. 22 :

\* Առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ Աս-  
տուծոյ ի Նազարէթ, առ կոյս՝ խօսե-  
ցեալ առն, որում անուն էր Յովսէփ .  
և անուն կուսին՝ Մարիամ : — Ղուկ :

\* Անուան Մարիամու՝ արժան է հա-  
նապազ լծորդ լինել կուսութեան : —  
Բողբոբ :

\* Խօսեալ, բայց ոչ մերձաւորեալ . . .  
խօսեալ, բայց պահեալ : . . Ի ձեռն առն  
խօսելոյ եկն Տէրն, քանզի խօսեալն՝  
այնուհետեւ հարսն երաշխաւորեալ գոյ :

\* Առաքեցաւ Գաբրիէլ՝ հարսնացու  
ցանել զստեղծուածն՝ Ստեղծողին : Ա-  
ռաքեցաւ Գաբրիէլ առ շնչաւոր արքա-  
յարանն թագաւորին հրեշտակաց . . . . .  
Առ կոյս՝ խօսեցեալ Յովսէփայ, և սպա-  
սեալ Յիսուսի : — Ուրեք :

\* Խօսեցեալ առն . . որպէս զի և կու-  
սութիւնն պատուեսցի, և ամուսնու-  
թիւնն մի յոռասցի : . . Ուղինչ կուսու-  
թեան յառնխօսութենէ վնասեալ : —  
Բարեղ :

\* Եւ եկեալ առ նա (հրեշտակն)  
ասէ . Ուրախ լեր, Բերկրեալք, Տէր ընդ  
քեզ : — Ղուկ. Ա :

\* Ուրախ լեր, Մարիամ, սպաս ամե-  
նայն տիեզերաց : — Կեբեղ :

\* Նոյն ինքն Տէրն ընդ քեզ, և դար-  
ձեալ ի քէն : — Գր. Ստեղ :

\* Ուրախ լիք, Մարիամ, Կոյս և Մայր  
և Աղախին: Կոյս, վասն որոյ ի քէն ի  
կուսէզ ծնաւ. Մայր, վասն որոյ ի գերկս  
քո բարձաւ և կաթածք քո սնաւ. Աղա-  
խին, վասն առեցեկոյ ի քէն զծառայի  
կերպարանս: — Կեօրեղ Աղէփս:

\* Մի երկնչիւր, զի գտեր զչնորհս յԱս-  
ստուծոյ: — Ղուի. Ա:

\* Ի հրեշտակին երեսացն ոչ երկեաւ,  
որպէս յուրք ի մարգարէիցն. վասն  
զի ճմարիտ կուսուծիւն՝ աղբակցու-  
ծիւն ունի առ հրեշտակս... (այլ) յին-  
քեան մտածէր և ասէր. Մի՞ արդեօք  
չար ինչ ստացեալ ունի ողջոյնս այս.  
մի՞ արդեօք թոյնք ինչ ի մեղրիւ գոյ  
թաքուցեալ: — Եփրեմ:

\* Սրբարեւ լի էր շնորհօք, որում  
զայն՝ որով շնորհքն և ճմարուծիւն  
եղեն՝ զՅիսուս Քրիստոս՝ ծնանեւ պար-  
գեւեցաւ: — Լեւոն Պատ:

\* Ահա յղասջիւր, և ծնցես Որդի...  
Նա եղիցի մեծ, և Որդի Բարձրեկոյ կո-  
չեսցի: — Ղուի. Ա. 51:

Ասէ Մարիամ. Զխորդ լինիցի ինձ  
այդ. զի զայր ոչ գիտեմ: — Ն:

Ասէ ցնա հրեշտակն. Հոգի Սուրբ  
եկեսցէ ի քեզ, և զօրութիւն Բարձրե-  
կոյն հովանի լիցի ի վերայ քո: — Ն:

\* Ուր Հոգի Սուրբ է՝ ամենայն ինչ  
յօրինեալ է պատրաստագոյն: Ուր աս-  
տուածային շնորհն՝ ամենայն ինչ կա-  
րելի է: Գր. Ստ՝ն: Լ:

\* Ահա առեկի կաս, գեղեցիկ. աչք  
քո աղանկք. բաց ի լուծիւնէդ քումէ:  
— Երեմ. Գ. 1:

\* Ընդէր երկընչիս առնուլ ըզնորհս ի ձեռս.

Որում տայ Աստուած ըզՄիածինն Որդի...

Հոգին փրկարար այժմբնակէ ի քեզ.

Տնւր միայն ըզկամոզ՝ իմ աւետեացս հաղորդ:

Եւ առ զօրութիւն ըզԲարձրեկոյն ի ծոցդ: — Տար:

\* Ասէ Մարիամ. Ահա առեկի կամ  
աղախին Տեառն. Եղիցի ինձ ըստ բանի  
քում: — Ղուի:

\* Զայն տատրակի լսելի եղև յերկրի  
մերում: — Երեմ:

\* Ահաւաստիկ կամ աղախին Տեառն : Արտաքս եհան զամենայն խորհուրդ ի սրտէ իւրմէ , և ցողարկեաց սիրով զսե- նեակ իւր : . . Նուիրեաց զանձն՝ աղախին Տեառն , և ոչ բաժանեաց զանձն յակե- տարանութիենէ հրեշտակին : Ծագեաց ի Մարիամ ճառագայթին լուսախայլ , և ոչ բարժանեցաւ յետութիենէ Հօր . ամե- նեին առ Մարիամ , և ամենեին առ Հօր : — Յովհ . Եղե՛ն :

\* Եւ Բանն՝ մարմին եղև : — Յովհ :

\* Խաչեալն (վշտօք) զխաչեալն յլա- ցաւ : — Բնալիւնդ :

\* Մտանէր և ելանէր , և դուռն կու- սութեան փակեալ սրահէր : — Պ . Սեւն :

\* Պարտ և պատշաճ իսկ էր առանց խռովութեան լինել այնմ արգանդի , յորում ամենեցուն արարիչն էր մտեալ բնակել . և ազատ ի տրտմութիենէ՝ ու գւղյն՝ որ արժանի եղև լինել պաշտօնեայ այնպիսի խորհրդոց : — Ուիթ . Մարի :

\* Կոյսն ետ զբանն , և ընկալաւ զմա- նուկն ի ծոց իւր : — Եբրե՛յ :

\* Յամեցոյց Տէր զմարդեղութիւնն , մինչև էառ ի կուսէն հաւանութիւն :

\* Ասաց Աստուած , և եղև լոյս . Մա- ըիամ ասաց , և Բանն մարմնացաւ :

\* Չմահացուն էառ Յիսուս , զանմահն ետ մօր իւրում : — Այլ :

\* Բովանդակ մարդկութիւն նորոգե- ցաւ ի կուսական ծոցին : — Այլ :

\* Առաջին կոյս՝ Երրորդութիւնն : — Գր . Աստուածացի :

\* Երկրորդ կոյս՝ Մարիամ : — Ա՛յբրս :

\* Երրորդութեան լրումն Մարիամ : — Հիւսիս :

\* Հարսնացեալն Հոգւոյն՝ հաղորդ է շնորհաբաշխութեանց : — Պսալտի :

\* Որպէս մարգարիտ՝ յերկուց բնու- թեանց , ի փայլականէ և ի ջրոյ և յան- յայտ նշանաց ծովու յառաջագայի , այսպէս և Տէր մեր Յիսուս Քրիստոս , անշփոթաբար և անյեղաբար՝ ի մա- թուր և ի սուրբ կուսէն յառաջագայիւր , ճշմարիտ աստուածութեամբ և կատա- րեալ մարդկութեամբն : — Գր . Ստանլ :

\* Առաջին ծնունդն ի վեր է քան զժամանակս, և ծածուկ է վերջինս յամենայնէ, և պատրուակեալ ընդ կուսական մատանեաւ: — Եփեփ:

\* Ի դէպ է երկրի պանծալ և պարծեւ, և ասեւ, Երկիր էի և եղէ երկինք. տարայ ի փոքր տեղով՝ զոր դուն (ով երկինք) տանել ոչ կարէիր. ստեղծեալն յինէն՝ ծնաւ տղայ զքո և զիմ Արարիչն: — Թեփեփ:

\* Ծնունդ երկրածնին, և ծնող զամենեսեան ծնողի. կուսութեամբ մայր, և մայր գոլով կոյս, ըստ ճշմարտութեան. երկրքումբք մի այսոքիւք և եղեալ և անուանեալ. դործոյ հրաշափառագունի սկիզբն և կամ կատարած: — Յճ. Սարի:

\* Կոյսն հաւատայր հրեշտակին՝ հաւառակ բնութեան. Չաքարիա թերահաւատէր ընդ բնութիւն: Կոյսն խնդրէ խմանալ զկատարեալ իրացն կարգ. Չաքարիա անհնարին համարի զկարգեալն յԱստուծոյ: Սա օրինակօք իսկ չհաւա

տայ. Կոյսն առանց օրինակի բերի ի հաւատս: Սքանչանայ Կոյսն ընդ ծնունդ կուսի. Չաքարիա սքանչանայ ընդ յղութիւն ամուսնութեան: — Պեփ. Ոսի:

\* Կայր առաջի Յովսեփայ հարսն յղի, այլ կոյս. արգասաւոր՝ զաւակաւ. այլ լի ամօթխածութեաբ. վարանէր ընդ յղութիւնն, այլ ոչ երկմտէր ընդ անարատութիւնն: Չպատիւ մայրութեան արկեալ էր զանձամբ, այլ ոչ մերկացեալ զկուսութեանն պատմուճան: — Ն:

\* Չինն ամիս յարգանդի տարաւ ըզսէր. ո՛րքան ապ սիրալի բղէ: — Այլ:

\* Աներևոյթ փառացն Հօր նկարագիր՝ անյեղասլէս ի ծառայական խոնարհի պատկեր, ի յարգանդի՝ Հողուով մաքրելոյ: — Անսահմանն յեութեան՝ սահմանեւեացս էացուցի՛ ի վեր քան զբան սահմանի յորովայնի սրբուհո կուսին: — Շարի:

\* Ուրախ լեր, Մարիամ, սուրբ Աստուածածին, զի ի տաճարիդ մաքրեցելոյ յանկարծակի եկն Տէր: — Ն:

\* Դու պարծանք կուսուլթեան մարդկան . Դու ուրախուլթիւն հրեշտակաց . Դու բարձող անիծիցն . Դու չմարիտ արևելք արեգականն արդարուլթեան , յորմէ ծագեաց վրիլուլթիւն տիեզերաց :

\* Երիս խորհուրդս սոսկալիս է քեզ տեսանի , Աստուածածին . Յղուլթիւն անսերմնական , Ծնունդ անարատ , կուսուլթիւն յետ ծննդեան , մնալով անասպական : — Ն :

\* Ձէ որում ոչն հանդուրժէին բոցանշոյլ Սերովբէքն , նա բնակեցաւ է քում որովայնի : — Ն :

\* Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ , գնաց ի լեռնակողմն փուլթապէս :

\* Ահաասիկ սա եկն՝ վազս առնըլով ի վերայ լերանց , խայտալով ի վերայ բլրոց : — Երգ . Բ . 8 :

\* Շպարէր զժաղկաւէտ բլուրսն՝ ոստիցն կնքով : — Ասլ :

\* Մարիամ՝ որ ընդ Յիսուսի կրէր զչնորհս ի ծոցին , աստուածային ազ-

դեցուլթեամբ փուլթայր երթալ սփռել զայն ի տուն Զաքարիայ , ուր յղացեալ էր Յովհաննէս : — Պոսիւն :

\* Անչափ էր խոնարհուլթիւն նորա և հեղուլթիւն և հանդարտուլթիւն . զի ինքն երթայր յառաջագոյն , և զԵղիսաբէլթ ողջունէր . ոչ ասելով ինքեան , կայս եմ ես , իսկ նա ամուլ . ես Աստուածածին՝ իսկ նա մարգարէածին . նա՛ մայր ձայնին , ես Բանին Հօր : — Տէ՛նն :

\* Ե՛կ , մերձաւոր իմ , գեղեցիկ իմ , աղաւնի իմ . զի ահա ձմեռն էանց . անձրեւք անցին և գնացեալ մեկնեցան . ծաղիկք երևեցան յերկրի մերում . ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում . թղենի արձակեաց զբողբոջ իւր . որթք մեր ծագլկեալք ետուն զհոտս իւրեանց : — Արի , եկ , մերձաւոր իմ , գեղեցիկ իմ , աղաւնի իմ . և եկ դու աղաւնեակ իմ , ընդ հովանեաւ վիմիդ . երևեցո ինձ գերեսս քո , և լսելի արա ինձ զբարբառքո . զի բարբառ քո քաղցր է , և տեսիլքո գեղեցիկ : — Երգ . Բ . 10-4 :

\* Եմուտ (Մարիամ) ի տուն Չաքարիայ, և ետ ողջոյն Եղիսաբեթի. և խաղաց մանուկն յորովայնի նորա :

\* Պարտ էր ի խաղաղութեանն մօրէ՛ խաղաղութեանն յառաջագայիլ : — Տէ՛հ :

\* Ընդ ժամանեւ ձայնի ողջունին Մարիամու առ Եղիսաբեթ, խայտացեր, Չայնդ (Յովաննէս), ընդ առաջ Բանին Աստուծոյ, յորովայնէ ամբոյն՝ երկրպագելով... և բերանով մօր քո օրհնարանէիր : — Շարա՛հ :

\* Օրհնեալ ես դու ի կանայս. և օրհնեալ է պտուղ որովայնի քո : — Ղու՛ի Ա :

\* Քանզի մի հատ է, և ոչ յանին տիեզերք զկալն : — Տէ՛հն :

\* Եւ ուստի՛ է ինձ այս, զի եկեսցէ Մայր Տեառն իմոյ առ իս : — Ղու՛ի :

\* Ո՛վ զՏիրուհի աղախինդ՝ առաքեաց առ իս : — Տէ՛հն :

\* Եւ երանի որ հաւատասցէ եթէ եղիցի կատարումն ասացելոցս նմա՛ ի Տեառնէ. — Ղու՛ի :

\* Երանելի՛ ես դու, ո՛վ Աստուածա՛

ծին, որ հաւատացեր, թէ եղիցի կատարումն ասացելոցդ՝ ի Տեառնէ : ... Ընդ Աստուածածնին և մեք ամենեքեան ընկալցուք զերանութիւնն, որք նախանձաւորք եմք և երկրպագեմք սրբոյ Աստուածածնին, և ընդ կուսին՝ որք մաքրութեան կուսին նմանին. ընդ Մօրն Եմանուելի, որք զանձինս իւրեանց սաճար Եմանուելի արարին, և փեսայարան զանձինս իւրեանց կտուն : — Տէ՛հ :

\* Մայր և կոյս և Աղախին Քրիստոսի, որ բարեխօսդ ես միշտ աշխարհի, քեզ երանեն ամենայն ազինք : — Շարա՛հ :

\* Ասէ Մարիամ. Մեծացուցէ անձն իմ զՏէր. և ցնծացաւ հոգի իմ յԱստուած փրկիչ իմ : — Ղու՛ի :

\* Յնծայր և ուրախանայր ի Տէրն թագաւորաց, որ բնակեալէր ի նմա. ևս առաւել զարմանայր և զարհուրէր, մաչէր, երկնչէր, և զարձեալ քաջալէրէր. զուարճանայր, մեծանայր, պայծառանայր : — Ե՛րբէ՛հ :

\* Ահա յայսմ հետէ երանեսցին ինձ ամենայն ազգք : — Ղու՛ի :

\* Ահա շրթամբ զքեզ երանեցուք, Մայրդ Յիսուսի, Աստուածածին Մարիամ, որ այնքան շնորհաց ընդունակ եղեր, և անկեալ երկիր պազանեմք առաջի մարդասէր անոխակալ և անյեշաչար կամաց քոց, Մայրդ շնորհաց: — Աղօր՝ Նոյնեաց:

\* Երանելիդ ամենեցուն, զԱստուած տանելով զքնութեամբ անտանելին, զամենեցունց ամենակալն արժանի եղեր կրել յորովայնի, որ երևեցաւ ազգի մարդկան: — Շարախ:

\* Հրեշտակ ի մարդկանէ. մարմնատեսիւ քերովքէ. երկնաւոր արքայուհի. անխաւն իբրև զօր, մաքուր որպէս զլոյս, անշաղախ ըստ նմանութեան արուսեկին բարձրութեան. դերպանց քան զքնակութիւն անկոխելին սըրբութեանց. երանաւոր խոստմանն տեղի. Եղեմ շնչական. ծառ կենացն անմահից, բոցեղէն սրովն պարունակեալ. ի բարձրեալն Հօրէ զօրացեալ և հովանացեալ, հանդատեամբ Հոգւոյն հանդերձեալ և

մաքրագործեալ, բնակութեամբ Որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ: Միածինն Հօր՝ և քեզ անդրանիկ, որդիքո՛ ծննդեամբ, և տէր՝ արարչութեամբ: — Նորեկ. Զ:

\* Եկաց Մարիամ առ (Եղիսաբեթի) իբրև ամիսս երիս. և դարձաւ ի տուն եւր: — Ղուկ. Ա:

\* Ի հասանիւ ծննդոցն, Եղիսաբեթի՛ ոչ կամէր զմեալ կուսին անդէն, պատկառելով իմն, և ոչ արժանի զանձն համարելով առ ընթեր իւրոյ ծննդեանն լինել կուսին. վասն զի յոյժ բարձրագոյն խորհուրդ ածէր զնմանէ: — Կիւրեղ:

\* Եկն անկառ առաջի Մարիամու, աղաչէր զնա և ասէր. Եկիր ողջունիւ, երթ խաղաղութեամբ, մայր թագաւորին մեծի. զի ոչ է պատշաճ՝ զծառայ՝ պաշտել արքայի: — Եդրեմ:

\* Ոչ էր օրէն այնմ՝ որ զՏէրն յղացեալ ունէր, ի սղասու կալ այնմ՝ որ զծառայն ծնանէր: — Իբնուր:

\* Որ շնորհս բերէ՝ յուշիկ գնայցէ՝  
 դի կատարեսցին արդիւնք շնորհացն։ Չէր  
 բաւական միանգամ ևեթ խայտացու-  
 ցանեւ զՅովհաննէս՝ յորովայնի մօրն՝  
 կամ տալ սմա ասել՝ Երանի քեզ. այլ է  
 դէպ էր և յանկուցանեւ է դեղ շնոր-  
 հացն։ — Պսսիւտ։

\* Ո՛վ խոնարհութիւն, ո՛վ լուութիւն  
 Մարիամու, որ ոչ լուծաւ՝ բայց առ աս-  
 տուածաշուքն օրհնեիրք մի ևեթ։ Ո՛տայր  
 ինձ նմանեւ քեզ՝ զամենայն աւուրս կե-  
 նաց իմոց։ — Ն։

\* Խօսեալ Մարիամ Յովսէփու, մինչ-  
 չե կէկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ  
 է Հոգւոյն Սրբոյ։ Եւ Յովսէփ այր նորա՝  
 քանզի արդար էր՝ խորհեցաւ լուեկայն  
 արձակել զնա։ — Մատթ. Ա. 18-9։

\* Յորպիսի փորձ ոչ արկանէ Աս-  
 տուած զհոգիս սուրբս։ . . Կարէր խնա-  
 յել նմա զտագնապն, յայտնելով զխոր-  
 հուրք յղութեան ողջխոտ հարսինն .  
 այլ առաքինութիւն նորա ոչ կանդխտա-

նայր է փորձանսն, և ոչ յաղթութիւնն  
 է վերայ կրից՝ որ քան զբնաւս աննուա-  
 ճեւէ է։ Տեսանէր և Մարիամ զվարանս  
 փեսային, այլ զամենայն յԱստուած ա-  
 տաստան արարեալ՝ կայր յանխուով ան-  
 դորրու։ — Պսսիւտ։

\* Ճշմարիտ փեսայ ես դու, Յովսէփ,  
 Սրբուհոյ մօրն Յիսուսի, և ընդ նմին  
 մասնակից Որդւոյն սիրելոյ և շնորհաց  
 սիրոյ նորին։ — Ն։

\* Եւ Յովսէփ է Բեթղէհէմ Մարեմաւ  
 կանդերձ։ — Ղսւ. Բ. 4։ — Ելցուք և  
 մեք գրել է Բեթղէհէմ, որ է Տուն հացի .  
 երթիցուք ճաշակել զհացն երկնաւոր . . .  
 Այս է հացն՝ զոր տայ Աստուած աղքա-  
 տաց, է ծննդեանն Յիսուսի, եթէ սի-  
 բիցեն ընդ նմա զաղքատութիւն . «Կե-  
 բիցեն տնանկք և յազեսցին», եթէ սի-  
 բիցեն զաղքատութիւն Տեսուն խրեանց,  
 և գայցեն երկիր պագանեւ նմա։ — Ն։

\* Ծնաւ (Սուրբ Կոյսն) զՈրդին իւր  
 զանդրանիկ, և պատեաց է խանձա-  
 բուրս, և եղ զնա է մսուր։ — Ղսւ. 1։ —

Ախու մի լքեալ և ամայի, և մսուր մի յընկողին . արժանաւոր տեղի ապաստանի այնմ՝ որ սասցն յաճել հասակին, « Աղուեսուց որչք գոն և թուչնոց երկնից բոյնք, իսկ Որդւոյ մարդոյ ոչ գոյ ուր դիցե՛ գլուխ իւր » : . . — Ե՛լ արդ Աստուածայինդ մանկիկ . պատրաստ է ամենայն ի նշանակ քումդ աղքատութեան : — Ե՛լ նա որպէս նետ փայլական, որպէս ճառագայթ մի արեգական : — Սքանչանայ մայրն ընդ յանկարծերեւեաց տեսիլն : . . Հրաշապէս յղացեալ, գերահրաշ ևս ծնանի . և Սուրբք՝ սքանչելի ևս համարին զ՛առ ի կուսէ ծնունդն՝ քան զյղանալն : — Պսսիսի :

\* Ոչ կուսութիւնն զծնունդն խափանեաց, և ոչ ծնունդն զկուսութիւնն ապականեաց : — Թիսիսի :

\* Ոչ բան զմարդասիրութիւնն չափեւկարէ, և ոչ զբազմամեծար արգանդ Սկուսին՝ ի համարբերեւզօրէ : — Պ. Սիսի :

\* Ծնաւ զՈրդի իւր՝ զանդրանիկ ամենայն արարածոց և ընկողնեցոյց ի

մսուր : Խանձարրեաց զմարգործողն ակենայն արարածոց : Ընկողնեցոյց ի մսուր՝ զնստեալն ի վերայ քերովբէից և զ՛ ի բերուց հրեշտակաց երգաբանեալն : — Գր. Ստանլ :

\* Երանի՛ որովայնին որ կրեաց զքեզ (Տէր Յիսուս), և ստեանցն՝ որ դէկցուցին զքեզ : — Ղսի :

\* Բնութիւն ծնողին՝ կուսի, և ստինքըն՝ մօր : . . . Ստինքն ձայնէին, կաթն բղխեցաք . բնութիւնն աղաղակէր, թէ՛ կնքեալ մնացի : . . Մայրն ասէր, կոյս եմ և մանուկ դեիցուցանեմ . կուսութեան դրունքն ձայնէին, Փակեալ մնացաք : . . Ոչ գիտեմ զինչ տեսանեմ, զի կատարին առ քեզ, ո՛վ Աստուածամայր տիրուհի : . . Մի բնութիւն՝ ցուցանէր ըզգործ երկու բնութեանն . բնութեամբ որով ոչ էր՝ եղև մարդ, և որով էր՝ մնաց : . . Ոչ էր մայր՝ և եղև, էր կոյս, և մնաց որպէս և էր : — Թիսիսի :

\* Որ ի կոյս և յանարօր արգանդէ Բան բեղնատրեցեր, ցաւոց անիծից

արմատ օրհնութեան, հօրն Ալեամայ  
որդի բերկրութեան. վասն որոյ շնորհ  
ունեկով քեզ՝ օհնեալքս ի յՈրդիդ քո  
փրկիչ աշխարհի, երանեմք քեզ, Ս.  
Աստուածածին: — Նաբի:

\* Այսն զի ոչ ընդ քեզ միայն, այլ և ի  
քեզ. ոչ միայն փարեցաւ բազմեալ, այլ  
և բնակեցաւ տաղաւարեալ. ոչ միայն  
միացաւ ի վանդուած մարմնոյ, այլ և  
մարդացաւ, առեալ զկերպարան ի քէն  
սկսելոյ: — Ն:

\* Ո՛վ որովայն, յորում հասարակաց  
ամենեցուն ազատութեան կտակ գրե-  
ցաւ. ո՛վ որովայն, յորում՝ հակառակ  
մահուն զէն գործեցաւ. ո՛վ որովայն,  
յորում՝ բնութեանս մշակ առանց սեր-  
ման բուսաւ: — Պրոֆէ:

\* Ո՛վ որովայն աստուածակերող մայր աս-  
տուածածնող. աստուածաշօշափ ձեռք.  
աստուածահանդիստ գիրկ. աստուածա-  
զխաց ստինք. աստուածաբարձ բազուկք.  
աստուածամերձ բերան. աստուածա-  
համբոյր շրթունք. աստուածահայեաց աչք

աստուածախօս լեզու. աստուածընկալ  
խորան. աստուածաբնակ տաճար: Մի  
մուանար զխոստովանողս քո, որ քեւ  
փառաւորեմք՝ զՀայր և զՈրդի և զՍ.  
Հոգին: — Աղօթի Նաբիեայ:

\* Եւ Մարիամ զամենայն զբանս  
զայստսիկ սկսէր, և խելամուտ լինէր  
ի սրտի իւրում — Ղաֆ. Բ. 19.

\* Ոչ գիտեմ՝ ո՞ր լաւ իցէ. միանալ  
ընդ լուծեան Մարիամու, եթէ բա-  
ցատրել բանիւ զարժանաւորութիւն նո-  
րին: . . . Որպիսի բանս չէր նա կարող  
ասել զՈրդւոյն սիրեցելոյ. այլ թողու  
նա ամենեցուն գովել զնա. լսէ հօ-  
վուացն. չասէ ինչ մոգուցն եկելոց յեր-  
կըրպագութիւն. և սքանչացեալ կայ: . . .  
Քանզի զինչ մարթ էր ասել, կամ զինչ  
կարող էր ասել Մարիամ՝ առ ի հաւա-  
սարիւ զգացման իւրում: — Պրոֆէ:

\* Ասէ Սիմէովն, ՅՄարիամ. Եւ ընդ  
քո անձն անցցէ սուր զի յայտնեսցին ի  
բազում սրտից խորհուրդք: — Ղաֆ:

\* Սուր ասէ զբանն փորձանաց, զբըն-

նիչն խորհրդոց... զի մերձենալով է խաչն, և տեսանելով զլեալան, լսելով զձայնսն՝ զկնի Գաբրիելի վկայութեան, յետ անճառելի գիտութեանն, աստուածային յղութեանն, յետ սքանչելեացն ցուցելոց, լիցի ինչ և ի քում անձինդ տատանումն: — Բարօ՞ղ:

\* Տեսցես դու զամենեսին հակառակել Արդւոյ քո սիրելւոյ, և խոցեսցի սիրտ քո. և չիք սուր հատու քան զցաւս քո. այնքան վերօք հարցի սիրտ քո՝ որքան տեսցես յԱրդիւ քո վէրս. վարեսցիս դու ի խաչ անդր, մեռանել հազար մահուամբք: ... Եւ յայտնեսցին առաքաստեալ խորհուրդք սրտից ամբարտաւանից, կեղծաւորաց հակառակողացն Յիսուսի, և վարդապետութեան նորին: — Պարօ՞ղ:

\* Եւ մայր նորա սահէր զամենայն զբանսն ի սրտի իւրում: — Ղարօ՞ղ:

\* Յիսուս պարապէր ի վաստակ արուեստին, Մարիամ՝ ի խորհել զտիւ և զգիշեր՝ զգաղանիս Աստուծոյ: Իսկ

յորժամ բարձաւ ի նմանէ Որդին՝ միթէ փոխեաց մայրն զպարապումն իւր: Չիցէ պարապումն գովելի՝ սահելն ի սրտի զոր միանգամ ետեսն յՈրդին սիրեցեալ: Մարիամ զմտաւ ածէր զՅիսուս... Սուրբ գիրք շասեն ինչ այլ զնմանէ. այլ լուութիւն գրոց զաստուածային Մօրէն՝ չիցէ գերագոյն և պերճախօս քան զամենայն ճառս բանից: Ո՞վ մարդ, կարի յոյժ ներգործող և անհանգիստ քոյովչ գործօնէութեամբ, ուսիր շատանալ՝ զՅիսուս յիշելով, նմա լսելով ի ներքուստ, և յեղյեղելով զբանս նորին: — Պարօ՞ղ:

\* Նման նմա ոչ եղև յամենայն ազգս. վասն զի ոչ այլ ումէք իմանի Աստուած՝ հոգեւոր յղութեամբ, բայց միայն Աստուածածին Կոյսն... զի նովաւ յայտնեցաւ խորհուրդն՝ որ ծածկեալն էր: — Բարօ՞ղ:

\* Պարանոց է մարդկութեանս Ս. Կոյսն. ի նմա՝ համբուրեալ զբնութիւնս՝ միացաւ (Քրիստոս) ընդ սա: Որ դուս-

տըր էր հաւատոց Աբրահամու, և ոչ նախանձաբեկ ժողովարանին: — Լա՛մբ:

\* Յիսուս առանց Մարիամայ ոչ ծնաւ նի. առանց Մարիամայ ոչ գտանի. առանց Մարիամայ ոչ մեռանի: — Ա՛յլ:

\* Թէ ողորմելոյն խղճայր, և ցաւալըցեղոյն ցաւակցէր, և մահակցեղոյն մահակցէր, ապաքէն ոչ համբերութեամբ բեկանէր. քանզի նա ծանուցեալ էր զբոթ աստուածային խորհրդոյն. նա մեծ սիրոյն Քրիստոսի բորբոքէ. նա փրկութեան մերոյ հարկաւոր միջնորդ. ուրախութիւն տրամուլթեան. յորժամ և Որդւոյն ի ներբուստ սրտէն դառնութեամբ ցաւակցէր, և զինքն պատարաստեալ էր վասն փրկութեան մերոյ ի մահ տալ: — Ա՛յլ:

\* Տիրամայրն՝ յորժամ յղացաւ ըզվրէժխնդիրն և զփրկիչն, ասէր ամենահեղ ձայնիւն. Աբար զօրութիւն բազկաւ իւրով: — Լա՛մբ:

\* Չղէմս ի յերկիր հղեալ՝ պաղատիմ մօրդ Յիսուսի, բարեխօսեա, մաղչ

Թեա քաւութիւն ինձ մեղաւորի, դու զօրաւոր փրկանակ կենաց, իսկուհի երկնի: — Նա՛րէի, ի՞ջ:

\* Մանուկ մոլորեալ ուրանօր և երաթիցէ՛ զմայրն վերածայնեալ կարգայ: — Յա՛յ. ի՞հոոո:

\* Միայն ամենասուրբ Կոյսն զ՛առ ի հրեշտակաց զ՛անգլիտեալն ընկալաւ, և ծնաւ անճառապէս զանճառելին: — Ա՛յլ:

\* Կոյսն Սուրբ ոչ գտաւ ի Թաբոր լերին՝ յայլակերպութեանն Յիսուսի, այլ ի Գողգոթթա. ուր տեսանէր մահուներս, բեւեռս, փուշս, տկարութիւնս, խաւարս, անօգնականութիւնս: Չիցէ՛ մեզ շնորհ մեծ՝ նամանող լինել նմա: — Տր. Սա՛րգ:

\* Սերալիր քահանայութիւն. առ խաչիւն կացեալ Մարիամ, ոչ ժուժայր հայել ընդ Յիսուս, զի զվրսն տեսանէր. ոչ ընդ երկիր, զի զարիւնն. ոչ ընդ դահիճոն, զի տանջանարանս. ցաւն յորդորէր զնա ի բաց կալ, այլ սէր ի

նոյն կարգայր . վկայ մեծ էր թողուլ  
 գործին ի մահ , որպէս թողին Հայրն և  
 մարդիկ . հաղորդ գոլով անմահութեանն՝  
 հաղորդ էր և անսահման ցաւոցն . և  
 կայր հանդէպ Յիսուս , իբրև հայելի  
 կրից նորին : — Ա՛յ :

\* Բաւական էր տեսիլ Գողգոթայ ի  
 մահ Մարիամու , եթէ ոչ արգելուին  
 պարտք մայրենիք . այնու կայր անյող-  
 դողք առ խաչին՝ ծիպոյր սիրտն՝ այլ  
 ոչ գեղոյր . որպէս ալիք ծովու մրրկա-  
 վարք դիմեն ցաւոցն և յետս նհանջին  
 հրամանաւ Հաստիին , այսպէս պարտք  
 և սէք մրցէին ի Մարիամ , ի կամեն  
 օգնել Միածնի իւրում : — Ա՛յ :

\* Զարմանք են գիշիւ Աբրահամ ընդ  
 սուր իւր՝ ի դոճ որդոյն . այլ մեծագոյն  
 ևս զարմանք են կենդանի մնալն Մա-  
 րիամու : Ի մահուան Յիսուսի դժբա-  
 ցան ամենայն արարածք , Մարիամ  
 միայն մնաց անսասան : — Ն :

\* Որ դժուարընտել դաստիարական  
 խաչի՝ վարժեալ կրթեցար , Որդւոյ քո

կցորդակցու թեամբ . միատեակն ժուժ-  
 կալու թեամբ՝ կրելով զերաշխեզ վշտաց  
 ծնիցեկոյք ի քէն Տեառն , մշտաչարչարն  
 մեռելու թեամբ , անձնատուր տօթով  
 խարուկեալ : Իբրև զորով անարատ՝ քա-  
 հանայական նուիրմամբ ի վերայ սիրոյ  
 սեղանոյդ մատեար . . . մաքուր պատա-  
 րաք . ի ճգնաւորական վարս ողջակի-  
 դեալ , քան թէ ի սիրոյ հանդէս խող-  
 իտղեալ : Վասն այսորիկ ի նուէր քոյ  
 զենման՝ հրեշտակացն սլարք պաշտպա-  
 նեալ , ընդ առաքելոցն գումար դասա-  
 կըցեալ , զմիայն արժանիչ պատուեալ  
 գովէին , Ս . Աստուածածին : — Նշե՛լ :

\* Ո՛վ , սրբան մեծ է ի քեղդ աւար-  
 տեալ խորհուրդ , Սրբուհի : . Ո՛վ շնոր-  
 հաշուք գեղով արիւսուոր ծածկու թիւ  
 յանմատոյց գեղեցկութենէն պաճոյճ  
 փաղփաղեալ : Ո՛վ կամեստ հեղութեամբ ,  
 խոնարհ անբլծութեամբ , կերպասիք  
 լուսոյ ի Հոգւոյն պարասքօղեցեալ : Ո՛վ  
 դարդաք երկնայնովք ոսկէզօժ սրբու-  
 թեամբ , արժաթափայլ մաքրութեամբ ,

ականակապ պսակ քեզ փառաց՝ դճարձ  
 րեղոյն հովանի ի գլուխ ընկալեալ: Ո՛վ  
 քառեակ մանեկաւ՝ նշուլափայլ մա-  
 քութ ուլանցն յեռամամբ, Աստուծոյ հո-  
 գւոյ և մարմնոյ խառնմամբ, ի մի էու-  
 թիւն երիցն հիւամամբ՝ ի յՈրբւոյն  
 լանջք սուրբ քո շնորհօք աւուցեալ: — Ն:

\* Ի մարդկային զարմէ՝ հրեշտակ երկ-  
 նային. յեղծականաց սեռիցս՝ անմահ  
 Սերովբէ... ի յաւուրց նախնեացն՝ ճիւ-  
 օրհնութեան. ցօղոյն հանդարտի՝ ամու  
 անձրեւածիր. արեւուն ծագման՝ ակն  
 արփխափայլ. մերկացելոյ այգոյն՝ աստղ  
 առաւօտի. գիշերային մթոյն՝ խօսնակ  
 բերկրանաց. օրինի ստուերին՝ տառ ճըշ-  
 մարտաճառ... — Ո՛ր բան՝ բաղլատե-  
 լով զանհամեմատ քո մեծութիւնդ՝ լիցի  
 կարող գերահոչակէլ: Արարչին մայր,  
 անհասին ծնող, անբաւին գրկարան,  
 Ամենակալին յանձանձիչ, փառազարդու  
 ղին զգեցուցիչ, վերօրհնելոյն գրգիչ:..  
 Կու զկենցաղոյս ընթացք՝ ընդ լուսա-  
 զարդ կենացն շաւիղ ձգեցեր. և ըստ

նմանութեան արագման օղային թռչնոյ՝  
 ի յանցաւորաց աստի փոխեցար, և ի  
 մէջ դասուց հրեշտակաց՝ ունող Աստուծոյ  
 յայտնեալ ծանուցար. և լուսարփի ամ-  
 պով առ ի նոցանէ պատուեալ՝ համբար-  
 ձար. և հողեղէն հաստուած՝ ի քրովբէից  
 աղի հանգուցար:.. Մեղուցելոյ կնոջն  
 անաջնոյ՝ առանց յանցանաց դաւակ  
 գովեցար. և ամենայն անբժայ ընտրու-  
 թեան՝ պսակ սրբութեան դու դաւանե-  
 ցար... և ի խորոց ծովէ աշխարհի՝ շու-  
 շանական շաւղօք համբարձար:

\* Երբորդութեանն անտես թաքնու-  
 թեան՝ խորհրդակից սիրոյ կոչեցար. և  
 ծածուկ հաւաքման Քանին՝ իբր լուսատու  
 ձործով պատեցար. և անքակէին աերու-  
 թեան՝ սահման սկսման վերակարգեցար.  
 և ի սրբասնեալ միջոց քո ստեանց՝ զան-  
 կէտն ի տաշխին ծրար թարուցեր... և  
 միջնորդ կենաց երկոցունց՝ սքանչելա-  
 պէս համարձակեցար:.. Քանզի ի քէն  
 հիմնադրեաց զսկիղբն մարդեղութեան՝  
 Անեղն իսկութիւն... և քեւ՝ ամենայն

այս պատրաստութիւնն բարեբաստու  
թեան բազմեբանեան յուսոյ կրճուա  
նաց՝ մեզ հանդերձեցաւ: — Ն:

\* Գլխաւորեալ ի քեզ զիմանալին  
փարթամ մեծութիւն, սլացեալ հասեր  
ի բարձունս երկնից, իբր անընդունակ  
սողականութեան և մահու լուծման՝  
մարմին, յորմէ սրտկառեաց ամօթով  
սլարտիքն մահու և ցուցար բնակիչ ար  
ժանապատիւ կենդանեաց երկրին, Տեառ  
նըզ կենակից, Սուրբ Տիրարայր: . . .

Միայն երանեալ և բարեբանեալ, Հօրն  
հաճութեամբ՝ հովանաւորեալ, Որդւոյն  
ծնող, Հոգւոյն վերընդունող, Երբորդու  
թեան փառացն տարող: — Ն:

\* Պաշտէի իսկ զՄարիամ որպէս  
զստուածուհի, եթէ ոչ զիսէի զի մի  
է Աստուած: — Իբն. Արէոզ:

\* Բնութեանս պտուղ սքանչելի, և  
արմատ նորընծայ և յոքնազան առաքի  
նութեամբ. մի և միայնակ ի բազմու  
թեան. . . շաղկապ՝ որոց անբաւ է մե  
կուսութիւն, անխառնելի բնութեանց


խառնումն. Անբաւելոյն բովանդակու  
թիւն . . . սկիզբն անսկզբանն, և անժա  
մանակէին սահման ժամանակական.  
բերողին զամենայն՝ բերող ի քեզ, նո  
րին բաւականութեամբ: Հայեացքացոր  
ի բնութիւնս՝ յորմէ ընտրեցար՝ միւսյն  
լինել զերազոյն քան զբովանդակ ար  
մատս և զշառաւիղեալս անշուստ. ոչ  
ումեք ի միջնոց զուգադասական ունելով  
պատիւ և փառս մեծութեան, և քան  
զորս զկնի՝ թէ և դէսզ լինիցի՝ երեւել  
սքանչելի: — Յհ. Սբի:

\* Ազերս յուսոյ եւ մաղթանաց՝  
Վերընծայեմք քեզ, Մայր կենաց.  
Ի ծունկս անկեալ վերադոչեմք,  
Աստուածածին քեզ դաւանեմք.  
Որ ես մայր դու Յիսուսի  
Փրկչին հանուրց եւ արարչի.  
Վերընկալցես ըզմեզ սիրով,  
Եւ գլթասցես քոյին խնամով.  
Մայրըզ լուսոյ, քեզ օրհնութիւն:  
Փառք Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն:

Աղօթք Նախնեաց:

~~~~~

|                                       |     |
|---------------------------------------|-----|
| Ա.բ.քայու[թիւն . . . . .              | 4   |
| Մրբու[թիւն . Ուշատուն[թիւն . . . . .  | 25  |
| Աշխարհ. Ունայնու[թիւն կենցաղայս. 45   |     |
| Սիրա և կիրք իւր . . . . .             | 81  |
| Ներանձնու[թիւն . կրօնաւորու[թիւն . 98 |     |
| Սուաքինու[թիւն. Փրկու[թիւն անձին. 118 |     |
| Սուգ և Մտի[թարու[թիւն . . . . .       | 145 |
| Մահ և Անմահու[թիւն . . . . .          | 171 |
| Աստուած . . . . .                     | 217 |
| Սէր . . . . .                         | 255 |
| Յիսուս . . . . .                      | 268 |
| Աստուածածին . . . . .                 | 523 |



3154

1 . . . . .  
 22 . . . . .  
 23 . . . . .  
 24 . . . . .  
 25 . . . . .  
 26 . . . . .  
 27 . . . . .  
 28 . . . . .  
 29 . . . . .  
 30 . . . . .  
 31 . . . . .  
 32 . . . . .  
 33 . . . . .  
 34 . . . . .  
 35 . . . . .  
 36 . . . . .  
 37 . . . . .  
 38 . . . . .  
 39 . . . . .  
 40 . . . . .

1818

ՀՀ Ազգային գրադարան



NL0694605

